

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԲԱՂՄԱՆՅԱՆ ՎԱՆՈՒՀԻ ԳԱՌՆԻԿԻ

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԴՈՆՑԻ ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսություն
Ժ.02.01- «Հայոց լեզու» մասնագիտությամբ
բանասիրական գիտությունների
թեկնածուի գիտական
աստիճանի համար

Գիտական ղեկավար՝ Բ. Գ. Թ., դոց. Նարինե Դիլբարյան

Երևան-2018

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	2
ԳԼՈՒԽ 1.....	19
Ն. ԱԴՈՆՑԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅ ՔԵՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ.....	19
1.1. Ն. ԱԴՈՆՑԸ ՀԱՅ ՔԵՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴԻՐ...19	
1.2. Ն. ԱԴՈՆՑԻ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԸ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԲՆՈՒՅԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ.31	
1.3. Ն. ԱԴՈՆՑԻ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԸ Մ. ՄԱՇՏՈՑԻ, ԳՐԵՐԻ ԳՅՈՒՏԻ ԵՎ ԿՈՐՅՈՒՆԻ ՎԱՐՔԱԳՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ.....	35
1.4. Ն. ԱԴՈՆՑԸ ՈՒՐԱՐՏԱԳԵՏ.....	41
ԳԼՈՒԽ 2.....	47
Ն. ԱԴՈՆՑԸ ՏԵՂԱՆՎԱՆԱԳԵՏ ԵՎ ՏՈՀՄԱՆՎԱՆԱԳԵՏ.....	47
2.1. ՀԱՅԿԱԿԱՆ ՀՆԱԳՈՒՅՆ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ.....	47
2.2. ՀԱՅԿԱԿԱՆ ՏՈՀՄԱՆՈՒՆՆԵՐ.....	68
ԳԼՈՒԽ 3.....	86
3.1. Ն. ԱԴՈՆՑԻ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	86
Ա. ԴԻՑԱՆՈՒՆՆԵՐ.....	87
Բ. ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐ.....	98
Գ. ՏԻՏՂՈՍՆԵՐ.....	104
Դ. ՀԱՍԱՐԱԿ ԱՆՈՒՆՆԵՐ.....	112
3.2. Ն. ԱԴՈՆՑԻ ՀՆՉՅՈՒՆԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ԲԱՌԱՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԸ.....	126
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	146
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....	151
ՀԱՎԵԼՎԱԾ.....	156

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Երանի՛ թէ սա գետինը ճեղքուէր և գրքերովս, սեղանովս և աղօտ ճրագով ինձ առնէր իր մէջը, չլսէի այս բոլորը, կարողանայի աշխատիլ հանդարտ սրտով և վերջացնել ճրագրած գործերս»¹:

Ն. ԱԴՈՆՑ

Սույն աշխատանքը ականավոր հայագետ, բյուզանդագետ Ն. Ադոնցի կյանքի, գործունեության և լեզվաբանական ժառանգության ամբողջական հետազոտություն է, որտեղ գիտականորեն նկարագրել և արժևորել ենք Ն. Ադոնցի հատկանվանագիտական, բառաքննական, քերականագիտական և հայոց լեզվի ծագմանն ու պատմությանը վերաբերող ըմբռնումները:

Արտերկրի պատմաբանասիրական ազդեցիկ շրջանակներում Ն. Ադոնց հայագետի անունը և նրա հետազոտությունները հայտնի են, մեջբերվող: Հայ իրականության մեջ մեծ գիտնականն առավել ճանաչված է պատմությանը վերաբերող իր աշխատանքներով, բայց նրա տաղանդը բազմակողմ էր: Հայոց գիտական միջավայրում տևական ժամանակ նրա մեծածավալ ժառանգության միայն որոշ բեկորներ էին հայտնի, բացի այդ՝ շատ հարցականներ կային նրա կենսագրության, հատկապես՝ կյանքի վերջին տարիների վերաբերյալ: Երկրորդ համաշխարհային պատերազմը, Խորհրդային Միության փակ վարագույրները Ն. Ադոնցի կյանքի և գիտական ժառանգության շատ դրվագներ անհայտության մեջ էին պահում:

Ն. Ադոնցի վերածնունդը տեղի ունեցավ անցած դարի վերջին, երբ պատմաբան, նվիրյալ ադոնցագետ Պ. Հովհաննիսյանը, ԵՊՀ և ՀՅԴ աջակցությամբ, ձեռնամուխ եղավ նրա երկերի հնարավորինս ամբողջական հավաքման, թարգմանության և հրատարակության շնորհակալ գործին, որը գլուխ եկավ «Գալուստ Գյուլբենկյան» հիմնադրամի շնորհիվ: Սակայն առ այս պահն էլ մեծավաստակ հայագետի հատկապես լեզվաբանական որոշ գործեր անտիպ են և գտնվում են ՀՅԴ փակ պահոցներում:

¹ Մ. Իշխան, Երեք մեծ հայեր, Պեյրուֆ, 1952, էջ 36-37:

Ն. Ադոնցի երկերի յոթհատորյակում տեղ են գտել զանազան ամսագրերում և օրաթերթերում՝ տարբեր լեզուներով հրատարակած նրա հոդվածները՝ թարգմանված հայերեն՝ հետևյալ բաշխվածությամբ՝ Ա հատոր- Պատմագիտական ուսումնասիրություններ, Բ հատոր- Բանասիրական ուսումնասիրություններ, Գ հատոր- Քերականական- լեզվաբանական ուսումնասիրություններ, Դ հատոր- Հայ-բյուզանդական ուսումնասիրություններ, Ե հատոր- Պատմագիտական ուսումնասիրություններ, Զ հատոր- Հրապարակախոսություն, Է հատոր- Նամականի:

Հայագետի՝ մեր ձեռքի տակ եղած զուտ լեզվաբանական գործերն ամփոփված են Գ հատորում, իսկ մնացյալը մաս առ մաս հավաքել ենք նրա պատմագիտական, բանասիրական աշխատություններից, հոդվածներից, որոնք տեղանվանագիտական, բառաքերականական, ստուգաբանական հսկայական նյութ են ընձեռում հետազոտողներին:

Այս ոլորտում մեր ուսումնասիրությունը, բարեբախտաբար, չսահմանափակվեց հայագետի՝ միայն Հայաստանում եղած աշխատությունների քննությամբ: Բրյուսելի Ազատ համալսարանի (ULB)՝ Ն. Ադոնցի պահոցներից ի հայտ ենք բերել մեծ գիտնականի մասին Մ. Իշխանի, Մ. Լերոյի և «Մելքոնյան» ֆոնդի հոդվածները, ինչպես նաև Ն. Ադոնցի հեղինակած, բայց հայերեն դեռևս չթարգմանված «L'aspect iranien du servage» աշխատությունը:

Զուգահեռաբար՝ Բելգիայի Լյուվեն լա Նյով քաղաքի Կաթոլիկ համալսարանի (UCL) գրադարանում գտել ենք Ն. Ադոնցի՝ «Գալուստ Գյուլբենկյան» ֆոնդի կողմից տպագրված գործերի բնագրերը, որոնք թվայնացնելով՝ կազմել ենք էլեկտրոնային օտարալեզու գրադարան (<https://nikoghayosadonzblog.wordpress.com/>)՝ այնտեղ տեղադրելով ոչ միայն այդ բնագրերը, այլև Ն. Ադոնցի մեր կազմած մատենագիտությունը, նրա հետազոտությունների վերաբերյալ մեր հոդվածները, ժամանակակիցների հուշերն ու ուսումնասիրությունները գիտնականի, նրա աշխատությունների վերաբերյալ և այլն: Մատենագիտությունը ներկայացված է աշխատանքի հավելվածում:

Մեր աշխատանքի նպատակը, այսպիսով, Ն. Ադոնցի տարասփյուռ քերականագիտական, ստուգաբանական աշխատանքների քննությունն է և

լեզվաբանական ժառանգության վերլուծությունը: Հետաքրքրությունը Ն. Ադոնցի անձի և գործի նկատմամբ պատահական չէ. նկատելի է, որ Ն. Ադոնցի նման մեծությունը ցայսօր մեզանում չի վայելել այն գնահատումը, որին իսկապես արժանի է, և գիտական կարևորություն ունեցող խնդիր ենք համարել բացահայտել, արժևորել նրա լեզվաբանական ժառանգությունը՝ մասամբ փոխհատուցելով տարիների նրա ազգանվեր աշխատանքը:

Մեր ուսումնասիրությունը, այսպիսով, կատարել ենք տարբեր աղբյուրներից նյութեր հավաքելով, դրանք զուգադրելով և նկարագրելով, այսինքն՝ աշխատել ենք հիմնականում զուգադրահամեմատական և նկարագրական մեթոդներով:

Առաջին՝ զուգադրահամեմատական մեթոդը, մեզ հանգեցրեց այն համոզմանը, որ Ն. Ադոնցը ճշմարիտ գիտնականին հատուկ զգուշավորությամբ էր մոտենում ցանկացած երևույթի և եզրակացություններ կատարում լուրջ ու երկարատև ուսումնասիրությունից հետո:

Այս մեթոդի կիրառմամբ էլ վեր ենք հանել Ն. Ադոնցի և Գ. Բ. Ջահուկյանի՝ Դ. Թրակացու քերականության ու նրա մեկնությունների վերաբերյալ երբեմն իրարամերժ, իրականում փոխլրացնող դիրքորոշումները:

Զուգադրահամեմատական մեթոդն է ընկած նաև Ն. Ադոնցի ստուգաբանությունների ուսումնասիրության հիմքում, երբ դրանք համեմատում ենք Հր. Աճառյանի և Գ. Բ. Ջահուկյանի աշխատությունների պնդումների հետ, կատարում դիտարկումներ:

Ն. Ադոնցի կենսագրական փաստերի ամբողջացումը ևս կատարվում է առաջին անգամ, փորձել ենք համադրել մինչ այժմ հրապարակված, բայց տարբեր աղբյուրներում զետեղված բոլոր փաստերը՝ վերականգնելով գիտնականի կյանքի ուղին:

Նիկողայոս Ադոնցը՝ Նիկոլայ Տեր-Ավետիքյան, ծնվել է 1871 թ. հունվարի 10-ին (22-ին) Հայաստանի Սյունիքի մարզի Բռնակոթ գյուղում: Ն. Ադոնցն ունեցել է ավանդապահ, ազնվազարմ ծնողներ: Հայրը՝ Գևորգ Առաքելի Տեր-Ավետիքյանը, ծոռն

էր Դավիթ-Բեկի գինակից Տեր Ավետիքի, իսկ մայրը Մելիք Մանուչարի եղբոր՝ Ռոստամի դուստր Դանա Ռոստոմբեկյանն էր²:

Նախ պարզել ենք ազգանվան գաղտնիքը՝ ինչպե՞ս *Տեր-Ավետիքյան*-ը դարձավ *Ադոնց*: Համաձայն Ն. Ադոնցի ձեռոք իր տոհմի մասին գրված «Դավիթ Բեկ և Տեր Ավետիքի սերունդը» հոդվածի՝ *Ադոնց* անունը բխում է տոհմի նախահայր Ադդիի կամ Ադդեի անունից: Ն. Ադոնցը գրում է, որ Դավիթ-Բեկի գինակիցների շարքում Տեր Ավետիք քահանան կարևոր առաքելություն ուներ: Նա մելիք Փարսադանի փեսան է՝ հավանաբար Հալիձորից: Ըստ գիտնականի՝ Տեր Ավետիքի սերնդի մասին տեղեկությունները խիստ սուղ են: Միայն մի ուշագրավ փաստ կա. Բոնակոթի մի քանի բնակիչների հանգանակությամբ 1787 թ. մատուռ-դամբարան է կառուցվել Գրիգոր Տաթևացու շիրմի վրա: Այդ դամբարանի արձանագրության մեջ հիշատակված է նաև «ԱԴԴԷ» անունը: Ն. Ադոնցն իր այս հոդվածում պնդում է, որ հենց նա է նախահայրը Ադոնց մեծ տոհմի, որ դեռ 1600-ականներին հաստատվել էր Բոնակոթում: «Ադդեի՝ նախահայրն է այն տոհմի, որ կոչվում է Ադոնց: Արդյո՞ք **Ադի**՝ կրճատ ձևն է **Ադդե**-ի, թե այլ ծագում ունի, թողնենք: Ամեն պարագային արձանագրության գրողն այդպես է հասկացել, և հավանորեն, որևէ հիմք ունեցել: Այս Ադդեի որդին քահանա էր և անունը Տեր Ավետիք: Սա երեք որդի ուներ՝ Առաքել, Գրիգոր և Մեհրաբ: Վերջինիս որդին ևս կոչվում էր Ավետիք (Ավետիս)»³: Ն. Ադոնցի հաղորդմամբ՝ եթե ոչ Տեր Ավետիքը, ապա նրա որդի Ադդին, որոշ ժամանակ ապրել է Անգեղակոթում և թերևս այնտեղից Սաֆրազբեկյանների հետ գաղթել Բոնակոթ⁴:

Բայց մենք հանդիպեցինք *Ադոնց* ազգանվան մեկ այլ մեկնության ևս. ըստ Սիսիանի համայնքի ղեկավար Աղասի Հակոբջանյանի՝ *Ադոնց* ազգանունը վկայությունն է Ադոնցների տոհմի քահանայական ծագման, Սյունիքում ընդունված էր այդպես կոչել քահանաների ընտանիքները, և որպես հիմնավորում՝ բերվում է բարբառային **տեր-դեր-ադեր-ադոնց** անցումը⁵:

Հ. Հյուբշմանը, ի թիվս բազմաթիվ փոխառությունների, քննում է *aden/adin/Eden*՝ *ադեն*՝ *ադին* բառը: Adin տարբերակի մոտ՝ փակագծում, նշում է գերմաներեն der

² **Պ. Հովհաննիսյան**, Վիթխարի անհատականություն, «Սյունյաց երկիր», 2011, N 17, էջ 4:

³ **Ն. Ադոնց**, Երկեր, Ա, Դավիթ Բեկ և Տեր Ավետիքի սերունդը, Եր., 2006, էջ 551:

⁴ Նույն տեղում, էջ 553:

⁵ **Ա. Հակոբջանյան**, Սիսիանը հիշում է իր նշանավոր զավակին, «Սյունյաց երկիր», էջ 3:

Garten բառը, որ թարգմանվում է *այգի*: Այդուհանդերձ, ըստ նրա, բառը սիրիական (պահպանել ենք Ն. Ադոնցի եզրույթը) ծագում ունի՝ ըստ Պոլ դը Լագարդի՝ 5-րդ դարից adin ձևով վկայված: Հետայսու բերվում են տարբեր վկայություններ՝ aden, adenabu, adenayin, adenakan, և վերջապես՝ հայերեն *եդեմ*, հունարեն Έδέμ, որից և՛ edemabulx, edemakan, edemayin, edemean և այլն⁶:

Կարծում ենք՝ պատահական չէ *ադեն* > *Ադոնց* անցումը ո՛չ հնչյունական, ո՛չ իմաստային առումով:

Բռնակոթի առաջին կանգառը Սուրբ Գևորգ եկեղեցին է՝ ըստ «Սիսիանի ձայն» թերթի: Այնտեղ քահանայապետել են Ն. Ադոնցի պապն ու հայրը: Եկեղեցու բակում է թաղված Ն. Ադոնցի հայրը՝ Գևորգ Ադոնցը:

Ա. Հակոբջանյանի վկայությամբ՝ եկեղեցուց ոչ շատ հեռու՝ գյուղի կենտրոնում, կանգուն է այն տունը, որտեղ ծնվել և իր մանկությունն է անցկացրել Ն. Ադոնցը⁷: Գյուղի բնակիչ Ստեփանը Ադոնցների ազգի շառավիղն է: Հենց նրանց տան բակում է գտնվում Ն. Ադոնցի՝ 1861 թ. կառուցված հայրական տունը, որի կահ-կարասին օգտագործել են Ադոնցները, և որոնց խնամքը Ն. Ադոնցի շառավիղներն են ստանձնել⁸:

Ն. Ադոնցի հայրենիքում՝ Սիսիանում, 1988 թ. հիմնադրվեց նրա թանգարանը, որի ձախ կողմում ճարտարապետ Ռոմեո Զուլհակյանի նախագծով 1990 թ. կառուցվեց հուշահամալիր, և տեղադրվեց Ն. Ադոնցի արձանը: Սիսիանում ցայսօր նշվում է գիտնականի ծննդյան օրը, կազմակերպվում են գրական մրցույթներ, տարբեր միջոցառումներ, «Սյունյաց երկիր» և «Սիսիանի ձայն» թերթերը պարբերաբար անդրադառնում են նրա գործունեությանը, սակայն, ցավոք, գործուն քայլեր չեն ձեռնարկվում Ն. Ադոնցի արխիվը հայրենիք տեղափոխելու ուղղությամբ, որն իսկապես կլիներ հայրենանվեր գործ և ազնիվ փոխհատուցում գիտնականի անձնվեր աշխատանքի:

«Սիսիանի ձայն» թերթում գտանք Պ. Հովհաննիսյանի հարցազրույցը, որտեղ նա պարզաբանում է, թե ինչպես հեռավոր Բռնակոթում ծնված Ն. Ադոնցը դարձավ

⁶ H. Hübschmann, Die semitischen Lehnwörter im Altarmenischen, Armeniaca, Leipzig, 1847, S. 231:

⁷ Ա. Հակոբջանյան, նշվ. աշխ., էջ 4:

⁸ Հ. Ա., Նիկողայոս Ադոնց. գրավոր հիշողություն, «Սիսիանի ձայն», 2011, N 8, էջ 3:

համաշխարհային մեծություն: Ապագա գիտնականի կյանքում վճռորոշ դեր են խաղացել երեք անհատականություններ՝ Ալեքսանդր Մանթաշյանը, Նիկողայոս Մառը և Կարապետ Եզյանը: Ա. Մանթաշյանի ջանքերով Ն. Ադոնցն ընդունվեց Պետերբուրգի համալսարան, որտեղ Ն. Մառի աշակերտը դարձավ: Պետերբուրգում կրթություն ստանալուց հետո ապագա գիտնականը գիտակցեց, որ անհրաժեշտ է եվրոպական համալսարաններում խորացնել գիտելիքները: Եվ ահա Կ. Եզյանը Ա. Մանթաշյանին խնդրեց շարունակել հոլանդական Ն. Ադոնցի ուսումնառությունը: Երեք տարի Ն. Ադոնցը եվրոպական լավագույն համալսարաններում սովորեց՝ Սորբոնում, Մյունխենում, Լոնդոնում: Ա. Մանթաշյանը, ըստ Պ. Հովհաննիսյանի, երիտասարդներին հոլանդական էր այն պայմանով, որ վերադառնան և իրենց ջանքերը ներդնեն հայ իրականության մեջ, սակայն Ն. Ադոնցը բացառություն եղավ, նա մնաց Պետերբուրգում և աշխատեց հայ-վրացական բանասիրական ամբիոնում: Ի վերջո, Ն. Մառի ջանքերով մնալով այդտեղ (հայ դասախոսների վերաբերմամբ ուսական միջավայրում խտրական մոտեցում կար)՝ նա դարձավ պրոֆեսոր: Պ. Հովհաննիսյանի հավաստմամբ՝ սա բացառիկ երևույթ էր, որը բացատրվում է Ա՛ Ն. Ադոնցի անձնական, մարդկային տեսակի հմայքով, Ա՛ հզոր գիտելիքներով⁹:

Պ. Հովհաննիսյանը Ն. Ադոնցի վերաբերյալ մի հետաքրքիր դիտարկում ունի. այն հարցին, թե, ի վերջո, Ն. Ադոնցը պատմաբա՞ն էր, բյուզանդագե՞տ, արևելագե՞տ, թե՞ բանասեր, նա պատասխանում է՝ Ն. Ադոնցը ֆանտաստիկ երևույթ էր. ինչպես Թումանյանը՝ գրականության ասպարեզում, Կոմիտասը՝ երաժշտության, Սուրենյանցը՝ նկարչության, այնպես էլ Ն. Ադոնցն անկրկնելի էր հայագիտության մեջ¹⁰:

Գիտնականն ազատորեն տիրապետում էր բազմաթիվ լեզուների՝ հունարեն (հին և նոր), լատիներեն, սանսկրիտ, պարսկերեն, թուրքերեն, վրացերեն, գերմաներեն, ֆրանսերեն, անգլերեն, իտալերեն և ռուսերեն: Ամենայն նրբություններով տիրապետում էր հին (գրաբար) և միջին հայերենի գաղտնիքներին: Այդքան լեզուներ իմանալով և ստեղծագործելով հիմնականում օտար լեզուներով՝ հայերենը երբեք չի

⁹ Ա. Հովակիմյան, Մեծ անձանոթը, «Սիսիանի ծայն», էջ 3:

¹⁰ Հմմտ. Ն. Ադոնց, Երկեր, Ա, էջ 7:

մոռացել, և Պ. Հովհաննիսյանի փաստամամբ՝ ոչ մի հայ պատմագիր՝ միգուցե Լեոյից բացի, հայերենի այնպիսի փայլուն իմացություն չի ունեցել, ինչպես Ն. Ադոնցը:

Պ. Հովհաննիսյանի դիտարկմամբ՝ Եվրոպան եղավ երրորդ «գիտաբարոյական» միջավայրը (Ս. Էջմիածնից ու Ս. Պետերբուրգից հետո), որն ամբողջ կյանքում անջնջելի հետք թողեց Ն. Ադոնցի գիտական նկարագրի վրա: 1903 թ. նա մեկնում է Էջմիածին, պարապում վանքի ձեռագրատանը, ապա Թիֆլիսում լրացնում վրացերենի իր գիտելիքները: Հենց այս ընթացքում է, որ ժամանակ է գտնում Ս. Պետերբուրգում հրատարակելու «Բանբեր գրականության և արվեստի» պարբերականի զույգ՝ Ա. Չոպանյանի բնութագրմամբ «սիրուն» հատորները: Գիտական և մարդկային հզոր եռանդի շնորհիվ՝ Ն. Ադոնցն իր շուրջն է համախմբում ժամանակի բոլոր նշանավոր գրողներին ու գրականագետներին՝ Հովհ. Թումանյան, Ա. Չոպանյան, Լ. Շանթ, Ա. Ահարոնյան, Վ. Փափազյան, Առանձար, Հովհ. Հովհաննիսյան, Սիամանթո և այլք:

1908 թ. լույս է տեսնում «Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում» մենագրությունը, որը 1909 թ. ապրիլի 5-ին, որպես մագիստրոսական թեզ, ներկայացվում է պաշտպանության: Ն. Մառը հիացական կարծիք է հայտնում նրա թեզի վերաբերյալ:

Ն. Ադոնցը ձեռնամուխ է լինում դոկտորական ատենախոսության պաշտպանությանը: Աշխատանքները սկսում է 1911-ից, այցելում Վիեննա ու Վենետիկ: 1915 թ. լույս է տեսնում նրա «Դիոնիսիոս Թրակացին և հայ մեկնիչները» աշխատությունը, որը պաշտպանում է նույն թվականի մայիսի 14-ին՝ որպես դոկտորական թեզ: Ն. Ադոնցին շնորհվում է հայկական բանասիրության դոկտորի գիտական աստիճան: Հատկանշական է, որ ընդդիմախոսներից Ս. Ժեբեյովն առաջարկում է նրան միաժամանակ շնորհել դասական բանասիրության դոկտորի գիտական աստիճան:

«Սյունյաց երկիր» թերթում լույս է տեսել Ն. Մառի «Ն. Ադոնցի «Դ. Թրակացին և հայ մեկնիչները» վերնագրով գրախոսությունը, որտեղ նա մասնավորապես գրում է. «Արևմտյան Եվրոպայի փիլիսոփայաբերականական աշխատությունների ոլորտում, Ադոնցը, թեպետ ունի նախորդներ, ինչպիսիք են՝ Բաումգարտները, Կոնիբերը և այլք, սակայն նրանց աշխատություններից ոչ մեկում մենք չենք կարող որևէ հեղինակի՝

Ադոնցին որպես նախորդ ընդունել ո՛չ բովանդակային և ո՛չ էլ գործելաոճի առումով...»¹¹:

Աշխատությունների տպագրումն այն ժամանակ ընդհանրապես դյուրին չէր: Այդ մասին է վկայում, օրինակ, Գարեգին Հովսեփյանին Ն. Ադոնցի հղած նամակը (7 հունվարի 1927 թ., Փարիզ, N 3), որտեղ գիտնականը սրբազանին խնդրում է իր շուրջը համախմբել տեղի աշխատող բանասերներին և իր մոտ ուղարկել մի «ձեռնարկություն» գլուխ բերելու համար: «Հայագիտությունը ևս ճգնաժամի մեջ է: Բոլոր կենտրոնները տկարացած: Եթե տարին երկու խոշոր հատոր հաջողեցնել կարենանք, մեծ բան է: Լսում եմ, որ այդտեղ գտնված ուժերից ձգտում են հրատարակելու իրենց աշխատությունները և հնարավորություն չունեն: Չկարծես, որ այստեղ այդպիսի հնարավորությունների շտեմարան կա... Ես ինքս ստիպված եմ Ամերիկայի «Հայրենիքում» տպելու մի քանի ուսումնասիրություններս: Առանձին գրքով հրատարակել՝ իմաստ չունի»¹², - գրում է Ն. Ադոնցը:

Ժամանակակիցների վկայությամբ՝ Ն. Ադոնցը երբեք միայն սառը գիտնական չի եղել, այլ սրտացավ ազգային գործիչ ևս, ժողովրդի կողքին է եղել 1912-14 թթ. Հայկական հարցի վերաբացման միջոցառումների ժամանակ:

Երբ 1916 թ. ռուսական բանակը գրավեց Արևմտյան Հայաստանը, Ն. Ադոնցը մեկնեց այնտեղ՝ տեղի հնությունների պահպանման նպատակով: Անհրաժեշտության դեպքում հայագետը դառնում էր նաև փայլուն հնագետ. ուսումնասիրել է շուրջ 180 վիմագիր արձանագրություն:

Մոսկվայի և Պետրոգրադի հայկական բարձրագույն շրջանակները իշխան Ս. Ս. Աբամելիք-Լազարյանի մահից հետո նրա թեկնածությունն են առաջադրում Արևելյան լեզուների՝ Լազարյան ճեմարանի պատվավոր հոգաբարձուի պաշտոնի համար: Արդեն համբավավոր հայագետը երազում էր Լազարյան ճեմարանի հիմքի վրա կազմակերպել Հայկական ակադեմիա և հիմնել հայագիտության ազգային ֆոնդ: Ռուսաստանում

¹¹ Ն. Մառ, Ն. Ադոնցի «Դ. Թրակացին և հայ մեկնիչները», «Սյունյաց երկիր», էջ 12:

¹² Ա. Ադամյան, Քերովբե Պատկանյանի և Ն. Ադոնցի անտիպ նամակները, «Բանբեր Հայաստանի արխիվների», 1966, N 3, էջ 95:

սկսված քաղաքական նոր ցնցումներն ու փոփոխությունները, սակայն, ի չիք են դարձնում Ն. Ադոնցի ջանքերն այդ ուղղությամբ¹³:

1920 թ. գարնանը որոշում են Ն. Ադոնցին գործուղել արտասահման՝ գիտական աշխատանքները շարունակելու, սակայն վերջինս անսպասելիորեն հեռանում է Ռուսաստանից: Խորհրդային տարիներին, թեպետ, շատ ամբաստանություններ կային Ն. Ադոնցի՝ քաղաքական վտարանդի լինելու վերաբերյալ, և որի հետևանքով չէր խրախուսվում նրա աշխատությունների հրատարակումը, այդուհանդերձ դժվար է միանշանակ պնդել, թե նրա մեկնումը Ռուսաստանից զուտ քաղաքական շարժառիթ ուներ: Ն. Ադոնցը Ֆրանսիա կարող էր մեկնել նաև անձնական խնդիրներով. 1920 թ. նա արդեն դառնում էր 50 տարեկան, բայց դեռ ամուսնացած չէր: Ժամանակակիցների հաղորդմամբ՝ նա սիրահարված էր օպերային թատրոնի երգչուհի Օլգա Իվանովնա Հովնաթանյանին: Վերջինիս՝ Ֆրանսիա մեկնելուց հետո Ն. Ադոնցը նույնպես մեկնում է այնտեղ:

Ն. Ադոնցը Լոնդոնում հրատարակեց «Հայկական հարցի շուրջ» հոդվածը, որ հայտնի է նաև «Հայկական հարցը Սևրում» վերնագրով, նրա բարեկամները փորձեցին նրան կապել Օքսֆորդի հետ, սակայն Ն. Ադոնցին գրավում էր Փարիզը, քանի որ Օլգան այնտեղ էր: Ի վերջո, նա մեկնեց Փարիզ, ամուսնացավ Օլգայի հետ:

Փարիզյան այդ տարիներին արդեն հանրահայտ հայագետը գործուն թղթակցում է հայ և օտար մամուլին («Բազմավեպ», «Հանդէս ամսօրեայ», «Հայրենիք», «Յառաջ», «Ազդարար», «Armeniaca», «The new Armenia» և այլն):

Համբավավոր գիտնականի բրյուսելյան տարիների մասին իր հուշերում պատմում է նրա սաներից Մ. Իշխանը: Նա գրում է. «...Հայաստանն իսկ էր կարծես Ն. Ադոնց, անոր լաւագոյն յատկանիշներուն մարմնացումը, անոր մարդկային պատկերը: Հայ մարդն էր ան՝ բառին աւանդական, արդիական և ազնուական իմաստով: Հայոց հինաւորց մշակոյթի, հերոսական պատմութեան, գեղեցկութեանց և հայ նկարագրի առաքինութիւններուն ապրող բերդը, որ գիտէ ուրախութիւն եւ հպարտութիւն ներշնչել: Մեր հողին բոյրը եւ մեր լեռներուն շունչը ունէր ան իր մէջ...»¹⁴:

¹³ Ն. Ադոնց, Երկեր, Զ, Եր., 2006, էջ 14:

¹⁴ Մ. Իշխան, նշվ. աշխ., էջ 17:

Ն. Ադոնցի սաներից Հ. Էսեկյույանը գրում է, որ գիտնականի գերմանաստիությունը ոմանք սխալ են հասկացել՝ շփոթելով այն հիտլերաստիության հետ: «Ան գերմանասեր էր-ու ոչ ոք կը ծածկեր-մշակոյթով, յետոյ մասնաւոր կերպով կը գնահատէր գերման միտքին բերած մեծ նպաստը հայագիտական կալուածին մէջ»¹⁵:

Ն. Ադոնցի հայրենաստիությունը հայտնի էր բոլորին: Հատկանշական է Բոյուսելի համալսարանի բյուզանդագիտական ֆակուլտետի տնօրէն Ա. Գրեգուարի ելոյթը անգլիացի մի բանասերի այցելոյթան ժամանակ: Ելոյթը պիտի լինէր ֆակուլտետի մասին, սակայն, ի զարմանս ներկաների, այն հնչեց որպէս Ն. Ադոնցի մեծարման խոսք՝ ֆակուլտետի ճանաչման գործում նրա ունեցած վաստակից բխող: Մեջքերենք այդ ելոյթից մի հատված. «Երկար պիտի ըլլար իր եւ իր գործերուն մասին խօսիլ, մանաւանդ չեմ ուզեր իր համեստութիւնը վիրաւորել, որովհետեւ շատ համեստ է բարեբախտաբար տակաւին հոս չէ, այլապէս ինծի ալ դժուար պիտի ըլլար համարձակօրէն արտայայտուիլ: Մեր թանկագին պաշտօնակիցը միակ թերութիւն մը ունի՝ Բիւզանդիոնի գահը բարձրացած գրեթէ բոլոր մեծ կայսրերը կը հայացնէ, անոնք ըլլան՝ Մորիկ կամ Չմշկիկ, Լեոն կամ Վասիլ: Գիտնականներուն մէջ իրարանցում մըն է կը սկսի. քննադատութիւնները կը տեղան. բայց Պ. Ադոնց այնպիսի հիմնական փաստերու վրայ կը կառուցանէ իր տեսութիւնը, որ քննադատները հետզհետէ տեղի կուտան և կ'ընեն...»¹⁶:

Ն. Ադոնցի մոտ բժիշկները հայտնաբերում են ծյուրախտ՝ արագընթաց թոքախտ: Ամռանը, երբ իրեն համեմատաբար լավ է զգացել, Փարիզի բարեկամներն իրենց օգնությունն են առաջարկել՝ նրան Շվեյցարիա ուղարկելու և բուժելու, սակայն, ըստ Հ. Էսեկյույանի, նա շատ հպարտ էր այդպիսի առաջարկ ընդունելու համար:

Ն. Ադոնցը մահացավ 1942 թ. հունվարի 27-ի առավոտյան: Թաղումը փետրվարի 2-ին էր: Թաղվեց Բոյուսելի քաղաքային գերեզմանոցում ֆաշիստական օկուպացիայի շրջանում: 1949-50 թթ. քաղաքաշինութեան աշխատանքների պատճառով գերեզմանոցը տեղափոխեցին: Յավոք, Փարիզի, Բոյուսելի հայ

¹⁵ **Յ. Էսէկիւլեան**, «Նիկողայոս Ադոնց. Յիշատակներ եւ տպաւորութիւններ», «Սյունյաց երկիր», էջ 44:

¹⁶ Նույն տեղում:

համայնքները չհետևեցին Ն. Ադոնցի աճյունի տեղափոխմանը: Ցայսօր, փաստորեն, հայտնի չէ, թե որտեղ է նրա շիրիմը¹⁷:

Աշխարհահռչակ գիտնականի մահվան առթիվ 1942 թ. «Սիոն»-ը գրում է. «Իր մահը աղէտ մըն է, վասնզի Ադոնց կը մեռնի առանց լիովին տուած ըլլալու ինչ որ կարող էր տալ: Քանքարաթաքոյց մը չեղավ անշուշտ, վասնզի **պատմութեան գերեզմաններէն դուրս կանչեց մեծ եւ լուսաւոր հայ դէմքեր՝ փառաւորելով իր ժողովորդի անունը յաջս աշխարհի...**»¹⁸:

20-րդ դ. Հին Արևելքի մշակութային միության մեջ հայկական շերտի և հետքի հետևողական բացահայտողը եղավ Ն. Ադոնցը:

Գ. Գյուզայանի կանխագագումը, թե Ն. Ադոնցի տեղը դեռ շատ երկար բաց կմնա, իրականություն դարձավ: Վերջինիս համոզմամբ՝ անգամ Խորհրդային Միության ամենից հայտնի պատմաբան Հ. Մանանդյանը չի կարող հավասարվել նրան:

Ն. Ադոնցը թողել է շուրջ 150 գիտական աշխատություններ՝ նվիրված գլխավորապես հայ ժողովրդի միջնադարյան պատմությանն ու գրականությանը, հայ-բյուզանդական հարաբերություններին, հայ-հունական բանասիրությանը, առասպելաբանությանը, կրոնին, լեզվաբանությանը:

Պ. Հովհաննիսյանի վկայմամբ՝ երկար ժամանակ այն կարծիքն է իշխել, թե Ն. Ադոնցի ժառանգությունը վերացվել է ամբողջությամբ, այն էլ՝ երկու անգամ, առաջինը՝ 1920-ին, երբ նա Ռուսաստանից հեռացավ Ֆրանսիա, երկրորդը՝ 1942-ին, երբ միայնակ ու բոլորից լքված մահացավ Բրյուսելում:

Բրյուսելի հայ համայնքը որոշ ճիգեր գործադրեց՝ Ն. Ադոնցի գործերը պահպանելու: Փարիզի նրա բարեկամները փորձեցին Բրյուսելից Փարիզ տանել դրանք: Հ. Զավրիևը, մեկնելով Փարիզ, գտավ նրա պատմության առաջին հատորը՝ մեքենագրական երկու օրինակով: Գրքերը վերցրեց համայնքը, որպեսզի գրադարան ստեղծի, և այստեղ էլ կորավ Ն. Ադոնցի արխիվի հետքը:

Պ. Հովհաննիսյանի խոստովանությամբ՝ դժվար է պատկերացնել՝ ի՞նչ կլիներ Ն. Ադոնցի գործերի ճակատագիրը, եթե ինքը Բեյրութի բարձրագույն ուսումնական մի

¹⁷ Ա. Հովակիմյան, նշվ. աշխ., էջ 5:

¹⁸ «Սյունյաց երկիր», էջ 48:

հաստատությունում աշխատելիս չլինել: Այդ հաստատությունը տնօրինում էր Հայ հեղափոխական դաշնակցությունը: Հաստատության պատասխանատու Ե. Փամբուկյանը, իմանալով, որ Պ. Հովհաննիսյանը հետաքրքրված է Ն. Ադոնցի ժառանգությամբ, տեղեկացնում է, որ Ն. Ադոնցից ինչ-որ թղթեր կան իրենց մոտ: Եվ Պ. Հովհաննիսյանը հայտնաբերում է Ն. Ադոնցի արխիվը¹⁹:

Պահպանված նյութերի մեջ հիմնականը պատմությանը նվիրված էջերն են: Հայտնի է, որ Ն. Ադոնցը մտադիր էր գրել Հայոց քառահատոր պատմություն, սակայն հասցրեց ավարտել միայն մեկը: Մյուս հատորները՝ նյութերի կամ առանձին ուսումնասիրությունների ձևով, գտնվում են պատմաբանի արխիվում:

Մեկ առ մեկ չթվարկելու համար արխիվի գործերը, պարզապես նշենք, որ այնտեղ կան հայ-բյուզանդական հարաբերություններին, հայոց եկեղեցուն և կրոնին, Հայկական հարցին ու հարակից խնդիրներին նվիրված նյութեր, ինչպես նաև մեզ առավելագույնս հետաքրքրող՝ հայոց լեզվին, հայոց մատենագրությանն ու քերականությանը նվիրված նյութեր: Կանգ առնենք վերջիններիս վրա: Պ. Հովհաննիսյանի և Ե. Փամբուկյանի վկայմամբ՝ Ն. Ադոնցի արխիվում մեծ թիվ են կազմում հայ հին մատենագիտությանը, հայագիտության պատմությանը նվիրված անավարտ գործեր: Ուսումնասիրողներին հատկապես հետաքրքրել է Մ. Խորենացուն նվիրված մի նյութ, որը, նրանց կարծիքով, մի մեծ ուսումնասիրության սկզբնամաս է (Մովսես Խորենացի, հայերեն, 17 էջ, կիսատ, նաև չհամարակալված շատ էջեր): Առանձնակի արժեք են ներկայացնում նաև Փ. Բուզանդին, մեր էպոսին նվիրված հետազոտությունները: Ուշագրավ է նաև «Մովսես Կաղանկատուացու Պատմութիւնը» ուսումնասիրությունը (հայերեն, 144 էջ, բազմաթիվ էջեր թափված): Բացի սրանցից՝ Ն. Ադոնցի թղթերում պահպանվել են նաև «Հայագիտութեան ներածութիւն», «Հայոց հին գրականութեան պատմութիւն» վերնագրերով գործեր: Նրա լեզվաբանական պահոցում ուսումնասիրողների ուշադրությունը գրավել են մի քանի հետազոտություններ, ինչպիսիք են՝ «Հայոց լեզուի փոխարաբերութիւնները իրանական և հաբեթական լեզուների հետ» (ֆր., 25 էջ), «Հայոց լեզուի ծագումը» (ֆր., 10 էջ), «Մուշի բարբառը» (հայերեն, 20 էջ), «Հայրենի քերականութիւն» (ռուս., 25 էջ) և այլն: Մեր համոզմամբ՝

¹⁹ Ա. Հովակիմյան, նշվ. աշխ., էջ 6:

առանձնահատուկ կարևոր նորություն են Ն. Ադոնցի կողմից բառարանների կազմությունը, ինչպես նաև բառերի ստուգաբանությանը վերաբերող աշխատանքները: Նմանատիպ նյութերի առատությունը բերում է այն եզրահանգման, որ Ն. Ադոնցը հայոց լեզվի արմատական մեծ բառարան կազմելու մտադրություն է ունեցել, որը, ցավոք, անկատար է մնացել: Պահոցում պահպանվում և դեռ իրենց բացահայտողին են սպասում նրա «Հայերենի ստուգաբանական բառարան» (հայերեն, 70 էջ)-ը, «Հայ-վրացերեն բառարան» (հայերեն, վրացերեն, 38 էջ)-ը և անավարտ այլ գործեր²⁰:

Պ. Հովհաննիսյանն իրավամբ նկատում է, որ եթե գիտական աշխարհը տարբեր խորությամբ ճանաչում է Ն. Ադոնցի ժառանգությունը և օգտվում է նրա ընձեռած անսպառ հնարավորություններից, ապա ընթերցող լայն հասարակությունը մինչև վերջին ժամանակներս զրկված է եղել այդ մեծագույն հարստության հետ ամբողջությամբ աղերսվելու երջանկությունից: Ն. Ադոնցի աշխատություններն ի մի բերված չէին: Դրանք ցրված էին հայերեն, ռուսերեն, ֆրանսերեն և այլալեզու գիտական ու հանրամատչելի մամուլի էջերում՝ «Արծազանք», «Հանդես ամսօրեայ», «Արարատ», «Բանբեր գրականության և արվեստի», «Նոր դար», «Մշակ», «Հուշարձան», «Բազմավեպ», «Հայրենիք» (ամսագիր), «Հայրենիք» (օրաթերթ), «Վեմ», «Սիոն», “Византийский временник”, “Записки восточного отделения императорского русского археологического общества”, “Журнал Министерства народного просвещения”, “Новая жизнь” և այլն, “The New Armenia”, “Revue de L’Orient chrétien”, “Armeniaca”, “Revue des etudes arméniennes”, “Byzantinische Zeitschrift”, “Byzantion” և այլն:

Ն. Ադոնցի պատմագիտական առաջին աշխատանքը, որը լույս է տեսել 1904 թ., նվիրված է եղել մարզպան Վասակի խնդրին՝ **«Մարզպան Վասակը պատմաբանների դատաստանի առաջ»**: Կ. Յուզբաշյանի փաստամանր, սակայն, նրա առաջին աշխատությունը՝ հրատարակված դեռ 1901 թ. «Հանդես ամսօրեայ»-ում, նվիրված է բյուզանդական բանաստեղծուհի Կասիային: Այդ հոդվածը գրվել է բյուզանդագետ Կ.

²⁰ Պ. Հովհաննիսյան, Ականավոր հայագետ Նիկողայոս Ադոնցի անձնական արխիվը, «Սյունյաց երկիր», էջ 45:

Կրումբախերի՝ «Կասիա» վերնագրով մի հետազոտության առիթով²¹: Նույն թվականին, ըստ հետազոտողի, լույս է տեսնում Ն. Ադոնցի՝ բանավիճային բնույթի ընդարձակ հոդվածը՝ գրված ի պատասխան Ս. Մալխասյանի: Աշխատությունը նվիրված է «Նախնական պատմությանը»: Իսկ 1908 թ. Ս. Պետերբուրգում լույս է տեսել Ն. Ադոնցի **«Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում»** կոթողային մենագրությունը, որը նրա մագիստրոսական թեզն էր, տպագրվել է պաշտպանությունից մեկ տարի առաջ, ռուսերեն՝ Պետրոգրադի պետական համալսարանի «Բնագիրներ և ուսումնասիրություններ» շարքում: **«Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում»** աշխատությունը 20-րդ դարի հայագիտության խոշոր նվաճումներից է: Երկը նվիրված է հայոց քաղաքական կյանքի ամենամնայուն՝ նախարարական համակարգի քննությանը: Այստեղ Ն. Ադոնցը հայ նախարարության քննությունը կապում է պարսկապարթևական պետության, ավելի ճիշտ՝ Իրանական աշխարհի քաղաքական զարգացման հետ²²: Այնուհետև մեկը մյուսի հետևից լույս տեսան **«Հին հայոց աշխարհայացքը»**, **«Քաղաքական հոսանքները հին Հայաստանում»**, **«Հայաստանի ոսկեհանքը»**, **«Բագրատունյաց փառքը»** և մենագրական այլ աշխատություններ:

Ն. Ադոնցի պատմագիտական գլուխգործոցը **«Հայաստանի պատմություն»** աշխատությունն է: Այս երկը ամենատխուր ճակատագիրն ունեցավ: Մ. Իշխանին Ն. Ադոնցը խոստովանել էր, որ ծրագրել է կազմել Հայոց քառահատոր պատմությունը: Երբ թվացել է՝ արդյունքն արդեն մոտ է, հասկացել է, որ սխալ հիմքերի վրա է կառուցել և սկսել է նորից աշխատել երկի վրա: Մեզ հասածը միայն առաջին հատորն է, որ 1946 թ. հրատարակվեց Փարիզում՝ «Histoire d'Arménie. Les origines du x^e siècle du VI^e»: Վերջինս Ն. Ադոնցի գրած պատմության միայն ուրարտական շրջանն է ներկայացնում (մ.թ.ա. IX-VI), որը ոմանց, ըստ Պ. Հովհաննիսյանի, թյուրիմացաբար կարծել է տվել, թե Ն. Ադոնցը կյանքի վերջին շրջանում զբաղվել է Ուրարտուի պատմության քննությամբ²³:

²¹ Կ. Յուզբաշյան, Ն. Ադոնցի գիտական ժառանգությունը, «Պատմա-բանասիրական հանդես», 1962, N 4, էջ 115-128:

²² Գ. Գյուզալյան, Նիկողայոս Ադոնցը որպես պատմաբան, Լիբանան, 1943, էջ 2:

²³ Պ. Հովհաննիսյան, Ն. Ադոնցի «Հայոց քննական պատմության» ստեղծագործական ճակատագիրը (Ծննդյան 130-ամյակի առթիվ), «Պատմա-բանասիրական հանդես», 2001, N 1, էջ 63-78:

Ն. Ադոնցի գիտական ժառանգության մեջ ուրույն տեղ ունեն Հայկական հարցին նվիրված այնպիսի ուսումնասիրություններ, ինչպիսիք են՝ «**Հայկական հարցի շուրջ Թուրքիայում**», «**Հայկական հարցը և գերմանական ծրագրերը**», «**Թուրքական հայտագիրը և Թուրքահայաստանը**», «**Թուրքիայի անդամահատումը**», «**Հայկական հարցը Սևրում**», «**Մեծ եղեռնի տարելիցին**» և այլն:

Թերևս առաջին անգամ Ն. Ադոնցի պատմագիտական մեթոդի մասին խոսում է Գ. Գյուզալյանը: Ըստ նրա՝ Ն. Ադոնցի մեթոդն ու նյութը նոր են. եթե մինչև նախորդ դար պատմաբաններն ունեցել են ուսումնասիրման երկու նյութ՝ մի կողմից՝ արտաքին քաղաքական դեպքերի նկարագրությունը, բայց ոչ հայոց քաղաքական կյանքի հոլովույթը, և իրենց ուշադրությունը սևեռել են դեպքերին ու դիպվածներին, Ն. Ադոնցը կենտրոնացավ անձերի՝ թագավորների, զորավարների վրա՝ այդու պատմությունը դարձնելով նաև կենսագրություն²⁴:

Հայագետի հետազոտական մեթոդի էությունն այն է, որ նա հնարավորինս փորձում է գտնել դեպքերի պատճառը, ծագումը, որից էլ, ըստ Գ. Գյուզալյանի, առաջանում է նրա կողմից հաճախ կիրառվող գենետիկ կամ ծագումնաբանական մեթոդը: Ն. Ադոնցը գենետիկ մեթոդը վերջին տարիներին կիրառեց հայ մի շարք նախարարական տների ծագումը որոշելիս: Այս մեթոդը, որքան և անհրաժեշտ, միակը չէ, սակայն, դա լրացնում է բանասիրական կամ ֆիլոլոգիկ մեթոդը: Լեզուն արտահայտում է հասարակական կյանքի և մշակութային ձևերի պատկերը, մշակում է բառեր, տերմիններ, որոնք, Գ. Գյուզալյանի փաստամամբ, ընկերային և քաղաքական դրություններ են բնորոշում: Բառերի միջոցով պատկերացնել հասարակական կյանքը, դասային հարաբերությունները: Թե որքան անհրաժեշտ է համարում Ն. Ադոնցը նյութին այսպիսի մոտեցումը, ցույց է տալիս այն, որ նա մի ամբողջ հատոր՝ «Ստուգաբանական ուսումնասիրություններ» անունով, նվիրել է այդ խնդրին, բայց չի հրատարակել²⁵: Բացի գենետիկ և բանասիրական մեթոդներից՝ գիտնականը գործածում է նաև համեմատական և նկարագրական մեթոդները: Հայոց կյանքի համեմատությունը պիտի կատարվի պատմական այն միջավայրի հետ, որտեղ ապրել է

²⁴ Գ. Գյուզալյան, նշվ. աշխ., էջ 4:

²⁵ Հմմտ. նույն տեղում, էջ 9:

հայությունը: Նկարագրական մեթոդով էլ նա ներկայացնում է հայ նախարարության պատկերը²⁶:

Ն. Ադոնցի բանասիրական աշխատանքները հիմնականում վերաբերում են հին հայկական բնագրերին ու մատենագրության առանձին դեմքերին՝ Աստվածաշնչի հայերեն թարգմանությանը, Մ. Մաշտոցին, Դ. Թրակացու հայ մեկնիչներին, Եզնիկ Կողբացուն, Կորյունին, Մ. Խորենացուն, Մ. Կաղանկատվացուն և այլն:

Գիտնականի բանասիրական բնույթի կարևորագույն աշխատությունը՝ «**Дионисий Фракийский и армянские толкователи**», լույս է տեսնում 1915 թ. «Bibliotheca armeno-georgica» մատենաշարում: Այս երկը կարևոր դեր խաղաց հայ քերականագիտական մտքի, հունաբան դպրոցի, գրաբարի շրջանաբաժանման և հարակից խնդիրների հետագա ուսումնասիրության համար: Ն. Ադոնցի այս աշխատությունն այնքան արժեքավոր էր, որ ռուսերենից թարգմանվեց ոչ միայն հայերեն, այլև ֆրանսերեն:

Ն. Ադոնցի գրչին են պատկանում Բրոկհաուզ-Էֆրոնի հայտնի հանրագիտարանի երկրորդ հրատարակության՝ հայոց լեզվին, գրականությանը և պատմությանը նվիրված հոդվածները: Հայոց լեզվին հատկացված էջերում գիտնականը մանրամասն խոսում է հայերենի ծագման մասին:

Հայ գրականությանը նվիրված հոդվածում հեղինակն ուրվագծում է հայ միջնադարյան մատենագրության զարգացումը՝ ընդգրկելով բազմաթիվ գործեր՝ նշելով եղած հրատարակություններն ու թարգմանությունները:

Այս շրջանի լավագույն աշխատությունը Մեսրոպ Մաշտոցին և նրա աշակերտներին նվիրված ուսումնասիրությունն է. «Հանդես ամսօրեայ»-ում 1925 թ. Ն. Ադոնցը հրապարակում է «Անձանօթ էջեր Մաշթոցի եւ նրա աշակերտների կեանքից ըստ օտար աղբիւրների» աշխատանքը, որտեղ ի հայտ է բերում քրիստոնեության պատմությանը վերաբերող ոչ հայկական աղբյուրներում հիշատակվող նոր փաստեր Մ. Մաշտոցի կենսագրությունից, որոնք կամա թե ականա զանց է առել նրա կենսագիր Կորյունը:

²⁶ Հմմտ. նույն տեղում, էջ 11-12:

Մյուս բնագավառները, որտեղ Ն. Ադոնցը հասել է մեծ արդյունքների, հին հայկական դիցաբանությունը և հայոց քրիստոնեական եկեղեցու պատմությունն են: Այս առումով հատկանշական են Հայոց Հայսմավորքներին, Ճառընտիրներին, Ճաշոցներին նվիրված նրա ուսումնասիրությունները: Շարունակելով իր պրպտումները՝ Ն. Ադոնցը մի հոդված է գրում հայ-ծաթերի մասին (**«Հայ-ծաթերի ծագման մասին»**, Հանդէս ամսօրեայ, 1912), փորձում է որոշել Տորքի պաշտամունքի ծագումը (**«Տորք աստված հին Հայոց»**, Վիեննա, 1911)՝ ցույց տալով, որ նա Տարկուի տեղայնացված տարբերակն է (**«Տարկուն հին հայերի մոտ»**, Փարիզ, 1927):

Առանձնակի պետք է անդրադառնալ բյուզանդագիտության ոլորտում Ն. Ադոնցի ավանդին: Հայ պատմագիտական միտքը բավական ուշ է զբաղվել բյուզանդագիտության խնդիրներով, այն էլ՝ հայ-բյուզանդական հարաբերությունների համատեքստում: Ժամանակակից հայ բյուզանդագիտության ակունքները հենվում են Ն. Ադոնցի տեսությունների վրա: Համաշխարհային գիտական հանրությանը Ն. Ադոնցը հայտնի էր որպես բյուզանդագետ իր մի շարք ուսումնասիրություններով, որոնցից են, օրինակ, **«Հայերը բյուզանդական գիտությանց մեջ»**, **«Բյուզանդական էպոսի պատմական հիմքերը»**, **«Հայ-բյուզանդական ուսումնասիրություններ»** և այլն:

Ն. Ադոնցն իր ողջ կյանքում գիտելիքների անսպառ պաշարի, աննկուն աշխատասիրության շնորհիվ թերևս առաջինը արդի պատմության մեջ ըստ արժանվույն ներկայացրեց պատմական Հայաստանն ամբողջ աշխարհին:

Ն. Ադոնցի խոսքերը՝ «Քաջերի սահմանը զենքը չէ, որքան հոգեկան այն մղումը, որ տանում է դեպի զենք», իբրև ուղենիշ ընդունելով՝ հոգեկան նման մղումով պիտի հայրենիք բերենք նրա գործերը, որոնք գտնվում են Բեյրութի Համազգային գրական պահոցի՝ Ն. Ադոնցի փակ արխիվում:

ԳԼՈՒԽ 1

Ն. ԱՂՈՆՑԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅ ՔԵՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅՈՑ ԼԵԶԿԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1.1. Ն. ԱՂՈՆՑԸ ՀԱՅ ՔԵՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴԻՐ

Հայ քերականագիտության՝ իբրև ինքնուրույն գիտակարգի սկզբնավորումը կապվում է Ն. Աղոնցի անվան հետ, որ 1915 թ. Սանկտ Պետերբուրգում տպագրում է հիմնարար մի աշխատություն՝ «Дионисий Фракийский и его армянские толкователи», որտեղ քննում է Դ. Թրակացու «Քերականական արվեստ»-ի հայերեն թարգմանություն-փոխադրությունը և նրա հայ մեկնիչների գործերը՝ V-XI դդ. ընդգրկմամբ, թեև պետք է նշել, որ Ն. Աղոնցի բացաժ ճանապարհի ռահվիրաներից են նաև Գ. Ավետիքյանը, Շահան-Ջրպետը:

Հակառակ Ն. Մառի սպասելիքների՝ Ն. Աղոնցն ի սկզբանե չմտավ լեզվաբանության ասպարեզ: Այդ ժամանակ նրան առավելապես հետաքրքրում էին պատմագիտության խնդիրները, և պատահական չէ, որ նրա մագիստրոսական թեզը՝ «Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում» (պաշտպանել է 1909 թ. ապրիլի 5-ին), նվիրված էր պատմագիտական նյութի, որը, սակայն, էապես հիմնված էր լեզվաբանական հետազոտությունների արդյունքների վրա:

Ինչո՞վ էր պայմանավորված Ն. Աղոնցի հետաքրքրությունը Դ. Թրակացու երկի նկատմամբ: Հին Հունաստանում քերականության, իբրև փիլիսոփայությունից անկախ գիտության, ծագումն ու ձևավորումը վճռորոշ դեր ունեցան Հայաստանի համար: Հայոց քերականության զարգացման համար հզոր ազդակ էին 4-5-րդ դդ. Հայաստանում կատարված նշանակալից իրադարձությունները, հատկապես՝ ինքնուրույն և թարգմանական մատենագրության ստեղծումը, որը չէր կարող գործունե հետաքրքրություն չառաջացնել լեզվաքերականական գիտելիքների նկատմամբ, հատկապես որ Հայաստանը հելլենիստական մշակույթի կրողն էր:

Ինչպես հունաբան դպրոցի հետազոտող Ա. Մուրադյանն է վկայում, Հայաստանը հելլենիստական մշակույթի ոլորտում ընդգրկվել է շատ վաղ ժամանակներից, դեռևս Ալեքսանդր Մակեդոնացու, ապա նրան հաջորդող Սելևկյանների տիրապետության ժամանակաշրջանից սկսած: Հելլենիստական մշակույթը Հայաստանում վերելք է ապրել II-ի դդ. և հասել բարձր մակարդակի հատկապես Տիգրան Բ-ի ու նրա որդու՝ Արտավազդ Ա-ի ժամանակ²⁷:

Ն. Ադոնցի ուսումնասիրության կարևորությունն ըմբռնելու համար պետք է նախ ճշտել քերականության ըմբռնումները Դ. Թրակացու և նրա հայ թարգմանիչների ու մեկնիչների գործերում: Դեռևս Դ. Թրակացուց առաջ և անգամ նրա օրոք հույները, քերականություն ասելով, այն չէին հասկանում, ինչ այսօր մենք: «Քերականական արվեստ» կամ «քերականություն» ասելով՝ նրանք պատկերացնում էին հին տեքստերի ուսումնասիրությունը, ավելին՝ Գ. Բ. Ջահուկյանի բնորոշմամբ՝ «քերականությունը նույնանում էր գրականության հետ՝ վերաբերելով գրավոր արտահայտված ամեն ինչի»²⁸: Այսինքն՝ լայն առումով՝ հույների հետաքրքրության առարկան լեզուն չէր, այլ տեքստը, լեզվի ուսումնասիրությունը ծառայում էր որպես միջոց տեքստի բովանդակության և կառուցվածքի բացահայտման, և, կարծում ենք, հենց այս հանգամանքն էր ծնունդ տվել ֆյուսեյականների ու թեսեյականների հայտնի վեճին, ըստ որի՝ անուններն իրերին տրվում են ըստ բնության կամ ըստ դրության: Աստիճանաբար, սակայն, քերականության իմաստը նեղանում է, և քերականություն ասելով՝ սկսում են նկատի ունենալ լեզվի կառուցվածքի բոլոր կողմերի քննությունը, իսկ լեզվաբանության, որպես գիտության, ձևավորումից հետո այն դառնում է լեզվի քերականական կառուցվածքն ուսումնասիրող բաժին՝ ներառելով հնչյունաբանությունը, բառագիտությունը, ձևաբանությունն ու շարահյուսությունը:

Ն. Ադոնցը քերականագիտության ուսումնասիրությունը ձեռնամուխ եղավ, ինչպես նրա Երկերի յոթհատորյակի կազմությունը ստանձնած Պ. Հովհաննիսյանն է հավաստում, Ն. Մառի առաջարկով, իր մագիստրոսական թեզի («Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում. քաղաքական կացությունը ըստ նախարարական

²⁷ Ա. Մուրադյան, Հունաբան դպրոցը և նրա դերը հայերենի քերականական տերմինաբանության ստեղծման գործում, Եր., 1971, էջ 46:

²⁸ Գ. Բ. Ջահուկյան, Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում, Եր., 1954, էջ 10:

կարգերի») պաշտպանությունից հետո: Ն. Ադոնցի ուսումնասիրության դերն այնքան ազդեցիկ էր հայ քերականագիտական մտքի զարգացման, ինչպես նաև հունաբան դպրոցի ուսումնասիրության գործում, որ նրա թարգմանության անհրաժեշտություն առաջացավ²⁹: Պ. Հովհաննիսյանի վկայմամբ՝ այդ ուղղությամբ մի անհաջող փորձ կատարվել էր դեռևս 1926 թ.՝ Վիեննայի Մխիթարյանների նախաձեռնությամբ: ՀՀ Ազգային արխիվի՝ Հայկ Բերբերյանի թողնում է պահվում այդ թարգմանության սևագիր օրինակը, որն իրականացրել է Գ. Ա. անվանատառերով մեկը: Ցավոք չի հաջողվել պարզել թարգմանչի անձը, թեև, ըստ Պ. Հովհաննիսյանի, նա ռուսահայ է: Ն. Ադոնցը ծանոթ է եղել թարգմանության այս փորձին, բայց խիստ դժգոհ է մնացել:

Այդ աշխատությունն այսօր, բարեբախտաբար, հաջող թարգմանված է «Արուեստ Դիոնիսեայ քերականի եւ հայ մեկնութիւնք նորին Դավթի Փիլիսոփայի, Անանուն Մեկնչի, Մովսեսի Քերդողի, Ստեփանոսի Սինեցոյ, Համամի Արեւելցոյ եւ Գրիգորի Մագիստրոսի» վերնագրով և ընդգրկված նրա Երկերի յոթատորյակի Գ հատորում: Երկի աննախադեպ արժեքի վկայությունն է նաև նրա ֆրանսերեն թարգմանությունը (Լուվեն, 1970): Ն. Ադոնցի աշխատանքի բացառիկ կարևորությունը պայմանավորված է մեկ այլ կարևոր հանգամանքով, որ նրա քննած ժամանակամիջոցը նախորդում էր տպագիր քերականությունների շրջանին, վկայված էր միայն ձեռագրերով, որոնք կարողացավ հրատարակել գիտնականը³⁰: Ն. Ադոնցից հետո ոչ մի հետազոտող Դ. Թրակացու «Քերականական արվեստ»-ի մեկնության քննական նոր բնագիր այլևս չկազմեց:

Ն. Ադոնցը գրում է. «Գիտակցելով այն վճռական դերը, որ խաղացել են քերականները հիշյալ դպրոցի (հունաբան- *ընդգծումը մերն է*) սկզբնավորման և զարգացման գործում, մենք ձեռնամուխ եղանք հաճախ հիշատակվող, սակայն ոչ որի կողմից չուսումնասիրված քերականական երկերի հետազոտությանը»³¹: Նա հաջորդիվ նկարագրում է ձեռագրերի երկարատև ու տաժանակիր պրպտումները էջմիածնում, Վենետիկում, Վիեննայում: Այդ որոնումները նրան բերեցին եզրահանգման, որ առաջին քերականների՝ Դավթի, Մովսեսի և Ստեփանոսի հեղինակային գործերը մեզ

²⁹ Ն. Ադոնց, Երկեր, Գ, Երևան, 2008, էջ VI:

³⁰ Հմմտ. Գ. Բ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 6:

³¹ Ն. Ադոնց, Երկեր, Գ, էջ XIII:

չեն հասել՝ «որպես առանձին գործեր»: Ձեռագրերում նրանց անունները կրող նյութերը ոչ այլ ինչ են, քան Մովսեսի «Քերականության»՝ Ստեփանոս Սյունեցու աստվածաբանական մեկնությունները: Յուրաքանչյուր գլխում, ըստ գիտնականի, նախ մեջբերվում են Մովսեսի խոսքերը, ապա «օժտվում են» Ստեփանոսի մեկնությունով, ընդ որում, լուսանցքում ամեն անգամ նշվում է համապատասխան հոդվածի հեղինակի՝ Մովսեսի կամ Ստեփանոսի անունը: Ն. Ադոնցը նշում է. «Այս աշխատությունը հանրաճանոթ էր: Կիրակոս պատմիչը Սուրբ Հոգու ծագման վերաբերող լատինների հետ բանավեճում հղում է դրան և երկու անգամ մեջբերում կատարում, ընդ որում առաջին մեջբերումը սխալմամբ վերագրում է Մովսեսին, թեև երկուսն էլ պատկանում են Ստեփանոսին»³²:

Փնտրվող երկերը Ն. Ադոնցին հաջողվել է գտնել Գրիգոր Մագիստրոսի, Հովհաննես Երզնկացու և Եսայի Նշեցու քերականական բանաբաղների կազմում: Հաջորդ քայլը եղել է այդ բանաբաղների համեմատությունը, ապա հույն մատենագրության մեջ առկա նմանատիպ «լուծմունք-մեկնությունների (scholia)» հետ զուգադրահամեմատական քննությունը³³:

Ն. Ադոնցի այս աշխատությունն աչքի է ընկնում, այսպես ասած, չեզոքությամբ, զգուշավոր գիտնականն այստեղ փաստերի արձանագրողն է և ոչ մեկնիչը, դա էլ հիմք է տալիս պնդելու, որ Ն. Ադոնցը, գտնելով և համեմատելով վերոնշյալ երկերը, դրանց ընձեռած նյութը դրել է կողք կողքի՝ կարծես վերլուծությունը թողնելով ընթերցողին:

Գ. Բ. Ջահուկյանը հին և միջնադարյան Հայաստանի քերականական և ուղղագրական աշխատություններին նվիրված իր ուսումնասիրության մեջ նշում է, որ Ն. Ադոնցը աղբյուրագիտական լուրջ հետազոտություն է կատարել՝ զուգադրելով ու համեմատելով Դ. Թրակացու հույն-բյուզանդական և հայ մեկնիչների, հատկապես՝ Դավթի աշխատությունները, սակայն Ն. Ադոնցի քննության մեկնակետը համարում է բանասիրական: Ընդ որում, «բանասիրական» բնորոշումն այս պարագայում ունի նրբիմաստ, այսինքն՝ Գ. Բ. Ջահուկյանն անուղղակիորեն թերություն է համարում: «Դժբախտաբար,- գրում է նա,- Ադոնցը մի կողմից՝ տեքստերին մոտեցել է միայն բանասիրական տեսանկյունից՝ դրանք համարելով հունաբան դպրոցի հարցերի

³² Նույն տեղում, էջ LVII:

³³ Նույն տեղում, էջ XIII-XIV:

պարզաբանման մի միջոց, մյուս կողմից՝ ունեցել է որոշ կանխակալ կարծիք՝ փաստորեն հանգելով ամեն մի ինքնուրույնության ժխտման»³⁴:

Ինչ պատճառներով է Գ. Բ. Ջահուկյանը հանգում այս պնդմանը: Նախ հիշենք, որ Դ. Թրակացու օրոք գերակա էր քերականական արվեստի զուտ բանասիրական մոտեցումը, որի մասին խոսում է հենց ինքը՝ Գ. Բ. Ջահուկյանը³⁵, ավելին՝ Ա. Մուրադյանն այս առթիվ գրում է. «Քերականության առաջացման հիմքը հանդիսացել է հին տեքստերի բանասիրական ուսումնասիրությունը, որը մեծապես նպաստել է լեզվի բազմակողմանի քննությանը»³⁶, ուստի Ն. Ադոնցին բանասիրական մոտեցման համար քննադատելը, կարծում ենք, ճիշտ չէ:

Գ. Բ. Ջահուկյանն ինքն ընդգծում է, որ այդ ժամանակ *քերականություն* ասելով՝ հասկանում էին գրականությունը, գրավոր ամեն ինչը, թեև լեզվական հարցերի քննությանն ավելի մեծ տեղ էին հատկացնում, հատկապես՝ հնչյունաբանությանն ու ձևաբանությանը³⁷, ուստի նյութի հանդեպ ունեցած բանասիրական մոտեցումը դառնում է պարտադիր, իսկ առանց հունաբան դպրոցի կատարած աշխատանքի բացահայտման՝ անհնար է ներկայացնել հայ քերականագիտության սկզբնավորումը, ընդ որում, Ն. Ադոնցն իր ուսումնասիրության մեջ միանշանակ գնահատականներ չի հայտնում, մեր քերականներին չի համարում ստրկական հետևորդներ, այլ հակառակը՝ վեր է հանում այն բազմաթիվ տարբերությունները, որոնք կային հայերեն փոխադրության և բնագրի միջև:

Ա. Մուրադյանն այս առնչությամբ նշում է. «Հենվելով Փիլոնի երկերի և Թրակացու Քերականության թարգմանությունների լեզվի նմանության վրա, Ադոնցը ենթադրում է, որ հավանաբար առաջին քերականներն էլ եղել են այս դպրոցի (հունաբան- ընդգծումը մերն է) հիմնադիրները, հետևաբար քերականական աշխատությունների ուսումնասիրությունը հնարավորություն կտա բացահայտելու այս դպրոցի նկարագիրը...»³⁸ :

³⁴ Գ. Բ. Ջահուկյան, նշվ. աշխ. էջ 4-5:

³⁵ Հմմտ. նույն տեղում, էջ 22:

³⁶ Ա. Մուրադյան, նշվ. աշխ., էջ 52:

³⁷ Գ. Բ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 24:

³⁸ Ա. Մուրադյան, նշվ. աշխ., էջ 39:

Եթե անդրադառնանք Գ. Բ. Ջահուկյանի քննադատության երկրորդ հատվածին, ըստ որի՝ Ն. Ադոնցը «կանխակալ կարծիք ունի» և հակված է «ամեն մի ինքնուրույնության ժխտման», ապա կնկատենք, որ այս կարծիքը ծագել է Դ. Թրակացու քերականության թարգմանչի անձի բացահայտման փորձերի ընթացքում:

Դ. Թրակացու «Քերականական արվեստ»-ի թարգմանիչը բարձր հավանականությամբ կարող է լինել Դավիթ փիլիսոփան, որն արդեն թարգմանել էր «Սահմանքը», այնինչ Ն. Ադոնցը հերքում է այս հավանականությունը:

Գ. Ջահուկյանը նշում է, որ Ն. Ադոնցը տարբերում է Դավիթ Փիլիսոփային կամ «Սահմանք»-ի թարգմանչին ինչպես Թրակացու երկի թարգմանչից, այնպես էլ նրա մեկնիչից նաև այն փաստի հիման վրա, թե «Սահմանք»-ում հունարեն κατάληψις բառը թարգմանված է որպես «հասողություն»՝ «հասկանալ» բայից բխած, իսկ Դ. Թրակացու թարգմանության մեջ այն արդեն թարգմանվել է որպես «թողումն»՝ «թողնել» բայից: Ն. Ադոնցն այս տարբերակումից եզրակացնում է, թե միևնույն անձը նույն բառը տարբեր կերպ չէր թարգմանի: Ըստ նրա՝ բառի երկակի թարգմանությունը թույլատրում է երեք հեղինակի գոյություն. մեկը թարգմանել է «Սահմանք»-ը, մյուսը՝ Դ. Թրակացուն, իսկ երրորդը նա է, որը Դիոնիսիոսի մեկնության մեջ օգտվում է նշված բառի անճիշտ թարգմանությունից:

Ն. Ադոնցի երկրորդ փաստարկով՝ առաջին երկու հեղինակները ճարտասանությունը բաժանում են երեք տեսակի, ըստ որում, եթե մեկնիչը հավանություն է տալիս դրան, «Սահմանք»-ի թարգմանիչն այն «բարվոք» չի համարում³⁹: Գ. Բ. Ջահուկյանը այս կապակցությամբ ոչ միանշանակ, բայց պնդում է. «Առաջին հայացքից հիմնավոր թվացող այս փաստարկները խարխլվում են, եթե մենք նկատի ենք առնում մի շարք այլ հանգամանքներ. նախ Ն. Ադոնցը քննվող հեղինակներին դիտում է ոչ իբրև այնպիսի մարդկանց, որոնք կարող են փոխել իրենց հայացքները, որոշ բաներ մոռանալ, որոշ ընդունված բաներ անփոփոխ թողնել և այլն,- այլ իբրև այնպիսի անձնավորությունների, որոնք ունեն քարացած, երբեք չփոխվող հայացքներ, ոչ մի լեզվական վրիպում թույլ չեն տալիս»⁴⁰: Մեր կարծիքով, Ն. Ադոնցի պնդումն ավելի հիմնավոր է: Նրա հիմնափաստարկներին գումարենք նաև

³⁹ Հմմտ. Գ. Բ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 54:

⁴⁰ Նույն տեղում:

թարգմանության խնդրահարույց տարբեր ձեռագրերը, տարբերվող մոտեցումները, որոնք լրացուցիչ վկայում են երկու, անգամ՝ երեք թարգմանիչների աշխատանքի: Ինչպես Ն. Ադոնցի և Գ. Բ. Ջահուկյանի մեջբերումներն են վկայում, «Քերականական արվեստ»-ի հայերեն տարբերակներում մի կողմից տեսնում ենք բնագրի «կուրորեն» նմանվող թարգմանություն, դրա «ստրկական ընդօրինակում», մյուս կողմից՝ ինքնակա, ազատ թարգմանություն, իսկ երրորդ կողմից՝ սահմանումների մանրամասն մեկնություններ: Այս առնչությամբ խիստ ուշագրավ է Ա. Բագրատունու կողմից հունաբան դպրոցի երկերի խմբավորումն ըստ անհասկանալիության աստիճանի: Նա տարբերակում է երկերի երեք խումբ, և հայերեն ոճի հստակության ջատագովներին զգուշացնում է մյուս երկու խմբերի հունաբան մատենագիրներից, որոնց անվանում է «հոռմըցած հեղինակներ»⁴¹: Կարծում ենք՝ Ա. Բագրատունու կողմից երկերը հենց երեք խմբերի բաժանելը պատահական չէ, ավելին՝ անուղղակի ապացույցն է Դ. Թրակացու երկի երեք թարգմանիչների: Այժմ անդրադառնանք Ն. Ադոնցի առանձնացրած վիճելի խնդիրներին. հայ թարգմանիչը հունարենի հինգ հոլովի դիմաց բերում է վեցը՝ ավելացնելով առաքականը, որը, ըստ Ն. Ադոնցի, կասկածահարույց է, և Գ. Բ. Ջահուկյանը այս տեսակետը ևս կանխակալ վերաբերմունքի հետևանք է համարում: Ն. Ադոնցը գրում է. «Բնագրին այդքան ստրկական հավատարմության պայմաններում հայերենում օտար տարրի երևան գալը կարող է արդարացիորեն կասկած ծնել...»⁴²: Այս նախադասությունը Գ. Բ. Ջահուկյանին առիթ է տվել կարծելու, թե Ն. Ադոնցը թարգմանությունը «ստրկական ընդօրինակում» է համարում. «Նախ, ինչպես նշվել է, նա ունի այն կարծիքը, թե թարգմանությունը ներկայացնում է բնագրի ստրկական ընդօրինակում, և ելնելով այս կանխակալ կարծիքից՝ կասկածի տակ է առնում ամեն մի ինքնուրույնություն»⁴³:

Ն. Ադոնցը վերը մեջբերված իր խոսքերից հետո գրում է, թե առաքական հոլովի հավելումը հավանաբար թյուրիմացություն է, և հնարավոր է՝ այն վերաբերում է նախորդ պարբերությանը, բայց դա չի նշանակում, որ ժխտում է ամեն մի ինքնուրույնություն: Ն. Ադոնցը գալիս է այն եզրակացության, որ «թարգմանության

⁴¹ Հմմտ. Ա. Մուրադյան, նշվ. աշխ., էջ 60:

⁴² Հմմտ. Գ. Բ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 67:

⁴³ Նույն տեղում, էջ 68:

միօրինակությունը կապված է ոչ թե թարգմանչի անձնավորության, այլ տվյալ դպրոցի կողմից ընդունված թարգմանական արվեստի առանձնահատկությունների հետ»⁴⁴: Ապա հավելում է. «... անձինք, որ անցել են այս դպրոցի հունով, կարող էին միմյանցից անկախ թարգմանել միևնույն բնագիրը այնքան նման, որ նրանց թարգմանությունները կմիաձուլվեին, կամ, համենայնդեպս, դժվար կլինի դրանք ճանաչել իբրև տարբեր [անհատների] աշխատանքներ: Այս պայմաններում անհնարին է թվում լեզվական փաստերի հիման վրա որոշել և հավաստել թարգմանական հուշարձանների հեղինակների անձնավորությունը»⁴⁵:

Թվում է, թե թարգմանության՝ տարբեր աստիճանների հարազատությունը բնագրին, այսինքն՝ դրա նյութականությունը, կարող է հիմք ծառայել թարգմանությունները զանազանելու և տարբեր հեղինակների վերագրելու, բայց Ն. Ադոնցը զգուշացնում է, որ դա դժվար կլինի, քանի որ «հելլենացման աստիճանը» պայմանավորված է ավելի շուտ նրանով, թե ո՛ւմ են թարգմանում, քան թե՛ ո՛վ է թարգմանում: Գիտնականի հաղորդմամբ՝ մեծ հեղինակությունների աշխատությունները, որոնք ուսումնասիրության և մեկնության առարկա էին, թարգմանվում էին բժախնդիր ճշգրտությամբ, բնագրի տառին ստրկական հավատարմությամբ, իսկ մեկնությունները և ուսումնասիրությունները, որ գրել են պակաս հայտնի հեղինակները այս նույն երկերի վերաբերյալ, հայերեն թարգմանությամբ աչքի էին ընկնում պակաս կաշկանդվածությամբ և առավել ազատությամբ՝ հոգուտ մայրենի լեզվի կանոնների պահպանման⁴⁶:

Գ. Բ. Զահուկյանը, թարգմանչի կողմից կատարված հավելումները գիտակցված համարելով, ի վերջո համաձայնում է Ն. Ադոնցի «ստրկական հավատարմություն» բնորոշմանը: Այս դիրքից հետևողական լինելու դեպքում նա այս աշխատանքը ոչ թե փոխադրություն, այլ ազատ թարգմանություն պիտի համարեր, քանի որ փոխադրությունը հավելումներ չի ենթադրում, իսկ թարգմանությունը կարող է դրանք պարունակել, թեև չափավոր: Թարգմանիչը երբեմն զանց է առնում այդ հանգամանքը՝ իր երկը իբրև ազատ թարգմանության նմուշ ներկայացնելով: Կարող ենք

⁴⁴ Ա. Մուրադյան, նշվ. աշխ., էջ 68:

⁴⁵ Ն. Ադոնց, Երկեր, Գ, էջ CLXXVI:

⁴⁶ Հմմտ. նույն տեղում, էջ CLXXVI:

արձանագրել, որ Գ. Բ. Զահուկյանի և Ն. Ադոնցի տեսակետներն իրականում փոխադրացնող են:

Դիոնիսիոսի երկի առկա գրչագրերը, ըստ Ն. Ադոնցի, աչքի չեն ընկնում խոր հնությանը, բոլորը սկիզբ են առնում հետմագիստրոսյան ժամանակներից, և այս պարագայով է, թերևս, բացատրվում դրանց վատ վիճակը: Այս առիթով Ն. Ադոնցը գրում է. «Դիոնիսիոսի ներկա բնագրի դրսևորած թերություններն ակնհայտ են և տարակույսի տեղիք չեն տալիս: Քանի որ հայերեն թարգմանությունը բառացի է, այսպես ասած «նյութական», և տառ առ տառ համապատասխանում է հունարեն բնօրինակին, ուստի և վերջինիս օգնությամբ դժվար չէ դիտել և հստակ որոշել հայերեն բնագրի և բնօրինակի տարածայնող կետերը: Երբեմն բնօրինակի անբավարար փոխադրությունը վերագրելի է թարգմանչին»⁴⁷:

Անդրադառնանք հետազոտողի մատնանշած հիմնական թերություններին: Այսպես՝

ա/ Բոլոր գրչագրերում բացակայում է հեղինակի անունը, և ոչ մեկում չի պահպանվել Դիոնիսիոսի անունը ներառող խորագիրը: «Իսկ մեկնիչներից միայն Դավիթն է, որ գիտե, թե իր կողմից մեկնվող երկը պատկանում է Դիոնիսիոս Թրակացուն: Անանունից և Մովսեսից, ցավոք, պակասում է ներածությունը. դժվար է ասել՝ նրանք ծանոթ են եղել Դիոնիսիոսի [անվան] թե ոչ: Ստեփանոսն, ամենայն հավանականությամբ, ձեռքի տակ է ունեցել մի օրինակ, որում հեղինակի անունը բացակայում էր: Համամն, որ ապրում էր IX դ. կեսերին, ոչ միայն չի ճանաչում Դիոնիսիոսին, այլև նրա աշխատանքը վերագրում է Հոմերոսին»⁴⁸:

բ/ Բոլոր օրինակներում կարդացվում է *գրեալ*՝ փոխանակ ակնկալվող *մակագրեալ*-ի, որը կհամապատասխաներ հունարեն բնագրի *ἐπιγράφας* բառին: Միայն Անանունի մեկնության մեջ է պահպանվել ճիշտ ընթերցումը՝ «եւ մակագրեալ իմ այժմ զրտին քո գարշապար, ունայնս պանծաս»⁴⁹:

⁴⁷ Նույն տեղում, էջ LI:

⁴⁸ Նույն տեղում, էջ LII:

⁴⁹ Հմմտ. նույն տեղում, էջ 132:

զ/ Նայ բաղաձայնների մասին ասածը չի համապատասխանում հունարեն բնագրի ամբողջ ծավալին՝ «Եւ նայք են չորք. դ, մ, ն, ր»⁵⁰:

ե/ 14-րդ գլխում հայերեն բնագրում զանազանվում է ութ խոնարհում, մինչդեռ հունարենում վեց, սակայն հետագայում թվարկվում է ոչ թե ութ, այլ տասը խոնարհում: Ն. Ադոնցը ենթադրում է, թե երկուսը՝ 8-րդը և 9-րդը՝ «<8> եւ ութերորդն՝ երկուորեակ յատուկքն ըէիւ, ռայիւ. որպիսի բեր-եմ, վառ-եմ: <9> եւ իններորդն՝ հոյիւ. որգոն կահ-եմ»⁵¹, հավելվածներ են, որոնք խորթ են սկզբնական թարգմանությանը:

զ/ 17-րդ գլխում հայերեն բնագրից պակասում է *եւ ստորադասեալ* արտահայտությունը, սակայն սկզբնապես այն ընթերցվում է, որը երևում է հայերեն բնագրից՝ *եւ ստորադասական է այս, որզան որ*:

ը/ «Յաղագս նախադրութեան» գլուխը նույնպես տեղիք է տալիս որոշ տարակույսների: Դավթի գործում կա ցուցում, որի համաձայն՝ հունարենն ունի 18 նախդիր՝ 6 պարզ և 12 բարդ: Այս տեղեկությունները, Ն. Ադոնցի հաղորդմամբ, առկա են նաև Դիոնիսիոսի բնագրում, սակայն դրանք բացակայում են ներկա հայերեն թարգմանությունից: «Թերևս այստեղ Դավիթը կախված է հունարեն մեկնությունից, որը, ինչպես կտեսնենք, եղել է իր տրամադրության ներքո՝ իր մեկնությունը կազմելու ժամանակ: Սակայն ավելի հավանական է, որ դա հիշատակում էր նաև հայերեն թարգմանության մեջ, և այդ պատճառով նա հարկ է համարել կանգ առնել այս հանգամանքի վրա»⁵²:

թ/ Առոգանության մասին գլուխը նույնպես, Ն. Ադոնցի փաստմամբ, ոչ լրիվ է համընկնում բնօրինակին: Բացի այդ, *Դիկդիկոն* աղավաղված բառը ընթերցվում է բոլոր օրինակներում. միայն մի մեկնության մեջ հանդիպում է *Դիկկիկոն* ձևով: Առոգանությանը վերաբերող երկրորդ հատվածը որոշ մասերով ավելի մոտ է հունարենին: Երկու տարբերակի առկայությունն արդեն իսկ, ինչպես գիտնականն է վկայում, բնագրի վնասված լինելու նշան է:

ժ/ Ն. Ադոնցը նկատում է նաև, որ ոտքերին նվիրված գլխում ոտքերի հերթականությունը չի համընկնում հունարեն բնօրինակին, թեև այս դեպքը, ըստ նրա, կարելի է բացատրել և հունարեն բնօրինակով, որն օգտագործել էր հայ թարգմանիչը՝

⁵⁰ Հմմտ. նույն տեղում, էջ 8:

⁵¹ Նույն տեղում, էջ 25:

⁵² Նույն տեղում, էջ LIII:

«... տարածայնության այս և նման այլ դեպքեր նույնպես կարող են բացատրվել հայերեն թարգմանության համար նախագաղափար ծառայած հունարեն օրինակի պատահական հատկություններով»⁵³:

Քննախույզ գիտնականը շարունակում է. «Չանց առնելով առավել կամ պակաս վիճահարույց տեղիները և հիմնվելով ակնառու այն օրինակների վրա, որոնք հավաքված և զետեղված են Դիոնիսիոսի բնագրի մեր ծանոթագրություններում *Armenius discrepans* [«տարածայնող հայերենը»] խորագրի ներքո, հանգում ենք այն եզրակացության, որ մեզ հասած Դիոնիսիոսի [թարգմանության] գրչագրերը ծագում են մի ընդհանուր, նշված իմաստով աղավաղված մայր-գրչագրից»⁵⁴:

Ի լրացումն հունաբան դպրոցի պատկերի՝ նշենք, որ հունաբան հայերենի արհեստական, հայերենի ոգուն խորթ նորամուծությունները բանասերներից շատերին առիթ են տվել պնդելու, թե հունաբան հայերենը գրաբարի աղավաղումն է: Այս դիտանկյունից, սակայն, չի կարելի անտեսել հունաբան հայերենի դրական ազդեցությունը, և Ա. Մուրադյանն իր գնահատման հարցում հաստատ չէր սխալվում՝ հունաբան դպրոցը իր արժանիքներով ու թերություններով հանդերձ դիտելով որպես իր ժամանակի կենսական պահանջները բավարարող, ուստի այդ տեսակետից որոշ իմաստով անխուսափելի և առաջադիմական մի երևույթ, որը բացառիկ դեր է կատարել հայ ժողովրդի մտավոր ու հոգեկան մշակույթի ձևավորման մեջ ոչ միայն V-VII, այլև միջին դարերում⁵⁵:

Գ. Բ. Ջահուկյանը, Ն. Ադոնցի հետ սկզբում տարակարծիք լինելով հանդերձ, արժևորում է նրա գործը՝ գրելով. «Նրա գործը հայ քերականության պատմության սկզբնական շրջանի համար մի կարևոր աղբյուր է և մեծ դյուրություն է ընձեռում այդ մասնաճյուղով զբաղվողներին»⁵⁶:

Այսպիսով՝

Ա) Դ. Թրակացու քերականության թարգմանությունն ինքնանպատակ չէր, այլ պարզ անհրաժեշտություն՝ հասարակական-մշակութային կյանքի պահանջներից բխող: Հայաստանում դարավերջին արդեն ձևավորվել էր քաջիմաց և կրթված այրերի մի

⁵³ Նույն տեղում, էջ LIV:

⁵⁴ Նույն տեղում, էջ LIV:

⁵⁵ Հմմտ. Ա. Մուրադյան, նշվ. աշխ., էջ 13:

⁵⁶ Գ. Բ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 5:

ասվար խավ, որն իր աշխատանքներով սկզբնավորում էր դպրոց՝ ուղղորդելով հայկական գիտության և մշակույթի զարգացումը: Այդ դպրոցի ներսում էլ կային ներքին բաժանումներ, այսինքն՝ գիտա-կրթական կյանքը Հայաստանում VI դարասկզբին աշխույժ էր և բեղմնավոր:

Բ) Ն. Ադոնցն իր «Դիոնիսիոս Թրակացին և նրա հայ մեկնիչները» աշխատությամբ դարձավ հայ քերականագիտության պատմության հիմնադիրը՝ աշխարհի տարբեր անկյուններից հավաքելով և ուսումնասիրելով մեկնիչների ձեռագրերը՝ իբրև արհեստավարժ ձեռագրեր: Նա բացահայտեց, որ դրանք իբրև առանձին գործեր չեն մեզ հասել, դրանք պահպանվել են որպես Գ. Մագիստրոսի քերականության՝ Ստ. Սյունեցու աստվածաբանական մեկնություններ: Ն. Ադոնցն ի վերջո որոշակիորեն փարատեց թարգմանչի անձի հետ կապված մշուշը՝ առաջին անգամ խոսելով Դ. Թրակացու երկի հայերեն թարգմանության ոչ թե մեկ, այլ առնվազն երեք հեղինակների մասին, որոնք փաստացի ներկայացնում էին հունաբան դպրոցի տարբեր ուղղությունները:

Գ) Բոլոր փոփոխությունները, որ մատնացույց է արել Ն. Ադոնցը, հավելումներ են, այսինքն՝ թարգմանիչը ոչ մի բան չի պակասեցրել, հակառակը, լրացրել է: Այստեղ մենք առավել հակված ենք տեսնելու ոչ թե պարզ թյուրիմացություն կամ անհետևողականություն՝ թարգմանչի կողմից, այլ հայոց լեզուն ավելի հարուստ և գունեղ ներկայացնելու ակնհայտ ձգտում:

Դ) Այս երկն իր պարունակած բազմաբնույթ հավելումների պատճառով ոչ թե փոխադրություն, այլ ազատ թարգմանություն պետք է համարել:

Ե) Մանրամասն ուսումնասիրելով գրչագրերի բոլոր տարբերությունները բնագրից՝ Ն. Ադոնցը գալիս է այն եզրակացության, որ դրանք ծագում են մի ընդհանուր «մայր-գրչագրից»:

Զ) Հունաբան դպրոցի առաջացումն իր դրական ու բացասական կողմերով հանդերձ՝ պատահական երևույթ չէր, այլ հայ-հունական քաղաքական, տնտեսական, մշակութային հարաբերությունների յուրօրինակ շարունակությունն ու զարգացումը:

1.2. Ն. ԱԴՈՆՑԻ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԸ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԲՆՈՒՅԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայ քերականագիտության պատմության հիմնադիր Ն. Ադոնցին, բնական է, պիտի հետաքրքրեր հայոց լեզվի բնույթի խնդիրը, որին նա մի ուշագրավ հոդված է նվիրել՝ «Հայոց լեզու» վերնագրով: Այս հոդվածում արտահայտված դիտարկումներն այսօր էլ ուշագրավ են արդի նոստրատիկ լեզվաբանության դրույթների տեսանկյունից, բացի այդ՝ Ն. Ադոնցը հայոց լեզվի պատմության իր շրջանաբաժանումն է կատարում: Ըստ նրա՝ լեզուն, զարգանալով էթնիկ առումով խայտաբղետ միջավայրում, չէր կարող պահպանել իր տեսակի մաքրությունը:

Հայոց լեզվի գիտական քննության առաջին փորձն արել է Բեռլինի համալսարանի պրոֆեսոր Հ. Պետերմանը: Վերջինիս կարծիքով՝ հայերենն ու հնդեվրոպական լեզուներն իրար հարազատ էին: Նույն կարծիքը, Հ. Պետերմանից անկախ, հայտնել էին նաև Ֆ. Վինդիշմանն ու Պոլ դը Լագարդ Բյոտտիխերը:

Ֆ. Մյուլլերը, սակայն, ուշադրությունը սևեռելով հայերենում առկա պարսկական բառերի մեծ քանակին, եզրակացրել էր, որ հայերենը պատկանում է իրանական լեզվաընտանիքին: Հայերենի իրանյան բնույթը, ըստ Ն. Ադոնցի, ընդունում էր նաև Բ. Պատկանյանը, և ընդհանրապես նկատելի էր այս կարծիքի գերիշխում մինչ Հ. Հյուբշմանի տեսության երևան գալը: Ֆ. Մյուլլերը նշում է, որ հայերենը լեզվաբանների համար ուսումնասիրման խիստ բարդ նյութ է առաջին հերթին իր կառուցվածքի ու բնույթի բարդության պատճառով, որն էլ պայմանավորում է նրա դիրքը իրանական լեզուների շարքում: Բացի դրանից, ըստ նրա, հայերենը պարունակում է օտար շատ այլ տարրեր նույնպես, որոնք մինչև վերջ բացահայտված չեն...»⁵⁷ :

Հիմք ընդունելով բուն հայկական բառանյութը՝ Հ. Հյուբշմանը եզրակացրեց. «Հայերենը չի կարող արիական լեզուների շարքին դասվել, այն հնդեվրոպական լեզվաընտանիքի ինքնուրույն ճյուղ է և լավագույն դեպքում կարող է միջանկյալ դիրք

⁵⁷ Fr. Müller, Beiträge zur Lautlehre der Armenischen Sprache, Wien, 1862, S. 1.

գրավել արիական և սլավոնա-լիտվական լեզուների միջև»⁵⁸ (Թարգմանությունը մերն է):

Այս կապակցությամբ Ն. Մառն առաջ է քաշում *հաբեթական* կոչվող տեսությունը: Ըստ նրա՝ հաբեթական լեզուների թվին է պատկանել նաև մինչև հայոց ազգի կազմավորումը Հայաստանում բնակվածների լեզուն: Ն. Ադոնցը, անուղղակի մեջբերելով Ն. Մառին, գրում է. «Ընդհանուր ծառի մի ճյուղը կազմում է սեմական խումբը՝ արաբերենով, եբրայերենով և ասորերենով, մյուս ճյուղը, կենդանի լեզուներից, ներկայացնում են վրացերենը, մենգրելերենը և դրանց մոտ լեզուները: Հենց այս ճյուղն է անվանվում հաբեթական...»⁵⁹:

Ն. Ադոնցի համոզմամբ՝ հայերենը մեկն էր ժամանակին առկա բարբառներից (ենթադրաբար նոստրատիկ), որը սերտ հարաբերություններ և ընդհանրություններ ուներ ինչպես հնդեվրոպական, այնպես էլ սեմական և կովկասյան տարբեր լեզուների հետ: Գիտնականը հայերենի բառապաշարում և քերականության մեջ փաստացի առանձնացնում է ենթաշերտային և ստացվածքային այն իրողությունները, որոնք հնդեվրոպական հնագույն լեզուները միավորում էին սեմական և կովկասյան լեզվաընտանիքների հետ: Արդի լեզվաբանության մեջ այս ուղղությունն այսօր գերակայում է, արդեն բացահայտվել են տարբեր լեզվաընտանիքների ընդհանուր բազմաթիվ հիմքեր:

Ըստ Ն. Ադոնցի՝ լեզվում տիրապետող ձևաբանական չափանիշները արիանեվրոպականի հետ նույնն էին մինչ գրավոր լեզվի երևան գալը, որից հետո դրանք տրոհվեցին: Լեզվի շարահյուսությունը, ըստ նրա, բարդացված է ոճական ձևերով: Այս առումով երկու ուղղություն է տարբերակվում՝ հին, որ կազմավորվել է առավելապես ասորա-պարսկական մշակութային ոլորտում, և լեզվի կառուցվածքն այս փուլում ընդհանուր առմամբ պարզ է ու ճշգրիտ: Մյուս ուղղությունը ձևավորվել է հունարենի ազդեցությամբ: Ն. Ադոնցը գրում է. «Այս ազդեցությունը VII դարում՝ այսպես կոչված հայկական դպրության հելլենական շրջանում, զորանալով հասնում է

⁵⁸ **H. Hübschmann**, Armenische Studien, Leipzig, Teil 1, S. 82 (Das Armenische kann daher nicht zu den arischen Sprachen gerechnet werden, und gehört nicht zu diesen. Es ist ein eigener Zweig des indogermanischen Sprachstammes und wird am besten bei der Aufzählung der idg. Sprachen zwischen Arisch und Slavolettisch):

⁵⁹ **Ն. Ադոնց**, Երկեր, 2, Հայոց լեզու, էջ 359:

մինչև ստրկորեն նմանակելու աստիճանի: Անբնական և բառերի դասավորությամբ ավելորդ պաճուճավորված ոճը սկսում է հիշեցնել հունարենը»⁶⁰: Հունաբան դպրոցի ադոնցյան սահմանումը ճշգրիտ է: Դեռ Դ. Թրակացուն և նրա հայ մեկնիչներին նվիրած իր աշխատության մեջ նա նշում է, որ հունարենի նմանողությամբ հայոց լեզուն ձևափոխելու ուղղությունը սկզբնավորվել է 5-րդ դարավերջից VI դարի սկզբում, իսկ խորացել է VII դարից:

Հաջորդ՝ VIII դարում, ավարտվում է հայերենի աճն ու կյանքի դասական շրջանը, իսկ արդեն IX-XI դդ. գրական լեզուն մուտք է գործում իր գոյության սքոլաստիկ փուլ, երբ նրա իմացությանը հասնում էին գրական հին հուշարձանների սերտմամբ: XI-XIV դդ. զգալի է կենդանի խոսքի ճնշումը, նույնիսկ ի հայտ են գալիս ժողովրդախոսակցական լեզվով գրված ստեղծագործություններ:

Այսպիսով, Ն. Ադոնցն առաջին անգամ ոստանիկ գրաբարից առանձնացնում է հունաբան հայերենը և փաստացի կատարում գրաբարի եռափուլ շրջանաբաժանումը: Ն. Ադոնցի սկզբունքները հետագայում արտացոլվում են Հր. Աճառյանի, Գ. Բ. Զահուկյանի տեսություններում: Այսպես՝

1. Գրաբար՝ V-X դդ.
 - ա) դասական-V-VII դդ.,
 - բ) հետդասական-հունաբան ուղղվածությամբ՝ VII-VIII դդ.,
 - գ) անկման շրջան- IX դ.:
2. Կիլիկյան կամ աշխարհիկ- ուսմական հայերեն՝ XI-XVIII դդ.:
3. Երկնյուղ աշխարհաբար՝ XIX դ.-ից 40-ական թթ.:

Հայերենի ջահուկյանական շրջանաբաժանմամբ՝ դասական գրաբարն ընդգրկում է V դարը, որին հաջորդում են ուշ հին կամ հետդասական գրաբարի VI-VII դարերը, ապա՝ նախամիջին շրջանը՝ VIII-XI դդ.: Միջին շրջանը, ըստ Գ. Բ. Զահուկյանի, սկսվում է ոչ թե XI դարից, ինչպես Ն. Ադոնցն է նկատում, այլ XII դարից ու զարգացման երկու փուլ ունենալով՝ առաջինը ամփոփում XII-XIV դդ.՝ որպես վաղ կամ կիլիկյան նորմավորման շրջան, երկրորդը՝ XV-XVI դդ.՝ իբրև ուշ միջին կամ աշխարհաբարացման շրջան: Գ. Բ. Զահուկյանի առանձնացրած վաղ աշխարհաբարի

⁶⁰ Նույն տեղում, էջ 361:

շրջանը՝ XVII դարի սկզբներից մինչև XIX դարի կես, փաստորեն, մասամբ «ենթարկվում է» Ն. Ադոնցի «աշխարհիկ-ռամկական հայերեն» կոչված շրջանին, իսկ արդեն XIX դարից սկսվում է ուշ կամ երկճյուղ աշխարհաբարի շրջանը՝ ըստ Գ. Բ. Զահուկյանի՝ մինչև 1920 թ., որին, նրա դիտարկմամբ, հաջորդում է արդի կամ ժամանակակից շրջանը՝ XX դարից ցայսօր⁶¹:

XIX դարից սկսած՝ հայագետ լեզվաբանների ուշադրության կենտրոնում է եղել գրաբարի, ինչպես նաև առհասարակ հայերենի պատմությունը և ուսումնասիրվել տարբեր հայեցակետերով ու տարբեր մեթոդներով: Դրանցով է, ըստ Էդ. Աղայանի, պայմանավորվել մասնավորապես գրաբարի պատմության շրջանաբաժանումը, ինչպես և լեզվի, տվյալ դեպքում՝ գրաբարի, պատմության բովանդակությունն ու ծավալը: Լեզվաբանն առաջարկում է գրաբարի պատմության ուսումնասիրությունը XIX-XX դարերի ընթացքում կատարել հետևյալ փուլերով և ուղղություններով՝ 1. Բանասիրական ռոմանտիզմի շրջան՝ XVIII դարի վերջերից մինչև XIX դարի կեսերը, 2. Պատմաքննական ռոմանտիզմի շրջան՝ XIX դարի քառասնական թվականներից մինչև դարավերջը, առանձին դեպքերում՝ մինչև մեր օրերը: 3. Սոցիոլոգիական էվոլյուցիոնիզմի շրջան՝ XIX դարի վերջին քառորդ և XX դարի առաջին կես: 4. Ն. Մառի «Նոր ուսմունքի» տիրապետության շրջան՝ XX դարի 30-40-ական թվականներ, մինչև 1950 թվականի լեզվաբանական բանավեճը: 5. Մարքսիստական լեզվաբանության զարգացման շրջան՝ 1950 թվականից հետո⁶²:

⁶¹ Գ. Բ. Զահուկյան, Հայոց լեզվի պատմություն. Նախագրային շրջան, Եր., 1987, էջ 26:

⁶² Էդ. Աղայան, Լեզվաբանական հետազոտություններ, Եր., 2003, էջ 224-231:

1.3. Ն. ԱՂՈՆՑԻ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԸ Մ. ՄԱՇՏՈՑԻ, ԳՐԵՐԻ ԳՅՈՒՏԻ ԵՎ ԿՈՐՅՈՒՆԻ ՎԱՐՔԱԳՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ն. Աղոնց հայագետի ուշադրությունից չէր կարող վրիպել հայոց լեզվի պատմության այնպիսի կարևորագույն մի խնդիր, ինչպիսին Մ. Մաշտոցի կողմից հայոց գրերի ստեղծման հանգամանքների և ժամանակի բացահայտումն էր: Մ. Մաշտոցի, նրա աջակիցների և աշակերտների մասին առկա հայկական աղբյուրները Ն. Աղոնցը լրացնում է օտար աղբյուրների նյութերով՝ համոզված, որ միայն այս ձևով է հնարավոր վերականգնել հայոց գրերի ստեղծման իրական պատմությունը: «Հանդես ամսօրեայ»-ում 1925 թ. Ն. Աղոնցը տպագրում է «Անձանօթ էջեր Մաշթոցի եւ նրա աշակերտների կեանքից ըստ օտար աղբիւրների» հետազոտությունը, որտեղ առաջին անգամ համարձակորեն քննարկում է և՛ հայոց գրերի ստեղծման ժամանակի հարցը, և՛ գրերը ստեղծող սրբացված Մ. Մաշտոցի կենսագրության ընդունված տարբերակը, և՛ նրա հանրահայտ կենսագիր Կորյունի մտադրությունների իսկությունը:

Օտար աղբյուրներում վկայված է, որ Մ. Մաշտոցը ծանոթ է եղել Նեստորի ուսուցիչ Թեոդորոս Մոպսուեստացուն, որին խնդրել է պարսից մոգության դեմ աշխատություն գրել: Այս փաստը հիշատակված է Փոտիոս պատրիարքի հռչակավոր «Գրադարան» աշխատության մեջ: Ն. Աղոնցը եզրակացնում է, որ Մ. Մաշտոցին աջակցել են ոչ թե Ակակիոսը և Րաբուլասը, այլ Թ. Մոպսուեստացին, որի հերձվածողական գրվածքները խստորեն դատապարտվել են Եփեսոսի՝ 431 թ. տիեզերական ժողովում: Կորյունը հասարակ կենսագիր չէր, այլ եկեղեցական գործիչ և պետք է զերծ պահեր Մ. Մաշտոցին նեստորականության հետ աղերսներից, որոնք խորշելի էին այլևս: Դավանաբանական նկատառումներով Կորյունը խմբագրել է Մ. Մաշտոցի ողջ կենսագրությունը: Ն. Աղոնցը հավանական է համարում, որ Մ. Մաշտոցը հայոց գրերը հորինած լինելը 4-րդ դարի վերջում Թեոդորոս Մոպսուեստացու աջակցությամբ: Թեոդորոս Մոպսուեստացին այդ շրջանի ամենահեղինակավոր և եկեղեցական գիտնական հայրերից մեկն էր, որը հայտնի էր Polyhistor՝ *Բազմավեպ* անունով⁶³: Այնուհետև Մ. Մաշտոցին նորաստեղծ նշանագրերի հնչագրական և գեղագրական

⁶³ Տե՛ս Ն. Աղոնց, «Անձանօթ էջեր Մաշթոցի եւ նրա աշակերտների կեանքից ըստ օտար աղբիւրների», Հանդես ամսօրեայ, թիւ 7-8, 1925, էջ 440-441:

պատկերն ամբողջացնելու համար օժանդակել է Կորյունի կողմից ևս հիշատակվող Հռուփանոս, իրականում՝ Ռուփինոս անունով քահանան, որը Թ. Մոպսուեստացու աշակերտն էր: Ռուփինոսը 399 թ. Ասորիքից մեկնել էր Հռոմ և Պելագիոս քահանայի հետ դարձել պելագիական վարդապետության հիմնադիր, այսինքն, ինչպես իր ուսուցիչը, շեղվել ուղղափառ դավանաբանությունից: Ինչպես գրում է Ն. Ադոնցը. «Կորինը հասարակ կենսագիր չէ, նա եւ եկեղեցական գործիչ է եւ իբր այդպիսին պէտք է և իր գրիչը համակերպեր յետ-եփեսոսական տրամադրութեան: Հայոց կապերը Ասորիքի հետ այժմ պիտի խորշելի թուէր»⁶⁴: Իր քննության ավարտին նշանավոր հայագետ և աղբյուրագետ Ն. Ադոնցն առավել խիստ բնութագրում է տալիս Կորյունի «Վարք Մաշտոցի» երկին՝ իբրև սկզբնաղբյուրի. «Մաշթոցի կենսագիրը շատ հեռու է բաւարարելու այն պահանջներին, որ կարելի է առաջադրել մի աշակերտի, որ գրում է իր ուսուցչի կեանքը: Կորինը, որքան ճոռոմաբան, նոյնքան սակաւգէտ է: Գուցէ եւ ատելի գիտէ, քան յայտնում է մեզ: Խոստումնալից յառաջաբանը, ուր ուզում է նաւել «զհամատարած ալեօքն վարդապետական ծովուն», նման է շքեղ մուտքի, որ տանում է մի խեղճ տնակ: Ուստի եւ վերջաբանութիւնը, ուր յայտարարում է, որ «ոչ եթէ ի հին համբաւուց տեղեկացեալ» մատենագրում է, այլ «որոց մեր իսկ ականատես եղեալ», թողնում է բոլորովին հակառակ տպավորութիւն»⁶⁵:

Ըստ Ղ. Փարպեցու՝ Վռամշապուհին թագավոր էր կարգել Շապուհ Գ-ն, որն իշխել է 383/4-388/9 թթ., ուստի, եզրակացնում է Ն. Ադոնցը, Մ. Մաշտոցի կողմից գրերի գյուտը կատարվել է 4-րդ դարի վերջում, Վռամ Դ-ի թագավորության օրոք՝ 388/9-399 թթ.: Ավելի որոշակի, գրերի գյուտը պետք է կատարված լիներ 383-392 թթ. միջև ընկած տասնամյակում:

Բանավիճային հզոր գրչի ծնունդ այս նշանավոր հողվածաշարում Ն. Ադոնցն աղբյուրագիտական հստակ ապացույցներով ցույց է տալիս, որ 420-425 թթ. Մ. Մաշտոցի այցը Ամիդ, Եդեսիա, Սամոսատ և Մելիտինե, որևէ կապ չունի և չի կարող ունենալ գրերի գյուտի հետ: Մանկուց հելլենական դպրությանը քաջածանոթ Մ. Մաշտոցը կրթության կարիք չուներ, իսկ եթե գրերի առթիվ մեկնել է նշված

⁶⁴ Նույն տեղում, էջ 439:

⁶⁵ Նույն տեղում, էջ 328:

քաղաքներ, մանավանդ՝ Եդեսիա, դա, թերևս եղել է 420 թ.-ից շատ առաջ՝ 406 թ., և նրան աջակցողների թվում չեն եղել ո՛չ Ակակիոսը, ո՛չ Բաբիլասը՝ Ռաբուլասը⁶⁶:

Այս առնչությամբ Հր. Աճառյանը գրում է. «Կորյունի պատմածից կարելի չէ հասկանալ, թե այս այցելությունը ճանապարհորդական էր, թե՞ ուսումնական. ուրիշ խոսքով՝ արդյոք Եդեսիա երթալու համար քարավանը պարտավո՞ր էր անպատճառ Ամիդ մտնել և այդ պատճառով գնաց Մեսրոպյն Ամիդ քաղաքը, թե՞ նպատակ ուներ նաև Ամիդում խուզարկություններ կատարել գրերի գյուտի առթիվ»⁶⁷: Ի վերջո, Հր. Աճառյանը ենթադրում է, թե այցելությունը միայն ճանապարհորդական էր, որովհետև հակառակ պարագայում Կորյունը, որքան էլ համառոտախոս, գոնե մի քանի բառով պիտի հայտններ, որ Մ. Մեսրոպի «խուզարկություններն» ապարդյուն անցան:

Գ. Տեր-Մկրտչյանն իր «Հայ գրերի 1500-ամյակի առթիվ» հոդվածում կարևոր բացահայտումներ է կատարում՝ ժամանակագրական անճշտություններ գտնելով Կորյունի բնագրում: Կորյունի կողմից հիշատակված Ամիդի և Եդեսիայի եպիսկոպոսները չէին կարող 405-406 թթ. օժանդակել Մ. Մաշտոցին, որովհետև Ամիդում Ակակիոսը եպիսկոպոս է եղել 420 թվականից սկսած, իսկ Բաբիլաս անունով եպիսկոպոս ընդհանրապես չի եղել, Եդեսիայում եղել է Ռաբուլաս անունով եպիսկոպոս, որը քահանայապետ է եղել 412-435 թթ.: Ելնելով այս փաստերից՝ Գ. Տեր-Մկրտչյանը կարծում է, որ Կորյունի երկի վերջաբանում նշված 406 թ.-ը ոչ թե մաշտոցյան գրերի գյուտի տարեթիվն է, այլ դանիելյան նշանագրերի՝ Վաղարշապատ բերվելու, իսկ գրերի գյուտը կատարվել է 412-416 թթ., երբ Մ. Մաշտոցը կարող էր հանդիպել Ակակիոսին և Ռաբուլասին, ստանալ նրանց աջակցությունը⁶⁸:

Հույն և լատին աղբյուրները որոշակիորեն լույս են սփռում այս պատմության վրա: Հույն եկեղեցու Փոտ պատրիարքը հիշում է Թ. Մոպսուեստացու կամ Մամուեստացու մի գործը, որ գրված է եղել մի հայ քորեպիսկոպոսի համար, վերջինիս անունը հնչում է Mastoubios: Ն. Ադոնցը չի վարանում նրան և Մ. Մաշտոցին նույնացնել, հետևաբար Μαστούβιος ուղղելի է Μαστούζιος կամ Μαστούτζιος:

⁶⁶ Նույն տեղում, էջ 535:

⁶⁷ Հր. Աճառյան, Հայոց գրերը, Եր., 1968, էջ 130-131:

⁶⁸ Ա. Աբաջյան, Ն. Դիլբարյան, Ա. Յուզբաշյան, Հայոց լեզվի պատմություն// Ն.Դիլբարյան, Ներածություն, Երևան, 2017, էջ 44:

Ն. Ադոնցը գրում է. «Արդ ով, եթե ոչ Ռաբուլ եւ Ակակ, պէտք է գիտենային, որ Թէոդորը գրագրութիւն է ունեցել հայ լուսաւորութեան հօր հռչակաւոր Մաշթօցի հետ: Թէոդորը մեռած է 428-ին եւ եպիսկոպոս էր 392 թուից, նա ժամանակակից է բառի բուն մտքով Մաշթօցին»⁶⁹: Հետաքրքրական է այն, որ Թէոդորի աշակերտը Ռուփին անունով մի քահանա էր: Ն. Ադոնցի համոզմամբ՝ նա այլ մարդ չէ, քան Հռովանոսը՝ գրերի գյուտի պատմութիւնից հայտնի⁷⁰:

Հր. Աճառյանը նույնպէս անդրադառնում է այն խնդրին, որ Մ. Մաշտոցը բարեկամական կապ է ունեցել Թէոդորոս երեցի հետ⁷¹: Ն. Ադոնցի գնահատմամբ՝ 5-րդ դարի երկրորդ կեսի դավանաբանական ելևէջների արձագանքները, թվում է, դժբախտաբար անհետ կորել են: Պետական իշխանության ճնշմամբ՝ նեստորականությունը, թերևս, հաջող օրեր է ունեցել: Նրա հավաստմամբ՝ ասորի եկեղեցականները հավատացնում էին, որ նեստորականները լուրեր են տարածում, թե հայերը իրենց հավատակից են ⁷²:

Ն. Ադոնցը, նկատելով, որ Պրոկղոս եպիսկոպոսն ունի *Մաժդոց* ընթերցումը, շարունակում է. «Եթե ընդունենք Մաժդոցի նախնական հնչյունը Մազդ-ոց է, ինչ որ անհավանական չէ, իրավամբ կարող ենք նույնացնել իրանական mazd-ak անվան հետ, հայերեն –ոց հայտնի մասնիկի հավելումով»⁷³: Այս հողվածի և համանման այլ փաստերի հիման վրա Հ. Մանանդյանը ավելի ուշ զարգացնում է իր տեսությունը, ըստ որի՝ գրերի գյուտը կատարվել է 380-382 թթ.: Ըստ նրա՝ թեպետ Կորյունի բուն երկում, ինչպէս նաև վերջաբանի վերականգնված տարբերակում հայ գրերի գյուտի ժամանակը նշվում է Վռամշապուհ արքայի հինգերորդ կամ վեցերորդ տարին, այդ թվականը պէտք է լիներ Վռամշապուհի հինգերորդ տարվա վերջում՝ 391-392 թթ.: Բացի դրանից, նրա հաղորդմամբ, Կորյունի վերականգնված վերջաբանում հայոց դպրության սկիզբը նշվում է Վռամ Դ Կրմանի չորրորդ տարում, այսինքն՝ դարձյալ 391-392 թթ.: Իսկ ամենաուշագրավը, նրա հաղորդմամբ, այն է, որ, անկախ Կորյունի

⁶⁹ Ն. Ադոնց, «Անձանօթ էջեր Մաշթօցի եւ նրա աշակերտների կեանքից ըստ օտար աղբիւրների», էջ 440:

⁷⁰ Նույն տեղում, էջ 441:

⁷¹ Հր. Աճառյան, նշվ. աշխ., էջ 76:

⁷² Հմմտ. Ն. Ադոնց, «Անձանօթ էջեր Մաշթօցի եւ նրա աշակերտների կեանքից ըստ օտար աղբիւրների», էջ 538:

⁷³ Նույն տեղում, էջ 9:

վկայություններից, Պետական ձեռագրատան № 1495, 8575 և 6644 ձեռագրերի ժամանակագրական բնագրերը նույնպես հայ գրերի գյուտը դնում են 391-392 թթ.: Իբրև ամփոփում՝ Հ. Մանանդյանը գրում է. «Հայոց դպրության սկիզբը դրվելու է ոչ թե հինգերորդ դարում, ինչպես մինչև այժմ ենթադրվել է գրեթե բոլոր հայագիտական երկերում, այլ չորրորդ դարի վերջերում, այն է՝ 391-2 թվականին»⁷⁴:

Հույժ ուշագրավ են նաև Կորյունի անձի վերաբերյալ Ն. Ադոնցի դիտարկումները: Լատին մատենագիր Լիբերատուսը հիշատակում է երկու հայի գործուղումը Կ. Պոլիս՝ Պրոկղ պատրիարքի մոտ, որոնց անուններն են՝ Ղևոնդեսու և Aberium: Ն. Ադոնցի կարծիքով՝ Լիբերատուսի հիշատակած դեսպանությունը նույնն է, ինչ հիշատակում է Կորյունը, և որին նա մասնակցել է անձամբ: Ոչ միայն ժամանակը, այլև Ղևոնդի անունը երաշխավորում են այս վարկածի հավանականությունը: Մնում է մեկնել Կորյուն և Aberium անունների հարաբերությունը: Աղբյուրները, որոնցից օգտվել է Լիբերատուսը, գրված են եղել հունարեն: Արդ, Կորյուն, գրված *καυριον*՝ նախընթաց *και* շաղկապի ազդեցությամբ՝ *λεοντιον και κ/αυριον*, կարող էր դիպվածով կորցնել սկզբի հնչյունը: Հնագրության տեսանկյունից, ըստ Ն. Ադոնցի, անհնար չէ նաև սկզբի *ko* կամ *kau*-ի *αυε* թյուրընթերցումը:

Ամփոփելով Ն. Ադոնցի դիտարկումները հայերենի բնույթի և պատմական ընթացքի վերաբերյալ՝ պետք է նշել, որ դրանք չեն կորցրել իրենց արդիականությունն առ այսօր: Ինքներս համակարծիք ենք Ն. Ադոնցի՝ գրերի ստեղծման ժամանակի վարկածին, քանի որ փաստերը՝ Ակակիոսի և Բաբիլասի կամ Ռաբուլասի եպիսկոպոսության տարեթվերի մասին, իրոք համոզիչ են: Մյուս կողմից՝ իսկապես կասկածահարույց է Կորյունի կողմից իր ուսուցչի անձի մասին այդքան սուղ տեղեկատվությունը, որը, ըստ էության, պայմանավորված է Մ. Մաշտոցի հոգևոր կյանքի որոշ անհայտ դրվագներով, որոնք փորձում է լուսաբանել Ն. Ադոնցը՝ գրեթե անվարան նշելով, որ նրա այցը Ամիդ և Եդեսիա հոգևոր-կրոնական նպատակ էր հետապնդում և որևէ առնչություն չունեցրել գրերի հետ:

Մ. Մաշտոցի և հայոց գրերի վերաբերյալ Ն. Ադոնցի այս ուշագրավ ուսումնասիրության հիմնադրույթները վաղուց արդեն գիտական շրջանառության մեջ

⁷⁴ Հ. Մանանդյան, Երկեր, Բ, Եր., 1978, էջ 305:

են, և գրերի գյուտի ժամանակագրությունը, Մ. Մաշտոցի գործունեության բոլոր ոլորտները պետք է արժևորվեն՝ անկախ ժամանակի դավանաբանական իրողություններից⁷⁵:

⁷⁵ Տե՛ս Ա. Աբաջյան, Ն. Դիլբարյան, Ա. Յուզբաշյան, նշվ. աշխ., էջ 46-49:

1.4.Ն. ԱԴՈՆՑԸ ՈՒՐԱՐՏԱԳԵՏ

Ուրարտուի խնդրին և Ուրարտու-Նաիրի-Հայաստան հարաբերությունների բացահայտմանը Ն. Ադոնցն անդրադարձել է տարբեր աշխատանքներում, հիմնականում՝ «Հայաստանի պատմության» մեջ: Ուրարտացիների ռասայի և ծագման թնջուկը լուծելու համար նա դիմում է ամենաարդյունավետ միջոցին՝ անվանագիտության օգնությանը: Նրա վկայմամբ՝ *Ուրարտու* անունով ասորեստանցիները կոչում էին Հայկական լեռնաշխարհը: Վաղ շրջանում նրանք *Նաիրի* տերմինն էին գործածում նույն իմաստով, որը նույնպես տեղական անուն չէր: Ուրարտացիներն իրենց երկիրը *Քիաինի* կամ հոգնակի ձևով՝ *Նիաինիլի* էին կոչում: *Քիա-ինի*, ըստ Ն. Ադոնցի, նշանակում է «Քիայնական երկրներ»՝ «Քիայի երկրի» հատկացուցիչ-հատկացյալ ձևը: Հայագետը նկատում է, որ Լ. Հաուպտը շատ շեշտեց ուրարտացիների և պոնտական *Χαλδοι*-ի նույնությունը: Վերջիններս այդպես էին կոչվել Խալդի աստծու անունով, ինչպես ասուրները՝ Աշուրի անունով: Լ. Հաուպտը կարծում էր, որ ուրարտացիները Խալդիների անունով էին իրենք իրենց կոչում, նրանց մայրաքաղաքը Խալդինան էր, և ամբողջ երկիրը Խալդիա անունն էր կրում: Ն. Ադոնցը համակարծիք չէ Խալդիների անվան՝ ուրարտացիների էթնոնիմ լինելու հարցում, որովհետև, ըստ նրա, *Խալդիների* չի նշանակում *խալդյան ժողովուրդ*, ոչ էլ՝ *Խալդիի որդիք*, նույնպես և Խալդինան, ըստ նրա, Տուշպա քաղաքը չէ⁷⁶:

Ն. Ադոնցը գրում է, որ անվանագիտության տվյալներն ի վիճակի են վեր հանելու ցեղային ընդհանրությունն այն գլխավոր ցեղերի միջև, որոնք ապրում էին Հայկական լեռնաշխարհում՝ Ուրարտուի և Ասորեստանի միջև ընկած լեռնային գոտում, և նույնիսկ ավելի հեռու՝ Վերին Միջագետքում:

Գ. Բ. Ջահուկյանի փաստմամբ՝ 1827թ. Ֆրանսիայի ասիական ընկերությունը Վանի շրջանն է գործուղում Ֆ. Ե. Շուլցին, որն ընդօրինակում է 42 արձանագրություն: Այդպես սկիզբ է առնում վանյան տիպի սեպագիր արձանագրությունների հավաքման ու ընդօրինակման գործը, որոնց թիվը, ըստ նրա, 500-ի է հասնում: Գ. Բ. Ջահուկյանը XX դարավերջին գրում է. «Գիտության զարգացման արդի փուլում կարելի է ասել, որ

⁷⁶ Ն. Ադոնց, Հայաստանի պատմություն, Եր., 1972, էջ 269:

ուրարտերենը ինքնուրույն լեզու է, որ չի նույնանում որևէ այլ լեզվի հետ: Խոսք կարող է լինել միայն նրա մերձավոր և հեռավոր ցեղակցական հարաբերությունների մասին»⁷⁷:

Ս. Այվազյանը նշում է, որ ուրարտերենը եղել է Վանի թագավորության՝ Ուրարտուի պաշտոնական գրավոր լեզուն: Ուրարտերենի ինքնանվանումը վկայված չէ, իսկ նախկինում հաճախակի գործածվող խալդերեն անվանումը հնացած է:

Ս. Այվազյանը նկատում է, որ իրարամերժ կարծիքներ կան Վանի՝ հետագայում ուրարտական կոչված սեպագիր արձանագրությունների լեզվի առնչությամբ: Ա. Մորտմանը դրանց լեզուն համարում է հայերենը, Լ. Դե Ռոբերը այն դիտում էր որպես սեմական լեզու և այլն: XIX դարավերջին նշանավոր ասուրագետներ Ս. Գյույայը և Ա. Սեյսը պարզում են, որ Վանի սեպագիր արձանագրությունները գրված են ասուրական սեպագրերով⁷⁸:

Վանյան արձանագրությունների լեզվի հայերեն լինելու մասին Ա. Մորտմանի կարծիքը մի կողմ դրվեց արձանագրությունների վերծանումից և մանավանդ ասուրա-ուրարտական երկլեզվյան արձանագրությունների հայտնաբերումից հետո: Այս առնչությամբ Հր. Աճառյանը գրում է. «Այսպես, ուրեմն, խալդերենը կապ չունի հայերենի հետ, և սա մի շատ կարևոր հայտնություն է մեզ համար, որովհետև սրանով էլ լուսաբանում ենք հայերի ծագումը, նրանց գաղթականությունը և խալդիների հետ ունեցած առնչությունը»⁷⁹: Այնուհետև հավելում է, որ Հայաստանում հաստատվելուց հետո էլ հայերը խալդիներին մի ստոր ցեղ էին համարում՝ չնայած, որ վերջիններս իրենց քաղաքակրթությամբ հայերից բարձր էին, և դրա համար էլ հայերենում կազմվել են *խաղտալեզու, խաղտալուր, խաղտախուղտ* նախատական բառերը, որ նշանակում են *թանձրախոս, կոշտուկոպիտ բարբառով խոսող*, և հայերի՝ խալդիների նկատմամբ տաժած այս արհամարհանքը ցույց է տալիս, որ հայերենն ու խալդերենը տարբեր լեզուներ են⁸⁰:

Բիաինիի շրջաններին վերաբերող մի շարք անուններ բնորոշվում են հետևյալ վերջավորություններով՝ -hi, -(i)ni կամ -hi-ni, -zi, -ri: Արդեն Բ. ա. XII դարում՝

⁷⁷ Բ. Ն. Առաքելյան, Գ. Բ. Ջահուկյան, Գ. Խ. Սարգսյան, Ուրարտու-Հայաստան, Եր., 1988, էջ 132:
⁷⁸ Ս. Այվազյան, Ուրարտերեն-հայերեն: Բառապաշար և պատմահամեմատական քերականություն, Եր., 2008, էջ 3:
⁷⁹ Հր. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, I, Եր., 1940, էջ 172:
⁸⁰ Հմմտ. նույն տեղում:

Ուրարտու պետության կազմավորվելուց շատ առաջ, ու-ով վերջացող բազմաթիվ անուններ կային ապագա Ուրարտուի տարածքում: Թիգլաթապալասարն իր Բ. ա. 1113 թ. արշավանքի ընթացքում նվաճած երկրների շարքում հիշատակում է՝ Ուզամու-նի, Պիլակի-նի, Աթուրգի-նի և այլ անուններ:

-ri-ով վերջացող անունները պակաս տարածված չեն. հիշենք *Նահ-րի-ն*, որը, ըստ Ն. Ադոնցի, ոչ մի կապ չունի Նահարաինի հետ, *Ուրապ-րի*, *Բա-րի*, *Ադդու-րի* (լեռ) և այլն:

Ժողովուրդների մեկ ուրիշ խումբ, ինչպես գիտնականն է փաստում, վկայված է -zi վերջավորություն ունեցող անուններով, ինչպես՝ *Ազ-զի*, *Ալ-զի* կամ *Ալշե*, որտեղից և՛ *Անզի-տու* և *Ալզի-նի*, *Պուրուլում-զի*, *Թեդիմ-զի*, *Պիլա-զի*, *Նու-զի* և այլն⁸¹:

Այս ամենից հետո Ն. Ադոնցը հարց է տալիս՝ արդյո՞ք այս ածանցներով կազմված էթնիկական անունները ծագումով տարբեր ժողովուրդների անվանումներն են, թե՞ միևնույն ժողովրդի տարբեր ճյուղերի, և հավելում է, որ կատարված ուսումնասիրությունները ցույց են տվել Միտաննիի, Նուզիի և ուրարտերենի միջև եղած որոշ ազգակցություն: Դա, ըստ գիտնականի, շատ զորեղ փաստ է՝ ի նպաստ էթնիկական ընդհանրության՝ ինչպիսի տարբերություններ էլ որ լինեն այն կազմող խմբերի միջև:

Ն. Ադոնցը գրում է, որ արդեն հայտնի է *Հայա-սա-ի*՝ խեթական տերմին լինելը: Այն հիշեցնում է, ըստ նրա, *Ջոտ* անունը, որ կրում էր Պարխար, հին Պարիադրիս լեռներում ապաստանած պոնտական ժողովուրդներից մեկը:

Ինչ վերաբերում է ուրարտացիների լեզվին, Ն. Ադոնցը նշում է, որ նրանք գործածում էին վանկային համակարգի սեպագրություն, որը փոխառել էին ասորեստանցիներից, իսկ վերջիններս իրենց հերթին այն ստացել էին ակկադացիներից կամ բաբելոնյան սեմիտներից: Վերջիններս այն մշակել էին սումերների գործածած գաղափարագրերի համակարգը պարզեցնելու միջոցով: Վերջին համակարգում, ըստ Ն. Ադոնցի, սեպածն նշանները ցույց էին տալիս գաղափարներ, բառեր: Ակկադացիներին հաջողվեց դրանք վերծանել վանկային արժեքների, սակայն նրանք հին համակարգից պահեցին որոշ թվով

⁸¹ Ն. Ադոնց, Հայաստանի պատմություն, էջ 269-271:

գաղափարանիշեր, որ փոխանցեցին ասորեստանցիներին, ապա՝ ուրարտացիներին: Ուրարտական արձանագրություններում հաճախ հանդիպող գաղափարանիշերից են՝ սումերական AN՝*աստված*, որ ասորեստանցիները կարդում էին ILU՝ *աստված*:

EN՝*տեր*, աս. BELU

KA՝*դուռ*, աս. BABU

URU՝*քաղաք*, աս. ALU

KUR՝ *երկիր*, աս. MATU⁸²:

Ն. Ադոնցը նշում է, որ ուրարտացիները գաղափարանիշերն օգտագործում էին առաջին հերթին որպես որոշիչներ, այսինքն՝ ցույց տալու համար, որ այդ գաղափարանիշին հաջորդող բառերը համապատասխանաբար աստծու, երկրի, քաղաքի և այլնի անուններ են: Այսինքն՝ Ն. Ադոնցը հստակորեն առանձնացնում է դետերմինատիվները: Ըստ նրա՝ դժվար չէր վերձանել ուրարտական արձանագրությունները, բայց հասկանալը խնդիր էր: Հոչակավոր արևելագետ Ա. Սեյսն առաջինը կարդաց ու թարգմանեց ուրարտական տեքստերը: Լեզվի ուսումնասիրության արդյունքները, արդարև, գոհացուցիչ են, սակայն Ն. Ադոնցը զգուշացնում է, որ այդու չպետք է կարծել, թե բոլոր դժվարությունները հաղթահարված են: Քերականական համակարգը դեռևս պարուրված է գաղտնիքներով:

Հնչյունային համակարգը, ըստ Ն. Ադոնցի, պարզ է. ուրարտերենը չորս ձայնավոր ունի՝ a, e, i, u, և տասնյոթ բաղաձայն՝ b, d, g, h, k, l, m, n, p, q, r, s, š, š, t, ʿ, z⁸³:

Ուրարտական բառերը, նրա վկայմամբ, ընդհանրապես վերջանում են –i-ով, ինչպես pili՝ ջրանցք, ebani՝ երկիր, euri՝ տեր և այլն: Մի քանի բառեր վերջանում են –a-ով՝ burgana՝ դղյակ, qisra՝ գետին, հատուկ անուններ, ինչպես Ռուսա, Թեշերա և այլն: Սեռականի վերջավորությունը –i է՝ Haldi-i, Menua-i: Տրականը կազմվում է –e-ով՝ Haldi-e, euri-e, և –a-ով՝ Menua-a: Հոգնակին ճանաչվում է –li ածանց ունեցող բառերում, ինչպես՝ hu-rad ini-li՝ ռազմիկներ կամ բանակներ⁸⁴:

⁸² Նույն տեղում, էջ 254:

⁸³ Նույն տեղում, էջ 256:

⁸⁴ Նույն տեղում, էջ 258:

Բայական համակարգը, Ն. Ադոնցի գնահատմամբ, խիստ յուրահատուկ բնույթ է կրում: Ամենաուշագրավը բայերի տեսքն է: Մի շարք միավանկ բառեր, երկու-երկու, երբեմն՝ երեք-երեք հարադրվելով, կազմում են բայական հիմքը՝ *šu*, *a-šu-*, *ha- šu*, *hu- šu* և այլն:

Ինչ վերաբերում է հայ-ուրարտական լեզվական զուգադիպումներին, դրանց առաջին շարքը, ըստ Գ. Բ. Ջահուկյանի, այսպես կոչված, տարրական ցեղակցության բառերն են՝ ձայնարկությունները, բնածայնությունները, մանկական բառերը և այլն: Ուրարտերենում, թեպետ այսպիսի բառեր չկան, սակայն դրանք առկա են հայերենի և ուրարտերենի ցեղակից խումբերենի միջև՝ հայ. բրբռ. մա, մամ-խուռ. *amma* «մայր», հայ. բրբռ. ատու «ծեր կին, պառավ», ատտա «մայրիկ»-խուռ. *attai* (ուրարտ. *ate*) «հայր» և այլն⁸⁵:

Հայ-ուրարտական զուգադիպությունների երկրորդ շերտը կազմում են նոստրատիկ ընդհանրությունից եկող բառերը: Օրինակ՝ խուռ., ուրարտ. *ag-* «տանել, անցկացնել»- հ. ե. **ag'*, հայ. *ած-եմ*, խուռ., ուրարտ. *ar-*«տալ»- հ. ե. **ar-* «հատկացնել, բաժին հանել, յուրացնել» և այլն⁸⁶:

Հայ-ուրարտական զուգադիպումների երրորդ շերտը կազմում են ուրարտերենից հայերենի փոխառած բառերը՝ *baba* «լեռ»-բաբայ «բլուր», *šani* «աման»-սան, -ի «կաթաս»: Ըստ Գ. Բ. Ջահուկյանի՝ ուրարտերենի միջոցով փոխառված լինելու օգտին է խոսում հոլովման *-h*-ով հիմքը⁸⁷:

Ն. Ադոնցը, այսպիսով, առաջինն էր խոսում այն մասին, որ Հյուսիսային Միջագետքում հայտնաբերվել է մի լեզու, որի նմանությունն ուրարտերենի հետ աներկբա է: Այդ լեզվի՝ *միդաննի* անվամբ վաղուց ծանոթ մի բարբառով է գրվել Միտաննիի Թուշրաթթա թագավորի՝ Եգիպտոսի փարավոն Ամենոֆիս III-ին ուղղված նամակը: Ն. Ադոնցը հավելում է, որ նախընտրում են այդ լեզուն անվանել *խուրրիերեն* և ոչ *միդաննիերեն*: Այդ լեզվով խոսող ժողովուրդն իրեն անվանում էր *խուրրի*: Նրանք զբաղեցնում էին Ամբողջ Վերին Միջագետքը, որտեղ էլ հիմնել էին Միտաննի պետությունը: Աստվածաշնչից հայտնի է այդ ժողովուրդը *խորիմ*, *խորեացիք*

⁸⁵ Հմմտ. Բ. Ն. Առաքելյան, Գ. Բ. Ջահուկյան, Գ. Խ. Սարգսյան, նշվ. աշխ., էջ 132:

⁸⁶ Հմմտ. նույն տեղում, էջ 139:

⁸⁷ Հմմտ. նույն տեղում, էջ 141:

անուններով: Սեպածև նշանը, երկու արժեք ունենալով՝ har և hur, ըստ Ն. Ադոնցի, սկզբում կարդում էին Harri արիացիներին ճանաչելու համար, բայց շուտով Աստվածաշնչի տվյալների և *Ouprhētēn* անվան վրա հիմնվելով (Օրրիոեն ձևի ներքո պահպանել է Hurri –ին)՝ անդեցին, որ ճիշտ ընթերցումը Hurri-ն է: Այդ ժողովրդի լեզուն իսկապես շատ ընդհանրություններ ունի ուրարտերենի հետ թե՛ բառապաշարի, թե՛ քերականական տեսանկյունից: Ն. Ադոնցը բերում է երկու լեզուների համար ընդհանուր բառեր՝

Խուրրիական	Ուրարտական
pala	pili «ջրանցք»
lbri «թագավոր»	auri «տեր»
Hurati	huradi «ռազմիկ» ⁸⁸ :

Նշենք, որ Գր. Ղափանցյանը, ինչպես նաև հետագայի շատ հնդեվրոպաբաններ, հայերին համարում են խուրիների ժառանգորդներ:

Ն. Ադոնցը, այսպիսով, ցույց է տալիս, որ հայկական դասական քաղաքակրթությունը գալիս է ուրարտականից և ամբողջովին սուզվում է այդ քաղաքակրթության մեջ: Ակներև է, որ նրա կարծիքների մի մասն այսօր հնացած կարող է դիտարկվել, որովհետև ուրարտերենի վերաբերյալ մեծածավալ նոր աղբյուրներ են գտնվել, սակայն Ն. Ադոնցի դիտարկումները հայոց ուրարտագիտության համար կարևոր հիմնաքարեր են:

⁸⁸ Ն. Ադոնց, Հայաստանի պատմություն, էջ 267:

ԳԼՈՒԽ 2

Ն. ԱՌՈՆՑԸ ՏԵՂԱՆՎԱՆԱԳԵՏ ԵՎ ՏՈՀՄԱՆՎԱՆԱԳԵՏ

2.1. ՀԱՅԿԱԿԱՆ ՀՆԱԳՈՒՅՆ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ

Ն. Արդոնցի գիտական բազմակողմ հետաքրքրությունների շրջանակում ընդգրկված էր հատկանվանագիտությունը, ընդ որում, տեղանվանագիտությանը նա անդրադառնում է իր գրեթե բոլոր աշխատանքներում: Մեր գլխավոր նպատակներից մեկն այդ ամբողջ նյութի հավաքումն ու դասակարգումն է: Տեղանվանագիտական գանձարաններ են հատկապես նրա «Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում» և «Հայաստանի պատմություն» հիմնարար ու անգերազանցելի երկերը:

Ն. Արդոնցի «Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում» մենագրության արժեքը պայմանավորված է հեղինակի կողմից ոչ միայն պատմաբանասիրական վերլուծությունների աննախադեպ մեթոդների ընտրությամբ ու կիրառմամբ, այլև եզրակացությունների կուռ և համընդգրկուն բնույթով: Այսօր էլ՝ 21-րդ դարում, հայ և օտարազգի պատմաբաններն ու տեղանվանագետներն իրենց հետազոտությունները կառուցում են՝ Ն. Արդոնցի այս երկի հիմնադրույթներից ելնելով: Ինչպես ներածական բաժնում հեղինակն է նշում, աշխատության հիմքում ընկած են որակով ու ծագումով տարբեր նյութեր, որ քաղված են ազգային և օտար աղբյուրներից:

Մինչ Ն. Արդոնցի տեղանվանագիտական վերլուծություններին անցնելը նշենք, որ «Հուստինիանոսի դարաշրջան» ասելով՝ Ն. Արդոնցը նկատի ունի ոչ միայն Հուստինիանոսի թագավորության տարիները, այլև անտիկ պետականությունից միջնադարյան պետականությանն անցնելու շրջանն ընդհանրապես: Այս ժամանակաշրջանն ուսումնասիրելով՝ գիտնականը ելակետ է ունեցել նախ և առաջ հայոց պատմության համար վերջինիս ունեցած բացառիկ կարևորությունը:

Վերլուծելով և համակարգելով Ն. Արդոնցի կողմից քննված տեղանունները և դրանց ստուգաբանությունները՝ իբրև նկարագրության ելակետ ընդունել ենք դրանց աշխարհագրական տեղակայումը: Աշխարհագրական հատուկ անունների տեղագրության վերականգնումը Ն. Արդոնցի մեծագույն ձեռքբերումներից է: Նշենք, որ

պատմագիտական, բանասիրական և լեզվագիտական աշխատանքներում Ն. Ադոնցի նշած տեղագրությունը ցայսօր չի վիճարկվում:

Մեր հետազոտության այս երկրորդ գլխում խմբավորել ու դասակարգել ենք հայագետի տարբեր աշխատանքներում քննված տեղանունները՝ ստեղծելով դրանց համահավաք պատկերը, որպեսզի ակնհայտ դառնա Ն. Ադոնցի կատարած ծավալուն աշխատանքը հայոց տեղանունների վերականգնման և նկարագրության ասպարեզում:

Ն. Ադոնցն իր աշխատությունը բաժանել է երեք հիմնական մասերի՝ Արևմտյան Հայաստան, Արևելյան Հայաստան և Նախարարության ծագումը: Մեր ուսումնասիրության նյութն առնչվում է, բնականաբար, առաջին երկուսին, որոնց քննության արդյունքում ստեղծել ենք հետևյալ գծապատկերը՝ ի դյուրընկալուն ստորև կատարվող վերլուծությունների՝

ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ			ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ		
1. Ինքնավար իշխանություններ	Աշտիանենե		1. Այրարատ	Բասեն	Շիրակ
	Բալավիտենե			Գաբեղեանք	Արագածոտն
	Սոփենե			Աբեղեանք	Նիգ
	Ծոփք			Հաունիք	Կոգովիտ, Կոգի-հովիտ
				Արշարունիք	Ոստան Հայոց
				Բագրևանդ	Ուրծաձոր, Ուրծի ձոր
				Ծաղկոտն	Արած
				Վանանդ	Շարուր
2. Ներքին Հայք	Խորձիանենե-ե	Մանաղի	2. Տարուբերան	Խոյթ	Հարք
	Պաղնատուն	Դերջան		Ասպակունիք	Վարաժնունիք
	Մունձուր	Կարին		Տարաւն	Բզնունիք
	Դարանաղի	Շաղագոմ		Արշամունիք	Երեւարք
	Եկելես-ենե	Սպեր		Մարդաղի	Աղիովիտ
	Աղին	-		Դասնաւորք	Ապահունիք
				Տուարածատափ	Կոգի

				Դալառ		Խորհրդառուներ	
3.Փոքր Հայք	Օրբալիսեննե	Սիներվա	3.Վասպուրա- Կան	I շարք	Ռշտունիք	Արճիշակովի տ	
	Հայթուլանե	Ազիրիս			Տոսպ	Առբերանի	
	Հայրեթիկե	Վարսապա			Բոգունիք	Գառնի մինչև Կոգովիտ	
	Օրսեննե	Օրսա ևն					
				II շարք	Բուժունիք		Երվանդու նիք
					Առնոյոտն		Մարդաս տան
					Անձևացիք		Արտազ մինչև Կոգովիտ
					Տրպատունիք		-
				III շարք	Ալե		Թոնրավան
					Մեծ Աղբակ		Ճուաշ-ոտտ մինչև Արաքս
					Անձախի ձոր		-

Աղյուսակ 1

Կայսրությունն Արևմտյան Հայաստանում տարբերում էր հողերի երեք շրջան՝ կախված այն բանից, թե ինչ աստիճանի էր նրանց ենթակայությունը կայսերական իշխանությանը՝ ա) ինքնավար իշխանություններ, բ) Մեծ կամ Ներքին Հայք և գ) Փոքր Հայք: Առաջինները գտնվում էին Հայաստանի հարավում՝ Տիգրիսի և Եփրատի միջև: Մեծ կամ Ներքին Հայքից տարբերելու համար Հուստինիանոսը նրանց տալիս է *Մյուս Հայք* անունը:

Աշտիանենե, Բալավիտենե- Աշտիանենեն և Բալավիտենեն հայկական Հաշտյանքն ու Բալահովիտն են: *Բալահովիտ* հայերեն նշանակում է «բալի հովիտ»՝ *բալ* և *հովիտ* բառերից: Դրանից երևում է, որ տեղի անունը իսկապես *Բալ* է, որից

առաջ է գալիս *Բալու* սեռական հոլովածը: Իսկ *Աշտի-անե-ն*, թերևս, կապ ունի *Աշտի-շարի*-ի հետ: «Հայաստանի պատմություն» երկում Ն. Ադոնցը գրում է, որ Սուլամին առաջին երկիրն է, ուր Սալամանասարը մտավ Արսանիայի դեպքից հետո, որը համապատասխանում է հայկական Բալահովտին՝ «Բալի ձոր», բյուզանդական Բալավիտենեին՝ Պալուի մարզ: Գիտնականը ենթադրում է, որ Պալուի մարզը Վաշտալ բերդաքաղաքն է: Այս տեղանունը՝ *Suhme* կամ *Suhmu*, ըստ Գ. Բ. Զահուկյանի, հետագայում կկապվի վրացիների կողմից հայերին տրվող «*սումեխ*» անվան հետ⁸⁹:

Սուլամիի առաջնորդը, ըստ նրա, կոչվում է *bel mahazi*, այն Դայա-ինիի մեկ մասն էր: Այս տարածքները, ըստ Ն. Ադոնցի, համապատասխանում են հայկական Հաշտեանք գավառին, բյուզանդական հեղինակների Աստիանենեին՝ Գյունեկ ջրերի վրա: Դա հայրենիքն է Դայա ժողովրդի, որը հետագայում քվեց դեպի հյուսիս և ապաստան գտավ Օլթիի սարահարթում, որին և իր անունը տվեց հայկական ձևով՝ *Տայք, Տառխի*⁹⁰:

Սոփենե, Անգիտենե, Սոփանենե, Անգելենե- Հին ժամանակներում այս անունը կրող տարածքը, ըստ հայագետի, հայտնի է եղել *Սոփենե* ընդհանուր անունով: «Ալզին Անզիի մի այլ ձևն է, էթնիկական մի տերմին, որտեղից և Անգիտու, Անգիտենե աշխարհագրական տերմինը»⁹¹: Սալմանասարի մարտուղին նշելիս Ն. Ադոնցը գրում է, որ նա հիմնականում հետևել է Թիգլաթպալասար I-ի ճանապարհացույցին, մեկնել է Ինգիտիից, որը երկրորդ վավերագիրը *Ալզի* է կոչում, մի հանգամանք, որն ապացուցում է նրանց նույնությունը: Դա հայկական **Անձիտն** է՝ դասական հեղինակների կողմից *Անգիտենե* կոչվող: Այն, ըստ Ն. Ադոնցի վկայության, տարածվում էր Խարբերդից (Խարպուտ) մինչև Հանին:

Դասական հեղինակներից Անգիտենեի մասին առաջին անգամ հիշատակում է Պտղոմեոսը: Հովհան Եփեսացին, իբրև բնիկ Անգեղտունցի, քաջ ծանոթ է այդ գավառին և Անգիտենեում, ի թիվս այլոց, հիշատակում է նաև Ուլա, Հուլա, *Hula* վանք և գյուղ: Խարբերդի մոտ գտնվում է Հուլվենք, *Hulvenk* անունով մի գյուղ՝ մոտ 2000 բնակչով: Վերջին վանկը, ըստ Ն. Ադոնցի, հայերեն *վանք* բառն է, տեղանունը

⁸⁹ Հմմտ. Գ. Բ. Զահուկյան, Հայոց լեզվի պատմություն. Նախագրային շրջան, էջ 288:

⁹⁰ Ն. Ադոնց, Հայաստանի պատմություն, էջ 85:

⁹¹ Նույն տեղում, էջ 55:

նշանակում է՝ Hul վանք: Որևէ կասկած չի կարող լինել, որ Hul-ը պատմական Hula-ն է: Նույն Խարբերդից ոչ հեռու կա մի ուրիշ գյուղ, որ կոչվում է Թիլենզիտ, Thil-enzit. այս հետաքրքրական անվան վերջին մասի մեջ չի կարելի չտեսնել գավառի հին անվանումը՝ Thil-enzit, որ ասորերեն նշանակում է բլուր-enzit: Այս երկու օրինակները, Ն. Ադոնցի համոզմամբ, հիմք են տալիս Անզիտենեն Տիգրիսի համակարգից փոխադրելու Խարբերդի դաշտավայր:

Ըստ Ն. Ադոնցի՝ Hore berd-ն էլ հավանաբար կարող է համեմատվել Khar-berd-ի հետ: Խարբերդը գտնվում էր Անզիտենենում՝ *Ալելուա* դաշտում. այստեղ էր գտնվում նաև Շամուշատը: *Ալելուա* դաշտը, ըստ գիտնականի, համապատասխանում է այն դաշտին, որ հին հեղինակները կոչում էին *Գեղեցիկ*, որտեղ էլ գտնվում էր *Արսամոսապ* քաղաքը: Ն. Ադոնցը նշում է, որ այդ փաղաքշական անվանն արժանի է Խարբերդի դաշտավայրը, որը նույնիսկ իր՝ Ն. Ադոնցի ժամանակ էլ աչքի էր ընկնում բերրիությամբ ու բնակչության խտությամբ: Թուրքերեն այն կոչվում է *Օլու-օվա*, այսինքն՝ *Մեծ դաշտ*, բայց ակներև է, որ *Օլու*-ն ծագում է հին *Ալելուա* անունից, որը պարզապես իմաստավորվել է թուրքական լեզվամտածողությամբ:

Ծոփք- Շահունյաց Ծոփքը, ըստ Փավստոսի, գտնվում էր Անզիտենենի և Մուզուրի միջև: «Աշխարհացույց»-ում Ծոփքն այն գավառն է, որ ընկած է «Պաղնատունից և Բալահովիտից արևմուտք, այսինքն՝ համապատասխանում է Շահունյաց Ծոփքին: Հետաքրքրական է, որ Պտղոմեոսն էլ *Սոփենե* ասելով հասկանում է միայն Փոքր Սոփենեն»⁹²:

Ն. Ադոնցի բացատրությամբ՝ Ծոփքը մեր թվարկությունից շատ առաջ հայտնի էր Supani անունով: Նախահայկական Supani տեղանունը անցել է հայոց լեզվին *Ծոփք* ձևով, որի մեջ վերջին *ք*-ն *ani*-ի պարզ համարժեքն է, որ հայերից առաջ այդ երկրում ապրող բնիկների լեզվում հոգնակիի նշանն էր: Supani անվանումը, Ն. Ադոնցի համոզմամբ, հարազատորեն պահպանվել է ասորական Sofan-aje ձևում:

Նփրկերտ-Մարտիրոսուպոլիս- Ըստ գիտնականի՝ Բյուզանդիայի և Պարսկաստանի միջև Հայաստանին առավել մոտիկ սահմանը Նիմփիոս գետն էր, որի ափին գտնվում էր *Մարտիրոսուպոլիսը*: Իր այս վկայությունը հաստատելու համար Ն.

⁹² Ն. Ադոնց, Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, Եր., 1987, էջ 50:

Ադոնցը մեջբերում է անում իրեն ժամանակակից պատմաբան Պրոկոպիոսից: Հայաստանում, որ կոչվում է *Սոփանեն (Տոփք)*, կա մի քաղաք՝ Մարտիրոսուպոլիս, որ գտնվում է Նիմփիոս գետի ափին՝ թշնամու սահմաններին շատ մոտ: Գետի մյուս կողմում ընկած է Արքսանա երկիրը (sc. Արզան-են-ե), որ հնուց ի վեր ենթակա է պարսիկներին: *Մարտիրոսուպոլիսը*, ըստ Ն. Ադոնցի, հայկական գրավոր հուշարձաններում հնչում է *Նփրկերտ*, և նրա հիմնումը վերագրվում է *Մարութա* անունով մի եպիսկոպոսի, որն այդ քաղաքը իբրև թե կառուցել է ի պատիվ մարտիրոսների՝ իր ձեռքով հավաքած մասունքների: Ն. Ադոնցը նշում է, որ այս ավանդությունը կապվում է քաղաքի Μαρτυρ-ο-πολις անվան հետ, որ հասկացվել է որպես «Նահատակների քաղաք»: Հայկական ձևը՝ *Նփրկերտ* (nēfērkert), համապատասխանում է ասորական mēfrkt-ին, իսկ հայկական *մուհարկին*՝ muharkin, և ասորերեն mēfarkin-ը համազոր են արաբական miyyafārkīn-ին: Առաջին ձևը առավել հին է: Վերջին վանկը՝ kert, kat, իրանական բառ է, որ նշանակում է *քաղաք*: Ն. Ադոնցը մի շատ կարևոր նկատառում է անում՝ կապված այդ անվան առաջին բաղադրիչի հետ. Ասողիկի երկում այդ անունը հանդիպում է *Մուհարկին*, իսկ Դրասխանակերտոցու երկում՝ *Մուֆարդին* ձևով, և ըստ Ն. Ադոնցի, եթե «Աշխարհացույց»-ում վկայված *Նփռեպ* ընթերցումը վրիպակ չէ *Նփռ(կ)եպ*-ի, ապա կարելի է համադրել ասորերեն mēfarakt-ի հետ՝ mēfaratt-ի միջոցով: Արաբները, ըստ գիտնականի, maifar-kat-ը տառադարձելով miyya-farkin-ի, հավանաբար փորձել են նրանում տեսնել արաբական *ջուր* բառի հոգնակին՝ նման Meiacarira-ին, որ ավան է Տիգրիսի աջ ափին՝ Մարդինի մոտ, և Ն. Ադոնցի հաղորդմամբ՝ «իր անունը ստացել է *սառն աղբյուրներ*-ից, Meiacarire nomine... cui fonts dedere vocabulum gelidi. Amm. XVIII, 6, 16. Tab. Peut-ի մեջ p. 305, հիշատակվում է Aquae Frigidae թարգմանության մեջ»⁹³: Քաղաքի մոտ գտնվում են ակունքները, որոնք մի գետակ են կազմում, որը քաղաքի միջով հոսում է դեպի Բաթման գետը: Ն. Ադոնցը հնարավոր է համարում, որ հենց այդ ջրերի գոյությունը դեր է խաղացել հիշյալ ստուգաբանության ժամանակ: Ըստ նրա՝ եթե ճիշտ են գիտնականների կրահումներն այն մասին, որ հին Տիգրանակերտը գտնվում էր

⁹³ Նույն տեղում, էջ 17:

Մայաֆարկին-Մարտիրոսուպուլի տեղում, ապա Բաթման գետը համապատասխանում է Նիկեփորիոս գետին, որի վրա գտնվում էր Տիգրանակերտը:

Մարդաղիք- Ն. Ադոնցի հաղորդմամբ՝ *Αρταλεα*-*ω*-ը հայերեն պետք է հնչի *artali-s*, *artali-k*՝ *Արտաղիս*, *արտաղիք*, բառ, որ իր կազմությամբ հակվում է դեպի *mardali-k*, *manali-k*, Մարդաղի-ք, Մանաղի-ք՝ Խորձյանին հարևան գավառների անվանումները:

Արաբես- Ն. Ադոնցն այս տեղանունը նույնացնում է *Արտալես*-ի հետ. ըստ Հովհ. Մամիկոնյանի՝ Խոսրովը Արզնի և Նփրկերտի վրայով մտավ Հայաստան, անցավ Բագրևանդ և Տարոն գավառները և առաջանալով դեպի Բասեն՝ Թեոդոսուպուլի կողմից ներխուժեց Հռոմեական Հայաստան: Նա բանակեց մի գյուղում, որ կոչվում էր *Արաբես* և գտնվում էր քաղաքից դեպի հարավ ընկած գավառում: Պարսից թագավորը, բարձր գնահատելով Թեոդոսուպուլի ստրատեգիական նշանակությունը, ձգտում էր գրավել այն: Այդ նպատակով նա կանգ է առնում Թեոդոսուպուլից հարավ ընկած մի վայրում, որը, Ն. Ադոնցի հավաստմամբ, կոչվում է *Արտաղիք*: Դրա հիման վրա էլ Ն. Ադոնցը գալիս է այն համոզման, որ Արաբես-ը պարզապես Արտալես-ի աղավաղումն է:

Արզանենեն- «Հայաստանի պատմության» մեջ Ն. Ադոնցը գրում է, որ Ծոփքից արևելք գտնվում է հին Հայաստանի նահանգներից մեկը՝ *Արզանենեն*: Դա, ըստ նրա, *Շուրարիա* երկիրն է, որ հետագայում երևան եկավ *Շուարիա* անունով և որ ընդգրկում էր Բուժե կամ Օպպումու և Կուլլիմերի քաղաքների շրջանը⁹⁴:

Պաղնատուն- Ն. Ադոնցի վկայմամբ՝ Արշակունիների նախկին կալվածքների մի մասը, որ շրջանցվում էր Եփրատի վերին հոսանքով և հետագայում դարձավ Հռոմեական կայսրության ժառանգությունը, կազմում էր Մեծ կամ Ներքին Հայքը: Նրա գավառներից *Պաղնատուն* իր անունը ստացել է *Պաղին* կամ *Պաղան* գլխավոր քաղաքից: Պաղին-ի կողքին, Ն. Ադոնցի վկայմամբ, գտնվում էր *Մուզուր* գավառը:

Մուզուր-Մուզրի- 1112 թվականին Թիգլաթպալասարը պատերազմական գործողություններ է կատարում Մուզրի և Կումանի երկրների դեմ: Նա անցնում է

⁹⁴ Ն. Ադոնց, Հայաստանի պատմություն, էջ 56:

Էլամունի, Թալա և Խարուսա լեռներով, հաղթում է Մուզրիին և երկիրը կրակի ու արյան ճարակ դարձնում:

Ն. Ադոնցի հաղորդմամբ՝ *Մուզրին* գտնվում էր Կումանիի հարավում՝ Դեհոկի շրջանում, որտեղ *Մուսիրի* կոչված քրդական ցեղը պահպանել է նրա անունը: Մուզրի ժողովրդին, ըստ Ն. Ադոնցի, չի կարելի բաժանել այն ժողովրդից, որն իր հիշատակը թողել է *Մ(ու)զուր* հայկական գավառի անվան մեջ, որը գտնվում է Դերսիմի շրջակայքում⁹⁵:

Դարանաղի, Եկեղյաց գավառ- Մուզուրից հյուսիս՝ Եփրատի վրա, կողք կողքի ընկած էին Դարանաղին և Եկեղյաց գավառը: *Դարանաղին* գրավում էր *Քյոմուր* գետի հովիտը, իսկ *Եկեղյաց գավառը*՝ հարևան հարթավայրը: Գիտնականն իրավամբ նկատում է, որ Ալիս գետի ակունքներից մինչև Արաքս ընկած շրջանը խիստ հարուստ է աղահանքերով, և կարող է թվալ, որ այս հանգամանքը իր ազդեցությունն է թողել տեղանունների վրա, այդուհանդերձ, նվազ հավանական է, որ հիշատակված բառերում *alis*-ը առաջացած լինի հայերեն *աղի* բառից:

Աբոս, Նիբարոս, Անի- Հին ժամանակներում Ատրպատականում ապրում էր մի փոքր ժողովուրդ՝ *Αισία*-սու, որի անունով Փայտակարան նահանգի գավառներից մեկը կոչվում էր *Hani*: Ստրաբոնը հայտնում է, որ նրանց մի մասը գաղթեց Հայաստան և բնակություն հաստատեց «հայերից վեր՝ Աբոսի և Նիբարոսի վերևում»: Աշխարհագրի նկարագրությունից, Ն. Ադոնցի կարծիքով, երևում է, որ *Աբոս* և *Նիբարոս* ասելով՝ նկատի ունի Արարատի գագաթները: Սրանցից ավելի վերև գտնվող Անի ամրոցը՝ հետագայում Բագրատունիների հռչակավոր մայրաքաղաքը, ըստ երևույթին, իր անվան համար պարտական է *Aenia*-ու ժողովրդին: Այսինքն՝ Ն. Ադոնցը տեղանունները ստուգաբանելիս առաջնություն է տալիս ցեղանուններից տեղանուն հնարավոր անցումներին: *Ani* անվան կողքին, ինչպես հայտնի է, Մ. Խորենացին ունի *Hani* ձևը, որ համապատասխանում է Փայտակարանի *Hani*-ին: Ն. Ադոնցը ենթադրում է, որ Դարանաղիի Անին էլ նույն ծագումն ունի. ճիշտ այնպես, ինչպես որ նույն այդ Ատրպատականից գաղթած մարդերը հանդիպում են Հայաստանի երկու տարբեր վայրերում՝ Մարդաստանում և Մարդաղիում, այնպես էլ այնիանները, դեպի արևմուտք

⁹⁵ Նույն տեղում, էջ 62-63:

շարժվելով, տեղ են գրավել Շիրակում և Դարանաղիում: Հնարավոր է նաև, որ այդ երկու ցեղերի գաղթը Հայաստանի մի ծայրից դեպի մյուսը պայմանավորված է եղել նույն պատճառներով: Այնիսանների նոր հայրենիքը Եփրատի վրա պետք է կոչվեր Անաղի՝ ani-ali՝ Մարդ-աղիի նմանությամբ. այստեղից էլ՝ արևմտյան հեղինակների Analiba-ն կամ Analibna-ն. վերջի b-ն, ըստ Ն. Ադոնցի, վրացերենի հոգնակերտ յծօ-ն է: *Անալիբա* նշանակում է *անեցիք*, ինչպես վրացիք՝վիր-ք-ից, որոնց ք-ն համազոր է b-ին: Հոգնակերտները գրեթե բոլոր լեզուներում հաճախ դառնում են տեղանվանակերտ ածանց: Հենց այս երևույթն էլ մատնանշում է Ն. Ադոնցը վրացերենի և հայերենի օրինակով:

Աղին- Այս տեղանունը հայ մատենագրության մեջ հայտնի է միայն «Աշխարհացույց»-ից, ընդ որում մի քանի ընթերցումներում, ըստ Ն. Ադոնցի, կարդացվում է *Առիծ*⁹⁶: Աղին-ի ստուգաբանությունը առաջին հայացքից խարխլում է Ն. Ադոնցի՝ ali-ի ստուգաբանությունը, ըստ որի՝ այն ինքնուրույն բառ չէ և կապ չունի հայերեն *աղի* բառի հետ: Այս տեղանվան մեկնությունը ցույց է տալիս, որ ali-ն ավելի շուտ ինքնուրույն բառ է, քան հասարակ թեքածանց: Ն. Ադոնցի համոզմամբ՝ Աղին-ը չի կարելի համարել վերջնականապես հաստատված ընթերցում, և հնարավոր է նաև <ան>*աղին* ձևը: Այս պարագայում նա առաջարկում է հարցի հետևյալ լուսաբանում. *ali-s-ը նրան հիշեցնում է 'Ալս-ս, Haly-s գետանունը, որ հոսում է Դարանաղիի սահմաններում գտնվող լեռներից: Ստրաբոնը կարծում է, թե Ալիս գետի անունն առաջացել է այն աղահանքերից, որոնք գտնվում էին նրա հոսանքի մոտ: Ն. Ադոնցի կարծիքով՝ Ալիս-ին ստուգաբանորեն մոտ է 'Ալի-Հօնեց-ը, որ նույն գետի ավազանում ապրող ժողովրդի անունն է, որի մասին հիշատակություն ունի Հոմերոսը: Ստրաբոնը, մեջբերելով բանաստեղծի տողերը, ենթադրում է, թե ալիզոնները հենց հին խալիբներն են, որոնք նրա ժամանակ կոչվում էին խալիբյներ: Նա անգամ փորձում է Հոմերոսի 'Ալսի-ն ուղղել Χαλύβη-ի: Ն. Ադոնցին նվազ համոզիչ են թվում Ստրաբոնի փորձերը՝ ալիբներին խալիբների հետ նույնացնելու: Նա գրում է. «Hali-zoni և Alibi-ն *ali-ibi-ից արդյոք չէ՞ն նշանակում այն ժողովուրդը, որ զբաղվում էր աղահանքերի մշակմամբ Halis գետի վրա և նրան հարևան խալիբների հետ շփոթելը տեղի չի՞ ունեցել արդյոք

⁹⁶ Ն. Ադոնց, Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, էջ 59:

նրանց լեռնարդյունաբերական նույն բնույթը կրող զբաղմունքի հետևանքով»⁹⁷ : Այստեղից Ն. Ադոնցը եզրակացնում է, որ դասական Alyb-ին համապատասխանում է հայկական Աղին-Ալիս-ը:

Կարին- Հայասալի *Կարաննիս* թագավորի անունը, ըստ Ն. Ադոնցի, հիշեցնում է Կարանտիսը (Թեոդոսիոպոլիս քաղաքի նահանգը), հայերեն՝ *Կարին (Կարեն)*, իսկ Կումմախան ավելի ստույգ կարելի է նույնացնել, նրա համոզմամբ, Կամախ քաղաքի հետ՝ Եփրատի ափին, Դարանաղի գավառում⁹⁸: Տվյալ դեպքում ունենք անձնանուն-դյուցազնանուն-տեղանուն անցումը:

Ակիլիսենե- Ստրաբոնը, ինչպես Ն. Ադոնցն է նշում, *Ակիլիսենե*-ն տեղադրում է Եփրատի ձախ ափին: Իր կազմությամբ ak-ilis-ene-ն հարազատ է daran-ali-ին, man-ali-ին, mard-ali-ին, այսինքն՝ բաղկացած է Ake-ից և ali-ից՝ *ակե-աղի: Ն. Ադոնցը գրում է. «Հունարեն ilis ձևում վերջին s-ն համապատասխանում է կամ հայերեն g-ին, resp. նախագրաբարյան սեռական հոլովի *ս*-ին կամ հայցական հոլովի *ս* ձևույթին»⁹⁹: Մի շարք աշխարհագրական տեղանուններ, ըստ նրա, ունեն ali ածանցը: Նրանց շարքին են պատկանում Analibna, Analiba կամ Analibla-ն: Ն. Ադոնցը կարծում է, որ An-alibna ձևի վերջին մասում չի կարելի չտեսնել վերոնշյալ հայերեն *աղին*-ը, որտեղ *ս*-ը սկզբնական *թ*-ի փափկացումն է: Իսկ ի՞նչ է նշանակում ali-s-ն ի վերջո: Ըստ Հովհաննես Երզնկացու՝ *Դարան-աղի*-ն առաջ է եկել այդ գավառում եղած աղի քարանձավներից, բայց Ն. Ադոնցը, ինչպես վերը նշեցինք, մտածելով, որ դա ժողովրդական ստուգաբանություն է, քիչ հավանական է համարում, որ alis-ը առաջացած լինի հայերեն *աղի* բառից. նա վերստին հիմնավորում է, որ *ali-ն ածականակերտ ածանց է, որ նախագրաբարյան ծագում ունի և համազոր է գրաբարյան *-եղ*-ին: Ըստ այդմ՝ *Մարդ-աղի* պարզապես նշանակում է *Մարդ-յան, Ման-աղի՝ Մանյան, Ակ-իլիսենե՝ Ակիլյան*: Ն. Ադոնցը գտնում է այդ ածանցի վրացական համարժեքը՝ *ali>ցლო>ել:

Դերջան- Այս տեղանունը պահպանվել է տաճկական *Թերջան* կազալի անվան մեջ՝ *Տերջան* և *Դերսիմ* ձևով: Թերջանի գլխավոր քաղաքն է Մամախաթունը:

⁹⁷ Նույն տեղում, էջ 73:

⁹⁸ Նույն տեղում, էջ 34:

⁹⁹ Նույն տեղում, էջ 68:

Դերսիմի մի փոքրիկ շրջանը կոչվում է *Կողլիջան*: Ն. Ադոնցի կարծիքով՝ *Դերսիմ*-ն ու *Կողլիջան*-ը հայկական Դերջան-ի և Եկեղեք-ի, ինչպես և միջնադարյան Կեյցեն-ի (*եկե-լես-ական-ից, հմմտ. Երզնիջան *Երիզական-ից) արաբա-պարսկական ձևերն են:

Օրսա-Եփրատի արևմտյան ափին գտնվող հայկական հողերը հին ժամանակներից ի վեր կոչվում էին Փոքր Հայք: Ն. Ադոնցի կարծիքով՝ Փոքր Հայքի *Օրսա* քաղաքը սխալմամբ մոտեցնում են Orsdara-ին: Գիտնականը հավանական է համարում, որ իր անվան համար *Օրսենե*-ին է պարտական նաև բյուզանդական թեմերից մեկը՝ *Խարսիան-ոն*-ը, որն այդպես էր կոչվում նույն թեմում գտնվող *Խարսիան* ամրոցի անունով: Ն. Ադոնցը հավելում է, որ վերջինիս դիրքը ստույգ հայտնի չէ, և անհաջող փորձ է կատարվել այն մոտեցնելու Karissa, Garsi-ին, որ գտնվում է Ամասիայից ոչ հեռու: Ըստ Ն. Ադոնցի՝ կարիք չկա Խորսիան-ը տանել հասցնել մինչև Պտղոմեոսի Օրսա-ն: Հնչյունական կամայական հարմարեցումները, Ն. Ադոնցի համոզմամբ, անթույլատրելի են, հնչյունական անցումների համար անհրաժեշտ են առնվազն մի քանի լեզուների տվյալներ: Ինքը՝ Ն. Ադոնցը, ստուգաբանելիս միշտ հիմնվում է հայերենի, հունարենի, պարսկերենի, կովկասյան, սեմական լեզուների, լատիներենի, թուրքերենի հնչյունական համակարգերի և իմաստային դաշտերի հետ առնչվող իրողությունների վրա:

Վարսապա- Փոքր Հայքի գավառներից էր նաև *Վարսապա*-ն: Արաբ աշխարհագիրներից ոմանք առաջարկում են կարդալ *Վարպասա*՝ այն *Արաբիսոն*-ի հետ նույնացնելու համար, ուրիշներն առաջարկում են *Սարսապա*: Ըստ Ն. Ադոնցի՝ եթե հնարավոր է *Վարսապա*-ի փոխարեն *Սարսապա* ընթերցումը, ապա ավելի հիմնավոր է այն նույնացնել *Կուրու-չայ* գետի վրա գտնվող նույնպես *Սարսապ* կոչվող գյուղի հետ: Ինչ վերաբերում է Orsa-ին, ապա կասկածից դուրս է, որ այն գտնվում էր *Օրսենե*-ում՝ անկախ նրանից՝ կընդունենք նրա նույնությունը այժմյան *Խորսանա* գյուղի հետ, թե ոչ: Տեղագրական տեսակետից, ըստ նրա, *Խորսանա*-ն ավելի հարմար է Փոքր Հայքում գտնվող *Օրսա* քաղաքին, քան *Օսդարա*-ն, որ գտնվում է նրա սահմաններից դուրս:

Արդ անցնենք Արևելյան Հայաստանի տեղանունների քննությանը:

Հայաստանի արևելյան կամ պարսկական մասը հայոց պատմության մեջ ունեցած իր դիրքով ու նշանակությամբ էապես տարբերվում է Արևմտյան Հայաստանից: Բյուզանդական աղբյուրներում Արևելյան Հայաստանը սովորաբար կոչվում է *Պարսկահայք*:

Արևելյան կամ մարզպանական Հայաստանի ծայրամասային նահանգները՝ Սյունիքը, Մոկքը և Տայքը, գտնվում էին Սյունյաց, Մոկաց և Մամիկոնյան իշխանական տների ձեռքին: Մյուս տոհմերը տեղադրված էին հիշյալ նահանգների միջև ընկած տարածքի վրա: Ըստ «Աշխարհացույց»-ի՝ այդ տարածքը բաժանվում էր երեք մեծ երկրների՝ **Այրարատ, Տարութերան, Վասպուրական**: Այրարատում «Աշխարհացույց»-ը հաշվում է 16 ստորաբաժանում կամ գավառ, որոնք բերված են աղյուսակում: Այսպես՝

Շիրակ- Զբաղեցնում էր Ախուրյան գետի հովիտը՝ Վանանդի և Այրարատի միջև և Ն. Ադոնցի ժամանակ արդեն կոչվել է *Շորագյալ*, հայերեն՝ *Շիրակ-գավառ* կամ *Շիրակ-ավան* անունից: Բասեանը, այժմ՝ Բասեն, տարածվում էր Արաքսի ակունքների մոտ մինչև Սալքորա գյուղը, այսինքն՝ գրեթե մինչև այժմյան ռուս-թուրքական սահմանը:

Բասեան- Հետագայում կոչվել է *Բասեն*, տարածվում էր Արաքսի ակունքների մոտ, մինչև Սալքորա գյուղը, այսինքն, ինչպես Ն. Ադոնցն է նկատում, գրեթե մինչև ռուս-թուրքական սահմանը: Բասենի մասին Ն. Ադոնցը նաև անուղղակի վկայություն ունի. նա մի առթիվ նկատում է, որ Պրոկոպիոսը հիշատակում է աշխարհագրական երկու կետ՝ Bolon, որ միշտ կոչում է Phrourion՝ բերդ, և Pharangion, որ երբեք չի կոչում բերդ: Ըստ պատմիչի՝ առաջինը գտնվում է Թեոդոսուպոլիսի սահմանների մոտ, իսկ երկրորդն այն տեղն է, որտեղ կար ոսկեհանք, և որ շատ մոտ էր Վոհ կամ Ճորոխ գետի ակունքին:

Բոլոն- *Բոլոն* բերդը ծանոթ է հայ մատենագրությանը: Ղ. Փարպեցին այն անվանում է *Բողբերդ* և դնում է Բասենում: Բասենը, ըստ Ն. Ադոնցի, գտնվում է Կարինի թիկունքում, ուստի Պրոկոպիոսն իրավունք ուներ Բոլոն բերդը Կարինի սահմաններին մոտ դնելու: Ն. Ադոնցը ենթադրում է, որ *Բող*-ը կարող է կապ ունենալ պարսկերեն *բոլ* բառի հետ, որ նշանակում է *բարձր*, հին **բարզ**, հայերեն *բարձր*, որի

բոլ ձևը պահպանվել է *բոլադ*՝ *բարձր բառի մեջ*: Ն. Ադոնցը ենթադրում է այստեղից, որ *Բողբերդ* ոչ այլ ինչ է, քան *Բարձր բերդ*¹⁰⁰:

Կենտրոնական երկրորդ նահանգը՝ *Տարուբերանը*, ըստ «Աշխարհացույց»-ի, նույնպես կազմված է 16 գավառներից, որոնցից իր հնությամբ ու նշանակությամբ առավել կարևորը, Ն. Ադոնցի վկայմամբ, *Տարոնն* է, որին հարում էին *Արշամունիք* և *Ասպակունիք* գավառները:

Արշամունիք- Այս գավառանունն առաջացել է *Արշամ*-ից, որը, ամենայն հավանականությամբ, կապ ունի *Արշամաշատ* քաղաքի հիմնադրի հետ:

Ասպակունիք- Խոյթին հարևան լեռնային հովիտներից մեկն է, որն ընկած է *Կարա-սու* գետի (հին Մեղրագետ) ձախ կողմում՝ *Խանդոշ* լեռներում՝ Սասունի դիմաց: Ասպակունիքն ունի միայն աշխարհագրական վայրի նշանակություն և «Աշխարհացույց»-ում այդպես էլ կոչվում է՝ *Ասպակունեաց կիրճ*:

Ապահունիք, Աղիորսք- Մասիք մեծ լեռան ստորոտում է *Ապահունիքը*: Այստեղ գտնվում էր *Աղիորսք* բնակավայրը: Ըստ Ն. Ադոնցի՝ *Աղիորսք* քաղաքը գործածվում է հին իմաստով՝ «որսի համար հատկացված ցանկապատ վայր» (նկարագրական տեղանուն է): Փավստոսի երկում այն կոչվում է *Աղոյ-հովիտ*, իսկ Աշխարհացույց-ում՝ *Աղիտ-ովիտ*:

Բազավան- Բազրևանդի կենտրոնը *Բազավանն* է, որ Ն. Ադոնցի օրոք արդեն կոչվել է Սուրբ-Օհան՝ ըստ այն սրբավայրի, որ հիմնել է Գրիգոր Լուսավորիչը Հովհաննես Նախակարապետի անունով: Թուրքերը սրբավայրը կոչել են *Ուչ-քիլիսե*¹⁰¹:

Ըստ Լ. Հովհաննիսյանի՝ Բազավան-ն իր երկում 11 անգամ հիշատակում է Ագաթանգեղոսը: Հայագետների զգալի մասն (Հ. Հյուբշման, Հր. Աճառյան, Գ. Բ. Ջահուկյան...) ընդունում է *ավան* բառի իրանական ծագումը, որը, թեև, Հր. Աճառյանի համոզմամբ, միջին իրանական լեզուներում վկայված չէ, բայց կա հին պարսկերենում՝ *āvahana*՝ «գյուղ», «ավան»: Գ. Բ. Ջահուկյանն էլ նշում է պարթևերենում *āvān*-ի վկայված լինելը (Ջահուկյան, 1987, էջ 517, ՀԱԲ, էջ 99): *Ավան* բառի իրանական ծագումը մերժում է Գ. Ղափանցյանը և ավելի հավանական է համարում նրա կապը ուրարտական *ebani* «երկիր» բառի հետ: Լ. Հովհաննիսյանը նույնպես չի ընդունում

¹⁰⁰ Ն. Ադոնց, Երկեր, Ա, Հայաստանի ոսկեհանքը, էջ 154:

¹⁰¹ Ն. Ադոնց, Հայաստանի պատմություն, էջ 60:

ավան-ի իրանական ծագումը: Նրա վկայմամբ՝ Դարեհ Վշտասպի Բիսեթունյան եռալեզու արձանագրության մեջ *ավան*-ը վկայված է ընդամենը երկու անգամ, և երկու անգամ էլ այդ տեղանունը Իրանի տարածքում չէ. մեկը էլամում է, մյուսը՝ Հայաստանում (Ուրարտու-ում)¹⁰²:

Շարուր- Ն. Ադոնցի ենթադրությամբ՝ *Շարուրը*, գուցե, *Շորեր* գյուղն է՝ Ալադաղի գառիվայրի վրա, *Ջիլան* գետի ակունքի մոտ¹⁰³:

Կոր գավառը Բզնունիքի մի մասն է ճիշտ այնպես, ինչպես Աղիովիտը՝ Ապահունիքի: Մանագլետից ցած, ձախ կողմից Արածանիի մեջ թափվում է *Կոր-սու* գետակը, որ սկիզբ է առնում *Բուլամա* փոքրիկ լճից. Ն. Ադոնցը ենթադրում է, որ հենց այդտեղ էր գտնվում հին Կորը: Մնացած գավառներից *Երևարք*-ը գտնվում էր լճի հարավային ափին՝ Աղծնիքի հարևանությամբ: *Մարդաղի*-ն գրավում էր Արաքսի ակունքները՝ Բինգյոլի հյուսիսային լանջերում: Նրանից դեպի արևելք՝ Վարաժնունիքի և Հարքի վերևում, հերթով գալիս էին Դասնավորը, Տավարաձատափը և Դալառը, որ տարածվում էին մինչև Արածանի գետը:

Հիշյալ բոլոր տեղանունները թափանցիկ են և ստուգաբանվում են հայերեն արմատներով:

Վասպուրական աշխարհը, ըստ «Աշխարհացույց»-ի, կազմված էր 35 գավառներից, թեև այնտեղ, ըստ Ն. Ադոնցի, բերված են միայն 32-ի անունները, իսկ նկարագրված են միայն 18-ը: Այդ գավառները նկարագրելիս «Աշխարհացույց»-ը հետևում է որոշակի սկզբունքի՝ թվարկումը սկսում է հարավից հյուսիս՝ երեք շարքով: Այս գավառների տեղը մեծավմասամբ հայտնի է Ն. Ադոնցին. *Ռշտունիք*-ը՝ Ոստան կենտրոնով, Վանա լճի հարավ-արևելյան ափերն է, *Տոսա*-ը՝ Վանի շրջակայքը, *Արճիշակովիտ*-ը ընկնում է Վանից հյուսիս՝ *Արճակ* լճի և նրա կողքից հոսող *Մարմեյր* գետի շրջանում:

Վասպուրական- Vaspurakan բառի իսկական նշանակությունը, Ն. Ադոնցի վկայմամբ, պարզվում է vaspurakan hamarakar՝ *վասպուրական համարակար* դարձվածքից, որ նշանակում է *վասպուրական համարող* կամ *հարկահավաք*, իսկ

¹⁰² **Լ. Հովհաննիսյան**, Բառերի մեկնությունները հինգերորդ դարի հայ մատենագրության մեջ, Եր., 2016, էջ 25-26:

¹⁰³ **Ն. Ադոնց**, Հայաստանի պատմություն, էջ 60:

վասպուրական նշանակում է պարսկական: Ավելին, Ն. Ադոնցը նշում է, որ Պարսկաստանում վասպուրներ էին կոչվում ազնվական տոհմի անդամները, և ենթադրում, որ վասպուրականը վերամբարձ ոճի մեջ կարող էր փոխարինել սովորական պարսիկ արտահայտությանը¹⁰⁴:

Պարսկական Հայաստանը, Ն. Ադոնցի փոխանցմամբ, մինչև 591 թ., իր այն տարածքներում, որտեղ տարածված էր, այսպես կոչված, տանուտերական իրավունքը, հայերի կողմից երբեմն կոչվում էր տանուտերական տուն՝ *tanuterakan tun*:

Արճիշակովիտ-Տեղանվան ժամանակակից անունն է *Արճակ*, որ հին *Արճիշակ*-ի համառոտ ձևն է՝ *Արճէշ*-ի նվազական ձևը: *Արճէշ*-ը Վանա լճի հյուսիսային անկյունում գտնվող քաղաք է: Հնում այդ անունն էր կրում նաև լճի մի մասը՝ *Արճէշի ծոցը*, իսկ ապա նաև ամբողջ լիճը:

Ն. Ադոնցը հավանական է համարում, որ *Արճէշ*-ը հայերից առաջ գոյություն ունեցող բնակչության լեզվով առհասարակ նշանակել է *լիճ*:

Բուժունիք, Անձևացիք- Այս գավառներն ընկած էին *Բոհիսան* կամ *Արևելյան Տիգրիս* գետի վերին հոսանքի վրա: Անձևացիք-ից հարավ ընկած էին *Բուժունիք*-ը և *Աննոյոյուն*-ը, իսկ դեպի հյուսիս՝ *Խոշաբ* գետի վերին հոսանքի վրա, որի հովիտը կոչվում էր *Հայոց ձոր*, *Տրպատունիք*-ը և *Երվանդունիք*-ը, իսկ *Արճակ* լճից մինչև Արտազ տարածվում էր *Մարդաստան*-ը:

Առբերանի- Այադին, ուր հասնում է Սարգոնը, Ն. Ադոնցը նույնացնում է հայկական *Առբերանի* գավառի հետ: 30 քաղաքներ տեղակայված էին Էսրակ և Արտավազ լեռների լանջերին: Այդ քաղաքներից *Արգիշտիունան* և *Կալլանիան* ամուր էին կառուցված: Եթե Արգիշտիունան, ըստ Ն. Ադոնցի, Արճէշն է, ապա Կալլանիան պետք է որ *Բերկրին* լինի: Այդպես էլ, ըստ նրա, *Կալլանիա* գետը կարող է լինել *Բերկրի* գետը, որը թուրքերը կոչում են *Բենդիմահի*:

Ալլուրիա գետը զուգադիպում է Մարմետին, և հարց է ծագում, թե *Ալլուր* գյուղը արդյո՞ք չի պահպանել գետի հին անունը (տողատակում գրում է Ն. Ադոնցը, թե *Ալլուր* հին անունը գուցե պահպանվել է *ալլուր* հայերեն բառի հետ նմանության շնորհիվ):

¹⁰⁴ Ն. Ադոնց, Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, էջ 262:

Գավառների երրորդ շարքը տարածվում է *Չավ* գետի ակունքներից դեպի Արաքս. դրանք են **Աղբակ**-ը, որ ներկայիս Աղբակի կազան է՝ Բաշկալա քաղաքով:

Խուրուշկիան կամ *Նաիրին*, ինչպես Սարգոնն է կոչում այն՝ *Խուրուշկիա* անունը վերապահելով նրա մայրաքաղաքին, *Փոքր Աղբակն* է¹⁰⁵:

Մանազկերտ- «Հայաստանի պատմություն» երկում Ն. Ադոնցը քննության է ենթարկում *Մանազկերտի* քաղաքանունը: Ըստ նրա՝ *Արգաշկուն* կամ *Արգաշկունը*, որը ուրարտական *Արգաշկունիի* վերարտադրությունն է, չի կարող այլ բան նշանակել, քան *Մանազկերտ*: Հայաստանի մեծ քաղաքների անվանումներն ընդհանրապես, Ն. Ադոնցի հաղորդմամբ, նախահայկական ծագում ունեն: Նա գրում է. «Շատգումից բացի, մնացած անունները նախահայկական ծագում ունեն: Այդ գավառները, որ հայերը խլեցին հարևան ցեղերից, պահպանեցին իրենց անունները, որոնցից շատերը ավելի շուտ ազգագրական տերմիններ են: Անվանումների, ինչպես նաև տեղադրության խնդրում դասական հեղինակները համաձայն են հայկական աղբյուրներին»¹⁰⁶: *Մելազկերտը*, որի իսկական ձևը *Մանազկերտ*-ն է, հին քաղաք է, որ բարենպաստ դիրք ունի Արսանիայի ափին՝ Սիփան, Ալադազ, Բինգյոլ լեռների միջև մեծ հովտի կենտրոնում, և Վանից, Մուշից, Էրզրումից, Երևանից եկող բոլոր ճանապարհների հատման կարևոր կետն է¹⁰⁷:

Դասան, Մահկերտ- Ըստ Ն. Ադոնցի՝ Դասանը գտնվում էր Ամադիա քաղաքի շրջակայքում՝ Ջելայի և Բազի հարևանությամբ: Հաքքեարի սանջակում հայտնի է եզդիների մի ցեղ՝ *tasani* և *dasani* անունով: Նրա ենթադրությամբ՝ այդ կողմերում էր գտնվում Մահկերտ գավառը՝ քրդերի երկիրը, որ արաբ հեղինակները կոչում են *al māḫardān*¹⁰⁸:

Ն. Ադոնցը տեղանունների ստուգաբանության հարուստ պաշար է փոխանցում նաև բյուզանդագիտական իր հոդվածներով՝ ամփոփված Երկերի Ե հատորում: Այսպես, ապացուցելով Մորիկ կայսեր հայազգի լինելը, Ն. Ադոնցը նկատում է, որ հայ հեղինակները բազմիցս խոսել են այդ մասին: Նրա թվարկած հիմնավորումներից մեկն այն է, որ 591 թ. Բյուզանդական Հայաստանի սահմանները տեղափոխվեցին

¹⁰⁵ Նույն տեղում, էջ 113:

¹⁰⁶ Նույն տեղում, էջ 66:

¹⁰⁷ Ն. Ադոնց, Հայաստանի պատմություն, էջ 85:

¹⁰⁸ Ն. Ադոնց, Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, էջ 258:

հյուսիսում Թեոդոսուպոլսից Սևանա լճի ափը, հարավում՝ Մարտիրոսուպոլսից՝ Վանա լճի ափը: Այսպիսով, հայկական գավառների մեծ մասն անցավ Բյուզանդիայի տիրապետության տակ: Այդ առթիվ էր, որ **Շիրակաշատ** քաղաքի անունը Մորիկի պատվին փոխեցին **Մորիկապոլիս**: *Շիրակաշատ-Մորիկապոլիսը*, ըստ հայագետի, գտնվում էր Անիի շրջանում¹⁰⁹:

Պսեղոսը վկայում է, որ Կոստանդին Դալասենոսը ծագումով հայտնի **Դալասա** վայրից է: Դժբախտաբար, ոչինչ չի հայտնում քաղաքի տեղադրության մասին: Պատմաբանների մի մասը կարծում է, թե խոսքը Թալաս գյուղի մասին է, որ գտնվում է Կեսարիայի մոտ: Սակայն այդ նույնացումը Ն. Ադոնցին հավատ չի ընծայում: **Թալասը**, նրա համոզմամբ, ոչ մի կապ չունի $\Xi\acute{\alpha}\lambda\alpha\sigma\sigma\alpha$ բառի հետ, և լիահույս է, որ *Thalassa* թվացյալ գրությունը ներշնչված չէ այդ համաբանությամբ: Թալասը, ըստ նրա, *Μουταλάσκη*-ի աղավաղված ձևն է. *Mutalaska*>*Mutalassa*, իսկ հետո՝ *Tallase* կամ *Talase*: Անվան ձևափոխումը չէր կարող տեղի ունենալ Պսեղոսի ժամանակաշրջանում, այն էլ՝ *Dallasa* ձևով: Սկզբնատառ *S*-ի փոխարեն *Դ*-ի հայտնվելը անբացատրելի է, քանի որ բյուզանդական արտասանությունը, Ն. Ադոնցի գիտությամբ, ավելի հակված է հնչեղ բաղաձայնները խուլերի փոխարկելու, քան հակառակը: Ըստ գիտնականի՝ առավել ողջամիտ կլիներ՝ *Դալասա*-ն դիտել իբրև մի վայր, որը կոչվում էր *Դալաշ* կամ *Դալասա*, որը հիշատակված է 1018 թ. ընդօրինակված հայկական մի Ավետարանի հիշատակարանում¹¹⁰:

Արմանի- Ըստ Ն. Ադոնցի՝ *Արմանին* կապ չունի Հայաստանի անվան հետ. պետք է խուսափել նման փորձերից: *Արմանի* անունով մի ուրիշ երկիր հայտնի է ակկադացի Սարգոնի պետության արևմտյան սահմանների մոտ: Դժվար է ցույց տալ երկրի ճշգրիտ տեղը, պետք է այն փնտրել Սիրիայի (Ասորիքի) հյուսիսում: Շատ հնարավոր է, որ այդ *Արմանին* լինի *Խալվանի* (*Հալեպի*) մեկ ուրիշ ձևը¹¹¹:

Հայասա- Այս տեղանվան մասին տեղեկություններ կան Սուպպիլուլիումայի Տարեգրության մեջ՝ շարադրված իր որդու և հաջորդի՝ Մուրսիլ II-ի կողմից, ինչպես նաև հենց իր՝ Մուրսիլ II-ի Տարեգրության մեջ: Սուպպիլուլիումայի Տարեգրությունը

¹⁰⁹ Հմմտ. Ն. Ադոնց, Երկեր, Ե, Եր., 2012, էջ 25:

¹¹⁰ Հմմտ. նույն տեղում, էջ 452:

¹¹¹ Նույն տեղում, էջ 26:

պակասավոր է, բայց այնտեղ կարդացվում է *Հայասա* անունը, ապա խոսվում է *կասկա* ժողովրդի մասին: Արձանագրությունից պարզ է դառնում, որ Թուրխալիյան իր որդու՝ Սուպալիլուլիումայի հետ արշավանք էր ձեռնարկել Հայասայի և կասկաների դեմ:

Ն. Ադոնցն առանձնացնում է հետևյալ հայկական երկրանունները՝ *Հայասա-Նաիրի-Ուրարտու*: 1200 թվականին Մեծ Խաթթի կործանումից հետո *Հայասա* թագավորությունը և մի քանի ուրիշներ անհետացան: Հաջորդ դարաշրջանում *Հայաստանը* երևան է գալիս *Նաիրի* նոր անվան տակ:

Ուրարտու- Ն. Ադոնցի համոզմամբ՝ *Ուրարտու* անունը երկրի ասուրական անվանումն է: Սկզբում ասորեստանցիներն այն կոչում էին *Նաիրի: Ուրարտու*-ն նախ երևան է գալիս *Ուրարի* ձևով: Ն. Ադոնցը, ելնելով նրանից, որ Սալմանասար II-ն ասում է, թե երեք օրում կամ երեք քառորդ օրում նվաճել է Ուրատրին, ենթադրում է, որ այդ տարածքը բավական սահմանափակ էր և ողջ Հայկական լեռնաշխարհի վրա չէր տարածվում: Ավելի ուշ այդ անունը, նշում է Ն. Ադոնցը, տարածվեց Հայաստանի վրա: Նա գրում է. «Չի կարելի ասել, թե դա թյուրիմացություն չէ և թե, գուցե, Բոհտանի շրջանը Ուրատրի է կոչվել հենց այն պատճառով, որ նա արդեն այդ ժամանակ Ուրատրի-Հայաստանի մաս էր կազմում»¹¹²: *Ուրարտու* անունը, այսպիսով, ի հայտ է գալիս Սալմանասար III-ի (859-824) շրջանում և նշանակում է միմիայն Հայաստանը:

Ուրարտական թագավորները *Ուրարտու* անունը չեն գործածում նույնիսկ ասուրերեն գրված իրենց արձանագրություններում: Սարգուրի I-ն իր ասուրերեն արձանագրության մեջ իր երկիրը *Նաիրի* է կոչում: Ընդունված է երկրանունը մեկնաբանել որպես *Գեյերի երկիր* («աքքադ. *garu* - «գետ» բառից): Առաջարկվել են նաև *Կրակի երկիր*, ինչպես նաև՝ *լեռնաշխարհ* ստուգաբանությունները: Վ. Խաչատրյանն այս վարկածը հիմնավորում է հետևյալ կերպ. «Ա. Դայմելի բառարանում շումերերենի NA₄ «քար, լեռ» և IR₁₁ «բնակավայր» բառերի դիմաց համապատասխանաբար դրված են ասուրերենի *na-a* և *i-ri*-ի նույնիմաստ արմատները: Այսինքն՝ ասորեստանցիները դրանք փոխ են առել շումերերենից, որոնցով էլ կազմված է Նաիրի տեղանունը: Այն նշանակում է «լեռնային բնակավայր» կամ «լեռնաշխարհ»¹¹³: Տեղանվան մեջ, սակայն, փորձել են գտնել նաև հայկական տարրեր: Na- բաղադրիչը

¹¹² Նույն տեղում, էջ 215:

¹¹³ Հմմտ. Վ. Խաչատրյան, Հայկական տեղանունները սեպագիր աղբյուրներում, Եր., 2012, էջ 61:

համարվում է «բնիկ հայ. բառ՝ հնխ. no - «այն» դերանունից»: Ստուգաբանվում է նաև iri/ire բաղադրիչը: Այն համարվում է աշխարհագրական անուններում արտացոլված Ar/Ara դիցանվան տարբերակներից մեկը: Տեղանվան մեջ Արև աստծո անվան առկայությունը Na տարրի մեջ ի հայտ է բերում արեգակին բնորոշ՝ «երևան եկող, ծագող, հայտնվող, հառնող» բովանդակությունը: Հետևաբար, *Նահրի* երկրանունը նշանակել է *Արևի երկիր*, որը պայմանավորված է եղել տեղաբնակների դիցաբանական պատկերացումներով: *Նահրի* ընդհանրական անունը հատուկ է եղել նաև Հայկական լեռնաշխարհի արևելյան և հարավային հատվածներին:

Ամփոփելով Ն. Ադոնցի վկայությունները հնագույն տեղանունների վերաբերյալ՝ կատարենք հետևյալ դիտարկումները.

Ա. «Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում» երկը տեղանվանագիտական անփոխարինելի շտեմարան է: Բոլոր տոհմանուններն ուղղակի դառնում էին տեղանուն, ամենից առաջ՝ խոշոր բնականուն՝ աշխարհի կամ գավառի անուն, որը տվյալ տոհմի բնօրրանն էր, ապա բնականունից ծնվում էին և փոքր, նույնանուն բնականուններ՝ բերդերի, շեների, ավանների և այնտեղ գտնվող վանքերի անուններ, զուգահեռաբար նաև՝ խոշոր ֆիզիկաաշխարհագրական միավորների անվանումներ՝ լեռների, որոնք իշխանության բարձր և անառիկ լինելու խորհրդանիշն են, լճերի և գետերի, որոնք տվյալ տոհմի տնտեսական հզորության և պաշտպանվածության երաշխավորն էին, իսկ վերջում արդեն ուղիղ կամ ածանցների հավելմամբ՝ ձորերի, դաշտերի, լեռնանցքների և վտակների անուններ, այսինքն՝ տոհմանուն տեղանվանահիմքը հույժ արդյունավետ արմատ էր վաղնջական շրջաններում ածանցմամբ և բառաբարդմամբ նոր տեղանունների կազմության համար:

Բ. Երբ հետազոտում ենք պատմական հատուկ այն փաստաթղթերը, որ կոչվում են *գահնամակներ* և *զորանամակներ*, իսկ դրանք նախարարական անվանացուցակներ են, որտեղ նշված է տվյալ տոհմի բարձր՝ դիրքը, պետական-իշխանական աստիճանակարգության մեջ և նրան պատկանող զորաքանակը՝ հեծելազորը և ընդհանրապես այրուծին, ապա տեսնում ենք, որ դրանք բոլորն անխտիր աշխարհագրական միավորների անվանումներ են՝ ամրագրված տարբեր ժամանակների քարտեզներում: Այդ գահնամակների և զորանամակների

մանրակրկիտ հետազոտության հեղինակ Ն. Ադոնցն իր «Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում» աշխատության մեջ ցույց է տալիս նախարարական անունների և նրանց պատկանող հողերի անունների հայելային կապը, որի հիման վրա վերականգնում է նաև իր քննած ժամանակներում վերացած նախարարական տոհմերի հետքերը՝ ըստ պահպանված տեղանունների: Մարդկային զարմը կարող է անհետանալ, ձուլվել և կլանվել ավելի խոշոր և մարտունակ ազգությունների կողմից, բայց նրանց անուններից ծագած տեղանուններն ավելի երկարակյաց են, ուստի նրանց հիման վրա հնարավոր է ուրվագծել տվյալ տարածքի տերերի ազգաբանությունը, զորորինակ՝ հայ հին մատենագրության մեջ վերոհիշյալ *Արշամունիք*-ը համարվում է աշխարհագրական եզր Տարոնի կազմում՝ գավառանուն, որի տարածքը Ե դարում պատկանում էր Մանդակունյաց նախարարական տոհմին, բայց Ն. Ադոնցը ենթադրում է, որ այս տեղանունը ծագում է *Արշամ* անձնանունից, որն ամենայն հավանականությամբ կապ ունի Խարբերդի մոտ գտնվող *Արշամաշատ* քաղաքի հիմնադրի հետ: Տարոնի արևմուտքում գտնվող Նեմրուֆ լեռան մոտ հայտնաբերվել է արձանագրություն, որտեղ կա հիշատակություն Արշամ թագավորի մասին: Ըստ որոշ աղբյուրների՝ նա Տիգրան Բ-ի եղբայրն էր: Այս փաստերն իրար կապելով՝ Ն. Ադոնցը եզրակացնում է. «Ըստ երևույթին հին ժամանակներում Եփրատի հովտում եղել է Արշամունյաց իշխանական տոհմը. սրանց հաջորդները Բինգյոլի ստորոտում, այսինքն՝ այն վայրում, որ պահել է նրանց անունը, շարունակել են իրենց գոյությունը բավական համեմատաբար երկար ժամանակ»¹¹⁴: Նույն կարծիքին էր նաև Գ. Ղափանցյանը, որն ավելի հեռուն էր գնում՝ պահպանված տեղանվան հիման վրա վերականգնելով ոչ միայն վերացած նախարարական տոհմանունը, այլև նրանց ազգային արմատները: Ելնելով Հայքում նրանց հաստատման ժամանակից, հիշատակման աղբյուրներից, նաև հնչյունական կառույցից՝ նա Մանդակունիներին, Սլկունիներին, Արշամունիներին համարում է հայացած խեթական վերաբնակներ, որոնք հաստատվել են Տարոնից հյուսիս-արևմուտք ընկած տարածքներում¹¹⁵:

Գ. Եթե անձնանվան կամ ցեղանվան հետ տվյալ տեղանվան աղերսները չեն համոզում, պետք է փնտրել տվյալ ժամանակի դիցարանի աստվածների անունների հետ

¹¹⁴Ն. Ադոնց, Երկեր, Ե, էջ 345-346:

¹¹⁵ Գր. Капанцян, Историко-лингвистические работы, Ер. 1975, т. II, стр. 124-126:

զուգակցումներ, որովհետև այդ փուլում անվանադրման համար լուրջ գործոն էր նաև երկնային պաշտպանությունը, գերբնական ուժերի դերը: Թեև նշենք, որ խոշոր բնական ունենների պարագայում՝ երկրանուններ, գավառանուններ և այլն, հիմնադիր ցեղի անվանումն առավել վճռորոշ է, քան աստվածներինը:

Դ. Հայկական հնագույն տեղանունների ստուգաբանական համակարգը Ն. Ադոնցի կողմից, թեև տրված է շատ կուռ ու հստակ, այդուհանդերձ, մեզ վիճելի է թվում *Ակիլիսենետ* տեղանվան առթիվ հեղինակի դիտարկումը, թե *ali (ալի) ածականակերտ ածանցը նախագրաբարյան ծագում ունի և համարժեք է գրաբարյան *-եղ* ածանցին: Առաջին հայացքից այս մոտեցումը ճշգրիտ է, քանի դեռ հեղինակը չի բերում օրինակներ. ըստ նրա՝ *Մարդ-ալի*-ն վերոնշյալ օրինաչափությամբ, այսինքն՝ ածականակերտ *-ալի* ածանց ունենալով, համարժեք է *Մարդ-յան*-ին, *Ման-ալի*-ն՝ *Ման-յան*-ին: Մեր կարծիքով, գրաբարյան *-եղ*-ը, ցույց տալով որևէ հատկանիշի շատ լինելը, չի կարող համարժեք լինել ածականակերտ *-յան*-ին: Հետևաբար, Ն. Ադոնցի հիշատակած *ali (ալի)-ն կա՛մ համարժեք չէ գրաբարյան *-եղ*-ին, կա՛մ համարժեք լինելով՝ վերոնշյալ *Մարդ-ալի* և *Ման-ալի* տեղանունների համարժեքները պետք է լինեն ոչ թե *Մարդ-յան* և *Ման-յան*, այլ *Մարդ-եղ* և *Ման-եղ*:

Ե. Ն. Ադոնցն իր երկում միևնույն տեղանունը մի դեպքում կոչում է *Մունծուր*, մյուս դեպքում՝ *Մուզուր*: Նկատի ունենալով **նծ>զ** ոչ հաճախադեպ անցումը հայերենում, որն ի հայտ է բերել նաև Ն. Ադոնցը՝ կարծում ենք, որ գրաբարի *ես* անձնական դերանվան հայցականը՝ *զիս*-ը, առաջացել է ոչ թե ուղղականից, ինչպես նշված է գրաբարի դասագրքերում, այլ տրական *ինծ*-ից, որի *նծ*-ն հայցականում դարձել է *զ*՝ *ինծ>իզ*: Վերջինիս ավելանալով հոլովակերտ *զ* նախդիրը՝ առաջընթաց տարնմանմամբ վերջին *զ*-ն դարձել է *ս*՝ *զիզ>զիս*:

Զ. Տեղանունների նշյալ ստուգաբանություններն արդիական են և չեն վիճարկվել այլ ուսումնասիրողների կողմից:

2.2. ՀԱՅԿԱԿԱՆ ՏՈՒՄԱՆՈՒՆՆԵՐ

«Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում» գրքում Ն. Ադոնցն առանձին քննության է ենթարկում հայկական տոհմանունները:

Տոհմական կեցությունը յուրաքանչյուր ժողովրդի պատմության նախնական անհրաժեշտ փուլն է: Հայաստանն իր բազմաթիվ լեռնաշղթաներով կազմում էր հովիտների, կիրճերի մի ցանց, որոնցից յուրաքանչյուրն այնտեղ բնակվող տարբեր ժողովուրդների ցեղային առանձնահատկությունները պահպանելու խիստ նպաստավոր միջավայր էր ստեղծում: Ն. Ադոնցի պատկերավոր բնութագրմամբ՝ «Գտնվելով մեծ ժողովուրդների տեղաշարժերի խաչմերուկում՝ Հայաստանը բռնում է և իր մեջ ներծծում բազմաթիվ էթնիկական հոսանքներ և ցեղային շիթեր»¹¹⁶:

Ն. Ադոնցը նշում է, որ խառն բնակչության պարագայում դժվար է վերականգնել ընդհանուր սովորույթները, աստիճանակարգությունը:

Այսպես, նախարարության քանակական հետազոտությունը ստանձնած գիտնականը նախ քննում է Մ. Խորենացու «Հայոց պատմություն»-ը՝ ցույց տալով, որ այն նախարարության պատմությունը շարադրելու առաջին փորձն է, ապա այն համեմատում է իրենց անշուք արտաքինի պատճառով հետազոտողների ուշադրությունից սպրդած, սակայն պատմագիտական անփոխարինելի արժեք ունեցող այնպիսի փաստաթղթերի հետ, որպիսիք են Գահնամակներն ու Ջորանամակները: Գահնամակները նախարարական տոհմերի աստիճանակարգությունը ներկայացնող փաստաթղթեր են՝ ըստ նրանց զբաղեցրած դիրքի, իսկ Ջորանամակները նախարարական տների ցանկեր են, որտեղ նշված է նրանց տնօրինած հեծելազորի թիվը: Ըստ այդ ցանկի՝ նախարարական ամբողջ զորքը բաժանված է եղել չորս թևերի կամ դռների, որոնք երկիրը պիտի պաշտպանեին չորս կողմերից:

Ն. Ադոնցը մեջբերում է պատմահոր՝ նախարարական տոհմերի ցանկը՝ ամփոփված Բ գրքի Է և Ը գլուխներում: Այսպես՝

¹¹⁶ Ն. Ադոնց, Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, էջ 435-436:

Բագրատունի	Ծավղեից	Աղձնեաց
Խորխորունի	Գարգարք	Մոկաց
Վարաժնունի	Աշոցեան	Կորդուաց
Գաբելեան	Տաշրաց	Անձեւացեաց
Աբելեան	Գուգարաց	Ռշտունի
Արծրունի	Որդունի	Գողթան
Գնունի	Անգեղ տան	Վանանդ
Սպանդունի	Ծովիաց	Դիմաքսեան
Հաւենունի	Ապահունեաց	Տրունի
Ձինական	Մանաւագեան	Ամատունի
Մարդպետ	Բզնունեան	Առաւելեան
Մուրացան	Սղկունի	Ռովսեան
Կաղմեան	Մանդակունի	Մամիկոնեան
Սիսական	Վահնունի	Կամսարական
Ուտեաց	Առաւենեան	Աշխադարեան
Գարդմանաց	Զարեհաւանեան	

Այս տվյալների համեմատությունը Գահնամակի ընձեռած նյութի հետ ցույց տվեց, որ Մ. Խորենացու նշածներից միայն 12 անուններ (Կաղմեան, Ուտի-Օտենա, Ծաւղեք, Գարգարք, Տաշիր, Գուգարք, Անգեղ, Աղձնիք, Որդունի, Մանաւագեան, Բզնունի, Կորդուք) չեն համապատասխանում այս փաստաթղթի տվյալներին: Վերջինում նկատի է առնված միայն Մարզպանական Հայաստանը, և հասկանալի է հիշյալ 12 նախարարությունների բացակայությունը, որոնց մի մասը մինչ այդ դադարել էր գոյություն ունենալ, իսկ մյուսները, Ն. Ադոնցի հավաստմամբ, գտնվում էին Մարզպանական Հայաստանի սահմաններից դուրս:

Մյուս կողմից, Մ. Խորենացու երկում, Գահնամակի համեմատությամբ, պակասում է 22 անուն՝ չհաշված կրկնվողները՝

Վասպը Վարձաւունի
Տայք Սահառունի
Բասեան Պալունի
Վարձաւունի
Սահառունի
Պալունի
Համբուժեան
Վարասպակեան
Ընծայեցի
Տայգրեան
Երվանթունի
Տամբեր
Բժնունի
Քաջբերունի
Մեհնունի
Նախճերի
Արտաշեսեան
Վիժանունի
Տուլն
Աքաճոյ
Գազրիկան
Վագրասպունի

Ն. Ադոնցի համոզմամբ՝ քերթողահայրը ծանոթ է եղել ոչ միայն *Գահնամակին*, այլև *Ջորանամակին*:

Անցնենք նշված տոհմանունների քննությանը, որը մեզանում ուշադրության գրեթէ չարժանացած բնագավառներից է: Ճիշտ է, Ն. Ադոնցն այս երկում կենտրոնանում է միայն մի քանի հռչակված տոհմերի անունների ստուգաբանության վրա, սակայն դա բացատրելի է. «Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում» երկն

առաջնահերթ պատմագիտական արժեք ունի, հետո միայն՝ բանասիրական, ուստի մենք էլ կփորձենք հնարավորինս ամբողջացնել նրա ընձեռած լեզվաբանական նյութը:

Ըստ հայկական ավանդությունների՝ Մամիկոնյանները ծագում են «ճեներից»: Փ. Բուզանդի երկում Մամիկոնյաններն իրենց մասին ասում են, թե ծագում են Ճենաց աշխարհի թագավորներից: Ըստ Ն. Ադոնցի՝ Փ. Բուզանդի խոսքերից չի երևում, թե ինչ է նշանակում «աշխարհին Ճենաց»: Անանունի հաղորդածից ակնհայտ է, որ դրանով պիտի հասկանալ Պարսկաստանից արևելք՝ Բալխից այն կողմն ընկած երկրներից մեկը, այսինքն՝ Չինաստանը: Այս գրույցի նպատակը, ըստ Ն. Ադոնցի, ներկայացնելն է, թե ինչպես Մամիկոնյանները Չինաստանից եկան և հաստատվեցին Տայքում՝ իրենց տոհմական կալվածքում: Ն. Ադոնցի կարծիքով՝ ավանդության մեջ հիշված Ճենաց աշխարհի մեկնաբանության հարցում թյուրիմացություն կա: Նախնական ավանդության մեջ, ըստ նրա, *ճենք* ասելով հասկանում էին ոչ թե հեռավոր չինացիներին, այլ հարևան ծաներին, որոնք ապրում էին Մամիկոնյանների տոհմական կալվածքից՝ Տայքից ոչ հեռու: Մամիկոնյանների տոհմական հատկությունները՝ դյուրաբորբոք խառնվածքը և արտասովոր քաջությունը, ցույց են տալիս, որ նրանք ավելի շուտ ազգակից են դեռևս Զ դարում իրենց ռազմատենչությամբ աչքի ընկնող ծաներին, քան հեզաբարո չինացիներին:

Հր. Աճառյանը *Մամակ* անվանն անդրադառնում է միայն վկայությունների տեսքով՝ նշելով, որ մի դեպքում այն արական անուն է, մյուս դեպքում, թերևս, իգական, իսկ Մամիկ-ը դիտարկում է ոչ իբրև Մամակ-ի հնչյունափոխված տարբերակ, այլ առանձնակի անձնանուն՝ որպես *մամ*, *տատ* բառերի փաղաքշական: Մյուս կողմից Մամիկոնյանների՝ Չինաստանի հետ ունեցած աղերսի ապացույցն է նաև Հր. Աճառյանի վկայությունը, թե *Մամիկոն* անվան հին ձևը *Մամգուն*-ն է՝ չինական ծագում ունեցող: Նա համեմատում է չին. Man-gun «հարավային արիական այլազգիների իշխան» և gun-Man «իշխան Մաների»¹¹⁷:

Մ. Խորենացին ունի *Մամգուն* և *Բողոխ* անունները: Պատմահայրը դեն է նետել պահլավական *-ակ* վերջավորությունը և կցել հիմքերը՝ *Մամ(ակ)+Կոն(ակ)=Մամկոն*, իսկ հետո *Մամգուն*՝ նախորդող *մ*-ի ազդեցությամբ: Համանման կերպով կազմվել է

¹¹⁷ Հր. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, Եր., 1962, հ. 3, էջ 184:

նաև *Բղղոխ* անունը: Զորագլուխը, որը մեծ խաքանի կողմից ուղարկվում է օգնության հեփթաղներին՝ ընդդեմ Սմբատ Խոսրով Շումի, կրում է *Ճեմբուխ* անունը: Նույն խաքանի մյուս զորագլխի անունը սեռական հոլովով հնչում է *Ճեպեպիտոյ*: Ուղղականը պիտի լինի *Ճեպեպուխ*, որ պետք է ընդունել որպես *Ճեմբուխ*-ի աղավաղում: Այդ դեպքում այն նույն բաղադրությունն ունի *Ճեմբուխ*-ի հետ և նշանակում է *չինական կամ չինացի բուխ*: Եթե թուլացնենք ձայնավորը առաջին վանկում՝ շեշտադրությունից առաջ, Մ. Խորենացու *Բղղոխ*-ը, ըստ Ն. Ադոնցի, տարրալուծվում է *բուղ*-ի և *ղոխ*-ի, արհեստականորեն կազմված բառ Սեբեոսի կողմից՝ երկու անունների միացման միջոցով:

Բուխ+ղուխ=բուխղուխ=բխղուխ=բղղող (խ=ղ՝ դ-ից առաջ, և ու=0՝ շեշտադրության տակ)¹¹⁸:

Պատմաբան Հ. Սվազյանը նշում է, որ ճեները չեն կարող նույնացվել ո՛չ ճաներին, ո՛չ չինացիներին, որովհետև նույնացման այսպիսի փորձը սոսկ հնչյունական ընդհանրությունների վրա է հիմնված: Նրա կարծիքով՝ ճենաց աշխարհը պետք է տարածված լիներ Պարսկաստանի արևելյան սահմաններից ոչ շատ հեռու հոսող Ամու-Դարյա գետի ափերին¹¹⁹:

Լ. Հովհաննիսյանը, անդրադառնալով *Ճենք*, *Ճենաց աշխարհ* եզրերի մեկնություններին, նշում է, որ Մ. Էմինը ծանոթագրում է Тченк, Ճենք, китайцы, Китай, Խ. Ստեփանեն՝ «Ճենք անունը, թե՛ երկրի նկարագրությունը ցույց են տալիս, որ այժմեան չինացիներն և Չինաստանն է նշանակում»: Գ. Սարգսյանը ևս նույն կարծիքին է՝ «Страна ченов-Китай, чены-китайцы»¹²⁰:

Իբրև ապացույց այնմ, որ ճեները չինացիների հետ կապ չունեն, Լ. Հովհաննիսյանը բերում է «Աշխարհացոյց»-ի և Մ. Խորենացու «Պատմության» այն հատվածները, որոնք վերաբերում են Ճենքին: Այս հատվածներում գիտնականը ոչ մի էական բան չի գտնում, որ բնորոշ լիներ Չինաստանին: Ճենքի նկարագրության մեջ, օրինակ, չինացիներին բնորոշ որևէ առանձնահատկություն չի նկատվում, չի խոսվում

¹¹⁸ Ն. Ադոնց, Երկեր, Բ, «Հայոց նախնական պատմությունը» Սեբեոսի երկում և դրա աղբյուրները Մովսես Խորենացու և Փավստոս Բուզանդի երկասիրությունների հետ, Եր., 2006, էջ 276:

¹¹⁹ Հ. Սվազյան, Ճեները և «Ճենաց աշխարհը» ըստ հայկական աղբյուրների, Պատմա-բանասիրական հանդես, Եր., 1976, N 3, էջ 209:

¹²⁰ Հմմտ. Լ. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 99:

նրանց մաշկի գույնի, դիմագծերի մասին և այլն: Բացի դրանից՝ «Աշխարհացոյց»-ում ճենաց աշխարհի բուսական և կենդանական աշխարհին վերաբերող թվարկումների շարքում չինարեն ոչ մի բառ չկա, փոխարենը գերիշխող են պարսկերեն բառերը՝ դարիճենիկ, հոշիբուակ, հրէշ և այլն: Բացի սրանից՝ ինչպես Լ. Հովհաննիսյանն է նկատում, բազմաթիվ լեզուներում *Չինաստան* բառի արմատի ծայնավորը *ի* է՝ անգլ. China, գերմ. China, իտալ. Cina, ռուս. Китай և այլն: Չինաստանը, եթե լիներ V դ. վկայված ճենքը, ճենաց աշխարհը, ապա վերջինները պիտի ունենային *Ճինք կամ *Ճէնք¹²¹:

Գ. Սարգսյանի վկայմամբ՝ *Մամիկոնյան* տոհմանվան ստուգաբանությունը եռաստիճան է: «Մամիկոնեանը ստուգաբանվում է «Մամգոնեանով», սա էլ՝ «Մամգոնով»: Անանունի տարբերակով այն ստուգաբանված է զույգ՝ Մամիկ և Կոնակ անուններով»¹²²:

Լ. Հովհաննիսյանը հավելում է, որ Հր. Աճառյանը Մամգուն-ը ստուգաբանում է որպես չին. Man-gun «հարավային արիական այլազգիների իշխան» (Անձ. բառ., հ. Գ, Եր., 1946, էջ 184), և այս ստուգաբանությունն իր հերթին ապացուցում է, որ Մամգունը չինացի լինել չի կարող¹²³:

Կարծում ենք, միայն խառնվածքի ընդհանրության հիման վրա չի կարելի խոսել ցեղերի ազգակցության մասին, առավել ևս, եթե ունենք Կովկասում լայն տարածում գտած *Մամիկոն* անունը՝ իր՝ չինական ծագման *Մամգուն* հին տարբերակով, որը կարելի է Մամիկոնյանների՝ Չինաստանից Տայք տեղափոխության փաստարկ համարել, չնայած որ, կարծում ենք, չի կարելի տոհմի ծագումնաբանության հարցում հիմնվել հատկանունների ստուգաբանության վրա:

Ն. Ադոնցի հաղորդմամբ՝ Βαγαδάτης անունը լեզվական անկանոնություններին դեռևս չենթարկված հայկական Բագա-րատ-ի՝ Bagarata-ի սկզբնական ձևն է, որ ծագում է Bagadata-ից՝ *աստու տված* бага-ից և data-ից-հուն. Θεόδοτος: Տիգրանի՝ այս անունը կրող ստրատեգը **Բագ<ա>րատունիների** նշանավոր տոհմի նախահայրն է: Հանձին նրա՝ արդարացվում են հայկական երկու միմյանց հակասող

¹²¹ Նույն տեղում, էջ 98-105:

¹²² Գ. Սարգսյան, Հատուկ անունների ստուգաբանությունը Մովսես Խորենացու պատմության մեջ, Պատմագիտական հետազոտություններ, Եր., 2006 թ., էջ 102:

¹²³ Լ. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 103:

ավանդությունները Բագրատունիների ծագման մասին: Ըստ Անանունի՝ Բագրատունիները ծագում են Հայկից՝ հայերի նախահորից: Մյուս ավանդությունը, որ պահպանվել է Մ. Խորենացու երկում, վկայում է նրանց հրեական արյան մասին. հենց տոհմի անունը, հատկապես նրա տոհմական *aspet* տիտղոսը, Ն. Ադոնցի համոզմամբ, ցույց է տալիս, որ այդ հարստությունը առաջ է եկել հայ-իրանական էթնիկական հողի վրա: Նրանց սկզբնական հայրենիքը, ըստ երևույթին, գտնվում էր Ատրպատականի ծայրամասում: Ն. Ադոնցը հակված է ստուգաբանական կապ գտնելու նաև Բագարատ-ի և Բագրևանդ-ի միջև:

Ըստ գիտնականի՝ **Արծրունի** բառի ստուգաբանությունը դեռ ճշտված չէ: Այդ անվան ծագումը մեկնաբանելու բազմաթիվ փորձերից և ոչ մեկը, նրա կարծիքով, արժանահավատ չէ: Անունը չի ստուգաբանում նաև Հր. Աճառյանը:

Մեր կարծիքով՝ *Արծրունի*-ն ի սկզբանե եղել է *Արծվունի*, որովհետև Արծրունիների զինանշանը պատկերում է արծվի: Թռչունը գլխով դարձած է դեպի աջ՝ թևերը սեղմված մարմնին: Երևացող թևը ձևավորված է երկու ուղղահայաց, երկու զուգահեռ փոսիկներով: Երկու փոսիկով է ձևավորված դեպի ներքև թեքված պոչը: Մարմնի վիճակն այնպիսին է, որ երևում են կուրծքը, երկրորդ թևի ուսագոտին և երկու ոտքերը: Կտուցը սուր է, աչքը՝ կրկնակի փոսիկով, ավելի ընդգծուն է դարձված¹²⁴:

Մյուս կողմից, ըստ Արծրունիների տոհմական ավանդապատումների, Արծրունիների իշխանական տունը ծագում է Տորք Անգեղից: Իսկ Տորք Անգեղի ադոնցյան մեր քննությունը ցույց է տվել, որ Տորքի հրեշտակը՝ նամակատարը, գիշատիչ թռչունի տեսքով էր պատկերվում՝ անգղի, արծվի և այլն:

Երբ մ.թ.ա. 68 թվականին հռոմեական զորավար Կորբուլոնը՝ Լուկուլլոսի հաջորդը, Արտաշատից նահանջեց Տարոնի ուղղությամբ, ստիպված եղավ անցնել մարդերի երկրով: Մարդերը, որ դեռ այդ ժամանակ զբաղվում էին ավազակությամբ, հարձակվեցին հռոմեացիների վրա, բայց հակահարձակման ենթարկվելով՝ փախան և թաքնվեցին լեռներում: Սրանից երևում է, որ այդ ժամանակ մարդերը արդեն բնակվել էին այն վայրերում, որոնք ավելի ուշ հայերը կոչում էին *Մարդաստան* կամ *Մարդոցեք*, այսինքն՝ *մարդերի երկիր*: Այս մարդերից է իր ծագումն առել իշխանական այն տունը,

¹²⁴ Աղբյուրը՝ http://hay-gehi-haxtanak.blogspot.com/2013/06/blog-post_12.html

որի ներկայացուցիչը կրում էր *մարդպետ*, mardpet, այսինքն՝ *մարդերի պետ* անունը: Հետագայում այս անունը նույնպես դարձավ տոհմական տիտղոս, և մարդպետների տոհմն ու նրանց տիրույթները կոչվեցին **Մարդպետ-ական**:

Մարդերի հետ միասին Ջագրոս և Նպատ լեռների միջև ապրում էին կուրտիները, որոնք մադերի նման հաստատվել էին Հայաստանի սահմանագլխին՝ մարդերից հարավ այն տեղում, որ հետո նրանց անունով կոչվեց *Կորճեք*: Կուրտիները, ըստ Ն. Ադոնցի, այժմյան քրդերի նախահայրերն են, և նրանց չպետք է շփոթել կարդուլիների հետ, որ այլ ծագում ունեցող մի ժողովուրդ է: Վերջիններիս երկիրը, ի տարբերություն Կորճեք-ի՝ կուրտիների երկրի, հայերը կոչում էին *Կարդուք*:

Ըստ Գ. Ասատրյանի՝ Ն. Ադոնցը, թեև առանձին չի զբաղվել քրդերի պատմությամբ, սակայն, «լինելով հայ հին պատմության, բանասիրության և Հայաստանի պատմական աշխարհագրության հրաշալի գիտակ, և ունենալով արևելագիտական լայն ու համակողմանի պատրաստվածություն, թերևս միակն էր իր ժամանակի գիտնականներից, որ ի վիճակի էր բարձրացնել այս հարցը... (Հայաստանում քրդերի տարածման նախապատմություն- ընդգծումը մերն է)»¹²⁵: Ն. Ադոնցն իրավամբ նկատում է, որ քրդերի ներթափանցումը Հայաստան չփոխեց երկրի ժողովրդագրական պատկերը, բացի դրանից, ինչպես Գ. Ասատրյանն է նշում, Ն. Ադոնցը ենթադրել է քրդական *ռոճկի* ցեղամիավորման հայկական ծագման հավանականությունը՝ խոսելով այդ միավորումից սերող քուրդ պատմիչ Շարաֆեդդին Բիթլիսիի մասին: Նա գրում է. «Շարաֆեդդին-պատմիչն ավելի շատ հիմքեր ուներ հայկական, քան արաբական կամ քրդական արյուն փնտրելու իր նախնիների երակներում»¹²⁶:

Սկզբում կուրտիների երկրում և հետագայում նրանց հարևանությամբ ապրում էին matiani-ները: Հին հեղինակների տվյալները հաստատվում են նոր հետազոտողների եզրակացություններով այն մասին, որ mati ժողովուրդը ոչ միայն արյունով, այլև անունով ազգակից է մադերի, mada-ների հետ: Նույն անվան այլ ձևն է՝ manda: Ըստ Ն. Ադոնցի՝ *Մադա*-ն այնպես է հարաբերվում manda-ին, ինչպես՝ mati-ն՝

¹²⁵ Գ. Ասատրյան, Նիկողայոս Ադոնցը և քրդերի՝ Հայաստան ներթափանցման պատմությունը, Իրան-նամէ, Երևան, 1995, թիւ 3, էջ 3:

¹²⁶ Նույն տեղում, էջ 4:

manti-ին: Դրանց հետ սերտորեն կապվում են հայոց **Ամատունի՝** A-mat-uni և **Մանդակունի՝** Mand-ak-uni իշխանական տների անունները: Այն, որ Ամատունիները բնակվում էին Արտագում, Ն. Ադոնցի համոզմամբ, վկայում է նրանց իրանական ծագման մասին¹²⁷: Մադերը ծանոթ էին հայերին սովորաբար *մարեր* անունով, ինչպես գիտնականն է վկայում, իսկ mar-ը նույնպես ծագում է mada-ից: Հայկական այն ավանդությունը, ըստ որի՝ **Մուրացան** իշխանական տոհմը ծագել է մարերից, Ն. Ադոնցին անհիմն չի թվում: Այն վայրը, որտեղ բնակություն հաստատեցին մարերը, հայերեն պիտի հնչեր *Մարոց*, ինչպես որ մարդերի հայրենիքը կոչվում էր *Մարդ-ոց*: Այստեղից էլ *Մարոց-եան*, կամ պարսկ. ān-ով՝ *Մարոց-ան* և ավելի ուշ՝ *Մուրացան*:

Ն. Ադոնցի վկայմամբ՝ Ատրպատականի հողերից Հայաստան էին ներթափանցել ցեղային առանձին խմբեր: Գելերի, կարդուսիների, ամարդների կողքին հիշատակվում են ուտիները կամ ուտիացիները: Ուտիների հետ միասին դեպի Արաքս և Կուր գետերի միջև ընկած ավազանը շարժվեցին, ըստ Ն. Ադոնցի, գելերը, որոնցից ծագում են, հավանաբար, հայկական Գեղ, Գեղարքունի տեղանունները, ինչպես նաև՝ անիացիները, որոնք Փայտակարանի Հանին կապում են Շիրակի Անի քաղաքի հետ¹²⁸:

Գարգարներին, ինչպես Ն. Ադոնցն է նկատում, Փավստոսը հիշատակում է այն լեռնականների թվում, որոնք Խոսրով Կոտակի թագավորության ժամանակ բաղասճիք ցեղի հետ ներխուժում են Հայաստան: Սրանք, ըստ Ն. Ադոնցի, Մ. Խորենացու գարգարներն են՝ Ուտիների, Գարդմանների, ծավդեացիների հարևանները: Հետագայում Գարգարների դաշտ կոչվեց հին Ուտիքը կամ Օտենեն՝ par excellence Պարտավ քաղաքի հետ միասին:

Մուխ-ան-քը Արցախի նահանգի գավառներից մեկի անունն է, որ ծագում է Կասպից ծովի ափերին ապրող ցեղերից մեկի՝ *μύκοι*-ներից: Ն. Ադոնցը նշում է, որ ըստ Հերոդոտոսի՝ վերջիններս ապրում էին Օծուի-ի մոտ և զինվում էին Πάκτυεσ-ների նման, այսինքն՝ Բոհտանի բնակիչների պես: Այս հանգամանքից Ն. Ադոնցը ենթադրում է, որ *μυκοι*-ներն ազգակից են մոկաց, այսինքն՝ մոկ-ս-երի հետ: Ըստ գիտնականի՝ սրանց մասին հիշատակություն կա այն տափաստանի անվան մեջ, որ կոչվում է Մուղան-դաշտ, այսինքն՝ մուղերի դաշտ: Նույնկերպ Պարզկան-քը, ավելի

¹²⁷ Ն. Ադոնց, Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, էջ 466:

¹²⁸ Նույն տեղում, էջ 467:

ճիշտ՝ Պարսականքը, որ գտնվում է Արցախում, ծագում է Πάρσιοι ժողովրդից և գուցե kust-ի parens-ը կապ ունի Παρράσιοι-ի հետ¹²⁹:

Հայկական ավանդությամբ՝ Արշակունիների նախահայրը կոչվում էր ոչ թե Տրդատ, այլ Վաղարշակ: Valarš-ak-ը համապատասխանում է հայկական Վարդ-գէսին կամ Վառգոշին, ինչպես նաև պարսկ. Valaš-ի ժողովրդական ձևն է: Այս էր Տրդատի ավագ եղբոր անունը, որ թագավորում էր Պարսկաստանում:

Ըստ Հր. Աճառյանի՝ *Արշակ* անունն առաջացել է հին պարսկերեն Aršaka ձևից, որը, ըստ Ֆ. Մյուլլերի, նվազականն է arša «արջ» բառի: Ըստ այսմ՝ *Արշակ* նշանակում է բուն «արջուկ» և այս իմաստով համապատասխանում ճիշտ լտ. Ursula «փոքրիկ արջ» անձնանվանը: Բայց Հր. Աճառյանն առավել հավանական է համարում *Արշակ* անվան՝ arša «արու» բառից առաջացած լինելը (Meillet-ի վարկածը): Այս դեպքում *Արշակ*-ը համապատասխանում է *Արսեն* անվանը:

Ն. Ադոնցի հիշատակմամբ՝ Գնունիների տոհմն օժտված էր հազարապետությամբ և կոչվում էր Շինականաշէն՝ šinakanašēn: Արշակ թագավորի օրոք Գնունիների նահապետը Գինն էր, որի անունով էլ, փաստորեն, կոչվել է տոհմը:

Մ. Խորենացու հաղորդմամբ՝ Ձինական կոչվել է նախարարությունը՝ ըստ նրանց պաշտոնի՝ ծառայության. նրանք ձյուն էին հայթայթում թագավորի ամառային աթոռանիստի համար: Ըստ Ն. Ադոնցի՝ ավելի ճիշտ է այդ անվան առաջացումը կապել ձյունապատ տեղանքի հետ, որտեղ ապրել են Ձյունականները. հավանաբար, նրանք ապրել են Արագածի լանջերին՝ Գնունիների հարևանությամբ:

Ըստ հայագետի՝ վիճելի է նաև Սպանդունին առաջացած համարել Սպանդ-ից՝ «սպանդանոցի կառավարիչ» իմաստով: Ըստ նրա՝ հնարավոր է, որ Սպանդ-ը Սպանդարատ-ի կրճատ ձևն է, որ ընդունված էր Կամսարականների մոտ, և որ Սպանդունի-ն այդ իշխանների շառավիղն է:

Առաւելեան-ը իր ձևով, ինչպես Ն. Ադոնցն է նկատում, մոտենում է Աբեղեան, Գաբեղեան ձևերին, և հնարավոր է, որ Առաւելեան իշխաններն ապրում էին սրանց մոտիկ՝ Շիրակի սահմանագլխին՝ Օշնակ վայրում:

¹²⁹ Նույն տեղում, էջ 473:

Ն. Ադոնցի համոզմամբ՝ Առուանեան-ը Արտաւան-եան-ի բարբառային ձևն է: Արտաւան-ը, ըստ նրա, Արշակունիների տոհմում ընդունված անուն է, և հնարավոր է, որ Առուանեանները ծագում են նրանցից¹³⁰:

Ն. Ադոնցի ստուգաբանական բացահայտումների շարքում կարևոր տեղ ունի «Հայ-ծաթերի ծագման մասին» հոդվածը:

Հայ պատմիչները վկայում են ծադ կամ ծաթ անունով ինչ-որ ժողովրդի մասին, որի ծագումը ցայսօր առեղծված է: Հարցի քննությամբ մտահոգ Ն. Ադոնցի կարծիքով՝ ծաթերի առաջացման հանգամանքները և նրանց կապը հայերի հետ գիտական քննության են արժանի, որովհետև նրանք որոշ առնչություն ունեն հայ եկեղեցու դավանաբանական հոսանքներից մեկի հետ: Կայսերական եկեղեցուն ծաթերի պատկանելը, ըստ Ն. Ադոնցի, կասկածից վեր է, և քննության միակ խնդիրը նրանց հայ լինել-չլինելու հանգամանքն է:

Ուխտանեսի (X դար) ամենահին վկայության համաձայն՝ *ծաթ*-ը ազգային տերմին է: Ն. Ադոնցը համաձայնում է այս տեսակետին. այս անվանման մեջ չի կարելի չնկատել, նշում է հայագետը, այն ազգության անունը, որ հիշվում է արաբ հեղինակների երկերում՝ **զոտտ** կամ **զուտտ**: IX դարում զատերը (ռուսերեն բնագրի ուղղագրությամբ) բնակվում էին Անազարվայի սահմաններում՝ արաբ-բյուզանդական սահմանագլխին: Զատերն, այսպիսով, համարվում են Եվրոպայում և Ասիայում ներկայումս ցրված գնչու-ցիգանների նախնիները:

Հր. Աճառյանը *զապ* բառը մեկնում է իբրև *զ* նախդիրով *հապ* և հավելում, որ պահլավերենում կա *ջապքար* բառը՝ «անջատ» ձևից¹³¹: Հր. Աճառյանի դիտարկումը, կարծում ենք, թույլ է տալիս *զապ* (զոտ, զուտ) ցեղանունը աղերսել հայերեն *զապ*՝ *առանձին, մեկուսի* բառի հետ՝ այդու *զապ* և *ծաթ* բառերը դիտելով իբրև *անջապական, հերձվածող* իմաստն արտահայտող բառային տարբերակներ, հատկապես որ Գ. Բ. Զահուկյանը և Հր. Աճառյանը սոնթ-ը ստուգաբանում են որպես «կրօնապէս բաժանեալ, հերձեալ»¹³²: Բացի այդ, գրեթե կասկած չի հարուցում, որ *անջապ* բառի

¹³⁰ Նոյն տեղում, էջ 339:

¹³¹ Հր. Աճառյան, Հայերէն արմատական բառարան, Եր., 1926, հ. 2, էջ 82:

¹³² Գ. Բ. Զահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, Եր., 2010, էջ 687: Հր. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. 2, էջ 442:

վերջին –*ջալ* բաղադրիչը նույն *զալ*-ն է՝ Ն. Ադոնցի կողմից ներկայացված *ջ>զ* հնչյունափոխությամբ:

Թվում է՝ Հր. Աճառյանի այս ստուգաբանության հետ է կապված Մ. Ապարանցու այն վկայությունը, որտեղ նա, պատմելով ծաթերի մասին, հայտնում է, որ հայ-քաղկեդոնականներից մի քանիսը կոչվում են *սոնթ*, որը, նրա կարծիքով, նշանակում է *հերձվածող, անջալական*: Բայց այս թյուրիմացությունը կանխարգելում է Ն. Ադոնցը՝ մերժելով Մ. Ապարանցու վերոնշյալ բացատրությունը, ինչպես նաև *ծաթ* բառի մեկնությունը՝ որպես կիսատ, անբավարար անուն, որ տվել են հայ-քաղկեդոնականներին: Ն. Ադոնցը կասկածից վեր է համարում այն հանգամանքը, որ զատերը հենց այն ժողովուրդն են, որի մասին խոսում են հայ պատմիչները՝ նրանց *ծաթ* կամ *ծաղ* կոչելով: Այս անունը, ըստ նրա, Հինդի ավերին հնչում էր *jat*: Հնդկական *ջալ*-ը պարսկաարաբական հողի վրա դարձել է *զալ*: Հայկական ձևը՝ *ծաթ*, նրա ենթադրությամբ, ընդհանուր է նաև Ասորիքի և Միջագետքի համար. հնչյունաբանական տեսակետից *ջ>զ* վերածումը և *զ>ծ* հնարավոր է:

Պատմաբան Հ. Բարթիկյանի վկայմամբ՝ հայկական և բյուզանդական աղբյուրներում հայ քաղկեդոնականները հայտնի են *ծաթ* անունով և առաջին անգամ ի հայտ են գալիս 17-րդ դ.: Նիկոն Սևեռնցին, նրա հաղորդմամբ, ծաթերին տեղադրում է Միջագետքում, այսինքն՝ Միջագետքի բյուզանդական թեմում: Հյուսիսում այն ձգվում էր մինչև Կամախ և սահմանակից էր Կոլոնեի (Colonee) և Խալդիայի թեմերին, այլ կերպ՝ այն ընդգրկում էր այն տարածքները, որտեղից սերում կամ որտեղ ակտիվ էին գառուադները՝ X դ.-ից ի վեր: Հետևաբար, տրամաբանական է գառուադներին համարել հայ քաղկեդոնականներ, այսինքն՝ ծաթեր, համենայնդեպս, X դ. հատվածում:

Հետաքրքրական է Հ. Բարթիկյանի այն նշումը, ըստ որի՝ հայ քաղկեդոնական գրիչները իրենց նշումներում էմիրներին և գառուադ իշխաններին «ողորմած» և «Քրիստոսի ընկերներ» են որակում՝ դրանով փաստելով, որ նրանք 12-րդ դ. դավանափոխ չէին գառուադի օրինակով¹³³:

¹³³ **H. Bartikian**, Les gaurades à travers les sources arméniennes, L'arménie et Byzance Histoire et culture, Sorbonne, 1996, S. 19:

Ըստ Հր. Աճառյանի՝ *ծայթ*-ը, որ նույնն է, ինչ *ծայդ*, *ծայթ*, *ծայդ*, գործածվում է իբրև նախատական բառ՝ «հավատքի մեջ թերի կամ ազատամիտ» նշանակությամբ¹³⁴:

Մ. Ապարանեցին նույնպես ծաթերին անվանում է «ծայթ», որ նշանակում է «անկատար, թերի», քանի որ նրանք իբրև թե միության մեջ էին նույնպես «ծայթ» կոչվող այն հույների հետ, որոնք հետևում էին Կեսարիայի եպիսկոպոս Անդրեասի աղանդին¹³⁵:

Ըստ ֆրանսիացի հայագետ Ժ. Պ. Մահեի՝ ծաթերը հայերից առանձնացված էին բարոյադավանական հիմքերով: Նրանք սովորաբար կոչվում էին *ծայթ*, և սա վիրավորական անվանում էր, որը տարբեր կերպ էր ստուգաբանվում. մի կողմից այն նշանակում է *փոքր*, մյուս կողմից՝ *թռչնած* կամ *անկատար*: *Ծայթ* նշանակում է հայ քաղկեդոնական, այսպես ասած, թզուկ, այսինքն՝ մի մարդ, որ անկարող է, անընդունակ և միաժամանակ, ըստ նրա, և՛ հույն է, և՛ հայ¹³⁶:

Ղ. Ալիշանը *ծայթ* անունը մեկնաբանում է որպես *ծըթոիլ* բայից ածանցմամբ առաջացած բառ, որը նշանակում է *աւերուել*¹³⁷: Ն. Ակինյանը, սակայն, ծիծաղելի է համարում Ղ. Ալիշանի այս մեկնությունը¹³⁸:

Ն. Ադոնցը գրում է. «Ոչ միայն հնչյունաբանական, այլև իրական-պատմական տեսակետից ծաթերի և զատերի համադրությունը չի կարող հակաճառության հանդիպել: Վեճ և տարբեր կարծիք կարող է լինել միայն այն հարցի վերաբերմամբ, թե ե՞րբ և ինչպե՞ս են ընկել նրանք Հայաստան և ու՞ր էին կենում Ուխտանեսի օրով...»¹³⁹:

Ըստ գիտնականի՝ *սոնթ* բառն անկասկած կապ ունի *sinte* անվան հետ, ինչպես գնչու-ցիգաններն են իրենց կոչում: Սա, Ն. Ադոնցի ենթադրությամբ, նույնն է *sindi* հնդկական ցեղի անվան հետ, որին ազգակից են և ծաթերը: Միով բանիվ, *sont*, *sinte* ձևը մեկն է զատ-ցիգանների ինքնանվանումներից:

¹³⁴ Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 2, էջ 442:

¹³⁵ Ն. Մառ, Արքաուն. քրիստոնյաների մոնոլիտրեն անվանումը հայ քաղկեդոնականների խնդրի առնչությամբ, Եր., 2016, էջ 44:

¹³⁶ J.-P. Mahé, Confession religieuse et identité nationale dans l'église arménienne du VII^e au XI^e siècle, Des parthes au califat quatre leçons sur la formation de l'identité arménienne, Momographies 10, Paris, 1997, S. 59:

¹³⁷ Ղ. Ալիշան, Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 552:

¹³⁸ Ն. Ակինեան, Կիրիոն կաթողիկոս վրաց, Վիեննա, 1910, էջ 76:

¹³⁹ Ն. Ադոնց, Երկեր, Ա, Հայ-ծաթերի ծագման մասին, էջ 543:

Գերմանացի լեզվաբան Մ. Գրեյմանը ցիգանների հայրենիքը համարում է Հնդկաստանը, իսկ նրանց անցումը Հնդկաստանից դեպի տարբեր երկրներ բացատրում է Թիմուր-բեկի՝ 14-րդ դ. Հնդկաստանի վրա հարձակմամբ, որի հետևանքով «ավազակների» մի խումբ՝ «ցիգան» անունով, մոտ կես միլիոն թվաքանակով, փախչում է Հնդկաստանից¹⁴⁰, իսկ ոուս բանասեր, պատմաբան Ա. Պոդոսինովը *սինդի* անունով ցեղի տեղակայման մասին գրում է, որ նրանք գտնվում էին Թամանի թերակղզում՝ Ազովի և Սև ծովերի միջև ընկած տարածքում¹⁴¹:

Կ. Ֆունկեն այս առթիվ գրում է, որ սինդի ցեղը բնակվում էր Սև ծովի հյուսիսային սահմաններում: Այս ցեղի մասին հիշատակում են Հերոդոտոսը և ավելի ուշ շրջանի պատմիչներ՝ նրանց երկիրն անվանելով «Land Sindise»՝ Սինդիս երկիր¹⁴²: Իսկ գերմանացի պատմաբան, աշխարհագրագետ Կ. Մաններտը հույների և հռոմեացիների աշխարհագրությանը նվիրված իր աշխատության մեջ վկայում է *սինդի* անվան *Ցինգի* տարբերակ նույնպես¹⁴³, որը լավագույն ապացույցն է Ն. Ադոնցի ենթադրության, ըստ որի՝ գնչու-ցիգանների ինքնանվանումներից մեկը *սինդի* է:

Ռուս լեզվաբան Ն. Բեսսոնովը նույնպես ընդունում է ցիգանների հնդկական ծագումը հատկապես լեզվաբանական հիմնավորմամբ: Ցիգանների լեզուն և սանսկրիտը, ըստ նրա, իրար շատ մոտ են¹⁴⁴:

Կարող ենք եզրակացնել, որ ծաթերը սկզբնապես առանձին ազգ են եղել. այս մասին վկայում են ոչ միայն վերը մեջբերված դիտարկումները, այլև երկու հավելյալ հանգամանքներ, որ, թերևս, սպրդել են ուսումնասիրողների ուշադրությունից: Այսպես, Գ. Նարեկացուն շատերն էին մեղադրում աղանդավորության, մասնավորապես՝ այդ ժամանակաշրջանում տարածված թոնդրակյան աղանդին հետևելու համար, սակայն

¹⁴⁰ **M. Grellmann**, Die Zigeuner, Dessau-Leipzig, 1783, S. 37:

¹⁴¹ **A. V. Podossinov**, Das Schwarze Meer in der geokartographischen Tradition der Antike und des frühen Mittelalters. II. Die Halbinsel Krim, das Asosche Meer und die Straße von Kertsch, Ancient West and East, Volume 3, N 2, Moskau, 2004, S. 450:

¹⁴² **C. Ph. Funke**, Neues Real-Schullexikon: enthaltend die zur Erklärung der alten Klassiker nothwendigen Hilfswissenschaften vornämlich Geographie, Geschichte, Philosophie, Alterthümer und Mythologie, Tom 5, Braunschweig, 1805, S. 339:

¹⁴³ **K. Mannert**, Geographi der Griechen und Römen aus ihren Schriften, Leipzig, 1820, Tom 4, S. 355:

¹⁴⁴ **Н. Деметр, Н. Бессонов, В. Кутенков**, История цыган- новый взгляд, Воронеж, 2000, стр. 3:

վարկած կա նաև, ըստ որի՝ Գ. Նարեկացին «ծաթ» աղանդի հետևորդ էր, որը նույնն էր, ինչ հայ քաղկեդոնականությունը:

Այս վարկածը մի կողմից մեզ հետաքրքրում է Արևմտյան Հայաստանում այդ աղանդի տարածված լինելու իրողությունը բացատրելու տեսանկյունից, մյուս կողմից՝ Ուխտանեսի պատմության՝ ծաթերին նվիրված հատվածի անհետացումը բացատրելու համար: Ուխտանեսն իր պատմությունը գրել է Անանիա Նարեկացու՝ Գ. Նարեկացու մոր հորեղբոր պատվերով, և անհետացել է նրա պատմության՝ հենց ծաթերին նվիրված հատվածը, որը, մեր համոզմամբ, պատահական չէ և խոսուն ապացույցն է Արևմտյան Հայաստանում ծաթերի սկզբնապես գտնվելու և այնտեղ բնակվելու: Նախնական այս վարկածը լիովին հաստատվեց, երբ «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան» (1986-2001)-ում գտանք Արևմտյան Հայաստանի Էրզրումի վիլայեթի Երզնկայի գավառում *Ծաթեր* անունով գյուղ, որի բնակիչները, մինչ Մեծ եղեռնը եղել են քրիստոնյա հայեր, որոնք Եղեռնի ժամանակ տեղահանվել են¹⁴⁵: Այս փաստը շատ խոսուն է մի կողմից ծաթերի՝ Հայաստանում իրապես գտնվելու, մյուս կողմից՝ հայերին ծովված, անգամ իրենց անունով գյուղ հիմնած լինելու առումով: Ընդամին, նույնանուն գյուղ կա նաև Լոռու մարզում՝ Ալավերդուց 11 կմ դեպի հարավ՝ Դեբեդի բարձրադիր ձախ ափին, որտեղի երկու եկեղեցիները կառուցված են հենց 11-13-րդ դդ.:

Ուխտանեսի երկի նշյալ հատվածի անհետացումը Ն. Մառը կապում է ազգային եկեղեցու հետևորդ հայերի՝ ծաթերին որպես օտար ներկայացնելու ձգտման հետ, բացի դրանից, ըստ նրա, այս երևույթի մի դրսևորումն էլ Մ. Այրիվանեցու կողմից ծաթերին Հայաստանի հյուսիս-արևելքում բնակվող աղվանական մի ցեղի՝ ծովդերի հետ նույնացնելու փորձն է: Ըստ Ն. Մառի՝ «Գահնամակ»-ում հիշատակված է նաև *Ծայթունի* տոհմը (Սոփերք Հայակականք, VI, էջ 36, *Ծայթունիք*), սակայն նմանատիպ ցուցակներում, նրա դիտարկմամբ, առկա են դժվար հասկացվող, իշխանական ազգանուններին վերաբերող տարբեր եզրեր¹⁴⁶:

¹⁴⁵ Թ. Խ. Հակոբյան, Ստ. Տ. Մելիք-Բախշյան, Հ. Խ. Բարսեղյան, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, Եր., 1988, հ. 2, էջ 828:

¹⁴⁶ Ն. Մառ, Արքաուն. Քրիստոնյաների մոնղոլերեն անվանումը հայ քաղկեդոնականների խնդրի առնչությամբ, էջ 45:

Խոսելով ծաթերի մասին՝ չենք կարող առանձնակի չանդրադառնալ նրանց մկրտության և ընդհանրապես հավատքի հարցին: Դեռևս Ուխտանեսն իր գրության մեջ նշում է, որ պետք է անդրադառնա ծաթերի մկրտությանը, որը, ըստ Ն. Ադոնցի, կատարվել է X դ.: Մ. Այրիվանցու՝ ծաթերի մասին վկայության մեջ ակնհայտ է, որ նրանց կրոնափոխությունն իրենց կամքին հակառակ է եղել: Նա գրում է. «Յաուրս տէր Դաթի (828-853) Գարաման քահանայ Կակաղեցի որոշեալ ի Հայոց՝ ի Վիրս դարցոյց զԾոնդէացիսն, այս է Ծաղն, որ կան այժմ ի Հոռոմս»¹⁴⁷:

Ըստ ազգագրագետ Հ. Խառատյանի՝ «ծաթ» կամ «հոռոմ հայերը» Դերսիմում տեղական բնակչության կրոնական հանդուրժողականության այս տարածքում, ավելի տևական են պահել իրենց էթնիկությունը, չեն հունացել, չնայած հունական բնակչության առկայությանը: Ավելի հավանական է, սակայն, որ մեզ հետաքրքրող տարածքում հարկադրական դավանափոխություն չի եղել, և նրանք վերաբնակներ են, որ նախընտրել են թե՛ հունական, թե՛ հայկական կշտամբանքից ազատ Դերսիմի տարածքը¹⁴⁸:

Ն. Մառի վկայմամբ, Նիկոն Սևեռնցու «Տակտիկոն»-ում երեք փաստաթուղթ կա ծաթերի մասին՝ «Անտիոքի պատրիարքի ուղերձի կրկնօրինակը՝ ուղղված Երուսաղեմի պատրիարք Եվթիմիոսին», «Նույն պատրիարքին ուղղված ուղերձի պատճենը՝ ուղարկված Սբ. Սիմեոն Հրաշագործի վանքից» և «Նիկոնի թուղթը հայր Գերասիմին՝ ևս ուղարկված Երուսաղեմ»: Առաջինում կարդում ենք. «Ոմանք ամեն կերպ հարձակվում են նրանց (ծաթերի, հայերի) վրա, բարին ատող սատանայի դրդմամբ որպես ոչ ուղղափառների և վիրավորում են նրանց ամեն ձևով: Մինչդեռ նրանք ընդունված են եղել մեր նախորդ պատրիարքների կողմից...»¹⁴⁹:

Երկրորդ փաստաթղթում նույն միտքն է զարգացվում, իսկ Նիկոնը երրորդ փաստաթղթում գրում է. «Այս մեր եղբայրները ծաթ են անվանվում, որտեղ էլ որ

¹⁴⁷ Մ. Այրիվանցի, Պատմութիւն ժամանակագրական, Ս. Պետերբուրգ, 1867, էջ 85:

¹⁴⁸ Հ. Խառատյան, Դերսիմի էթնո-կրոնական բազմազանությունը և դերսիմցիների շարունակական այլախոհությունը, հեղինակի տրամադրած ձեռագիրը:

¹⁴⁹ Ն. Մառ, Արքայուն. Քրիստոնյաների մոնղոլերեն անվանումը հայ քաղկեդոնականների խնդրի առնչությամբ, էջ 49:

հայտնվում կամ բնակվում են, ամենուրեք փորձության են ենթարկվում՝ Քրիստոսի շնորհիվ անբիժ մնալով իրենց հավատի մեջ...»¹⁵⁰:

Ն. Ադոնցը, թեև մինչև վերջ հետամուտ չի լինում այն ուշագրավ հարցին, թե ինչ կապ ունեն ծաթերը, այսպես կոչված, հայ գնչու-ցիգանների հետ, որ կոչվում են նաև *բոշա*, մեջբերում է, սակայն, ցիգանական լեզվի հետազոտողներից քաղված մի քանի բառեր, որ պատահում են ցիգանական բոլոր բարբառներում, դիցուք՝ *choro*=խոր, *kotor*=կտոր, բեկոր, *handako*-խրամ, քանդակ և այլն: Այս բառերի բացատրությունը հետազոտողները փորձում են գտնել արաբերենում, մինչդեռ դրանք գտնվում են հայերենում, այն էլ՝ համարժեք նշանակությամբ: Զուտ հայկական այս բառերի՝ եվրոպական գնչու-ցիգանների բառապաշարի մաս լինելը ցույց է տալիս, որ նրանց մեջ ծուլվել են մի ժամանակ արևելքում հայերին կից ապրող տարրեր: Եվ Ն. Ադոնցը մեջբերում է ցիգանական լեզվի ուսումնասիրող Կ. Պատկանովի եզրակացությունը. «Գուցե հայ ծաթերը և սոնթերը, նրանք, որ ապրում էին Կիլիկիայում, հայ թագավորության կործանումից հետո շարժվեցին դեպի կայսրության մայրաքաղաքը և այնտեղից ցրվեցին արևմտյան Եվրոպայի զանազան երկրներ... Եվ եթե ոչ ծաթերի միջոցով, համենայն դեպս, նրանց միջնորդությամբ են մտել հայ բառերը եվրոպական ցիգանների բարբառների մեջ...»¹⁵¹:

Այսպիսով,

Ա. Տոհմանունները, լինելով հայ լեզվաբանության դեռևս բավականաչափ չուսումնասիրված և միաժամանակ տեղանվանական մեծ ներուժ ունեցող միավորներ, առանձին հետազոտության կարիք ունեն:

Բ. Տոհմական տիտղոսներից *տեր* բառի Ն. Ադոնցի ստուգաբանությունը լուրջ մտորումների տեղիք է տալիս ոչ միայն իր յուրօրինակությամբ, այլև տրամաբանականությամբ:

Գ. Հր. Աճառյանի վկայությունը *մաների* մասին՝ որպես հարավային արիական այլազգիների, ըստ էության, Մամիկոնյանների կապը շեղում է թե՛ չինացիներից, թե՛ ծաներից: Մնում է միայն հասկանալ, թե ովքեր են հարավային արիական այդ այլազգիները:

¹⁵⁰ Նույն տեղում, էջ 50:

¹⁵¹ Հմմտ. Ն. Ադոնց, Երկեր, Ա, Հայ-ծաթերի ծագման մասին, էջ 546:

Դ. Բագրատունիների, Մաղխազունիների, Մարդպետների, Ամատունիների՝ Ն. Ադոնցի ստուգաբանությունը հստակ է և թերևս հակափաստարկներ չենթադրող մինչդեռ *Ասպետունի* տոհմանվան հիմքում ընկած *ասպետ* բառի ստուգաբանությունը կասկածահարույց է: Հավաստի է, մեր կարծիքով, Հր. Աճառյանի ստուգաբանությունը, ըստ որի՝ ասպետ-ը *ձի* և *պետ* բառերի կապակցումն է՝ իրանական *asparati բառից ծագած:

Ե. Հայ-ժաթերի մասին Ն. Ադոնցի դիտարկումները գիտական արժեք ունեն, դրանց գումարել ենք ծաթերին վերաբերող հատվածի առեղծվածային անհետացման հանգամանքը, որը կարող է վկայել ծաթերի՝ հայերի հետ ունեցած առնչությունների մասին, որը, սակայն, առայժմ չենք կարող վերջնական ձևակերպել փաստերի սղության պատճառով:

ԳԼՈՒԽ 3

Ն. ԱԴՈՆՑԻ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀՆՁՅՈՒՆԱԲԱՆԱԿԱՆ ՈՒ ԲԱՌԱՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Ն. ԱԴՈՆՑԻ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ն. Ադոնցի հայագիտական մեծարժեք ժառանգության մեջ առանձնահատուկ տեղ են զբաղեցնում բառաքննական հետազոտությունները, որոնք ցարդ բավարար ուշադրության չեն արժանացել: Եթե Ն. Ադոնցի տեղանվանագիտական ստուգաբանությունները հայ և օտարազգի պատմաբանների կողմից մասամբ ի մի են բերվել և գիտական շրջանառության մեջ հայտնվել, ապա դիցանունների և անձնանունների ադոնցյան մեկնությունները դեռ անհայտ են մնում, բայց դրանք բանալիներ են հայոց լեզվամտածողության, պատմության և բանագիտության բազմաթիվ վիճահարույց խնդիրների լուծման համար:

«Ի՞նչ է աստվածությունը, եթե ոչ մարդկության վեհաշունչ երազների հայտնություն, և ի՞նչ է պատմությունը, եթե ոչ նորանոր աստվածությանց որոնումներ, նորանոր բարձունքի տենչանք»¹⁵², - այսպես է սահմանել Ն. Ադոնցը հավատքի և կրոնի դերը քաղաքակրթության մեջ: Ընդ որում, կրոնը և աստվածությունները մարդկային գիտակցության մեջ ամրակայվում և իրացվում են լեզվական նշանների միջոցով, ուստի դիցանունների ստուգաբանությունները լեզվաբանությունը մշակութաբանության, բանահյուսության հետ կապող օղակներ են:

Ժամանակի հսկայական պատնեշը հաղթահարելով՝ Ն. Ադոնցը պեղում է մեր դիցարանի հիմքերը՝ իր աշխատանքը արդարացնելով հետևյալ ճշմարիտ ձևակերպումով՝ «Զբաղվել թաղված աստվածներով այնպիսի ժամանակ, երբ կենդանի աստվածներն են նաև ոչինչ համարվում, գուցե և ունայն աշխատանք է: Սակայն աստվածութագությունը ոչ թե միայն բարոյական լքումի նշան է, այլ և ինքնակոծության վատթար տեսակը»¹⁵³:

¹⁵² Ն. Ադոնց, Երկեր, Ա, Հին հայոց աշխարհայացքը, էջ 14:

¹⁵³ Նույն տեղում:

Ա. ԴԻՑԱՆՈՒՆՆԵՐ

Հին Հայոց աշխարհայացքն ուսումնասիրած Ն. Ադոնցը խորին հետևողականությամբ քննում է հին հայոց դիցարանի մի քանի աստվածների անուններ, որոնց վերլուծությունը մեզ հանգեցրեց այն տեսակետին, որ անվանադրման գործընթացի մեկնաբանումը չպետք է եզրագծել նախնական անվանադիրներով, որոնք անուններ են տվել երևույթներին, ընդ որում, խոսքը միայն երևույթների մասին չէ, այլև մարդկանց, քանի որ պատահական չէր Կալիպոս-ի օրինակը՝ Արիստոտելի կողմից բերված, որից հետո էլ ավանդաբար այդ անունները տրվել են մարդկանց և իրերին: Դիցանունների քննությունը, ինչպես ստորև կտեսնենք, մեկ անգամ ևս հավաստում է Ֆյուսեյի տեսության ճշմարիտ լինելը, ըստ այդմ՝ անունները տրվում են իրերին ըստ բնության: Մեր համոզմամբ՝ չպետք է անվանադրման խնդրի քննության հարցում պատնեշ դնել իրերի և անձանց անունների միջև, որովհետև ի սկզբանե անուններ տրվել են իրերին, հետ այդու միայն՝ անձերին, այսպիսով, հասարակ անունները դարձել են հատկանուններ, ուստի կարծում ենք՝ այնքան էլ ճիշտ չէ նման սահմանազատումը:

Այսպես, գրեթե բոլոր հին հեղինակները, Ն. Ադոնցի վկայմամբ, անդրադարձել են Նինոս-Շամիրամյան զրույցին: Ըստ այդ հեղինակների՝ **Շամիրամն** Ասորիքի Ասկալոն քաղաքի Դերկետո աստվածուհու դուստրն էր: Նրա մասին պատմում էին, որ Ափրոդիտեին վիրավորելու պատճառով պատժվում է վերջինիս կողմից, սիրահարվում մի երիտասարդի և նրանից երեխա ունենում: Շամիրամը երեխային ամոթահար թողնում է մի քարքարոտ տեղ, ու ինքը նետվում լիճը՝ դառնալով ձուկ: Սա է պատճառը, որ ասորիները ձուկ չեն ուտում և պաշտում են նրան՝ իբրև աստծու: Շամիրամի երեխային շրջապատում են աղավնիները, խնամում նրան: Հովիվներից մեկը, նրան գտնելով, տալիս է արքունի ախոռապետին, որի անունով էլ երեխան կոչվում է *Սեմիրամիս*, այս անունն ասորական բարբառով նշանակում է *աղավնի*: Այդ ժամանակից ասորիները պաշտում են աղավնուն՝ որպես աստծու: Այսպիսին է Շամիրամի ծնունդը և հասունացումն ըստ առասպելի: Ն. Ադոնցի համոզմամբ՝ ձուկն ու աղավնին պաշտամունքի առարկա՝ տոտեմ են եղել: Ն. Ադոնցը նշում է նաև, որ ձկան

աստվածությունը Սուրբ Գրքից հայտնի փոշտացիների կողմից կոչվում էր *Դագոն*: Իսկ բարելական դիցաբանությանը ծանոթ է *Օղակոն* անունով էակ, որ ձկան և մարդու խառնուրդ էր:

Մեր կարծիքով՝ *Օղակոն*-ը *Դագոն*-ի կոչական հոլովն է հունարենում:

Փիլոն Եբրայեցին *Դագոն*ի անունը բխեցնում է *դակոն* բառից, որ նշանակում է *հացահատիկ*, և հետևաբար նրան կապում է հացահատիկ, երկրագործության պաշտամունքի հետ, մինչդեռ Ն. Ադոնցը վստահ է, որ այն ծագում է *դակ*՝ *ձուկ* բառից:

Մյուս կողմից տեսանք, որ աղավնիները, փրկելով Շամիրամին, նույնպես դարձան պաշտամունքի առարկա: Արքունական ախոռապետը, որ նրան խնամեց, իր անունով կոչեց *Շամիրամ*, որ իբրև թե նշանակում է *աղավնի*: Այս պարագայում *Շամիրամ* բառը, ըստ Ն. Ադոնցի, կապվում է ասորական Su-um-ma-tu բառի հետ, որ իսկապես նշանակում է *աղավնի*: Նույն բառի արական ձևն է Su-um, *վարուժան*: Ախոռապետի անունը՝ Simma, մոտ է Su-um-ին:

Կ. Լեհման-Հաուպտը համեմատում է Simma անունը Samams «արեգակ» բառի հետ, թեև ախոռապետի անունը, ինչպես Դիոդորոսն է նշում, Շամիրամի անվան միջոցով թարգմանվում է *աղավնի*, ասել է թե՛ Suum, Sum բառն է, որի իգական ձևը՝ Summatu, իբրև թե Semiramis- ի հիմքն է:

Ն. Ադոնցի համոզմամբ՝ այս ստուգաբանությունը հեռու է իսկությունից: Ըստ նրա՝ *Շամիրամ* անունը չի կարող կապ ունենալ *աղավնի* նշանակող ասորի բառի հետ, և կասկածելի է անգամ նրա սեմական ծագումը: Հունարեն *պերիսպերա*, որ նշանակում է *աղավնի*, սեմական փոխառություն է և կազմված է peras-Istar բառերից, այսինքն՝ «Իշտարի թռչուն»:

Ն. Ադոնցի դիտարկումները հատկապես այս կետում խիստ արժանահավատ են, և դրանց նկատմամբ վստահությունն էլ ավելի է մեծանում, երբ հիշում ենք, որ գիտնականը տիրապետում էր բազմաթիվ լեզուների՝ սանսկրիտից ու պահլավերենից սկսած՝ մինչև սեպագիր, բյուզանդական հունարենից՝ մինչև ժամանակակից պարսկերեն:

Արա-Շամիրամյան առասպելներից հայտնի է **Արալեզ** կամ **Առլեզ** աստվածը: Նրա հետքերը, Ն. Ադոնցի վկայմամբ, պահպանվել են Վանի մոտ գտնվող Լեզք գյուղի

անվան մեջ: Այդտեղ գտնվող մի սրբավայրի մասին պատմում են, թե իբր գյուղի մոտակայքում թոնրածև մի ջրհոր կար, որ *Սուրբ Թոնիր* էին կոչում: Այդ ջրհորում միայն մեկ ձուկ է եղել, և ում որ երևում էր այն, նրա ուխտը կատարվում էր: Ն. Ադոնցը պատմում է, որ 1917 թ. գիտական նպատակով իրենք այդ գյուղ են այցելել և տեսել հանրահայտ Թոնիրը: Աղբյուրի մոտ մի քանի տղաների են հանդիպել, որոնք ասել են, թե աղբյուրը կոչվում է *Յոթոնիր*, և թե այնտեղ իրոք ձուկ կա: Ն. Ադոնցը *Յոթոնիր* անունը փորձում է ստուգաբանել որպես *յոթ թոնիր*:

Մյուս կողմից չի կարելի մոռանալ, որ, Արային զուգահեռ, կա նաև *Էրը*, որից բխում է, թե հայերի մոտ գոյություն է ունեցել մի դիցանուն՝ անկախ իրանական Արայից: Ն. Ադոնցի կարծիքով, **Արա**-ն ոչ այլ ինչ է, եթե ոչ զուտ հայ **Էրը**՝ իրանական ստվերով քողարկված: Էրը, այսպիսով, այն աստվածն էր, որին հայերը բերել են Արևմուտքից:

Ըստ Ն. Ադոնցի՝ հայ *Էրը* մերձավոր խնամություն է ցույց տալիս նաև թրակիական *Ջալմոքսիսի* հետ: Հները հետաքրքրվում էին *Ջալմոքսիս* անվան կազմով և կարծում էին, թե նշանակում է *արջի կաշի*, իբրև թե նրա ծնվելիս վրան արջի կաշի են ձգել: Նորերը փորձեցին արդարացնել այս ստուգաբանությունը: Հայտնի ասորագետ և հայագետ Պոլ դը Լագարդը սկզբում տրամադիր էր համեմատել վերջին վանկը *-մոքս* հայերեն *կաշի* բառի հետ, բայց հետագայում նա հրաժարվեց իր ստուգաբանությունից՝ գերադասելով տեսնել առաջին *Ջալմ* վանկում պարսիկ *չարմ* *carum*, սանսկրիտ՝ *carman* արմատները, որ նշանակում են *կաշի*: Ըստ Ն. Ադոնցի՝ այս բացատրություններն անհիմն են: Նրա ենթադրությամբ՝ *Ջալմոքսիս*-ը հնչյունական մերձավորություն է ունեցել *արջ* և *կաշի* նշանակությամբ բառերին: Այստեղից էլ, նրա կարծիքով, առաջացել է այն թյուրիմացությունը, թե աստծու վրան արջի կաշի են ձգել: Բառի ծագումը դեռևս անհայտ է: Հատուկ անունների մեկնությունն ընդհանրապես, ինչպես Ն. Ադոնցն է խոստովանում, դժվար է:

Գիտնականը, նկատի ունենալով հայոց անձնանունների մեծ մասի իրանական ծագումը, կարծում է նաև, թե **Արա**-ն ևս կարող է փոխառություն դիտել: Ավեստայում՝ Իրանի սրբազան գրքում, պատահում է *Արա* անունը՝ *Ara*: Սա սոսկ հավատացյալի անուն է, ինչպես Ն. Ադոնցն է վկայում: Հայտնի իրանագետ Բարթոլոմեն *Արա* անունը

համարում է կրճատ, փաղաքշական ձևը Aramatay բառի, որ է՝ Arem+matay՝ *բարեմիտի, լավ մտածող*: Նույն բառը Armatay ձևով ստանում է *երկրի* նշանակություն, ինչպես նաև՝ *երկրի աստվածության*:

Բացի դրանից՝ Armatay ձևն ակնհայտորեն հիշեցնում է հայերեն *արմատի* բառը:

Հայոց **Սանդ-արամետ-ը**, դարձյալ իրանական է, պահել է նույն Armatay-ի պահլավ կամ պարթևական ձևը՝ Aramet: *Սանդարամետի*-ի այլ և ավելի հին ձևն է *Սպանդարամետի*, որ նշանակում է *սուրբ երկիր* և *երկրի ոգի* միաժամանակ: Հր. Աճառյանը, սակայն, Սպանդարամետ-ից հղում է տալիս պահլավական Սանդարամետ-ին, որը մի դեպքում նշանակում է «երկրի դիք», մյուս դեպքում՝ «հող, երկիր»: Ըստ լեզվաբանի՝ այս անունից, ի թիվս այլևայլ անունների, տառադարձված է նաև զենդերեն մի բառ՝ բաղադրված *spənta՝սուրբ* և *ārmaiti՝ իմաստություն* բառերից: Վերջինս, վստահաբար, նույն Aramatay-ն է, նաև իմաստային դաշտով՝ *լավ մտածող* պարսկերենում, և զենդերենում՝ *իմաստություն*: Ի դեպ, ըստ Հր. Աճառյանի, այդ անունով զրադաշտական կրոնում հայտնի է մի ոգի՝ Երկրի ոգին, որը Արամազդի դուստրը կամ հարսն էր և երկրի պահապանը:

Ն. Ադոնցը նկատում է ուշագրավ մի փաստ՝ Մակաբայեցվոց գրքում (Բ. 6,7) հունարեն բնագրի *Դիոնիսոս*-ը թարգմանված է հայերեն *Սպանդարամետի*: Ըստ Ն. Ադոնցի՝ Դիոնիս-Սպանդարամետը, իբրև երկրին կապված աստվածություն, իր էությանը մոտենում է հայ Արային: Եթե ճշմարիտ է Բարթոլոմեի ստուգաբանությունը, ապա Արա-ն ոչ միայն պաշտամունքի բովանդակությամբ, այլև լեզվական տեսակետից նույնացվում է իրոք (Սպանդ)-**Արա**-մետ-ի հետ՝ որպես նրա կրճատ ձևը:

Հելլենական բազմաստված պանթեոնում մի անուն կա՝ *Արես*, որ նմանություն ունի հայ *էր*-ին: Լեզվաբանները, նշում է Ն. Ադոնցը, մտադիր են Արես-ը բխեցնել հուն. *արե՝ բռնություն, վնաս*, սանսկրիտ *arus՝ վերք* բառից:

Արեսը, եթե ըստ ոմանց՝ ամպրոպային աստված է, ըստ մյուսների՝ երկնքի, ապա մյուս խմբի կարծիքով՝ երկրի կամ ստորերկրյա աստվածության և այլն: Իսկ Ն. Ադոնցը նշում է, որ Հոմերոսի մոտ Արեսի մերձավորը կոչվում էր *Ենիո*: Այս է պատճառը, որ Արեսը երբեմն կոչվում է նրա անունով՝ *Ենիական*: Ենիոյի անունը, ըստ Ն. Ադոնցի, *nana, nina* անվան մի այլ ձևն է և պատկանում է այն բառերի թվին, որ Պ. Կրեյմերը

կոչում է Lallnamen, այսինքն՝ մանկական թոթովք: *Ենիո-ն*, *Նանա-ն*, ըստ Ն. Ադոնցի, նշանակում են *մայր*: Հիշենք, որ *Նանա* էր կոչվում նաև Ատիսի մայրը՝ Սանգար գետի աղջիկը, որ Կիբելեի արյունից բուսած նուշն իր ծոցն առնելով՝ հղիացավ և կյանք տվեց Ատիսին:

Հայագետը հիշատակում է նաև, որ Ատիսի սրբազան ծաղիկն էր մանուշակը, որ նրա արյունից էր բուսել: Հայերենում կա *արանց ծաղիկ* եզրը, որ, ըստ Ն. Ադոնցի, գուցե ուղղելի է *արաց* և կապ ունի Արայի անվան հետ:

Դիցաբանական մերձավորությունը բացահայտելուց հետո Ն. Ադոնցը հետամուտ է լինում նաև *Արես* և *էր-Արա* անունների միջև ազգակցության որոնմանը: Ֆ. Վելկերը, որ Արեսին որպես հրատապ արևի աստված էր դիտարկում, հնարավոր է համարում նաև նրան ստուգաբանորեն կապել հայերեն *արև* բառի հետ: Սրան ավելանում է նաև այն, որ Հեսիքիոսն իր բառարանում մակեդոնական *Արոպոս* ձևի դիմաց դնում է *Հերակլես*, այսինքն՝ *Արես*: Հայ մատենագրությունից հայտնի է, որ Վահագնը նույնն է, ինչ որ Հերակլեսը կամ Արեսը: Իսկ Վահագնի մասին գուսանական երգը նրան բնութագրում է որպես արևի աստծու:

Արայի անվան և նրա պաշտամունքի ծագումը Ն. Ադոնցի կողմից ներկայացված են գիրկընդիսառն. եթե զուտ լեզվաբանական, ստուգաբանական դիտանկյունից նայենք, Արայի անվան՝ պահլավական Սպանդարամետ-ի հետ ունեցած կապն իրոք համոզիչ է: Մյուս կողմից համոզիչ է նաև Հերակլեսի ու Վահագնի հետ նրա կապը՝ պաշտամունքի տեսանկյունից: Այսինքն՝ հստակ պետք է սահմանազատել լեզվական և դիցաբանական մակարդակները:

Իր «**Տորք աստված հին հայոց**» (Վիեննա, 1911) հոդվածում հին աշխարհայացքի ուսումնասիրությունը հանձն առած Ն. Ադոնցը խիստ ուշագրավ դիտարկումներ ունի *Տորք Անգեղի* պաշտամունքի և նրա անվան վերաբերյալ:

Ազգային ավանդության համաձայն՝ Տորքը Հայոց նախարարություններից մեկի նախահայրն է, Մ. Խորենացու հավաստմամբ՝ Հայկի սերնդից է, Պասքամի զավակը և Հայկակի թոռը:

Տորքի կերպարանքի մասին Պատմահոր վկայությունը՝ սերնդեսերունդ փոխանցվող, ինչպես նաև նրա *Անգեղ* անվանը վերջինիս տված գեղարվեստական

ստուգաբանությունը Ն. Ադոնցի կողմից նորովի մեկնության են արժանանում և լուրջ մտորումների ու միջքաղաքակրթական աղերսների տեղիք տալիս: Մեծ հայագետը գրում է. «Ալևոր հնության այս թանգ ավանդը, Տորքի առասպելը, ճշմարիտ է, գիտական ուշադրությունից չէ սպրդած և քանիցս նյութ է եղել քննության, բայց եղած մեկնությունները տակավին հեռու են հավանականությունից և խնդիրը սպասում է ավելի համոզվեր լուսաբանության: Հանգուցյալ Ք. Պատկանյանը կարծում էր, որ Տորք անունը թուրք ազգության վերանունն է, էպոնիմը, և կարելի է նկատել իբր ակնարկ հին թրքական գաղթականության: Տորքի արտաքինը, մանավանդ տափակաքիթ մակդիրը տարորեն հարմարում է թաթարական ցեղի նկարագրին, ինչպես տեսնում ենք հետագա դարերի հայ մատենագիրներից»¹⁵⁴: Իր այս հողվածում Ն. Ադոնցը նախ մանրակրկիտ համադրում է *Տորք Անգեղի* առասպելի և անվանման վերլուծության վերաբերյալ առկա կարծիքները հայագիտության մեջ:

Գր. Խալաթյանցը ժխտում է անգամ *Տորք* անվան պատմական հավաստիությունը: Եվսերիոսի Ժամանակագրության մեջ՝ օլիմպիական ըմբիշների ցուցակում, հիշվում է ոմն Տորքոս Կողոփոնացի: Թեև հունական բնագրում կարդացվում է Մոսքոս, Μόσχος Κολοφώνιος՝ հայ թարգմանության *Տորքոսի* փոխարեն, բայց այդ հանգամանքը Գր. Խալաթյանցին հետ չի պահում համեմատությունից: Այսինքն՝ լեզվական վերլուծության առաջին մակարդակում հայտնվում է հունական փոխառության վարկածը:

Բայց Գր. Խալաթյանցի մոտեցումը, թե *Տորք* անունը փոխառություն է, Ն. Ադոնցն անընդունելի է համարում: *Անգեղ*-ը, ինչպես գիտնականն է վկայում, իրականում աշխարհագրական անուն է՝ Ծոփաց աշխարհի գավառներից մեկը, այստեղ ունենք տեղանուն>ոյուցագնանուն անցում: Ըստ Ն. Ադոնցի՝ կարելի է ենթադրել, որ Աստվածաշնչի *Անգեղ*-ը հունական բնագրի *Ներգեղ*-ի աղավաղումն է՝ τήν ν] εργελ, բայց ավելի ընդունելի է, որ *Անգեղ*-ը տեղական ձևն է նույն *Ներգալ* անվան: Հայագետը եզրակացնում է. «Սեմական Նարգալ իբր պաշտամունք մոտ է հունական Հերակլեսին. սորա ստուգաբանությունը ևս մութ է և դժվար թե հնարավոր լինի մեկնել հունական հողի վրա: Արդյոք Հերակլ-ես, մանավանդ Հերկուլ-ես ձևը, չէ

¹⁵⁴ Նույն տեղում, էջ 79:

ծագում սեմական Նարգալից, և կամ հայ անգեղ, հույն հերկուլ, և սեմ. Նարգալ միևնույն բառի տարբեր արտահայտություններ չե՞ն»¹⁵⁵ : Համենայնդեպս, այս հոդվածում Ն. Ադոնցը կարծում է, որ *Անգեղ*-ը նույնն է *Ներգալ*-ի հետ՝ գոնե իր նշանակությամբ՝ անունների ընդհանուր ծագումը կասկածահարույց համարելով:

Մեր կարծիքով, եթե Ն. Ադոնցը առաջնորդվում է աստվածության **նշանակությամբ**, ապա առավել համոզիչ կլիներ, եթե նա կանգ առներ իր մեկ այլ դիտարկման վրա՝ *Անգեղ*-ը կամրջելով Հոմերոսի Պոլիփեմոսի հետ՝ երկու աստվածների ուժն ու նավերի վրա քարեր նետելու նրանց բնավորությունը նկատի ունենալով: Ինչ վերաբերում է *Անգեղ*-ը *Ներգալ*ի, *Հերակլեսի*, *Հերկուլեսի* շարքում դիտարկելու հարցին, Ն. Ադոնցի մոտեցումը մեզ այնքան էլ համոզիչ չի թվում երկու հիմնապատճառներով. ա) ն>հ հնչյունափոխությունը կասկածահարույց է, այլ բան, եթե *Ներգալ*-ը, դիցուք, *Վերգալ* լիներ, հնդեվրոպական v>g անցումով ստանայինք *Գերկուլ*, որը, սակայն, հայահունչ չէ: Բայց այստեղ մեր ուշադրությունն ականա սևեռվում է գիտնականի կողմից՝ *Ներգալ* անվան մեջբերման վրա՝ տήν ν] εργελ, որի v-ն հունարենում կարդում ենք ն, սակայն կարծում ենք, որ դա ոմանց թյուրիմացաբար հիշեցրել է լատինատառ v՝ վ-ն, և *Ներգալ*ն իսկապես *Վերգալ* է եղել որոշ ժամանակ, որից էլ բխել է, թերևս, *Գերգալ*>*Գերկալ*>*Գերկուլ*>*Հերկուլ* անցումը: Այլ կերպ չենք կարող բացատրել ն>հ հնչյունափոխությունը: բ) Եթե Անգեղ-ի և Ներգալ-ի երկրորդ բաղադրիչները՝ *գեղ*-ը և *գալ*-ը նույնական են, իսկ առաջին բաղադրիչում առաջին փուլում տեղի է ունեցել ե>ա հնչյունափոխություն, երկրորդում՝ դրափոխություն՝ *Նե>են*, ապա այս դեպքում էլ կասկածելի է *Ներգալ*-ի *ր*-ի անկումը, որ սովորաբար խոսակցական լեզվում ընկնում է կրկնվելու և մոտ լինելու պարագայում, դիցուք՝ բարձրանալ-ը հաճախ հնչում է *բարց(ծ)անալ* և այլն: Մյուս կողմից, սակայն, *Հերակլեսի* և *Հերկուլեսի* -*ես* վերջավորությունը ապացուցում է *Անգեղ* բառի՝ հունարեն αγγηλοσ՝ *հրեշտակ*-ի հետ ընդհանրությունը: Այսպիսով, կարծում ենք՝ *Անգեղ*-ը *Ներգալ*-ի հետ կապ չունի, և Ն. Ադոնցի հետագա ուսումնասիրություններն առավել համոզիչ են, ուստի պետք է հենվել հենց վերջինների վրա:

¹⁵⁵ Նույն տեղում, էջ 83:

Իր «**Տարկուն հին հայերի մոտ**» (Փարիզ, 1926) հոդվածում Ն. Ադոնցն արդեն *անգեղ*-ը փորձում է նմանեցնել Hesichius-ի բառարանում տեղ գտած ‘αγλυ’ *արծիվ* բառին¹⁵⁶ առանց հավելյալ մեկնաբանությունների:

Նա նշում է, որ հաթյան ցեղի բազմաթիվ աստվածների մեջ առանձնապես հոչակված էին երկուսը՝ որպես ազգային աստվածներ՝ *Տարկու* և *Տիշուպ*, tarqu, tišup: Երկուսն էլ, ինչպես գիտնականն է փաստում, տարածված պաշտամունք էին ամբողջ Առաջավոր Ասիայում:

Տարկուի երբեմնի փառքի հետքերը մնացել են մի շարք հատուկ անուններում, որոնք, ըստ Ն. Ադոնցի, պատահում են Ասիայի հինավուրց ազգությունների մոտ. δημος Τροκονδημων՝ Փոյուգիայում, Ταρκόνδημος՝ Կիլիկիայում և այլն:

Լ. Հովհաննիսյանը նույնպես անդրադառնում է *անգղ* թռչնանվանը՝ նշելով, որ Գ. Բ. Ջահուկյանը հնարավոր է համարում կապը հ.-ե. *ank «ծռել» արմատի հետ՝ թռչունի՝ կեռ կտուց ունենալով պայմանավորված: Ղարաբաղի բարբառում, ըստ նրա, *անգ* «*անգղ*» ձևն ավելի է հաստատում կապը հ.-ե. նշված ձևի հետ, մյուս կողմից՝ բարբառային տարբերակն առավել հին է գրաբարյանից, որն ինքնին լեզվական ուշագրավ երևույթ է¹⁵⁷:

Իր հոդվածում Ն. Ադոնցը նշում է, որ հունարենում կա τόργος՝ *պարկուճ* բառը, և նկատի ունենալով, որ Տորքի պապի հայրը կրում էր *Պասքամ* անունը, անհիմն չի համարում այդ անունը բխեցնել *պասկուճ*-ից, որ *ծովարծիվ* է նշանակում¹⁵⁸: Սրանով նա անժխտելի է համարում հայ հերոսի երեք անունների՝ *Տորք- Անգեղ- Պասքամ*, և արծվի ինչ-որ տեսակին պատկանող թռչնի միջև եղած կապը: Բացի դրանից՝ Աստվածաշնչում հունարեն չրոֆ բառը մի անգամ թարգմանված է որպես *կորճ*, մյուս անգամ՝ *պարկուճ*: Այս բառերի հերթագայությունը ուսումնասիրողին դրդում է նույնացնելու *-կուճ*-ը և *կորճ*-ը, առավել ևս, որ նույն բառի վրացերեն տարբերակը paskouji-ն է, մյուս կողմից՝ նույն լեզվում կա kanji՝ *ծովարծիվ* բառը, որն էլ ակնհայտորեն ազգակից է kouji-ին:

¹⁵⁶ Նույն տեղում, էջ 88:

¹⁵⁷ Հմմտ. Լ. Հովհաննիսյան, Գրաբարի բառապաշարի իմաստային խմբերի քննություն, Եր., 2012, II մաս, էջ 121:

¹⁵⁸ Ն. Ադոնց, Երկեր, Ա, Հին հայոց աշխարհայացքը, էջ 90:

Ըստ Ն. Ադոնցի՝ հատկանշական է, որ հաթյան աստվածության անունը պատահում է Հայաստանի այն մասում, որտեղ գտնվում է նաև Անգեղ գավառը, այսինքն՝ հնագույն Նաիրի աշխարհում, Նաիրի երկրում կար նաև լեռնանուն՝ Tarhuna: Նա գրում է. «Ազգային ավանդությունը, կապելով Տորք Անգեղ աստվածության հետ, մեզ հիմն է տալիս կարծելու, որ Տորքը ոչ այլ ինչ է, եթե ոչ հինավուրց Տարկուն... Նաև հնչական խոչընդոտ չի կարելի հարուցանել tarqu և Տորք բառերի (tork, *taurku) նույնության նկատմամբ»¹⁵⁹:

Ա. Պետրոսյանը նշում է, որ խաթական ամպրոպի աստվածը Taru-ն է, որը խեթերենում հանդես է գալիս Tarawa- ձևով: Այս անունը, ըստ նրա, համադրելի է ամպրոպի աստծու հնդեվրոպական անուններից մեկի՝ *terH- արմատի հետ, որն էլ անատոլիական Tarhun-ն է: Հետևաբար, խաթական այս դիցանունն էլ հնդեվրոպական ծագում ունի: Սրանց շարքին է դասվում նաև Tarumu (Ta-a-ru-u-mu-uš)-ն: Նա գրում է. «Այլևայլ փաստեր ցույց են տալիս, որ Վահագն աստծու կենտրոնի Տարան (Tarawn) անվանումը պետք է կապվի խեթա-խաթական Taru/ Tarawa-ի հետ»¹⁶⁰:

Ըստ Մ. Աբեղյանի՝ հայ *Տորքը* այնքան էլ նման չէ անատոլիական Tarhun-ին, որը հայերենը պիտի փոխառեր որպես *Տարխոն, իսկ Tarku-ն՝*Տարկ/զ/ք: *Տորք* անունը, ըստ ամենայնի, սխալ անվանում է, ճիշտը Տուրք-ն է¹⁶¹: «Տուրք Անգեղեայ»՝ «Անգեղ աստծու տուրք» ձևը համադրելի է Սեբեոսի պատմության Բագարատ-Անգեղի հետ, որտեղ *Բագարատ* իրանական ձևը նույնպես նշանակում է «Աստծու տուրք»¹⁶²:

Ի՞նչն է կապել Տորքին Անգեղի հետ, արդյո՞ք լոկ աստվածության գաղափարը, թե՞ մի այլ հանգամանք, Ն. Ադոնցի կարծիքով, դժվար է միանշանակ ասել:

Մեր կարծիքով՝ *Տորքն* իսկապես *Տարկուն* է, նրա վերիուշը, մյուս կողմից էլ բավական համոզիչ է թվում τόργος՝ *պասկուճ*, *կորճ* բառերի և *Պասքամ* անվան կապը:

Ն. Ադոնցի առկախ հարցի, թե ինչ կապ ունի *Տորքը* *Անգեղ*-ի հետ, պատասխանը, կարծում ենք, հենց իր մեջբերած օրինակում է թաքնված՝ *Տարկուի*

¹⁵⁹ Նույն տեղում, էջ 84:

¹⁶⁰ Ա. Պետրոսյան, Հայկական դիցարանի հնագույն ակունքները, Պատմա-բանասիրական հանդես, Եր., 2004, N 2, էջ 205-233:

¹⁶¹ Մ. Աբեղյան, Հայ ժողովրդական առասպելները Մովսես Խորենացու Հայոց պատմության մեջ, Երկեր, հ. է, Եր., 1985, էջ 154-158:

¹⁶² Մ. Աբեղյան, Երկեր, հ. Ա, Եր., 1966, էջ 56-58:

տարբեր անվանումներում: Երկուսն էլ՝ *δημος Τροκονδηνων* և *Ταρκόνδημος*, հին հունարենից թարգմանաբար նշանակում են *Տարկուի ժողովուրդ*: Վերջիններիս համաբանությամբ էլ *Տորք Անգեդ*-ը բառացի կարող է նշանակել *Տորքի անգեդ*, կամ առասպելից բխող մեկնաբանությամբ՝ *Տորքի քանդակած անգեդ*: Այստեղից էլ ծագում է այն տեսակետը, թե պաշտամունքը հետագայում առավելապես կապվել է հենց անգեդի հետ, քան թե Տորքի:

Ինչ վերաբերում է *Անգեդ*-ի նշանակությանը, ապա հունարենում *Անգեդ*-ն ունի ազդեցիկ գրությունը, որտեղից բնականորեն հետևում է *Անգեդ*-ը հունարեն հրեշտակ՝ *αγγελος* բառի հետ կապելու անհրաժեշտությունը: Ն. Ադոնցի հավաստմամբ՝ թռչուն աստծու՝ որպես տոտեմի անկումից հետո, նա դառնում է նոր աստվածների սովորական նամակատար: Նամակատարի ծառայությունը, թեպետ բնութագրվում է իրանական *angar*՝ 'αγγαρος բառով, այդուհանդերձ, ուսումնասիրողը նշում է, որ այս երկու բառերը համարժեքներ են թե՛ իմաստով, թե՛ հնչյուններով, և երկուսն էլ անբաժանելի են հայերեն անգեդ/անգեդ/անկղ ձևերից, այսինքն՝ դրանք ունեն դավանանքային ծագում, և դրանց սկզբնական իմաստը թաքնված է *անգեդ* բառում: Ն. Ադոնցը պատկերավոր արձանագրում է. «Անգեդ աստծու և քրիստոնեական հրեշտակի միջև ընկած տարածությունը հսկայական է, սակայն հաղթահարելի: Հայերեն անգեդ-ը նույնպես անցել է այդ՝ աստծու և հերոսի անունն առանձնացնող տարածությունը»¹⁶³:

Ն. Ադոնցը քննության համար խիստ կարևորում է Տարկուի ազգային *Թորգոմա* մականվան գոյությունը: Ըստ նրա՝ հնարավոր չէ անտեսել այդ մականվան՝ ասիանիկ, խեթական աստծու հետ ունեցած աղերսը, որը, ըստ ամենայնի, առաջացել է *Տարկու* (*tar-ku*) անունից ճիշտ այնպես, ինչպես *Pria-mus*, *Teut-amus* և այլ անունները: Չնայած Աստվածաշնչի մեկնիչները չէին ընդունում *Թորգոմա* մականվան ազգային ծագումը՝ պատճառաբանելով, թե Տարկուի պաշտամունքը տարածված էր ողջ Առաջավոր Ասիայում, և այս տարածքում ապրող ցեղերից յուրաքանչյուրը կարող էր մականվանն իր ազգային կնիքը տալ, Ն. Ադոնցը Թորգոմի հայրենիքը առավել ճշգրիտ որոշելու համար անհրաժեշտ է համարում այն փնտրել Հայաստանի հարավում, ի մասնավորի՝ Անգեդում, Տորքի կալվածքներում: Ըստ նրա՝ Մարգարեի խոսքը՝ Թորգոմյան ձիերի և

¹⁶³ Ն. Ադոնց, Երկեր, Ա, Հին հայոց աշխարհայացքը, էջ 92:

հեծյալների մասին, Տյուրոս քաղաքի շուկայում, ավելի համընկնում են Հայաստանին, քան հարևան Փոյուզիային, որովհետև Հայաստանը վաղուց առևտուր էր անում Բաբելոնի հետ, ուստի պատահական չէր լինի, եթե նա ձիեր մատակարարեր հարևան Սիրիայի շուկային:

Իբրև ամփոփում նշենք՝

Ա. *Տորք Անգեղ*-ն ունի իր նախատիպը՝ ասիանիկ, խեթական դիցարանում հոչակված *Տարկուն*, և այս փաստը Ն. Ադոնցը հիմնավորում է ողջ Առաջավոր Ասիայում՝ այդ թվում՝ Հայաստանում վերջինիս պաշտամունքի՝ խոր արմատներ ունենալու իրողությամբ, ինչպես նաև՝ երկու անունների հնչյունական ընդհանրությամբ:

Բ. *Տօրցոս*, *Տորք*, *պասկուճ*, *կորճ*, *ուրուր*, *որոր* (*օր-օր*) բառերի հնչյունական և իմաստային կապն ակնհայտ է, ուստի մնում է միայն ընդունել *Տորքի*՝ թռչունի հետ ունեցած առնչության փաստը:

Գ. *Տարկոփ* անունը, փաստորեն, ավելի երկարակյաց եղավ, քան անվանակիր աստվածը: Պաշտամունքը, թեպետ մոռացության է տրվել, հետքերը, սակայն, պահպանվել են: Այսպես, Վանի՝ *Տոսպ* անվանումը, որ երբեմն լճին է տրվել, երբեմն՝ քաղաքին կամ ամբողջ Վանի շրջանին, ըստ Ն. Ադոնցի, նույնպես Տիշուպի պաշտամունքի վերհուշն է:

Դ. Եթե քննության մեկնակետ սահմանենք աստվածության նշանակությունը, ինչպես սկզբում փորձեց Ն. Ադոնցը՝ ի բաց առնելով դիցանվան ստուգաբանությունը, ապա Տորք Անգեղն իր բնավորությամբ աներկբա կկապվի Հոմերոսի Պոլիփեմոսի հետ, մինչդեռ, ինչպես ուսումնասիրությունը ցույց տվեց, միայն նշանակությունը բավարար չէ, այս կամ այն աստծու կերպարի ամբողջացման համար, անվան ստուգաբանությունը, լեզվական ընդհանրության հաստատումն առավել քան որոշիչ է: Համադրելով այս երկու գործոնները՝ նախ պարզում ենք դիցանվան ծագումը, հետ այդու՝ անունից բխեցնում նրա գործառույթը, որից հետո միայն՝ աղերսներ գտնում այլ դիցարանների աստվածների հետ: Տարբեր ազգերի դիցարանների զուգադրահամեմատական պատկերի բացահայտման առումով աստվածությունների գործառույթների նմանությունը կամ ընդհանրությունը կարևոր հանգամանք է, բայց ոչ պակաս վճռորոշ է նրանց անունների լեզվահնչյունական մերձավորությունը:

Ե. *Անգեղ* անունը Ն. Ադոնցը, թեպետ նախապես փորձում է բխեցնել *Ներգալ*-ից, այդուհանդերձ, այս երկու անունների լեզվահնչունական անցումների կասկածելի լինելն այս վարկածը լիովին համոզիչ չի դարձնում՝ հավաստելով միայն նրանց գործառույթների ընդհանրությունը, որը, սակայն, անհրաժեշտ և բավարար պայման չէ այս անվանումների նույնականացման համար:

Զ. *Անգեղ*-ը միանշանակ ծագում է հունարեն *αγγηλος*՝ *հրեշտակ* բառից՝ *նամակադար* նշանակությամբ: Այն առաջացել է Տարկուի տարբեր անվանումների (δημος Τροκονδηγων, Ταρκόνδημος,) համաբանությամբ՝ հատկացուցիչ-հատկացյալ կապակցությունից, այսինքն՝ *Տորք Անգեղ* նշանակում է *Տորքի հրեշտակ*՝ *նամակադար*:

Բ. ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐ

Հոյժ հետաքրքիր են անձնանունների ադոնցյան վերլուծությունները: Նախ քննենք **Մեսրոպ Մաշտոցի** անվան ստուգաբանական փորձերի հետ կապված պատմությունը: «Հանդէս ամսօրեայ»-ում Գ. Ֆնտգլյանը, ըստ Ն. Ադոնցի, համեմատել է *Մաշթոց*-ը *Մազդակ*-ի հետ, որովհետև *mazd* փոխվում է *mašt*-ի, ինչպես՝ *yazd*-ը՝ *yašt*-ի: Այս համեմատությունը Ն. Ադոնցը սխալ է համարում: Ըստ նրա՝ պարսկերեն *yazd*-ը երբեք չի կարող փոխվել *yašt*-ի: Առաջինը ծագում է *yazatu* ձևից, որը ապառնի կրավորական դերբայ է, իսկ *yašt*-ն առաջացել է անցյալ կրավորական դերբայ *yaz*-ից: Ճիշտ է, դրանք արմատակից են, ինչպես Ն. Ադոնցն է վկայում, սակայն «հնչական փոխանցման կապ չկա դրանց միջև»:

Ըստ գիտնականի՝ այլ ծագում ունի *mazd*-ը՝ *mazd*<*mand-dha*, առաջինը՝ *ma'd*, նույնն է, ինչ հուն. $\mu\alpha\theta$ - $\epsilon\iota\nu$, սլավ. муд - ρ , երկրորդը *dha*-«դնել» արմատն է: *d*-ն փոխվում է *z*-ի հաջորդող *dh*-ից առաջ, և այս փոփոխությունն այլ կարգի է, քան *յազդ* և *յաշտ*, և *mazd*-ը *mašt*-ի չի կարող փոխարկվել: Ուստի Ն. Ադոնցը *Մաշտոց* անվան ելակետը *Մաժդոց*-ը ընթերցումն է համարում, որ հիշեցնում է անմիջապես *Մազդ*- բառը: Գիտնականը գրում է. «Իրանական գետնի վերա *Մազդ* չէ կարող տալ *Մաժդ*, որովհետև պակասում են հարկավոր պայմանները, օրինակ՝ *l* կամ *r* հնչյունը նախընթաց վանկում, որպիսի գրությամբ *z* փոխվում է *ž*»¹⁶⁴:

Հայագետի մեկնաբանությամբ՝ դա, թերևս, առաջացել է հայերեն *-ng* մասնիկի *-g*-ի ազդեցությամբ: Նա չի բացառում, որ *Մաշտոց* և *Մաշթոց* ձևերի սովորական և հին գրությունից առաջացած լինեն *Մաշդոց* և *Մաժդոց* ձևերը՝ արևմտյան արտասանության ազդեցությամբ: Մեր լեզվի արևմտյան բարբառի առանձնահատկությունը, նրա համոզմամբ, շատ ավելի հին է, քան ենթադրվում է:

Ըստ այսմ՝ Ն. Ադոնցն առաջարկում է մեկ այլ ստուգաբանություն՝ համեմատելով *Մաշտոցը* ուրիշ, բայց դարձյալ իրանական մի հին անվան հետ: Հերոդոտոսը հիշում է Μάσιστος անունը, որ կրում էր Քսերքսեսի զորականներից մեկը, որ առաջնորդում էր Սապիր՝ Սպեր ցեղի բանակը: Նշանակում է՝ Հայաստանում հայտնի է եղել այդ անունը: *Masistus*-ը գերադրական աստիճանն է *mas-*, հունարեն $\mu\alpha\kappa$ - $\rho\acute{o}\varsigma$ «երկար» բառի, ուրեմն՝

¹⁶⁴ Ն. Ադոնց, Երկեր, Բ, Կորյունի մասին, էջ 54:

masišta' *ամենից երկար*: ըստ Ն. Ադոնցի՝ կարող է լինել նաև գերադրական և maz' *մեծ բառի*, mazišta' *ամենամեծ*: Երկու դեպքում էլ հայերենում սպասելի է *Մաշտ*-ի հիմնածևր՝ համաձայն իրանականի:

-Ոց վերջավորության ծագումը, սակայն, անորոշ է, ինչպես որ անորոշ է նրա կապը -ng մասնիկի հետ: Հատուկ անունների շարքում, Մաշտոց-ից բացի, այդ մասնիկն ունեն *Տիրոց* և *Բարոց* անունները: Ն. Ադոնցին հայտնի է այդ վերջավորությամբ մի անուն ևս՝ *Ափոց*, որի ընթերցումը, սակայն, դեռ հստակ չէ, թեպետ, ըստ նրա, հավանական է, որ Ձափիկ Մոկաց Եպիսկոպոսի անվան այլ տարբերակն է:

Գ. Ֆնտզյանը *Մեսրոպ* անունը Մ. Խորենացու «հերյուրանքն» է համարում նկատելով, թե պատմահայրը հմուտ էր անուններ «հերյուրելու» հարցում, և *Մեսրոպ* անունն էլ ստեղծել է՝ նրան համեմատելով Սերովբ-ի հետ ու ստեղծելով *Մար-Սերովբ*, որից էլ՝ *Մեսրովբ*:

Ն. Ադոնցը մեղք է համարում պատմահոր՝ առանց այդ էլ ծանրաբեռնված ուսերին այդպիսի մեղադրանքի բարդումը, և հետևյալ ստուգաբանությունն է առաջադրում՝ «Մեսրոբ Mesrob հաղորդ է իրանական մեծ աստվածության անվան, որ է Միտր: Նա բաղկացած է երկու տարրից՝ *Meh-srob, ուր առաջին մասը՝ *Meh ձևափոխումն է Միտր-ի: Հայտնի է, որ հին Mitra տալիս է Midra, Mihr, Meh, Mer, Mel-, որտեղից և հայերենում Միհր, Մեհ (մեհյան), Մեր (Մերշապուհ), Մհեր, Մլեհ (<պրս. Milād հին Mihrdat-ից), Μελίας...»¹⁶⁵: Երկրորդ՝ -*սրոբ* տարրը, ըստ Ն. Ադոնցի, նույնն է, ինչ որ տեսնում ենք *Խոսրով* անվան մեջ, իսկ srāv-ն պահպանված է հայերեն փոխառյալ *դ-սրով* բառում, համապատասխանում է հունարեն κλέος, սլավ. слово բառերին և նշանակում է իսկապես *խոսք*, *գովք* (հմմտ. ռուս. слово՝ խոսք և слава՝ փառք):

Այս մեկնաբանությամբ՝ Մեսրոբ<Me^h-srōb նշանակում է «Միհր գովող, փառաբանող» կամ «գովելալ ի Միհրէն»: Հունական և սլավոնական հատուկ անունների մեջ ևս, ըստ գիտնականի, ընդունված է այս բառը, ինչպես՝ Ξεμιστο- κλής, Vladislav, որտեղ κλής < *Kleues, և slav հավասար են -srob, -սրոբին: Ն. Ադոնցի կարծիքով՝ Me^h-

¹⁶⁵ Նույն տեղում, էջ 57:

srōb-Mesrōb փոխանցման օրինակ կարող է ծառայել պարսկերեն Mihrāb անունը, որ հայերեն կոչվում է *Մեհրաբ* և *Մերաբ*: Mehrāb-ը նույնպես կազմված է նույն Mihr և āb բառերից: Սանսկր. ābha նշանակում է *փայլ*, որով Mehrab՝ *Միհրափայլ*-ը իմաստային դաշտով մոտենում է Մեսրոբ-ին՝ որպես «Միհրափառ»-ի:

Հր. Աճառյանի փաստամամբ՝ *Մեսրոպ* անվան՝ *Մար* և *Սերովբ* բաղադրիչներից կազմված լինելուն համակարծիք է նաև Ս. Վարդապետ Պարոնյանը, ըստ որի՝ *Մեսրոպ* անվան նախնական ձևը եղել է *Մեսրովբ*, իսկ *Մեսրոպ*-ը նրա ժողովրդական աղավաղումն է: Հ. Բ. Սարգիսյանը կարծում է, որ *Մար-Սրովբ*-ը «*Տէր Սերովբէ*» պատվանունն է, որ Մաշտոցին տվեցին ասորիներն այնպես, ինչպես հույները՝ *Եկկլեսիաստրիկոս*-ը:

Կարապետ Եպիսկոպոս Սասնացին *Մեսրոբ* անունը մեկնում է որպես «տէր սուրբ և սեփական», այսինքն՝ ասորերեն *մար՝ տեր* + հայերեն՝ *սուրբ*: Իսկ *սեփական*-ը, ըստ Հր. Աճառյանի, հայտնի չէ, թե որտեղից է գտնում:

Վարդան պատմիչը, Հր. Աճառյանի հաղորդմամբ, *Մեսրոպ* անունը մեկնում է որպես «*կանաչացեալ, յարագուարծ և բերկրեալ*»՝ ըստ էության այն կապելով արաբերեն masrūr՝ *ուրախ* բառի հետ:

Ա. Մ. Գարագաշյանը *Մեսրոբ* ձևը մեկնում է «պարսիկ բառեն միւշրիֆ, որ կնշանակե դպիր կամ քարտուղար», իսկ Մաշթոց «հույն բառեն μαϛτόϛ, որ կնշանակե բարձրություն»¹⁶⁶:

Հր. Աճառյանը Միաբանից (Գալուստ Տեր-Մկրտչյան) անձամբ է լսել, որ նա *Մաշտոց* բառը կապում է *մաշտել* «խլել, քայքայել, թափել», *մաշտիլ* «մազերը թափիլ» բայերի հետ, այսինքն՝ *մաշտոց* «մազերը քերելու, պոկելու գործիք, մազխիլ», որ հետո դարձել է հատուկ անուն:

Ս. Վարդապետ Պարոնյանը, ըստ Հր. Աճառյանի, *Մաշտոց* բառը համարում է ոչ թե Մեսրոպի բուն անուն, այլ ընդհակառակը, Ծիսարանի անուն, որից անցել է հեղինակին: Ս. Վարդապետ Պարոնյանի վկայմամբ՝ *Մաշտոց* «զենդերեն *մազդ* բառն

¹⁶⁶ Հր. Աճառյան, Հայոց գրերը, էջ 308-310:

է, որ է մերս իմաստ, իմաստուն և կամ *մեզդ*, որ կնշանակէ *երգ*, *զոհ*, և որուն լծորդն է *պաշտ*, *պաշտօն*, կամ երբայերեն *մաշծոթ*, որ կնշանակէ «աղօթագիրք»¹⁶⁷:

Մ. Ավգերյանը մեկնում է հետևյալ ձևով. «Եւ էր առաջին և սովորական անուն սուրբ վարդապետիս Մաշտոց կամ Մաշթոց. իսկ Մեսրոպն անուն եղև յորջորջուն յաւելեալ իբրև մականուն, թեևս զկնի վարդապետութեանն, որպէս թէ մեծ ռաբուն ստուգաբանելի, կամ Մշու ռաբբի»¹⁶⁸:

Ղ. Ալիշանը *Մաշտոց* անունը ծագած է համարում *մաշտ* արմատից, որը, նրա համոզմամբ, սրբազան նշանակություն պիտի ունենա՝ համանիշ *մշտիկ* բառին, որ նշանակում է «օրհնյալ ջրոց ցանիչ գործին կամ ճյուղը»¹⁶⁹:

Հր. Աճառյանի կարծիքով՝ անվան նախնական ձևը եղել է *Մեսրոպ*, որ միայն հետագայում է դարձել *Մեսրոբ*՝ մի շարք անունների համաբանությամբ՝ *Սերոբ*, *Քերոբ*, *Հակոբ* և այլն, որոնք ունեն զուգահեռ *Սերովբ*, *Քերովբ*, *Հակովբ* և այլ ձևեր¹⁷⁰:

Կարծում ենք, անհնար է միանշանակ որոշել Մեսրոպ Մաշտոցի անվան ծագումը, քանի որ մի կողմից մեզ անհիմն չի թվում Մաշտ(թ)ոցը Մազդեթի հետ կապելու՝ Գ. Ֆնտզյանի փորձը, քանի որ, թեպետ *yazd*-ը և *yašt*-ը դերբայական տարբեր ձևեր են, այդուհանդերձ իմաստային մեծ պատնեշ չկա նրանց միջև, բացի դրանից՝ չի բացառվում, ավելին՝ շատ հավանական է չձանցումը: Մյուս կողմից, սակայն, առավել համոզիչ ու հայեցի ենք համարում արևմտյան արտասանության ազդեցությամբ *Մաշդոց* և *Մաժդոց* տարբերակների առաջացման հանգամանքը:

Ինչ վերաբերում է *-ոց*-ի ծագմանը, ապա հակված ենք այն դիտելու որպես հայկական *-ոց* վերջածանց՝ հիմնականում, սակայն, տեղանուններում հանդես եկող և պատկանելություն արտահայտող՝ *Հայոց*, *Վայոց*, *Տայոց* և այլն: Կարծում ենք՝ տեղանվանակերտ այդ ածանցը համաբանությամբ անցել է նաև մի քանի անձնանունների, այդ թվում՝ Մաշտոց-ին:

Եվ վերջապես, *Մեսրոպ*-ի՝ նախնական *Մեհարոպ* տարբերակի գոյությունը և ըստ այդմ նաև նրա՝ Միհրի հետ առնչությունը մեզ թեական է թվում, բայց և խիստ գրավիչ:

¹⁶⁷ Նույն տեղում, էջ 310:

¹⁶⁸ Նույն տեղում:

¹⁶⁹ Նույն տեղում:

¹⁷⁰ Նույն տեղում, էջ 311:

Ջարէն անունը, ըստ Ն. Ադոնցի, ավելի հին ձևն է *Ջալէն*-ի, որը երևում է նույն անվան մի այլ համազորից՝ *Ջարակ*, իսկ ավելի ուշ՝ *Ջարայ*:

Գիտնականը նշում է, որ Ն. Ակինյանը նույնացնում է **Հուսիկ**, **Սահակ** և **Շահակ** անունները, և դրան ի պատասխան՝ գրում է. «Երեք հիմնովին տարբեր անունների նույնացման դեմ կարելի է միայն երեք անգամ «չէ» ասել»¹⁷¹:

Ն. Ադոնցը նշում է, որ ըստ Ն. Ակինյանի՝ *Սահակ* անունը Կորճայքում արտասանվում էր *Շահակ*՝ ասորական ազդեցությամբ, իսկ «հայ բնիկ ժողովուրդին բերանը սեղմված եղած է Հուսիկ»: Ն. Ադոնցը գրում է. «Ոչ, որքան կուզեք սեղմեցեք բերանը, Սահակից՝ Հուսիկ չի դուրս գալ: Բերան սեղմելով չի կարելի բառեր մեկնել և ո՛չ էլ բերան լայնելով՝ սխալ մեկնություններ պաշտպանել»¹⁷²:

Ն. Ակինյանը, Ն. Ադոնցի համոզմամբ, նկատել է, որ Հ. Հյուբշմանը *Շահակ* անունը «զգուշորեն» կապում է իրանական «շահ» բառի հետ, բայց նրա մտքով չի անցնում այդ անունը համեմատել *Շահրիկ*, *Շահեն* անունների հետ:

Անձանունների ստուգաբանության մեջ խորամուխ գիտնականը նշում է, որ *Շահրիկ* նշանակում է *կողմնապետ*, մյուս կողմից էլ հատուկ անուն է, ինչպես *Շահապ*՝ *սապրապ*, որը նաև հատուկ անուն է:

¹⁷¹ Ն. Ադոնց, Հայր Ակինյանի պատասխանին պատասխան, Երկեր, Բ, էջ 225:

¹⁷² Նույն տեղում:

Գ. ՏԻՏՂՈՍՆԵՐ

Ն. Ադոնցը նախ քննում է լեզվական վերապրուկներից ուշագրավ մի քանի եզրեր, որոնք տոհմական ժամանակաշրջանի սեփականությունն են և շատ կարևոր՝ նրա մասին պատկերացման առումով: Դրանք են՝ **malxaz**, **aspet**, **tēr**, ***mamak**: Հետազոտողը փորձում է պարզել այս բառերի նախնական իմաստները: Հիշյալ չորս եզրույթները, ըստ նրա, սկզբում նշանակում էին իշխանություն կրող անձնավորություն երկրի տարբեր հատվածներում: **Malxaz**-ը Խորխոռունի իշխանների տոհմական տիտղոսն էր, որ նշանակում էր ընդհանրապես *տիրոջ, իշխան, թագավոր*, և ծագում է ասորական malxazu-ից կամ արաբական melik-ից: Այս տիտղոսին համապատասխանող տիրույթն ավելի փոքր միավորով, ըստ Ն. Ադոնցի, աղխ-alx-ն է՝ *haxl-ից, որ նույն ծագումն ունի, ինչ որ վրացերեն saxli-տուն-ը: Այս նույն արմատից է աղախին-ը՝ alaxin-ը, սկզբնապես այն անձը, որ պատկանում էր alx-ին, հետագայում՝ սպասուհի: Հր. Աճառյանը նույնպես նշում է, որ Ն. Մառը *աղախին*-ը կցում է *աղխ*-ին, որի նշանակությունն է՝ *տուն*: Ինչ վերաբերում է աղխ-ին, ապա Հր. Աճառյանը վկայում է ՆՀԲ-ում գրանցված տաճկերեն *հալխա*, *հալվա* «օղակ» բառերի հետ նրա առնչությունը, մյուս կողմից մեջբերում է Բուզգեի ստուգաբանությունը՝ *աղխ*-ը հունարեն ἀρχεω՝ *արգելել*, լատիներեն areco՝ *արգելք հանել* բառերի հետ կապող¹⁷³:

Մալխազ-ի՝ Խորխոռունիների տոհմական տիտղոս լինելու մասին վկայություն կա նաև «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան»-ում (Եր., 1974), որտեղ նշված է, որ մալխազը Արշակունի թագավորների թիկնապահ զորքի պետն է, որ ժառանգաբար ընտրվում էր Խորխոռունի տոհմից, մինչդեռ «Առձեռն բառարան»-ում (Վենետիկ, 1865) «մալխազ»-ից հղում է տրված «մաղխազ»-ին և բացատրության մեջ գրված է, որ նշանակում է թագավորի պահապանների գլխավորը, բայց հետաքրքրականն այն է, որ հետ այսու հղում է տրված նաև «մալխազ»-ին՝ իբրև *ցուփ*-ի ու *անառակ*-ի¹⁷⁴: Կարծում ենք, վերջին հղումը պատահական չէ, հիշենք թեկուզ միայն Սուրեն Խորխոռունուն, որ 380-ականներին բյուզանդական մասի թագավոր Արշակ Գ-ից հափշտակեց նրա ունեցվածքն ու անցավ պարսկական մասի թագավոր Խոսրով

¹⁷³ Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 1, էջ 131:

¹⁷⁴ Հմմտ. Մ. Ալգերեան, Գ. Ճէլալեան, Առձեռն բառարան հայկազնեան լեզուի, Վենետիկ, 1865, էջ 540:

Դ-ի կողմը: Այսուհանդերձ, Խորխոռունիների տոհմը միայն բացասական կերպարներով չի բնորոշվում, ավելի մեծաթիվ են հակառակ բևեռը ներկայացնողները, օրինակ՝ Խորեն Խորխոռունին, որին հայ եկեղեցին դասել է սրբերի շարքը և այլք: Անշուշտ, հնչյունական սերտությունն է առաջին հերթին հիմք դարձել **մախազ**-ը (մաղխազ) և **մախազ**-ը աղերսելու:

Մյուս տերմինը՝ **aspet-ասպետ**, նույնպես տոհմական տիտղոս է՝ այս անգամ Բագրատունյաց իշխաններին պատկանող: Այս բառը, Ն. Ադոնցի համոզմամբ, անհիմն կերպով տարբեր մեկնություններ է ստանում: Իրականում, ըստ նրա, այն կազմված է as-ից և pet-ից: Երկրորդը նշանակում է *գլուխ*, իսկ առաջինը փորձ է արվում համեմատելու նախարարական կենցաղից վերցրած մի այլ և ոչ պակաս կարևոր տերմինի՝ se-puh՝ սեպուհ-ի առաջին վանկի հետ: *Սեպուհ* բառի ծագումն արդեն ճշտված է, այն ծագում է ավելի հին se-puhr ձևից, իրանական սիթաթա-ն է, որտեղ *թաթա՝ պուհ*, նշանակում է *որդի*, իսկ սիթ-ը տոհմական կազմակերպության օղակներից մեկն է, հետևաբար se-ն սիթ-ի կրճատ ձևն է:

Գիտնականի վկայմամբ՝ **սեպուհ** տերմինը հայ գրականության մեջ պահպանվել է նաև *aspurak՝ Ասպուր-ակ* ձևով: Նախաշեշտային *ու-*ի գոյությունը ցույց է տալիս, որ *ու-*ն եղել է երկու բաղաձայններից առաջ, այսինքն՝ բառը հնչում է որպես *aspuhr-ak*: Մասնիկի զեղչումով մնացել է *spuhr*, որը, անտարակույս, կարելի է համեմատել *sepuh-*ի հետ՝ վերջինիս հնագույն *sepuhr* ձևով: -as և -se սկզբնավանկերի նույնությունն անկասկած է:

Ըստ գիտնականի՝ պետք է նկատել, որ հնդեվրոպական լեզուներն ընդհանուր բառ չունեն սեփականության գաղափարը արտահայտելու համար: Ապրելով տոհմային կյանքով՝ հնդեվրոպական ցեղը տակավին անձանոթ է եղել սույն հասկացությանը, անգամ լատին և հույն լեզուները չունեն ընդհանուր անվանում: Լատին *proprius*-ը, որ ընդունված է եվրոպական արդի լեզուներում, սղումն է *propatrius՝ անդրհայրական* բառի: Ասել է թե՛ սեպիական է համարված այն, ինչ որ եղել է հորից առաջ, ուրեմն հասել կամ մնացել է պապերից: Հունարենում *ἴδιος* ստուգաբանորեն նշանակում է «զատ, առանձին» և ստացել է *սեփական*-ի իմաստ:

Ազաթանգեղոսն ասում է՝ «զբուն եւ զձեր սեպհական Պահլան», Ղ. Փարպեցին՝ «զբնիկ եւ զսեպհական տեղիս նախնեաց», «զբնիկ սեպհական կալուած ազգին Արշակունեաց»: Կարծես հին **բնիկը** մեկնվում է նոր **սեպհականով**:

Ն. Ադոնցը նկատում է, որ Ս. Գիրքը, որը բոլոր դեպքերում մնում է լավագույն աղբյուրը բառաքննության համար, գործածում է *սեպհական* բառը ոչ հաճախ և այն տեղերում, որտեղ իմաստը վիճելի է նաև հունական և անգամ եբրայական բնագրերում: Միայն մի տեղ հույն *οἱ παρ αὐτοῦ* (բնակէ ինքն եւ որք ընդ նմա)-ը, ըստ Ադոնցի, հայերեն թարգմանված է բավական ազատ՝ «բնակեցաւ սեպհական գնդաւն հանդերձ (Ա Մակար., ԺԳ, 53)»¹⁷⁵:

Հունարեն *ἰδιος*-ի դիմաց հայերենն ամենուրեք ունի **մեր, ձեր** դերանունները՝ *սեպհական* բառի փոխարեն, որ *ἰδιος*-ի իսկական իմաստն է:

«Հայ սեպհական=περὸς σῆμα=peculiaris առանձին երանգ ունի, նշանակելով այն, ինչ որ զատ է, ուրույն և ոչ նման ընդհանուրի»¹⁷⁶:

Ինչ վերաբերում է *ասպեպ*-ին, ապա Հր. Աճառյանը նույնպես հակված է այն իրանական փոխառություն դիտելուն, սակայն՝ առաջին բաղադրիչի այլ մեկնությամբ: Ըստ նրա՝ **asparati*՝ «ծիատեր» բառը (*aspa*՝ ձի և *pati*՝ տեր, պետ) լիովին բացահայտում է *ասպեպ*-ի կազմությունը: Հին պարսկերեն նշյալ բառը համառոտվելով՝ դարձել է *aspati*¹⁷⁷: Նույն կարծիքին է նաև Ստ. Մալխասյանցը¹⁷⁸:

Հետաքրքիր է, որ *Ասպուրակ*-ը գործածվում է նաև *ս* սկզբնատառով՝ *Վասպուրակ*, և ընդհակառակն՝ ոչ հայկական հուշարձաններում Վասպուրական նահանգի անունը, որ հանգում է միևնույն բառին, մեջբերվում է առանց սկզբնահնչյունի՝ **Ἀσπουρ* < *ακ* < *άν*: *Aspur*-ի կողքին *vaspur* ձևի գոյությունն ավելի ակնբախ է դարձնում այդ երկուսի՝ *νιθαρυθρα*-ից ծագումը: Ըստ Ն. Ադոնցի՝ հնչյունական մի երևույթի համաձայն, ըստ որի՝ բառասկզբի *ս*-ն խորթ է հայոց լեզվի հնչյունաբանությանը, իրանական *νιθαρυθρα*-ն պետք է որ հայերին անցներ *isapuhr*, *asapuhr* ձևով կամ անշեշտ *a*-ի զեղչումով՝ *ispuhr*, *aspuhr* տարբերակով:

¹⁷⁵ Ն. Ադոնց, Երկեր, Ա, Հայ հին շինականությունը, էջ 100-101:

¹⁷⁶ Նույն տեղում, էջ 102:

¹⁷⁷ Հմմտ. Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 1, էջ 274:

¹⁷⁸ Ստ. Մալխասեանց, Հայերեն բացատրական բառարան, Եր., 2010, հ. 1, էջ 237:

Aspuhr-ի և sepuhr-ի կամ as-ի և se-ի նույնությունը պարզելուց հետո Ն. Ադոնցը պարզում է նաև aspet տերմինի ստուգաբանությունը: Aspet-ը ծագում է սիթա-րատի-ից այնպես, ինչպես aspur-ը՝ սիթարա-ից, այլ կերպ՝ aspet, ըստ նրա, նշանակում է սիթ-ի կամ *տոհմի գլուխ, պեպ*, իսկ sepuh՝ *տոհմի որդի*: Վսեմ, վսամ բառը, որի լիարժեք ձևն է *վսեամ*, Ն. Ադոնցի խորին համոզմամբ, իրանական *սիթա-ma-ն է և վերաբերում է սիթ-ին այնպես, ինչպես zantuma-ն՝ zantu-ին: Նրա սկզբնական նշանակությունն է՝ *տոհմի անդամ, տոհմիկ*, հետագայում՝ *մեծատոհմիկ, վեհ*, հավանաբար նաև՝ վէս-հպարտ=սիթա, *սաիթա սիթ-ից՝ -ya մասնիկով: Գիտնականի համոզմամբ՝ *վսեմ*-ի նման նաև *վէս*-ը սկզբնապես ցույց էր տալիս տոհմին պատկանելը:

Տէր-ը Ն. Ադոնցն իրավամբ ածանցված է համարում *տի*-ից և *այր*-ից: Երկրորդ մասը հայոց լեզվում նշանակում է *մարդ, այր*, իսկ *տի*-ի իմաստը, ըստ նրա, գրեթե անըմբռնելի է, ավելին՝ պարզ չէ, թե ինչ առնչություն ունի *այր* և *կին* բառերի հետ, որոշի՞չ է նրանց համար, թե՞ հակառակը՝ նրանք են իր համար որոշիչ: Ըստ կազմության՝ այս բառերը Ն. Ադոնցին հիշեցնում են վրացական mama-սpali և deda-սpali: Վրացական սpali-ին իրականում և ստուգաբանորեն համապատասխանում է սեմական սաալ՝ *տիրակալ* բառը: Սեմիտները այսպես կոչում էին իրենց տոհմերը հովանավորող աստվածներին: Այս բառը, որ սեմիտների մոտ *աստվածություն, երկնքի տիրակալ* էր նշանակում, վրացիները փոխանցել են թագավորին՝ որպես երկրի տիրակալի: Ն. Ադոնցի կարծիքով՝ ըստ երևույթին, նման մի բան էլ պատահել է նաև հայկական *տի*-ի հետ: Հնչյունական կազմով և իմաստով՝ հայերենի *տի*-ի ծագումը, ըստ գիտնականի, կարելի է բխեցնել հնդեվրոպական di- բառարմատից: Նրանից ածանցված բառերը հանգում են երկու հիմքի՝ di և div: Երկուսն էլ ընդգրկում են լույսի-ցերեկվա և երկնքի-աստծո հասկացությունները: Հայերենում կան երկու բառահիմքերն էլ՝ և՛ տիվ-ցերեկ, և՛ տի-ք հոգն. ձևով. tant-տարիք, այսինքն՝ օրեր:

Տի-ն ի սկզբանե, ինչպես լատինական deus-ը, Ն. Ադոնցի վկայմամբ, արտահայտում էր բարձրագույն էակի՝ Աստծո գաղափարը, իսկ հետո սկսեց գործածվել նաև *թագավոր* և առհասարակ *երկրային տեր* նշանակությամբ, այսինքն՝ նա էլ արժանացավ այն բախտին, ինչ որ վրացական սpali-ն: Ն. Ադոնցը կարծում է, որ *տի*-ի այս վերջին նշանակությունը փոքր-ինչ նսեմացնելու համար սկսեցին նրան կցել

այր՝ մարդ բառը՝ տի-այր՝ տէր: Հետաքրքրական է այն, որ այդ գործընթացը կրկնվեց: Հետագայում, երբ *տի-այր* բառի գործածությունից իսպառ հանվեց *տի*-ն, և սկսեց հավասարապես նշանակել թե՛ երկրի և թե՛ երկնքի տեր, ապա հիշյալ երկու գաղափարները տարբերելու համար կրկին հանդես եկավ նույն *այր* բառը, և կազմվեց *տիր-այր*-ը, որ գրականության մեջ հայտնի է որպես հատուկ անուն, բայց անկասկած է, ըստ գիտնականի, որ սկզբում այն գործածվել է առհասարակ իշխողի, տիրողի իմաստով:

«Տեր» բառի իմաստը՝ *իշխող, պետ* և այլն, ուղղորդում է մեզ դեպի Ն. Ադոնցի ստուգաբանությունը՝ ընդունելու, որ *տեր*-ը, այսպես ասած, աստվածային այրն է, իսկ Հ. Պետերմանի վարկածը խոցելի է, և դա ոչ միայն *տի*-ի՝ *տ* ժխտականին հավասարազորության, այլև *տեր* բառի մեկնության պատճառով՝ «ոչ այր, այլ իշխանավոր»: Բայց եթե ընդունենք, որ *իշխանավոր* ասելով նա նկատի ունի երկրային իշխանությունը և երկրային տիրոջը հակադրում է երկնային այր-ին, այդ դեպքում հանգում է Ն. Ադոնցի մեկնությանը:

Ըստ Հր. Աճառյանի՝ *տեր*-ը ծագում է **տի-այր* ձևից, որի ավելի հին ձևն է՝ *տէայր՝ *միայն>մէն*-ի համաբանությամբ: *Տէայր-ը, ըստ նրա, կազմված է *տէ*- և *այր*՝ *մարդ* բաղադրիչներից, որոնցից առաջինը նշանակում է *մեծ*, որ հանդես է գալիս նաև *տիկին, տիեզերք* բառերում¹⁷⁹:

Mamak-՝ *մամակ*-ը Ն. Ադոնցի քննած պատմաբաններից է. մատենագրության մեջ հանդիպում է որպես **Մամիկոնյան** տոհմին հատուկ անձնանուն: Սկզբում այն իշխանական տոհմերից մեկի տիտղոսն էր, հետագայում, քննարկված երկու տիտղոսների նման, դարձավ տոհմական անձնանուն, *մամակ* կամ *մամիկ*-ը դարձավ *Մամիկոն-եան*, ինչպես *ասպետ*-ից՝ **Ասպետունի** կամ *մաղխազ*-ից՝ **Մաղխազունի**: Ն. Ադոնցի կարծիքով՝ *mama-k*-ը ոչ այլ ինչ է, քան իբերական *mama*՝ *հայր* բառի հայացված ձևը. այս բառը նույնպես գալիս է տոհմական ժամանակաշրջանից՝ նշանակելով *տոհմի հայր, տոհմապետ* և հոմանիշ է վրացական *mama-saxlisi*-ին: Հայկովկասյան լեզվական ենթաշերտային առոգանությունների տեսանկյունից այս ստուգաբանությունը խիստ կարևոր է:

¹⁷⁹ Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 4, էջ 401:

Նահապետ բառի ստուգաբանությունը, ըստ Ն. Ադոնցի, բավական թափանցիկ է: *Nah* համապատասխանում է պարսից *naf* բառին, հնագույն ձևն է՝ *napha*, եվրոպական համարժեքը հնչում է *nabha*, որից՝ լատին, հույն և գերման *umblicus*, *omphalos*, *Nabel* բառերը: Բուլղրի հիմնական միտքն է՝ «պորտ», փոխաբերաբար՝ «սերունդ, ցեղ»: *Նահապետ*-ը, փաստորեն, նշանակում է բառացի «ցեղապետ, տոհմապետ»:

Ն. Ադոնցի հաջորդ վերականգնմամբ՝ *նահ* բառն է թաքնված նաև **նախարար**-ի մեջ, որի պարսկական ձևը, թվում է, *Nahodar* է: Ըստ գիտնականի՝ հավանաբար, *նախ* բառի ազդեցությամբ *նահարար*-ը դարձել է *նախարար*: Նշանակությունը՝ «ցեղի, տան պահապան», գրեթե նույնն է, ինչ *նահապետ*-ինը: Իսկ այս երկուսին փոխարինող զուտ հայկական բառը, Ն. Ադոնցի կարծիքով, **տանուտեր**-ն է¹⁸⁰: Հր. Աճառյանի վկայմամբ՝ *նահապետ*-ը պարթևական **nafapati*՝ *ցեղապետ* բառից է առաջացել, որն էլ կազմված է *nafa*՝ *պորտ*, *ցեղ* և *pati*՝ *պետ* բառերից¹⁸¹: Ստ. Մալխասյանցի կարծիքով էլ՝ *նահապետ*-ը ծագել է պահլավական *naxapati*՝ *ցեղապետ* բառից¹⁸²:

Նախարար բառը Հր. Աճառյանը բխեցնում է պարսկական **nafadara*՝ *ցեղապետ* բառից¹⁸³, իսկ Ստ. Մալխասյանցը՝ նույնիմաստ **naxadara* բառից՝ դարձյալ իրանական ծագման¹⁸⁴:

Ի դեմս հին ուրարտացիների՝ հայ ժողովրդի մի մասի նախնիներին ողջունող Ն. Ադոնցը մանրամասնորեն քննում է նաև Ուրարտուի աստիճանավորների *rabûte* անունը: Դա, ըստ նրա, *rabû*-ի հոգնակին է և նշանակում է «մեծեր» կամ, ինչպես Մ. Պֆայֆերն է ենթադրում, «ազնվականներ»: Սակայն տերմինի սոցիալական արմատը, այսինքն՝ թե ինչ են ներկայացնում այդ «մեծերը», անհայտ է: Ն. Ադոնցն ի վերջո ենթադրում է, որ *rabûti*-ն գուցե նշանակում է *հողատեր մեծ իշխաններ*, որոնց մի մասը, սերած գահազրկված հին դինաստիաներից, պահպանել էր իր հայրենական

¹⁸⁰ Ն. Ադոնց, Երկեր, Ա, Հայ հին շինականությունը, էջ 99:

¹⁸¹ Հմմտ. Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 3, էջ 423:

¹⁸² Հմմտ. Ստ. Մալխասեանց, նշվ. աշխ., հ. III, էջ 439:

¹⁸³ Հմմտ. Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 3, էջ 420:

¹⁸⁴ Հմմտ. Ստ. Մալխասեանց, նշվ. աշխ., հ. III, էջ 435:

ունեցվածքի մի մասը, մյուս մասը թագավորներից հողեր էր ստացել և դարձել ֆեոդալներ¹⁸⁵:

Ուրարտական փոխառությունների քննությունը Ն. Ադոնցին հաջողվել է կատարել հնարավորինս լավ, որովհետև նա հմուտ ուրարտագետ, ասուրագետ և իրանագետ էր միաժամանակ:

Ուշագրավ է նաև *չոփայ* բառը՝ օգտագործված Մ. Կաղանկատվացու կողմից՝ «չոփայիցդ շիրիմք արքունական կոչեցեալ...», «վառէր զայրեցումն բարձու մեհենիցն և զչոփայսն զազիր մորթովն հանդերձ զհարանացն» (Բ, գլ. ԽԱ)¹⁸⁶:

Չոփայ-ները տիտղոսավոր, պաշտելի անձեր էին, հավանաբար՝ թագավորներ կամ հերոսներ: Այս բառը Ն. Ադոնցը նույնն է համարում, ինչ բյուզանդական հեղինակների հայտնի *ժուպա*-ն՝ *zoupan*: Հր. Աճառյանն այն իբրև անստույգ բառ է դիտարկում՝ նկատելով, որ այն ընդամենը երկու անգամ է կիրառվել՝ Մ. Կաղանկատվացու կողմից¹⁸⁷: Ստ. Մալխասյանցը նույնպես, նշելով, որ անստույգ նշանակությամբ բառ է, միևնույն ժամանակ, սակայն, այն դիտարկում է որպես կրոնական բովանդակությամբ բառ՝ *ծառին զոհաբերված ձիու գլխի, կաշվի կամ կմախքի* իմաստով¹⁸⁸:

Ն. Ադոնցն անդրադառնում է **պատգոսապան** և **պատգոս** բառերի քննությանը, որոնցից առաջինը, նրա հաղորդմամբ, կիրառում է Սեբեոսը, երկրորդը՝ Թովմա Արծրունին՝ որպես կոչում, տիտղոս: Ն. Ադոնցը նշում է, իհարկե, որ պատգոս-ի ծագումն անհայտ է, բայց ենթադրում է, որ այն կարելի է հանգեցնել *pati-kos* ձևին, որ նշանակում է «երկրի ղեկավար»: *-kos* բաղադրիչը Ն. Ադոնցը կապում է *կոյս*՝ *կողմ* բառի հետ: Բայց միևնույն ժամանակ չի բացառում դրա առնչությունը *kost*, *kost-ak* բառի հետ, այսինքն՝ հնարավոր է համարում, որ *patgos-pan*-ը կապ ունենա *pat-kos-t-pan*-ի, *patkos*-ը՝ *pat-kost*-ի հետ: Լ. Հովհաննիսյանն իրանական բառերի շարքում քննում է *կոյս*՝ *կողմ* բառը: Ըստ նրա՝ իրանական *kausa*-ն համապատասխանում է հայերեն *կոյս*-ին: «Հպրս. *au* երկբարբառը գրաբարում շեշտի տակ արտահայտվում է ոչ երկբարբառով: Իրանական լեզուներում խուլ-ձայնեղ տեղաշարժով էլ հիմնավորվում է

¹⁸⁵ Ն. Ադոնց, Հայաստանի պատմություն, էջ 220:

¹⁸⁶ Հմմտ. Ն. Ադոնց, Քննություն Մովսես Կաղանկատվացու, էջմիածին, 2005, էջ 95:

¹⁸⁷ Հմմտ. Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 3, էջ 634:

¹⁸⁸ Հմմտ. Ստ. Մալխասեանց, նշվ. աշխ., հ. IV, էջ 31:

kausa-gōs-hj. **կոյս-(պատ)գոս** անցումը: Պիլ. kus և kustak բառերն էլ ունեն «կողմ», իմաստի լայնացմամբ նաև «գավառ, երկիր» նշանակությունը: VII դ. աշխարհացույցում հանդիպում ենք **քուստ** բառին, դարձյալ «կողմ» նշանակությամբ¹⁸⁹:

Ամփոփելով Ն. Ադոնցի դիտարկումները հնագույն տիտղոսների անվանումների վերաբերյալ՝ նկատենք՝

Ա. *Մալխազ, ասպետր, տեր, մամակ* բառերը արտահայտում են երկրի տարբեր հատվածներում իշխանություն կրող անձնավորություն:

Բ. *Մալխազ-մաղխազ-մախազ* անցումը՝ *ցոփ ու անառակ* վերջնիմաստով, հիմնավոր դիտարկում է:

Գ. Խիստ հետաքրքիր մեկնաբանություն է ստանում *տեր* բառը Ն. Ադոնցի կողմից՝ վրացական *mama-upali, deda-upali* բառերի հետ ենթադրյալ առնչության առումով, բայց կարծում ենք՝ այդքան հեռու գնալու կարիք չկա: Տի-ն, ինչպես Ն. Ադոնցն է փաստում, լատ. *deus՝ աստվածային էակ* իմաստն արտահայտող բառից է ծագում, որտեղից էլ՝ մեր *դի, դիք* բառերը:

Դ. *Մամգուն* չինական անունը, որի տարբերակն է, ըստ Ն. Ադոնցի, *Մամիկոն-ը*, չի կարող, անշուշտ, Մամիկոնյանների՝ Չինաստանից այստեղ տեղափոխման ապացույց լինել թեկուզ միայն ըստ այնմ, որ հատուկ անունները չեն կարող որոշիչ լինել տոհմերի ծագումնաբանության հարցում:

Ե. *Նահապետ* բառի ստուգաբանությունը՝ պարսկական *naf՝ պորպ* (սերունդ, ցեղ) բառից ծագած, ինչպես նաև *նախարար-ի՝ նահարար* սկզբնաձևի գոյությունը, խիստ արժանահավատ են:

¹⁸⁹ Լ. Հովհաննիսյան, Հայերենի իրանական փոխառությունները, Եր., 1990, էջ 244:

Դ. ՀԱՍԱՐԱԿ ԱՆՈՒՆՆԵՐ

Հասարակ անունների ստուգաբանական փորձերի մեջ ակնհայտ է Ն. Ադոնցի լեզվաբանական տաղանդը, բազմաթիվ լեզուների գերազանց տիրապետումը, համաշխարհային պատմության և մշակութաբանության փայլուն իմացությունը, բանավիճային շնորհը և անգամ՝ սրամտությունը:

«Աբգար Պայազատի «Խալդերեն լեզվի բանալին»» հոդվածում Ն. Ադոնցը գրում է, որ այս գիրքը հավատ չի ընծայում, այդուհանդերձ, Հր. Աճառյանը, ըստ նրա, հիացմունքով է գնահատում գրքի նորարարությունը, «սքանչելությունը», թե Ա. Պայազատը հայտնաբերել է խալդերենի բանալին, որը, ըստ նրա, ուտիերենն է: Հր. Աճառյանն իր առաջաբանում նշում է, թե Ա. Պայազատը գտել է ուտիերենում 49 բառ, որ հար և նման են խալդերենին թե՛ հնչյունով, թե՛ իմաստով: Ն. Ադոնցը այս առիթով սրամտորեն արձագանքում է. «Եւ որպեսզի իր վկայությունը անխոհեմություն չհամարվի, օրինակ է բերում sidiistuni բառը, որ խալդերեն է, և որին որպես համազոր է ուտիերենի sidastune բառը և երկուսն էլ նշանակում են «կառոյց, շինեաց»: Հայտարարությունը հանդուգն է և անհավատալի. այսպիսի մի երկար և դժվարահնչյուն բառ անփոփոխ մնալ յոթերորդ դարից ն. Ք. մինչև քսաներորդ դարը Ք. հ., իրոք լեզվագիտական հրաշք է»¹⁹⁰:

Բանավեճերի սիրահար հետազոտողը անմիջապես անցնում է այս բառերի քննությանը. ըստ նրա՝ խալդական արձանագրություններում կա մի բառ, որ կարդացվում է Si-di-i-is-tu-u-ni, և որի ենթադրական իմաստն է՝ *շինեց, կարգի բերեց*: Ա. Պայազատը, նրա կարծիքով, հայերեն բաժնում պատահմամբ թե դիտմամբ գրում է sidustuni, փոխանակ sidiistuni, բայց ռուսերենում ուղղում է իր սխալը: Առաջին դեպքում բառի մեջ նա տեսնում է ուտիերեն sid, որ օժանդակ բայի հետ՝ sid=besun, *քանդել* իմաստն ունի, և us, որ դարձյալ օժանդակ բայի հետ՝ us=besun կամ us=tesun, նշանակում է *փայտ* կամ «փայտեղեն անել»: Ն. Ադոնցը գրում է. «Երկուսը միասին, ուրմեն sid-us, որ համազոր է համարում է խալդական sid-ust-uni և պետք է որ նշանակե

¹⁹⁰ Ն. Ադոնց, Երկեր, Գ, Աբգար Պայազատի «Խալդերեն լեզվի բանալին», էջ 354:

նրա հաշվով, քանդվածը փայտով կառուցանել: Ավելի անհեթեթ թան դժվար է երևակայել»¹⁹¹:

Գիտնականը շարունակում է բառերի քննությունը՝ ամեն քայլում դրսևորելով ուտիերենի իր քաջիմացությունը և Ա. Պայազատի ստուգաբանությունների, մեղմ ասած, թերությունը: Նման հողվածներում ակներև է Ն. Ադոնց գիտնականի բանավիճային տաղանդը, անգամ՝ շանթող հումորը՝ տեղ-տեղ երգիծանքի հասնող: Նա հավելում է. «Հայ գեղջուկ սրամտությունը իր ստուգաբանական գյուտերն ունի. օր. մինիստր ministre բառը ռուսները առել են հայերից. մինիստր նշանակում է՝ մի՛ նստիր, որովհետև մինիստրը իրավունք չունի նստել թագավորի առաջ: Ցավելով պիտի նկատենք, որ պ. Պայազատի ստուգաբանությունները այս կարգի գյուտեր են...»¹⁹²:

Ն. Ադոնցը, հետամուտ ուտիերենի և խալդերենի տարբերությունների վերհանմանը, շարունակում է Ա. Պայազատի կողմից առաջ քաշված լեզվական մի շարք կետերի վերլուծությունը և ի հայտ բերում դրանց թյուր կողմերը: Նրա գնահատմամբ՝ ուտիերենում, ինչպես և հայերենում, հատկապես՝ խոսակցական լեզվում, հաճախադեպ է *անել՝ besun* բայը՝ *խաղ անել, վար անել, պատրիվ անել*, անգամ՝ օտար բառերի հետ՝ *քոմակ անել, հյուրմաթ անել* և այլն: Դիցուք՝ *քոմակ անել*-ը ուտիերենում կլինի *komag besun*: Ներկան կլինի՝ *komag+zu=ես+besa*: Հայերենում բառացի կստացվի *քոմակ ես անող*, որ նշանակում է՝ *ես քոմակ եմ անում*: Դու *քոմակ ես անում*=*komag+un (=դու)+besa*, նա *քոմակ է անում*=*komag+e (=նա)+besa*:

Անցյալ կատարյալի կազմության դեպքում նկատի է առնվում (*besun* բայի) կատարյալի ընդունելությունը՝ *bi՝ քոմակի արի՝ komag zu bi* և այլն:

Իսկական բայերը, Ն. Ադոնցի դիտարկմամբ, որոնք խոնարհվում են առանց *besun*-ի նման օժանդակների, օրինակ՝ բստել՝*artsesun*, կազմվում են՝ բայարմատին հավելելով դերանվանական հոդեր, ինչպես՝ *artsi-zu (=նիստ+ես)*= նստում եմ և այլն:

Խալդական սեպագիր արձանագրություններում, գիտնականի վկայմամբ, հաճախ պատահում են *-ubi et uni*-ի հանգող բանաձևեր, որոնցից *-ubi*-ն առաջին դեմքի ցուցիչն է, *uni*-ն՝ երկրորդ:

¹⁹¹ Նույն տեղում:

¹⁹² Նույն տեղում, էջ 358:

Այս դիտարկումներից հետո Ն. Ադոնցը նշում է, որ այսուհանդերձ, խալդերենում հայտնի չեն ո՛չ եզակի երկրորդ, ո՛չ հոգնակի առաջին և երկրորդ դեմքերը, և չնայած այս հանգամանքին՝ Ա. Պայազատը համեմատում է խալդերենի նշյալ անձանոթ դեմքերը ուտիերենի հետ՝ հիմք ընդունելով komag-zu-bi և artsi-ne բայերի –bi-ի և –ne-ի նմանությունը խալդական u-bi և u-ni վերջավորությունների հետ, մինչդեռ պարզ է, որ bi-ն ընդունելություն է besun բայի և նշանակում է *արած*, կիրառելի է բոլոր դեմքերի հետ, իսկ խալդական –bi-ն կամ ubi-ն առաջին դեմքի ցուցիչն է, ծագումը՝ անհայտ:

Ըստ Ն. Ադոնցի՝ կասկածելի է նաև arhiuruliani՝ *ընտանիք* և ուտիերեն arhiurulus՝ «ցեղնումեղը» բառերի համեմատությունը: Վերջին տարրը՝ -ulus, ըստ էության, թուրքերեն *ուլուխ*՝ *ընտանիք* բառն է, առաջինը՝ arhiur, թերևս, արաբական ohi՝ ուտիական –ur հոգնակի նշանով¹⁹³:

Ն. Ադոնցի ենթադրությունը հետևյալն է. «Կարիք չկա ուտիերենը համեմատել հին աղվան անձանոթ լեզվի հետ, ինչպես անօգուտ է գրավաստակ լինել խալդերենին մոտեցնելու խժբժանքով: Ուտիերենը ազգակից է իր մերձավոր հարևաններին, օր.՝ Ցախուրի, Ագուլի, Արչինի, Վայկուն: Շատ հավանական է, որ Արցախ, Ագուլիս, Հարճղավնի, Վայկուն աշխարհագրական անունները պահելու են երբեմն հին Ուտիքի շրջանում ապրող երեք ցեղերի հիշատակ: Արցախի և Ցախուրի կապը մեզ շատ հավանական է թվում: Նաև Աղահեճ, որ անտարակույս Լահիճ անունով հայտնի ցեղն է...»¹⁹⁴:

«Բյուզանդական արևելքի ռազմական սահմանեզրերում. հուսարներ, տրաբաններ, տեսնակներ» վերնագիրը կրող հոդվածում Ն. Ադոնցը ցույց է տալիս, թե ովքեր են վերոնշյալները: Նա ունի մի հոդված՝ «Ի՞նչ է հուսարը կամ ժամանակակից հունարենի օգտակարության մասին» վերնագրով: Պարզվում է՝ սլավոններեն *հուսար*-ը *բանդիտ* կամ *ավազակ* նշանակող, հունգարերեն հուզար-ի ստուգաբանումն է: Բացի դրանից՝ Ն. Ադոնցը նշում է նաև, որ սլավոններեն այս բառը ծագում է ոչ թե

¹⁹³ Ն. Ադոնց, Երկեր, Է, Եր., 2014, էջ 172-175:

¹⁹⁴ Նույն տեղում, էջ 177:

գերմաներեն hansa-ից, այլ պարզապես բյուզանդական *χασάριος*, *χασιάρος*, *χασσιάρος-ից...*¹⁹⁵:

Հայերը *Τραπεζίται*՝ տրապեզիտներին անվանում էին, ըստ Ն. Ադոնցի, *տեսնակ*: Հ. Գելցերը, ինչպես Ն. Ադոնցն է փաստում, գերադասել է *τασιάριοι* տարընթերցումը և ցանկացել է այս բառը մեկնաբանել իբրև հայերեն **տասնեակ**, ինչը, ըստ Ն. Ադոնցի, անհնար է, քանզի հայերեն բառն ունի *Τραπεζίτης*-ին կամ *κατάσκοπος*-ին համարժեք նշանակություն: Ն. Ադոնցը հակված է ենթադրելու, որ այստեղ ունենք *-ակ* ածանցը. *տեսուն-ակ=տեսն-ակ* (*տեսնակ= κατάσκοπος*, ինչպես *խաւս-նակ՝ խաւս-ուն-ակ-ից՝ «խոսող», «միջնորդ»,* ինչպես նաև «*աքաղաղ կամ սոխակ*»)¹⁹⁶:

Շարունակելով հասարակ անունների քննությունը՝ «Հայաստանի ոսկեհանքը» հոդվածում հայագետը նշում է, որ Պրոկոպիոսը հիշատակում է աշխարհագրական երկու կետ՝ *Bolon*, որ միշտ կոչում է *Phourion* «բերդ», և *Pharangion*, որ երբեք չի կոչում *բերդ*: Ն. Ադոնցը ենթադրում է, որ *Փարանգիոն*-ը, թերևս, հենց *հանք* է նշանակում և տալիս է համապատասխան ստուգաբանություններ՝ համեմատելով **farhangion**-ը հայ-իրանյան **հրահանգ** բառի հետ: Նա իրավամբ նկատում է, որ պարթևական *frahang* բառը հայերենում ի հայտ է գալիս իբրև *հրահանգ*, իսկ պարսկերենում՝ *farhang*, ինչպես որ պարթևական *frahat* անունը հայերենում՝ *Հրահապ*, պարսկերենում՝ *Farhad* կամ պարթև *framan*, հայերեն՝ *հրաման*, պրսկ.՝ *farman*:

Գիտնականը նշում է, որ *Farhang* շատ իմաստներ ունի, հնչյունական նույն կազմով այս բառն ի հայտ է գալիս նաև Յ. Վուլլերսի պարսիկ-լատին բառգրքում՝ *canalis subteraneus*, ինչպես նաև Յ. Յենկերի բառգրքում՝ “*Unterirdischer Gang oder Canal*”: Նա հավելում է, որ պարսիկներն իր ժամանակաշրջանում հանքին տվել են *kan* անունը, որ արմատակից է հայերեն **ական** բառին և նշանակում է *ստորերկրյա կամ գետնափոր անցք*՝ նման՝ *Ֆարհանգ*-ի, ինչպես նաև *գետնափոր ջրանցք*, որ էջմիածնում *քանքան* են կոչում: Նույն արմատից է նաև *kahriz*՝ *քահրիզ* բառը՝ ջրանցքի իմաստով, այլև *farghan*՝ ջրանցք: Եվ Ն. Ադոնցը հավարտ գրում է. «Արդ՝ եթե *kan* «գետնափոր անցք», նշանակում է միևնույն ժամանակ և *հանք*, ինչու՞

¹⁹⁵ Ն. Ադոնց, Երկեր, Գ, Բյուզանդական արևելքի ռազմական սահմանագրերում. հուսարներ, տրաբաններ, տեսնակներ, էջ 398:

¹⁹⁶ Նույն տեղում, էջ 401:

farhang=գետնափոր անցք, չէր կարող գործ ածվել նմանապես հանքի մտքով: Անշուշտ, կարող էր: Դարձյալ պարսկերեն kani նշանակում է *հանածո*, նույն իմաստը կարող ենք ենթադրել և farhang ձևի համար: Ավելացնելով հունական *on* վերջավորությունը՝ կստանանք farhangion. հնարավոր է նաև, որ *ion* վերջավորությունն ամբողջապես հունական է»¹⁹⁷:

Երկերի Բ հատորում Ն. Ադոնցն ունի մի հոդված, որտեղ քննում է Ն. Ակինյանի լեզվաբանական մի քանի դատողություններ՝ սուր քննադատության ենթարկելով դրանք: Այսպես, Ն. Ակինյանը հրատարակել է հրապարակախոսական մի նշխար՝ «Նկարագիր կարգաց ի բանից Եզնկան» վերնագրով: Ն. Ադոնցը նշում է, որ իրեն գրվածքի այլ վերնագիր է հայտնի՝ «Նշանագիր կարգաց բանից Եզնկան», այսինքն՝ Ն. Ակինյանը **նշանագիր**-ը դարձրել է **նկարագիր**: Ն. Ադոնցը հայտնում է, որ նշանագիր-ը պատկանում է Եզնիկ Երեցին, որի անունը նշված է գրվածքի սկզբում և վերջում, և հեղինակը VII դ.-ից է՝ ականատես, ըստ Ն. Ադոնցի, 618 թ. կատարված մի իրողության:

Ն. Ակինյանն էլ իր հերթին վստահ է, որ Եզնիկն ապրում էր ոչ VII դարում, և որ նա Եզնիկ Կողբացին է: Ըստ այսմ՝ մի քանի սրբագրումներ է կատարում՝ *նշանագիր*-ը դարձնելով *նկարագիր*, *կարգաց բանից*-ը՝ *կարգաց ի բանից*:

Լեզվական ցանկացած երևույթ ամենայն խորությամբ քննող և իր տեսակետները միայն փաստերի վրա կառուցող Ն. Ադոնցի հաղորդմամբ՝ Ն. Ակինյանը *նշանագիր*-ը *նկարագիր* է դարձրել ըստ այնմ, որ նշանագիր-ն ինքնին չի գործածվել դասականների կողմից, իսկ *նշանագիրք* կնշանակում էր *գիր*, *փառ*: Հայագետը շուտափույթ զգուշացնում է, որ նախ պետք է ապացուցել գրվածքի՝ «դասականաց» կարգին պատկանելը, ապա մտածել սրբագրության մասին: Նա վստահ է, որ Ն. Ակինյանը սխալվում է՝ գրելով, որ նշանագիր-ը եզակի ձևով գոյություն չունեի դասականների շրջանում: Ըստ Ն. Ադոնցի՝ սխալ է կարծել, թե *նշանագիրք* միմիայն *փառ* է նշանակում. այն բազմիմաստ բառ է: Ն. Ադոնցը նկատում է, որ Ն. Ակինյանը Կորյունի երկում երկու տեղ պատահել է *նշանագրոյ* ձևին ու շտապել սրբագրել *նշանագրոց* և անտեսել այն բոլոր կետերը, որտեղ հնարավոր չէր սրբագրել,

¹⁹⁷ Ն. Ադոնց, Երկեր, Ա, Հայաստանի ոսկեհանքը, էջ 150:

դիցուք՝ «զնշանագիրն աստուածատուր»: Հարցին հետամուտ գիտնականն իրեն հատուկ խանդավառությամբ քննում է Կորյունի երկը՝ գտնելու *նշանագիր* բառի գործածության դեպքեր, և անմիջապես փաստում, որ Կորյունը ս-ն կիրառում է հաճախ ոչ որպես հոգնակի հայցականի ցուցիչ, այլ՝ եզակի ուղղական՝ ս հոդով ինչպես այս նախադասության մեջ՝ «...որպիսի արամբ այնպիսի նորոգատուր աստուածեղեն շնորհս երեւեցա», այսինքն՝ *շնորհս այս* և այլն: Ընդհանուր առմամբ՝ Կորյունը *նշանագիր* բառը գործածում է և՛ եզակի, և՛ հոգնակի թվով:

Զուտ լեզվաբանական տեսակետից քննելով հարցը՝ Ն. Ադոնցը նշում է, որ *նշան*-ը՝ հունարեն *σημα*, լատիներեն՝ *signum*, բոլոր լեզուներում նշանակում է *գիր, տառ*, որովհետև տառը մի նշան է: Ն. Ադոնցի վկայմամբ՝ *նշանախեց* բառը Ոսկեբերանի մեկնության մեջ ի հայտ է գալիս *գրախեց* ձևով:

Գիտնականը նշում է, որ ամեն նշան տառ չէ: Բառիս լայն առումը մասնավորելու համար կցել են *գիր*-ը և կազմել *նշանագիր* նոր բառը՝ γράμμα: Նախկինում, ինչպես Ն. Ադոնցն է փաստում, հունարեն բառին համապատասխանում էր *գիր*-ը, որ գործածում էին եզակի ձևով, որպեսզի չշփոթվի *գիրք* բառի հետ:

Ն. Ադոնցը նկատում է, որ հայերենն ունի բարդ բառերում հոլովական հիմքը փոխելու հատկություն, ինչպես՝ *գործ, գործոյ, գործոց*, բայց *բարեգործ, բարեգործի, բարեգործաց* և այլն, նույն սկզբունքով՝ *գիր, գրոյ, բայց արձանագիր, արձանագրի* և այլն: Այսինքն՝ նշան= գիր, նշանա-գիր= գրագիր¹⁹⁸:

Նշյալ իմաստներից բացի, ըստ նրա, *նշանագիր*-ն ունի նաև *նշանագրություն, գիր, թուղթ, գրվածք* իմաստները: Այսպես, Ոսկեբերանից մեջբերում կատարելով, գիտնականը զարմանում է, որ Ն. Ակինյանը չի նկատել *նշանագիրք* բառի վերոնշյալ իմաստը: Մեջբերումը հետևյալն է. «...պարտ և պատշաճ էր մեզ ոչ կարօտանալ ի նշանագիրս գրելոցն օգնականութեան»¹⁹⁹:

Ն. Ակինյանը հոշակում է, ըստ Ն. Ադոնցի, որ *նկարագիր*-ը դասական առումով նշանակում է *պատմություն, գրություն*: Ն. Ադոնցը գրում է. «Ս. Գիրքը, դասական լեզվի մայրը, չգիտե բառիս Ակինյանական նշանակությունը: Հիշվում է երկու անգամ՝

¹⁹⁸ Ն. Ադոնց, Երկեր, Բ, Հայր Ն. Ակինյանի պատասխանին պատասխան, էջ 202-209:

¹⁹⁹ Հմմտ. նույն տեղում, էջ 209:

«նկարագիր տան»= διαγραφή, և «նկարագիր էութեան»= χαρακτήρ της υποστάσεως»²⁰⁰:

Երրորդ նշանակությամբ, ըստ Ն. Ադոնցի, գործածվում է Ս. Գրքի նախադրությունների և Ոսկեբերանի մեկնությունների մեջ: Այստեղ *նկարագիր* են կոչված Ս. Գրքի բնագրի կտորները, ընթերցվածները, իսկ Ոսկեբերանի մոտ՝ Ս. Գրքի այն տները, որ իր մեկնության նյութն են:

«Հայկազեան Բառգիրք»-ը բերում է Ոսկեբերանից մի ուրիշ վկայություն՝ առնված Գաղատացվոց թղթի անտիպ մեկնությունից՝ «նկարագիրն ոչ միայն զայն գուշակէ որ երևինն, այլ՝ և այլ ինչ բազում»²⁰¹: Ն. Ադոնցը նշում է, որ հայ թարգմանության նկարագիր-ը համապատասխանում է հույն լեզուին, իսկ Ն. Ակինյանը տեղյակ չէ, որ *ի* լեզուին կամ *ի* լեզուին *ստի*-ն հին մեկնաբանական գրականության մեջ հատուկ նշանակություն ունի, ընդունված եզր է, մի տեսակ *terminus technicus*, որով, Ն. Ադոնցի հաղորդմամբ, կոչվում են Ս. Գրքի բնագրից առած վկայությունները²⁰²:

Ն. Ակինյանին հետևելով՝ «**վարումն**» բառը Ն. Ադոնցը համեմատում է Եփրեմի՝ «դպրութիւն՝ վարումն աւուրց»-ի հետ, և կարծելով, որ Եզնիկ Երեցի մոտ «վարումն» նույն բառն է, ինչ որ Եփրեմի, փորձել է սկզբում այն ըմբռնել երկու իմաստով՝ *վարումն իշխանութեան* և *վարումն կենաց, պատմություն և վարք*, բայց հետո գրում է. «Այժմ տեսնում ենք, որ իզուր ենք հավատ ընծայել հ. Ակինյանին]: Եզնիկի «վարումն» անկախ է Եփրեմից: «Վարումն դրոշմել» նշանակում է «վարումն բանից դրոշմել», այսինքն՝ «վարել զբանս և դրոշմել», որ ուրիշ բան չէ, քան մեկնություն խորագրի՝ «Նշանագիր կարգաց բանից», որ է նշանագրել «զկարգս բանից» կամ «կարգաւ զբանս»²⁰³: Ըստ այսմ՝ Ն. Ադոնցը վստահ է, որ «*վարումն*» նշանակում է միմիայն «*վարումն բանից*», իսկ *դրոշմել*-ի հետ նշանակում է *պատմել*:

«**Փոքր ի շատէ**» բառի առթիվ Ն. Ակինյանը, ինչպես Ն. Ադոնցն է գրում, «կարկուտ է թափում իր գլխին», հանդիմանում, որ կարդացած չլինելով Ս. Գիրքը և Եզնիկ, դասական հայերենի մասին դիտարկումներ է գրում: Ն. Ադոնցը նշում է, որ հայերենի դասական շրջանի մասին խոսելիս աչքի առաջ պետք է ունենալ

²⁰⁰ Նույն տեղում, էջ 212-213:

²⁰¹ Նույն տեղում, էջ 214:

²⁰² Նույն տեղում, էջ 214:

²⁰³ Նույն տեղում, էջ 219:

հունաբանություններն ու ռամկորենի տարրերը, և իրեն թվացել է, թե «փոքր ի շատէ»-ն ժողովրդական դարձվածք է, քանի որ Հին Կտակարանում այս բառը պատահում է միայն մեկ անգամ՝ հունարեն μικρόν բառի դիմաց, իսկ Պողոսի թղթերում երևան է գալիս որպես απο կամ εκ μέρος ձևերի թարգմանություն և նշանակում է «մասամբ, մասամբ իւիք»²⁰⁴:

Ն. Ադոնցը կարծել է, թե նմանատիպ սրբագրման արդյունք է «փոքր ի շատէ»-ն՝ ի մասնէ»-ի փոխարեն, որը, ըստ նրա, դիպվածաբար պահպանվել է Ոսկեբերանի երկում²⁰⁵:

Ն. Ակինյանի կարծիքով՝ «**թարգմանել**» բառը՝ «հորինել» իմաստով, առաջին անգամ գործածել է Մ. Հերացին 1184 թ., հետո՝ Սմբատ Սպարապետն իր Տարեգրքում, 1272 թ.: Բացի սրանից՝ նա կարծում է, որ այս տարիների միջև 1254 թ. Վարդան գրիչը ընդօրինակել է ձեռագիրը՝ գործածելով նույն բառը՝ նույն իմաստով: Ն. Ադոնցը ժխտում է Ն. Ակինյանի այս կարծիքն այն հիմնավորմամբ, որ Մ. Հերացին, ըստ նրա, վկայում է, որ իր գործը քաղել է արաբ, պարսիկ և հույն գրքերից, հետևաբար իրավունք ունեւր ասելու «հաւաքեցի և թարգմանեցի ի հայ բարբառ»: Ն. Ադոնցը գրում է. «Օգտվել է նաև հայ նյութերից և կամեցել այս բոլորից «առնել գիրքս», ուստի և ասում է. «թարգմանեցաւ և գրեցաւ գիրքս»: «Թարգմանել» գործ է ածած իր բուն իմաստով, և ոչ թե որպես «յօրինել»²⁰⁶:

Գիտնականը հավելում է, որ հների մոտ *թարգմանություն* նշանակում է նաև *մեկնություն*: Թվում է, թե այս իմաստը պարզ հետևություն է հունարենի, որտեղ ερμηνευσ նշանակում է *մեկնել* և *թարգմանել*:

Մյուս հետաքրքիր ստուգաբանությունը վերաբերում է «**արբանեակ**» բառին: Եզնիկ Երեցը, Ն. Ադոնցի հաղորդմամբ, հիշատակում է Սահակի և Մեսրոպի աշակերտներից Ղևոնդին, Արծանին, Կորյունին և Եզնիկին՝ անվանելով նրանց «արբանեակք նոցուն լուսաւոր հանդիսիցն»: Ն. Ադոնցը գրում է. «Եզնիկի անունը պարզապէս աքացում է հ. Ակինյանի] մոլար կարծիքի դեմ և ապացուցանում, որ **Նշանագրի** հեղինակ Եզնիկ Երեցը չի կարող նույնը լինել Կողբացու հետ: Հ[այր]

²⁰⁴ Հմմտ. նույն տեղում, էջ 220:

²⁰⁵ Հմմտ. նույն տեղում, էջ 222:

²⁰⁶ Նույն տեղում, էջ 223:

Ա[կհնյան] փորձում է վերացնել այս խոչընդոտը, հայտարարելով այն անհարազատ, իբր թե «արբանեակ և հանդէսք բառերը գործ են անվաճ ոչ-դասական առումով»: Այստեղից, կարծեմ, մի բան է հետևում, որ Նշանագրի հեղինակը չէ կարող լինել դասական Կողբացին...»²⁰⁷:

Ն. Ադոնցը խիստ ուշագրավ մի մեջբերում ունի Շուշվա թեմական դպրոցի ուսուցիչ Ս. Գյուլզադյանից՝ **գերեզման** բառի ստուգաբանության առթիվ: Ըստ նրա՝ բառը բաղկացած է երեք բաղադրիչներից՝ *գահ*, որ նշանակում է «բարձր տեղ», օրինակ՝ *գահավիժել*, *րեզ* կամ *րոյզ*, որ պահպանվել է հայերենում, օրինակ՝ *ասպարեզ* բառում և համազոր է «արձակել», «ձգել» բայերին: Այս բառի հայկական տառադարձումն է, ըստ նրա, «լոյծ-լուծանել=քանդել, արձակել», իսկ *ման*-ը *մարդ*, *մանուկ* բառն է:

Այսպես, *գերեզման* կամ *գահրեզման* նշանակում է *բարձրից ձգել մարդուն, կամ տեղ, ուր ձգում են մարդուն բարձրից*: Այս բացատրությունը Ս. Գյուլզադյանը հաստատում է արիական մի սովորությամբ, որով մեռելներին աշտարակներից ձգում էին ցած, փոսի մեջ...²⁰⁸:

Ըստ Լ. Հովհաննիսյանի՝ տարբեր լեզվամտածողությամբ հանդես են գալիս որոշ խորհրդանիշներ, որոնք կապվում են թաղման էության ընկալման և ծիսակարգի հետ, և հայերենի տվյալները թույլ են տալիս առանձնացնել մի քանի «բառ-խորհրդանիշներ»: Թաղման հասկացությունը, ի թիվս այլևայլ «բառ-խորհրդանիշների», արտահայտվում է նաև *գերեզման* + *որևէ բայ* կառույցով՝ «Երբ ի մահիճսն ելանես, համարեա թէ ի գերեզման ես իջեալ» (Եզն., 305)²⁰⁹:

Լ. Հովհաննիսյանը նաև կարծում է, որ գրաբարում *խորել* և *թաղել* բառերը հոմանիշներ են, բայց մատենագրության մեջ *խորել*-ի՝ «մահացածին թաղել» իմաստով գործածության չի հանդիպել, ապա հավելում է. «Երևի չպետք է անվերապահորեն ժխտել **խորել/խորանալ** նշված իմաստով գործածությունը գրաբարում (այլ բան է, որ

²⁰⁷ Նույն տեղում, էջ 225:

²⁰⁸ Ն. Ադոնց, Երկեր, Գ, էջ 385:

²⁰⁹ Հմմտ. Լ. Հովհաննիսյան, Գրաբարի բառապաշարի իմաստային խմբերի քննություն, Եր., 2008, I մաս, էջ 42:

չի վկայված), մանավանդ որ որոշ բարբառներ ունեն **խոր խորանալ** «մեռնել», «թաղվել» անեծքը²¹⁰:

Գերեզման բառի՝ Ս. Գյուլզադյանի բացատրությունը՝ *բարձր տեղից մարդուն ձգել կամ տեղ, ուր ձգում են մարդուն բարձրից*, համապատասխանում է Լ. Հովհաննիսյանի ենթադրությանը, թե *խորել*-ն ունի *խորանալ* իմաստով գործածություն: Տավուշի բարբառում նույնպես *խորել* բայն ունի «թաղել» իմաստով գործածություն:

«Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում» երկում Ն. Ադոնցը քննում է *մուր, սակ, բաժ, հաս* և *հարկ* բառերը: Սրանցից **սակ**-ը և **բաժ**-ը, ըստ նրա, հաճախ միասին գործածվում են պարսկական գրականության մեջ *sak* և *baž* կամ *sāv* և *baž* ձևերով: Այս ձևերի զուգակցումը հատկանշական է նրանով, որ, ինչպես գիտնականն է փաստում, ցույց են տալիս հարկային որոշակի նորմաներ: Նրա համոզմամբ՝ *sak*-ը և *baž*-ը բուն նշանակությամբ համընկնում են *χαραδζ*-ին և *gezith*-ին՝ նշանակելով *հողային հարկ* և *գլխահարկ*: Ն. Ադոնցը գրում է. «Այս արտահայտությունների հոմանիշ լինելը, թերևս, պետք է բացատրել նրանով, որ նրանցից առաջինները վերաբերում են ավելի վաղ, իսկ մյուսները՝ ավելի ուշ ժամանակների, կամ էլ որոշ տերմինները սովորական էին կայսրության մի մասում, իսկ մյուսները՝ մյուս մասերում»²¹¹:

Ն. Ադոնցի համոզմամբ՝ *baž*-ը, հայերեն՝ *բաժ*, նշանակում է *բաժին*, ինչպես որ հունարեն *δασμος*-ը՝ *δαίωμα*-ից՝ բաժանել=բաժին և հարկ: *Baži* էր կոչվում, գիտնականի հաղորդմամբ, այն տուրքը, որ Աքեմենյանները գանձում էին հպատակ երկրներից: Կյուրոպեդիայում Կյուրոսի ստացած հարկերը նշելու համար գործածվում է *δασμός* ձևը, որ արտահայտում է պարսկերեն *baži*-ի իմաստը՝ «Արմատական *bagā*-ից հապավված *bhaga*-ից *zend*. *Baž*: Մեր կարծիքով նրանից է ծագում նաև *bahra-k*-ը: Իրանագետները *bahra-k*-ը մոտեցնում են ավեստական *bax'ra*-ին, որ նշանակում է հարկ կամ սնունդ»²¹²: Ն. Ադոնցը հավելում է, որ գերմանացի լեզվաբան Լ. Հորնը իր բառարանում նշյալ արմատը ծագած է համարում ավեստական *hu-baδra*-ից, որ նշանակում է *բախտավոր*: Այս երկու ձևերն էլ, ըստ Ն. Ադոնցի, ենթադրում են *bag* արմատը *δρα*

²¹⁰ Նույն տեղում:

²¹¹ Ն. Ադոնց, Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, էջ 538:

²¹² Նույն տեղում:

ածանցով և baž-ի ու անցյալ դերբայ baxta-ի՝ *բախտ*-ի նման կարող են նշանակել *հարկ* և *ճակատագիր*, *բախտ*:

Հր. Աճառյանը նույնպես *բաժ*-ին պահլավական ծագում է վերագրում՝ bāž՝ *մաքս* բառից²¹³: Գ. Բ. Ջահուկյանը նույնպես շեշտում է բառի իրանական ծագումը²¹⁴:

Սակ՝ sak տերմինը (պարսկ. sâ, sâw), Ն. Ադոնցի համոզմամբ, կապ ունի հայերեն *հաշիվ*, *սակ-արկ-ել* բառերի հետ: Վերջինիս իրանական, նույնիսկ արիական ծագումը, Ն. Ադոնցի կարծիքով, տարակուսելի է: Ըստ նրա՝ այս շարքին է դասվում նաև *սակավ*-ը՝ *քիչ*, *հաշվենկատ*, *խնայողությամբ* իմաստներով, ինչպես նաև *սակս*-ը, որ նշանակում է *համար*, *ի պետք*:

Հայերեն **հարկ**-ին Ն. Ադոնցը ազգակից է համարում նաև *ḫaradž*-ը՝ պարսկերեն *ḫarag*-ից՝ կապելով վերջինս այն արմատի հետ, որից ծագում է հայերեն *հերկ-ել*-ը:

Հր. Աճառյանը *հարկ*-ը դիտարկում է իբրև *հար*- արմատից ծագած բառ՝ *կ* աճականով և հղում է տալիս Ն. Ադոնցի քննությանը, որտեղ վերջինս *հարկ*-ը աղերսում է *խարաջ* արաբական փոխառությանը²¹⁵: Գ. Բ. Ջահուկյանը նույնպես *հարկ*-ը բխեցնում է *հար*-ից՝ վերջինս բացատրելով որպես «խփում, զարկում»²¹⁶:

Gezith-ը տառ առ տառ համապատասխանում է հայերեն **գզաթ**-ին՝ *գզել* արմատից (սեմ. giza՝ սանրել ալիքները, այստեղից էլ՝ gizath), որը, ըստ Ն. Ադոնցի, նշանակում է *բրդի չափ*:

Ն. Ադոնցը ենթադրում է, որ այս բառը *հարկ*ի իմաստ ստացել է այն պատճառով, որ մի ժամանակ որպես *հարկ* տալիս էին մի գզաթ բուրդ. սկզբնապես բոլոր *հարկերը* վճարում էին մթերքով:

Եթե sak-ի իրանական ծագումն անվիճելի լիներ, Ն. Ադոնցի կարծիքով, հնարավոր կլիներ ընդունել, որ sak-ը, baž-ը, *ḫaradž*-ը, gezith-ը հոմանիշներ են՝ մշակույթի արիական և սեմական գոտիներում միևնույն գաղափարներն արտահայտող, և Ն. Ադոնցը չի բացառում, որ *հայկական* միջավայրում դրանց համարժեք արտահայտությունները լինեին *մուտք*-ը, *հաս*-ը: Նույն ձևով էլ, ըստ նրա, bahrak-ի համարժեքն է *պտուղ*-ը:

²¹³ Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 1, էջ 380:

²¹⁴ Գ. Բ. Ջահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 111:

²¹⁵ Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 3, էջ 60:

²¹⁶ Գ. Բ. Ջահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 450:

Գիտնականը նշում է, որ *բաժ*-ը, ըստ էության, հողային հարկն է, *խարաջ*-ը՝ գլխահարկը, թեպետ պետք է նկատի առնել, որ նույն տերմինները կարող էին գործածվել տարբեր իմաստներով՝ կախված տեղից և ժամանակից: Նրա հաղորդմամբ՝ *խարաջ*-ը արաբների շրջանում նշանակում էր *հողային հարկ*, մինչդեռ հրեական գրավոր աղբյուրներում վերջինս կոչվում էր *tasq*, իսկ *խարաջ*-ը գլխահարկի իմաստ ունի:

Ն. Ադոնցի՝ հարկանունների քննության շրջանակում խիստ ուշագրավ է նաև հետևյալ ստուգաբանությունը՝ եվրոպական *corvées=corrogata opera*, ռուսերեն՝ *барщина*, հայերեն՝ բեկար, *bekār*: Այս բառը, Ն. Ադոնցի վկայմամբ, առաջացել է *bekār āmadan՝աշխատանքի գնալ* արտահայտությունից, և ցայժմ էլ ժողովուրդը *барщина*-ն օգտագործում է **կոռ**-ի իմաստով: Իրականում, ըստ նրա, այդ պարտավորությունը կոչվում էր *kār*, հայերեն՝ *կոռ*, *աշխատանք*, երբեմն միասին՝ *կոռ ու բեկար*²¹⁷:

Հր. Աճառյանը *կոռ*-ը բացատրում է որպես «պարտադիր ձրի աշխատություն»²¹⁸: Գ. Բ. Զահուկյանը *կոռ*-ը երրորդ իմաստով դիտարկում է իբրև «հարկադիր աշխատանք»: Ըստ նրա՝ հազիվ թե այն կապ ունի **g^uor-s-*՝ **g^uer-* «ծանր» արմատի հետ, որից հայերեն *կրել*, *կիր* ձևերն են առաջացել²¹⁹: Ն. Ադոնցի տեսակետը, ըստ որի՝ *կոռ*-ը իրանական ծագում ունի, պաշտպանում է նաև Վ. Զ. Պետրոսյանը՝ փոխառության այսպիսի ուղի ենթադրելով՝ «...նախ հայերենը փոխառել է բեկար (*bekār*) թեք ձևը, ապա ժողովրդախոսակցական լեզվում բեկարից բե (*be<ba*) նախադրության անջատումով առաջացել են կար//կառ ամփոփ (ըստ պարսկերենի՝ ուղիղ) տարբերակները...»²²⁰: Սկզբնապես, ըստ նրա, բեկար և կար//կառ ձևերը գործածվել են իբրև նույնանիշներ, և աստիճանաբար այդ բառերով սկսել են անվանել տարբեր հարկատեսակներ, որն էլ խթանել է, որ «կար//կառ»-ը հնչույթային կազմով ավելի տարանջատվի «բեկար»-ից՝ տալով «կոռ»:

Ն. Ադոնցի նամականու մեջ գտել ենք արժեքավոր ստուգաբանություններ և դիտարկումներ: Հատկանշանակ է Ա. Չոպանյանին գրած նամակը, որտեղ, անդրադառնալով *յագարփուշտ* բառի ստուգաբանությանը, նա հստակ նշում է, որ այս

²¹⁷ Ն. Ադոնց, Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, էջ 538-539:

²¹⁸ Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 2, էջ 637:

²¹⁹ Գ. Բ. Զահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 420:

²²⁰ Վ. Զ. Պետրոսյան, Ընդհանուր և հայ լեզվաբանության հարցեր, Եր., 2015, էջ 327:

բառը կազմված է երկու բաղադրիչից. առաջինը թռչնանուն է, որ այլ կերպ կոչվում և գրվում է *աքար*: Տարբերությունը, ըստ գիտնականի, բարբառային է՝ արևմտյան և արևելյան, կամ՝ հին ու նոր, ինչպես՝ *թագավոր* և *թաքավոր*, *ագի* և *աքի* և այլն: «Ինչ կվերաբերի **փուշտ** բառին, կարծեմ՝ Դուք մոտեցած եք ճշմարտության, միայն թե հղելու է ավելի **բուշտ**, **բշտիկ** (հավանորեն մերձ փամ-փուշտին)՝ **ուռուցք**, **ուռած** նշանակությամբ... Այս մեկնությամբ **գայլագռավը** կուշտ ուտելուց հետո պարծենում է, որ դարձել է **աքար փուշտ՝ (հ)ագար բուշտ՝ «ուռած ագար թռչուն»**: Երևում է՝ **ագար** թե **աքար** մեծ և գեր թռչուն է»²²¹:

Այս բաժնում առանձնակի անդրադառնանք Հր. Աճառյանի «Հայոց լեզվի պատմություն» աշխատության վերաբերյալ Ն. Ադոնցի չափազանց ուշագրավ դիտարկումներին: Թորգոմ արքեպիսկոպոս Գուշակյանին գրած նամակում Ն. Ադոնցն իր կարծիքն է հայտնում վերոնշյալ երկի վերաբերյալ՝ սկզբում դրվատանքի խոսքեր գրելով՝ հետայդու սահուն անցնելով իր նկատառումներին. «Շնորհիվ ներկա աշխատության ունինք այժմ մեր առջև հայ լեզվի պատմական հասակը իր զարգացման և կամ կյանքի բոլոր շրջաններում...»²²²: Խոսելով Հր. Աճառյանի մատնանշած բառամթերքի վիճակագրության մասին՝ Ն. Ադոնցը նկատում է, որ պետք է ձեռնպահ մնալ քանակական սահմանափակումներից, քանի որ, ըստ նրա, բացեր կան գրեթե բոլոր բառախմբերում: Դիցուք՝ բնիկ բառերի շարքում առաջին իսկ հայացքից նկատելի է այնպիսի բառերի բացակայություն, ինչպիսիք են՝ *աղեղն*, *թամբ*, *պիրուղ* և այլն: Իրանական խմբից պակասում են, օրինակ, *հրամանապար*, *խորավարան* և այլ բառեր: Իսկ մասնավոր դեպքերից հիշատակելի են հատկապես հետևյալները. Հր. Աճառյանը *բոկեղ*-ը դիտարկում է որպես վրացական փոխառություն, մինչդեռ, ըստ Ն. Ադոնցի, հունարեն Βουχέλλος՝ *կլոր հաց* բառն է:

Սահմի, *հոռի* բառերը, Ն. Ադոնցի համոզմամբ, ոչ մի կապ չունեն վրացերեն *օրի* և *սամի*՝ «երկու», «երեք» բառերի հետ, ինչպես ենթադրել է Ք. Պատկանյանը և ընդունել Հր. Աճառյանը, այլ հին ասորերեն Airu-ն, Simanu-ն, որ երկրորդ և երրորդ ամիսների անուններն են: Բացի դրանից, քաջ իմանալով վրաց ամիսները, Ն. Ադոնցը վստահաբար հայտնում է, որ նրանցում ո՛չ *օրի*-ի, ո՛չ *սամի*-ի հետքեր կան:

²²¹ Ն. Ադոնց, Երկեր, Է, էջ 127-128:

²²² Նույն տեղում, էջ 157:

Գալաթոս «որմնադիր» բառը ևս, ըստ Ն. Ադոնցի, վրացական ծագում չունի, այլ Գաղատացի է նշանակում, որը ցույց է տալիս, որ Գաղատացիք հնում հայտնի են եղել որմնադրության արհեստում:

Հր. Աճառյանի ստուգաբանությունների քննության համատեքստում Ն. Ադոնցն անցում է կատարում հայերենի և փոյուգերենի առնչություններին՝ շեշտելով, որ թեպետ փոյուգերենը ոչ թե *saten*, այլ *centum* լեզվախմբին է պատկանում, և երկու լեզուների միջև տարբերությունը կարծես մեծ է, մյուս կողմից, սակայն, պարզում է, որ հնչյունական լուրջ ընդհանրություններով են կապվում երկու լեզուները, հատկապես *mutaiter consonantique*-ն, այսինքն՝ «միջակների լերկացումը»: Բացի հնչյունաբանականից՝ հայագետը նշում է. «Հայերենը կապվում է նաև թուխարերենի հետ, և այս կարևոր է: Ինձ թվում է, որ այս կապը մեզ հասկանալի պիտի դարձնե Թուխարք բերդի կոչումը *Sajproun*, ինչպես և *Snoh* (ընդգծումն իմն է- Վ. Բ.) կոչված ժողովուրդի ինքնությունը և թերևս մի նոր վարկածի դուռ պիտի բաց անե Մամիկոնյանների ծագման ավանդության»²²³:

²²³ Նույն տեղում, էջ 159-160:

3.2. Ն. ԱՂՈՆՑԻ ՀՆՁՅՈՒՆԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ԲԱՌԱՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԸ

Ն. Աղոնցի քերականագիտական, լեզվաբանական աշխատանքները ներկայացված են Երկերի յոթհատորյակի Գ հատորում: Այդ ուսումնասիրություններից է «Գրական նշմարներ լեզվական-ուղղագրական» հետազոտությունը, որտեղ շարադրված են լեզվի հին ու նոր փուլերի փոխհարաբերության վերաբերյալ գիտնականի մոտեցումները. «Հին լեզվից շատ բան անցել է նորին, շատ բան էլ քարացել, մեռել է: Ասել՝ որ մեռածից ոչինչ չի կարելի կամ պետք չէ կենդանացնել՝ թերմտություն է: Մեր բարձր ձգտումը պիտի լինի հանել փլատակներից փայլուն գոհարները, և հին լեզվական գանձը գործադրել նոր լեզվի շինության համար... Առաջադիմել միշտ չի նշանակում հինը մոռանալ. ճշմարիտ առաջադիմությունը նման է մի փախստականի, որ վազելիս անդադար հետ է նայում»²²⁴: Արդի գրական լեզուն, ըստ Ն. Աղոնցի, ճիշտ է, հասունացել է գրաբարի հիմքի վրա, բայց դժբախտաբար առաջընթացի սխալ ուղի է ընտրել, որովհետև բավական չէ գրաբարից փոխառություններ անել, պետք է աշխատել նաև փոխառված բառերը աշխարհաբարացնել: Այս մեջբերման մեջ հստակ երևում է Ն. Աղոնցի հետազոտողի դիալեկտիկական մոտեցումը առաջադիմական պահպանողականությանը, որի ջատագովն էր մեծ հայագետը կյանքի բոլոր բնագավառներում:

Մի ըստմիոջե անդրադառնանք Ն. Աղոնցին մտահոգած լեզվական խնդիրներին: Այսպես, նա ունի մի նամակ՝ Ուղղագրական և տառերի բարեփոխության հանձնաժողովին ուղղված, որտեղ գրում է. «Խորթ, նորալուր ուղղագրությունը, որ քննելու է կոչված Հանձնաժողովը, խորշելի է ամենեն առաջ նորանով, որ մի մեծ և անտեղի խրամատ է բաց անում, հին և նոր գրական ճյուղը կտրում է իր բնից և վտանգում նրա գոյությունը»²²⁵:

Գիտնականը քննադատում է 14-րդ կետը, որ առավելություն է տալիս *վ* (վևին) ընդդեմ *ւ* (ւյուն)-ի և *ու*-ի: Նա ապօրինի է համարում այս աչառու «վևասիրությունը»: Խոտելի է համարում նաև 15-րդ կետը, որտեղ առաջարկվում է *ոյ* երկձայնը ընդլայնել

²²⁴ Ն. Աղոնց, Երկեր, Ա, Գրական նշմարներ լեզվական-ուղղագրական, էջ 310:

²²⁵ Ն. Աղոնց, Երկեր, Գ, Ուղղագրական եվ տառերի բարեփոխության հանձնաժողովին, էջ 411:

ույ: Ն. Ադոնցը սրտնեղած գրում է. «Այդ ի՞նչ բանավոր հիմք կա հին լոյսը փոխել լույսի և ինչ առավելություն...»²²⁶:

Այս և նման այլ մի քանի նկատողություններից հետո հայագետը գրում է. «Ինչպես ամեն մի լեզվում, մանավանդ զառամյալ լեզուներում, գրաբարի մեջ ևս կան անհարթություններ, շեղումներ ուղղագրական կանոններից: Նրանցից շատերն են անցել ժամանակակից աշխարհաբարին: Ձգտել կոկել ամեն մի անհարթություն, որ իր պատմական նստվածքն ունի, վտարել այն, ինչ որ խոչընդոտ է թվում, նշանակում է կենդանի լեզուն հասցնել արհեստական վոլապյուկի տափակության...»²²⁷:

Նույն նամակում տառերի ձևի բարեփոխության մասին Ն. Ադոնցը եզրակացնում է. «Մեր գրերի գլխավոր թերությունը եվրոպականի հետ համեմատած այն է, որ բավականին մարմնեղ չեն, փոքր իրան ունեն և երկայն վերջավորություններ»²²⁸:

Հայերեն տառերը միջին դիրք են գրավում լատին և հույն գեր գրերի և նիհար ու վտիտ արաբական գրերի միջև. մեր գրերը, ըստ Ն. Ադոնցի, միջին իրանով և երկար ոտուձեռով տառեր են: Նա նկարիչ Վ. Սուրենյանցին հետևյալ հրահանգներն էր տվել նոր տառեր գծագրելու համար՝

1. «Նախ տառերը պիտի լինեն ուղղաձիգ, նման եվրոպականին և ոչ թեք, ինչպես ընդունված է մեզանում, որ ցանկալի չէ ամենից առաջ աչքի առողջապահ տեսակետից:
2. Տառերը պետք է լինեն փորավոր, մարմնեղ, բայց կարճ պոչերով:
3. Գծերը՝ նուրբ և բաց, նման եվրոպական տպագրին, և ոչ սև, հաստ, ինչպես ընդունված է մեզանում:
4. Գծերը պետք է միանան ոչ ուղղանկյունով և ոչ կամարով, այլ միայն կոր անցումով:
5. Տառերի ծավալը, բռնած տեղը աշխատելու է, որ հավասար լինին, ուստի առանձին հոգ տանելու՝ վ, գ, խ, դ, պ, ա և նման լայնանիստ տառերի

²²⁶ Նույն տեղում, էջ 414:

²²⁷ Նույն տեղում, էջ 417:

²²⁸ Նույն տեղում, էջ 421:

գծագրությունը բարեփոխելու, առանց վնասելու դրանց ավանդական պատկերին»²²⁹:

«Հազարան բլբուլը»՝ նորակերտ տառերով, պետք է լիներ Ն. Ադոնցի և Վ. Սուրենյանցի հրատարակության երախայրիքը, բայց, ինչպես Ն. Ադոնցն է հավելում, «ափսոս, որ երազ էր»:

Գիտնականը բացատրության կարոտ, տարօրինակ երևույթ է համարում *վ*-ի սահմանափակ կիրառումը հայերենում: Բառամիջում և վերջում, ինչպես նա իրավամբ նկատում է, *վ*-ը գրվում է *n*-ից հետո, քանի որ *ւ* գրելու դեպքում *n*-ն կվերածվի *n*-ի: Մյուս կողմից բուն հայ հնչյունների պատմությունը ցույց է տալիս, որ հայերենում բառի սկզբում – ս ձայն չէր կարող լինել, «արիո-եվրոպական –ս հնչյունը բառի սկզբում հայոց լեզվում փոխվում էր –գ. *v-inum=q-ինի, v-edami=qիտեմ...*»²³⁰: Ավելին, ըստ Ն. Ադոնցի, 30 բառեր՝ *վ* սկզբնատառով, անկասկած, միջին պարսկերենից են անցել հայերենին: Այդ բառերից են՝ վատ, վաճառ (=բազար), վանկ, վարագ, վագր և այլն: Այսու, Ն. Ադոնցը հիմնավոր է համարում իր պնդումը, ըստ որի՝ «Մեսրոբից առաջ» *-ով* վանկում կա՛մ ոչինչ չէին գրում, կա՛մ ճարահատյալ *-ւ* էին գրում, և ընթերցողը պիտի կռահեր՝ որտեղ *-ու*, որտեղ՝ *-ով* կարդար: Իսկ այս *-ւ*-ի գրությունը պահպանվել է *այս, այդ, այն* դերանունների գործիական հոլովում՝ *այսո-ւ, այսո-ւ-իկ* և այլն: Ն. Ադոնցը վստահ էր, որ մեր նախնիները սրանք կարդում էին *այսո-վ-իկ, այդո-վ-իկ* և այլն, որովհետև գործիականի հոլովիչ է *ւ=v*²³¹:

Ն. Ադոնցի կողմից ուշագրավ ստուգաբանության է ենթարկվել նաև կրավորականի *վ* ածանցը: Ըստ նրա՝ *վ*-ի ծագումը դեռևս կարոտ է հստակ բացատրության, այդուհանդերձ, գիտնականը նրա առաջացման բավական համոզիչ փաստարկներ է առաջադրում: Այսպես, ստեղծու-ած, հատու-ած և այլ ձևերում *-ած*-ը ներգործականի անցյալ դերբայի վերջավորությունն է: Մնացածը՝ *ստեղծու-, *հատու-, *հերծու-, Ն. Ադոնցին կարծել են տալիս, որ դրանք կրավորականի անցյալ դերբայի արխայիկ ձևերն են: Ուսումնասիրողը շեշտում է նաև, որ գրաբարում *-ու* մասնիկը, որպես ածանց, ներգործական դերբայի իմաստ ունի՝ հասու, կծու, ազդու՝ հասնող,

²²⁹ Նույն տեղում, էջ 424:

²³⁰ Նույն տեղում, էջ 315:

²³¹ Հմմտ. նույն տեղում, էջ 316:

կծող, ազդող: Բայց որ մի ժամանակ դրանք կրավորականի նշանակություն էլ են ունեցել, ըստ նրա, երևում է վերարկու և հավանաբար՝ *ածու* բառերից: «Վերարկու» նշանակում է վրան գցելի, գցվող, ոչ թե գցող: «Ածու, որ հին լեզվում նշանակում է ժողովուրդ, ազգ, հավանորեն *ածեմ=բերել* բայից է ածանցված, և նույնն է, ինչ որ *ածեալ*, ածք, այսինքն՝ բերած, սերունդ»²³²: Ն. Ադոնցի հաջորդ վարկածով՝ կրավորականի *-ու-*ն կարող է ծագած լինել նաև նախնի *-ու-*ից. *ստեղծի+ած=ստեղծու-ած=ստեղծու-ած²³³:

Ա. Այտընյանը կարծում է, որ այդ *ու* ձայնավորը գտնում ենք գրաբարի *գործուած*, *յորինուած* և այլ բառերի մեջ²³⁴:

Հույժ արժեքավոր դիտարկումներ ունի Ն. Ադոնցը *ի* նախդրի վերաբերյալ: Նա գրում է. «Ի նախդիրը արիո-եվրոպական *-en, -in* է տրական և ներգոյական հոլովներում և *-ek, -ik (=ու-ՅԵ)*՝ բացառական: Բաղաձայնի կորստից հետո երկու *ի*-երը նույնանում են՝ *ի* նմա, *ի* նմանէ: Ձայնավորից առաջ *-ի* պետք է հանդես գար իր հին ձևով՝ **ին արքայէ*: Բայց երևում է, որ *ն*-ի անկումը շատ ավելի վաղ է տեղի ունեցել, և միմիայն անկումից հետո է առաջ եկել բացառական և տրական հոլովները *ի*-ով արտահայտելու եղանակը: Վաղակորույս *ն*-ի հետքը մնացել է մի քանի բառերում՝ *ն-այել (=հայել)*, *ն-ստել*, *ն-եցուկ (յենուկ)...*»²³⁵:

Բացառականում *ի* նախդրի՝ բաղաձայնից և ձայնավորից առաջ *ի* և *յ* համապատասխան տարբերակներով հանդես գալու իրողությունը նա բացատրում է այսպերպ. *ի* սկզբանե թե՛ բաղաձայնից, թե՛ ձայնավորից առաջ դրվել է *ի*՝ *ի* բանէ, *ի* արքայէ: Սակայն hiatus-ի օրենքով, ըստ որի՝ երկու ձայնավորների միջև հորանջից խուսափելու համար ձայնակապ է դրվում, *ի արքայէ*-ն պիտի արտասանվեր *ի յարքայէ*: Հետագայում *ի*-ն սղվում և անհետանում է՝ ըյարքայէ=յարքայէ²³⁶:

Որոշակի վերապահում ունի Ն. Ադոնցը բառավերջի *-ի*-ի հարցում: Բարձր գնահատելով համաբանության դերը լեզվի փոփոխման ու զարգացման գործում՝ նկատում է, սակայն, որ նրանով բացատրվում են լեզվական տարօրինակ երևույթներ:

²³² Նույն տեղում, էջ 319:

²³³ Հմմտ. նույն տեղում, էջ 319:

²³⁴ Հմմտ. Հր. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. IV, Բ, Եր., 1961, էջ 326:

²³⁵ Նույն տեղում, էջ 324:

²³⁶ Հմմտ. Ն. Ադոնց, Երկեր, Գ, Գրական նշմարներ լեզվական-ուղղագրական, էջ 324:

Նմանատիպ երևույթներից է, ըստ նրա, այդ սկզբունքով բառավերջում *յ*-ի հաճախ անհմաստ հավելումը: Այսպես՝ ասորերենից փոխառված մի շարք բառեր՝ *ա*-ով վերջացող, մեր լեզվում այսպիսի տառադարձման են ենթարկվել՝ *kahna=քահանա-յ*, *avila=արեղա-յ*, *she-shalta=շղթա-յ*: Ն. Ադոնցը եզրակացնում է. «Այս և նման բառերում - *յ* երբեք չի արտասանվել, բայց գրվել է միմիայն ուրիշ հայերեն բառերի հետևողությամբ, ինչպես՝ ծառայ, ընծայ...»²³⁷ :

Ն. Ադոնցի ճշմարիտ համոզմամբ, յուրաքանչյուր լեզու ուղղագրական ներդաշնակ համակարգ կարող է ունենալ միայն սեփական բառամթերքի հնչական շրջանում, քանի որ օտար բառերը, եթե միջամտեն ուղղագրական կանոնների մշակմանը, շփոթ կառաջացնեն: Գիտնականի կարծիքով, օտար բառերն առանձին գլուխ պիտի կազմեն ուղղագրության մեջ, որտեղ պիտի հստակեցվեն տառադարձման կանոնները: Ամենակարևորը, ըստ նրա, *օ* և *ե* գրերի տառադարձի խնդիրն է. շատերը, ելնելով օտար *օ*-ի և հայերեն *օ* (*ալ*)-ի նմանությունից, գրում են ամեն տեղ *օ*: Մյուս կողմից, կարծելով, որ *ե*-ի հնչյունն է *յե*, օտար *ե* ամեն տեղ դարձնում են *է*: Չպետք է մոռանալ, ըստ հայագետի, որ *եչ*-ի *յե* արտասանությունը գրական պատվաստ է և հատուկ է գրական լեզվին, ինչպես և *ո*-ի *ո* հնչյունը: Բարբառները, ինչպես հայագետն է նկատում, ավելի ազատ են և ընդհանուր առմամբ խուսափում են *յե*-ից և *ո*-ից²³⁸:

Ն. Ադոնցի լեզվաբանական ուսումնասիրություններից է «Ինչպես պետք է գրել «ամեն» եվ «չեզոք» բառերը» վերնագիրը կրող հոդվածը (1930, Փարիզ)՝ զետեղված դարձյալ Գ հատորում: Այս հոդվածը նա գրել է «Հայրենիք» ամսագրի խմբագրության կողմից իր «Մամիկոնյան իշխանուհի» հոդվածում վերոնշյալ բառերի ուղղագրական շտկումների առթիվ: Հենց սկզբում նա շեշտում է, որ Հայկազյան բառարանում, որն ի դեպ բնորոշում է որպես «պատկառելի ծերունի», այդ բառերն ունեն *ամէն* և *չէզոք* գրելաձևերը: Ն. Ադոնցը, սակայն, կարծում է, որ մենք, լինելով նոր սերունդ, պարտավոր չենք կրկնել նախորդներին, և այն վարկածն է առաջադրում, ըստ որի՝ *չէզոք* (*կամ չէզոք*)-ը պետք է ստուգաբանել ոչ թե որպես «չկա ոչ մեկը», ընդ որում նա հավելում է, որ *է* էական բայը չի կարող հայցական հոլով ընդունել՝ *զ* նախդրիվ, և պնդում է, որ այդ բառը պետք է ստուգաբանել որպես *չ+եզ+ոք*, այսինքն՝ «չկա մի ոք»:

²³⁷ Նույն տեղում, էջ 325:

²³⁸ Ն. Ադոնց, Երկեր, Է, Օտար բառերի ուղղագրությունը, էջ 115-118:

Ըստ նրա՝ եզը համազոր է մի-ին: Ն. Ադոնցի այս տեսակետը հերքել է Վենետիկի հայրերից մեկը՝ Հայր Ղազիկյանը՝ Ա. Բագրատունու «Զարգացելոց»-ից և Հ. Օծնեցու «Ընդդէմ երևութականաց»-ից մեջբերումներ անելով՝ ապացուցելու, որ է էական բայը, հունարենի նմանողությամբ, ընդունում է նաև հայցական, օրինակ՝ Եղեւ զոր ոչն էր...

Ն. Ադոնցը վստահ է, որ վերջինս սխալ ընթերցման հետևանք է, սա սկզբում գրված է եղել՝ Եղեալ որ ոչն էր...: Ա-ի և Լ-ի մասնիկների կցված լիելու հետևանքով գ-ի տպավորություն է ստեղծվել, ուստի եղեալ-ից մնացել է եղեւ-ը: Ն. Ադոնցն անվարան ժխտում է նաև *չեզոք (չէզոք)*-ը Հայր Ղազիկյանի կողմից *գոյնզգոյն, թելզթել, ոսկեզօծ* բառերին մոտեցնելու փորձերը, քանի որ, դիցուք, *ոսկեզօծ*-ում *զօծանել* բայն է, որն առաջացել է այնպես, ինչպես *զօղեմ-ը՝ յօղեմ-ից, զիջանեմ-ը՝ իջանեմ-ից*:

Ուղղագրական հաջորդ խնդիրը վերաբերում է *ամեն (ամէն)* բառին: Ըստ Հայր Ղազիկյանի՝ այս բառը նույնն է, ինչ որ *մէն*, մի *այր* շալակին: Ն. Ադոնցն ընդունում է *ե*-ով գրությունը: Նրա համոզմամբ՝ *ամեն-ի են-ը եան* ածանցի պարզեցման արդյունք է, իսկ *ամ-ը* «զուտ հայացի ձևն է համ-ի, որ պարսիկ փոխառություն է, հավանորեն, քան նույն արմատի մի ուրիշ հայ ձևը»²³⁹: Հետևաբար, ըստ նրա, *ամեն-ի* հնագույն ձևը պետք է լինի *ամեան*, որպես *ամենեքեան-ը*: Ա. Բագրատունին, ըստ Ն. Ադոնցի, *ամէն (ամեն)* բառը ծագած է համարում կա՛մ *մէն-ից*, կա՛մ *համայն-ից*, բայց ինքը երկու վարկածին էլ դեմ է: *Մեն-ը*, ըստ նրա, այլ բան չէ, քան *միայն-ի* սղման արդյունքը՝ *միայն>մեն>ամէն>ամինի/ամենայնի*, հետևաբար ավելի նոր է, քան *ամէն* հին բառը, և չի կարող, փաստորեն, նրա ծնողը լինել: Բացի դրանից՝ Ն. Ադոնցը մերժում է *ամեն-ը համայն-ի* սեղմ ձևը համարելու մոտեցումն ըստ այնմ, որ թեք հոլովներում և բարդության մեջ անշեշտ է-ն պիտի փոխվեր *ի-ի՝* ամինի, ամինայնի և այլն: Մինչդեռ Հայր Ղազիկյանը, Ա. Բագրատունու հետևությամբ, *ա-ն* ժխտական ածանց է համարում: Մեր կարծիքով, *ա-ն* այստեղ ժխտական ածանց չէ, որովհետև ժխտական *ա-ն*, լատինական ծագում ունենալով, չի կարող դրվել հայկական արմատի վրա:

Ուղղագրական այս հարցերի ինքնատիպ մեկնաբանություններից հետո Ն. Ադոնցն անցնում է փոխառյալ բառերի քննության պատասխանատու գործին:

²³⁹ Ն. Ադոնց, Երկեր, Գ, Գրական նշմարներ լեզվական-ուղղագրական, էջ 362:

Վ. Համբարձումյանի ճշմարիտ դիտարկմամբ՝ լեզուների նոստրատիկ ուսումնասիրության ձեռքբերումները գնալով ավելի լայն հնարավորություն են տալիս ինչպես այլ լեզուների, այնպես էլ հայերենի տվյալների նոր համեմատությունների համար, ընդ որում՝ ոչ միայն ներընտանիքային, այլև միջընտանիքային զուգադիպումների նկատառումով: Այս բնագավառում հայերենի վերաբերյալ կատարվածը, ըստ նրա, սահմանափակ է, մինչդեռ երևույթը կարելի է քննության ենթարկել մեծաթիվ փաստերի վերլուծությամբ, որի արդյունքում կունենանք տվյալների անհամեմատ լայն շրջանակ, «բացահայտվում են հայերենի հնագույն և վաղնջական ժամանակներին վերաբերող առնչությունների շատ փաստեր, որոնց հիման վրա էլ ավելի են ընդգծվում հնդեվրոպական լեզուների մեջ հայերենի տեղը և կարևորությունը»²⁴⁰: Այդ սահմանափակ կատարվածի մեջ, անշուշտ, երևելի է Ն. Ադոնցի վաստակը, որ հայերենի համեմատական և տիպաբանական ուսումնասիրությունն է կատարել, որը կարևոր նշանակություն ունի հնդեվրոպական մյուս լեզուների հետ նրա ունեցած ծագումնային առնչությունների բացահայտման առումով:

«Հայերեն մի քանի բառերի ստուգաբանություններ» (1937, Բրյուսել) խորագրի տակ նա հայերենի *երինջ* բառը կապում է *rendhyo-ի հետ, ինչպես որ մեծ-ը՝ *medyo-ի, մյուս կողմից կասկածի տակ է դնում գերմաներեն *das Rind՝ ցուլ* բառի՝ այս շարքին պատկանելը: Կարծում ենք՝ վերջինս նույնպես իրավունք ունի այդ շարքում զետեղվելու թե՛ հնչյունական, թե՛ իմաստային տեսանկյուններից: Հր. Աճառյանը *Rind*-ը զետեղում է վերոնշյալ շարքում, բացի դրանից՝ *երինջ* բառը մի կողմից համարում է պարսկական փոխառություն՝ *էնճիրէ՛ փուշ, եղիճ*, մյուս կողմից, սակայն, այն դիտարկում է որպես բնիկ բառ՝ հնիս. *drenz՝ եղնիկ* բառից առաջացած²⁴¹: Ըստ Գ. Բ. Ջահուկյանի՝ *երինջ*-ը բնիկ *k'rentio-*k'er՝ *գլուխ, եղջյուր, եղջերավոր անասուն* արմատից է առաջ եկել²⁴²:

Հայերեն *գայլ* («լկամ,սանձ») բառը, Ն. Ադոնցի վկայմամբ, համապատասխանում է սանսկրիտերեն *valga*-(սանձ), լատերեն *valgus* (ծուռ

²⁴⁰ Վ. Համբարձումյան, Հայերենի բառաքննական և ստուգաբանական ուսումնասիրություններ, Եր., 2012, էջ 6-7:

²⁴¹ Հմմտ. Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 2, էջ 56:

²⁴² Հմմտ. Գ. Բ. Ջահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 226:

թուր)=հնդեվրոպական *wlg բառերին: Ինչպես հ-ե *luq-wos/*w!gwos, λύκος, lupus-ը հայերենում տալիս է *գայլ*²⁴³:

Ըստ Հր. Աճառյանի՝ *գայլ*-ը բնիկ բառ է, որի ցեղակիցներն են, դիցուք, լատիներեն lupus-ը, գերմաներեն՝ Wolf-ը, ռուսերեն՝ волк-ը և այլն: Հնդեվրոպագետները, ինչպես Հր. Աճառյանն է հավելում, *գայլ* բառի սկզբնաձև սլ-գս-ն համեմատել են *աղվես* բառի սկզբնաձև սլ-թ-ի հետ և եկել այն եզրահանգման, որ այդ երկուսի արմատն է սել՝ *գիշատի*, ըստ որի՝ *գայլ* նշանակում է *գիշատիչ*²⁴⁴: Գ. Բ. Զահուկյանը նույնպես *գայլ*-ը բնիկ հնդեվրոպական բառ է դիտարկում՝ *ulku^o՝ *գայլ*²⁴⁵: Ստ. Մալխասյանցն այս բառի ստուգաբանության մասին ուղղակի դիտարկում չունի, պարզապես նշում է՝ Canis lupus, որից էլ ենթադրում ենք, որ ընդունում էր դրա լատինական ծագումը²⁴⁶:

Կարծում ենք, *գայլ* բառն իսկապես բնիկ է, քանի որ նրա ցեղակիցները՝ Wolf, волк, հայերենում իսկապես պիտի դառնային *գայլ*՝ հայտնի v>գ անցման համապատասխան՝ vedami>գիտեմ, vinum>գինի և այլն: Մյուս կողմից, ընդհանրական է նրանց համար նաև ւ-ն:

Ն. Ադոնցը կարևոր զուգահեռներ է անցկացնում *օձիք* բառի ստուգաբանության առնչությամբ: Նա նշում է, որ հունարեն *αύχην*, -ένος՝ *վիզ*, *ծոծրակ*, *կոկորդ*, և *αύχή՝ գոռոզություն* բառերի ստուգաբանությունը հայտնի չէ, սակայն փաստ է, որ դրանք առնչվում են հայերեն *աւծի-ք*, սեռ.՝ *աւծեաց* բառերին: Այս *օձ*-ը, ըստ նրա, հնում հավանաբար նշանակել է *վիզ*, *կոկորդ* և հնչյունաբանորեն համապատասխանում է հունարեն *αύχην* < aug, h-: *ύΦ-ανχενέω՝ գլուխը բարձրացնել*, *գոռոզանալ*, ինչպես նաև *ύΦ-ανχένος՝ պարծենկոտ* բառերն ապացուցում են, որ *αύχή՝ գոռոզություն*-ը կապված է *αύχην՝ վիզ* բառի հետ²⁴⁷:

Հր. Աճառյանը մի կողմից մեջբերում է ՆՀԲ-ի վկայությունը ըստ այնմ, որ *օձիք*-ը բխում է *օձ* բառից, մյուս կողմից՝ Ն. Մառի կարծիքը, թե այն զենդերեն *angh՝ ծալել* բառից է ծագում:

²⁴³ Հմմտ. Ն. Ադոնց, Երկեր, Գ, Վաղ շրջանի փոխառությունները հայերենում, էջ 406:

²⁴⁴ Հմմտ. Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 1, էջ 512:

²⁴⁵ Հմմտ. Գ. Բ. Զահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 148:

²⁴⁶ Հմմտ. Ստ. Մալխասեանց, նշվ. աշխ., հ. 1, էջ 410:

²⁴⁷ Հմմտ. Ն. Ադոնց, Երկեր, Գ, Վաղ շրջանի փոխառությունները հայերենում, էջ 408:

Մեր կարծիքով, բավական հետաքրքիր է *օձիք* և *օձ* բառերի մերձեցման փորձը, որը հնչյունաբանական և իմաստաբանական հավելյալ հիմնավորումների կարիք ունի:

Հայերեն *արծա-գանգ*, *գանգ-իւն* բառերը, ըստ Ն. Ադոնցի, անկասկած առնչություն ունեն հունարեն ἄχρη, ὄχρα (*Fαχα)՝*աղմուկ*, *ծայն* բառին: *Արծագանգ*-ը, նրա վկայմամբ, նշանակում է *վերադարձող ծայն*, մյուս կողմից՝ *գանգ*, *գանգիւն* (աղմուկ, ծայն) նույն բառն է, ինչ *վանգ* (ծայն, վանկ)-ը, սակայն վերջինը, ըստ Ն. Ադոնցի, իրանական փոխառություն է և համապատասխանում է պահլավական *vāng*՝ *աղաղակ*, *ծայն* բառերին²⁴⁸: Ըստ Հր. Աճառյանի՝ հետին և տգետ գրիչների կողմից գրվել է *արծագանք* կամ *արծագանք*, ինչ վերաբերում է կազմությանը, այն բաղադրված է *արծ* և *գանգ* միավորներից, որոնցից առաջինի ծագումը, ըստ նրա, անհայտ է, իսկ երկրորդը *գանգյուն*՝ *հնչյուն* բառն է: Գ. Բ. Ջահուկյանն այս բառին չի անդրադառնում, իսկ Ստ. Մալխասյանցը *արծագան*-ը բացատրելիս նշում է, որ սխալմամբ այն համարում են *արծագանք*-ի եզակին, իսկ *արծագանգ*-ի առնչությամբ միայն հոլովման տիպն է նշում և միայն *արծագանք* բառը մեկնաբանում²⁴⁹:

Ընդունելով Ն. Ադոնցի և Հր. Աճառյանի վկայությունները *գանգյուն-հնչյուն* հոմանշության վերաբերյալ՝ նշենք նաև, որ *արծա*-ն, մեր կարծիքով, առնչություն ունի *արծակել* բայի հետ:

«Հայր Ն. Ակինյանի պատասխանին պատասխան» վերնագրով հոդվածում Ն. Ադոնցը գրում է, որ Ն. Ակինյանն իրեն քննադատել է ըստ այնմ, որ ինքը «*Վասն գիտութեան ի վերայ հասանելոյ*» արտահայտությունը ճապաղ, անհաջող ոճ է համարել: Ն. Ակինյանը մեկնում է *ի վերայ հասանել*-ը որպես *հասկանալ*, և Ն. Ադոնցը պատասխանում է, թե խնդիրը՝ *ի վերայ հասանել*-ը չէ, այլ *գիտութեան ի վերայ հասանել*-ը: Նա ընդունում է, դիցուք, *ի վերայ իրաց*, *լաւութեանց հասանելը*, բայց *գիտութեան ի վերայ հասանել*-ը, ըստ նրա, ճապաղ ոճ է: Ըստ Ն. Ադոնցի՝ բուն հայկական ոճն է՝ *հասանել գիտության*, որ Եզնիկն է կիրառում՝ «մարթի հասանել գիտութեան»:

«Դարձյալ Կորյունի շուրջ» վերնագրով հոդվածում Ն. Ադոնցն անդրադառնում է Գ. Ֆնտոյանի՝ «Պահլավերեն փոխառյալ բառեր» հոդվածում տեղ գտած երեք բառերի

²⁴⁸ Հմմտ. նույն տեղում:

²⁴⁹ Հմմտ. Ստ. Մալխասեանց, նշվ. աշխ., հ. 1, էջ 272:

ստուգաբանությանը: Դրանք են՝ **զուար[ափակ]**, **[վատ]շուէր** և **նուէր**: Մխիթարյան հայրերը, Ն. Ադոնցի հաղորդմամբ, կարծել են, թե *զուարափակ*-ի մեջ *զուար-ակ* բառն է, ուրեմն քաղաքորմը զուարակներ փակելու համար էր: Ցայժմ էլ, ըստ նրա, ժողովուրդը օտար բառով *ղալա* է կոչում բնական կամ արհեստական շրջափակ կայանները, որ հատկացված էին կենդանիների հանգստի և բացօթյա գիշերելու համար: Հնում սա կոչվել է *քաղաքորմ*: *Ջուար* բառում Գ. Ֆնտգլյանն ուզում է տեսնել իրանական *zbar*-ը: Ն. Ադոնցը նկատում է, որ վերջինս ավելի մեծ կարիք ունի ստուգաբանության, քան *զուար*-ը: Ջակսոն Վենդիդադը *zbar*-ը թարգմանում է *եզր* այն ենթադրությամբ, որ խոսքը գետի մասին է: Գերմանացի գիտնական Բարթոլոմեն կարծում է, թե *zbarah* նշանակում է *բլուր, բարձրավանդակ*: Ըստ Ն. Ադոնցի՝ այս երկու տեսությունները կարելի է հաշտեցնել՝ հիշելով գերման *Berg*՝ *լեռն*, որ անցել է սլավոնական լեզուներին իբրև *brēg*՝ *ափ*, սկզբնապես՝ *ստորոտ*, հետո՝ *ափ*: Համենայնդեպս, *zbar*-ը մնում է անորոշ:

Գերմաներեն *Berg*-ի՝ *լեռ, ափ* իմաստներն անվիճելի են, պարզապես ի՞նչ առնչություն ունի *zbarah*-ը *Berg*-ի հետ, մնում է անհայտ, միայն վերջնահնչյուն *h*-ն մեզ հուշում է, որ այն միգուցե պարսկերեն բառ է՝ *լեռան* կամ *ափի* հետ որևէ առնչություն ունեցող:

Ն. Ադոնցն ակնարկում է, որ զուարափակ-ը մեկնություն է քաղաքորմի, հետևաբար վերջինս սովորական ղալա չէր՝ ցած պատնեշով, այլ խոտամբար, բարձրապատ: Ըստ նրա՝ հնարավոր է *զուար*-ի մեջ տեսնել պարթև *vār*-ը: Հայերեն *պատվար*-ն ունի իր վերջին մասում նույն բաղադրիչը՝ *vār* < **pati-vāra*: Գիտնականի կարծիքով՝ սկզբի *q*-ն նախդրի մնացորդ է, հավանաբար՝ *uz-*, որ նկատում է *զգույշ* բառում <ավետստ, *uzgaušo*՝ ականջները ցից... Հետևաբար, ըստ Ն. Ադոնցի, ունենք հետևյալ անցումը՝ զուար < **uz-vāra*՝ պատ, վեր բարձրացող, զուարափակ՝ որմափակ:

Բնորոշ է, որ Ն. Ադոնցը գրեթե երբեք իր դիտարկումները անդարձ և վերջնական չէր համարում, միշտ նշում էր, որ հնարավոր են նաև այլ մոտեցումներ, կիրառում էր «ենթադրաբար, գուցե» և համանման այլ վերաբերականներ: Այս հատկանիշը ճշմարիտ հետազոտողին բնութագրող գիծ է, որին հետագայում մենք հանդիպել ենք Գ. Բ. Ջահուկյանի աշխատանքներում:

Անհաջող է, ըստ Ն. Ադոնցի, Գ. Ֆնտգլյանի երկրորդ համեմատությունը նույնպես: Հայերեն *-շուէր* չի կարող համաձայնել օտար *svat*-ին: Վարդշուէր ամբողջովին փոխառություն է և ենթադրում է պարթև **vatišver*:

Բացի սրանից՝ Ն. Ադոնցն անտեղի է համարում *գէշ* բառի օրինակը, իբրև թե՛ *գա(ր)շ*-ից: Ն. Մառը վաղուց անդադարձել է դրան՝ բխեցնելով *գէշ*-ը **գայշ*-ից, որը միջնորդ ձև է *գէշ*-ի և *գարշ*-ի:

Հր. Աճառյանը մեջբերում է տարբեր լեզվաբանների դիտարկումները, դիցուք՝ Հ. Հյուբշմանի, ըստ որի՝ *գէշ*-ը լատիներեն *vescor*՝ *սնանիլ*, *vescus*՝ *ուտող, նիհար, ճոզած* բառերի հետ է կապվում, մինչդեռ, օրինակ, ըստ Պատրուբանիի՝ այն հունգարերեն *keselyű*՝ *արծիվ* բառի հետ է կապվում՝ որպես գիշակերի²⁵⁰: Ըստ Ստ. Մալխասյանցի՝ *գէշ*-ը կարող է առաջացած լինել նաև *գարշ*-ից՝ *գայշ-գէշ* ձևով, ինչպես՝ առնել-այնել-էնել²⁵¹: Գ. Բ. Զահուկյանը *գէշ*-ը իրանական փոխառություն է համարում՝ հավանաբար զենդերեն *vaeša*՝ *փտել, նեխել* բառից²⁵²:

Մենք առավել հակված ենք Հ. Հյուբշմանի տեսակետին, քանի որ *գէշ*-ը, ըստ էության, բնիկ բառ է՝ կապված *vescor*, *vescus* բառերի հետ, որոնցից էլ հեշտությամբ կարող ենք ստանալ *գէշ*:

Նուէր բառի ստուգաբանությունը, Ն. Ադոնցի համոզմամբ, վաղուց հայտնի է: Ըստ նրա՝ պահլավիկ *nsar*-ը չի կարող նույնանալ *նուէր*-ի հետ: *Նուէր*-ը ծագում է պարթև *niveda*, պարսկ. *nusēd*, ավեստ. *ni-vaēda* բառերից: Ն. Ադոնցը կասկածի տակ է դնում անգամ *nsar*-ի գոյությունը:

Պահլավ գրերը, ըստ նրա, ազատություն են տալիս տարբեր կերպ կարդալու: Եթե մեկն ուզում է *-ն* տառը տեսնել և կարդալ *aspānsar* բառը, ինչպես Գ. Ֆնտգլյանն է հարցը լուծել, կկարդար *aspān* և *var* և ոչ թե՛ *aspā* և *nsar*: Ն. Ադոնցը վստահ է, որ Գ. Ֆնտգլյանին գրավել է իմաստը. *ասպանուէր* կարդալով՝ կարելի է *ձիազոհ* հասկանալ՝ դրանով իսկ պարզելով մութ պարբերությունը այն առումով, որ Զրադաշտին հանդիպելիս Վշնասպը ձիու զրոհ էր մատուցում:

²⁵⁰ Հմմտ. Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 1, էջ 550:

²⁵¹ Հմմտ. Ստ. Մալխասեանց, նշվ. աշխ., հ. 1, էջ 433:

²⁵² Հմմտ. Գ. Բ. Զահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 159:

Հր. Աճառյանը նույն ծագումն է վերագրում *նուէր* բառին, ինչ Ն. Ադոնցը, միայն հավելում է, որ *niveda*-ն կազմված է *ni*- մասնիկից և *vaed'* *գիտենալ, ճանաչել* բառից: Իսկ զենդերեն բառի տարբերակն է՝ *nivaedayem'* *ձոնել, սրբագործել, նվիրագործել (զոհ, աղոթք)* իմաստներով²⁵³: *Նվեր* բառին նույն ծագումն է վերագրում նաև Ստ. Մալխասյանցը՝ պահլավական *nived'qoh, աղոթք, նվիրագործություն* բառից առաջացած²⁵⁴: Նույն ստուգաբանությունն է տրվում նաև Գ. Բ. Ջահուկյանի կողմից²⁵⁵:

Ուշագրավ է Ն. Ադոնցի հետևյալ դիտարկումը նույնպես. «Տանուտերական երկիրը Վասպուրականի գնդի նման երբեմն կոչվում էր տանուտերական գունդ: Գունդը իրապես համապատասխանում է բյուզանդական *թέμα*-ին և նշանակում է զինվորական ուժերի որոշ քանակ»²⁵⁶: Գիտնականների հետազոտության համաձայն, ինչպես Ն. Ադոնցն է նշում, *թέμα* բառը միաժամանակ նշանակում էր և՛ պրովինցիա, և՛ այնտեղ կանգնած բանակի կորպուսը: Երկակի նշանակությամբ այս բառը գիտնականը համեմատում է պարսկական *gund* բառի հետ: Մահմեդական հեղինակների վկայմամբ՝ պարսկական զինվորական ճամբարների հաստատությունը, որի վրա հիմնված էր ռազմական ողջ փայլը և պարսից հզորությունը, կոչվում էր *gundjāigāh* կամ *ramm*:

Ն. Ադոնցի լեզվաբանական հետազոտությունների մեջ անփոխարինելի տեղ ունի վաղ շրջանի փոխառությունների նրա քննությունը, որը կատարել է իր «Հայաստանի պատմություն» գրքում, և որը միաժամանակ ընդգրկված է նրա Երկերի Գ հատորում: Այստեղ մենք ընտրության սկզբունքով ենք արձանագրելու նրա քննած փոխառությունները:

Ըստ Ն. Ադոնցի՝ Ք.ա. III հազարամյակի կեսերին Սարգոնը արշավանք է ձեռնարկում Փոքր Ասիա: Նախքան հեռանալը՝ նա կարգադրում է իրենց երկրին անձանոթ մի քանի բույսեր վերցնել իրենց հետ: Ըստ Ն. Ադոնցի՝ այդ բույսերն են՝ *hashuru, tittu, šimišš ala, šallura, karanu, buttu, sirdu*: Ն. Ադոնցը գրում է. «Ֆ. Հոմմելը *hashuru*-ն նույնացրել է արամեական *huzra*, ասորական *hazzùra* «խնձոր»-ի հետ, և *hazzùra*-ի մեջ ճանաչել են հայերեն խնձոր-ը (F. Hommel, Aufsätze und Abhandlungen,

²⁵³ Հմմտ. Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 3, էջ 470:

²⁵⁴ Հմմտ. Ստ. Մալխասեանց, նշվ. աշխ., հ. 3, էջ 483:

²⁵⁵ Գ. Բ. Ջահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 573:

²⁵⁶ Նույն տեղում, էջ 263:

1892, էջ 167)»²⁵⁷: Բայց Ն. Ադոնցը հակված է hazzura-ն և խնձոր-ը առանձին փոխառություններ համարել: Ըստ նրա՝ hazzura-ն գրեթե իր նախնական ձևով պահպանվել է կովկասյան լեզուներում: *խնձոր* անունը կա Դաղստանի բազմաթիվ լեզուներում և այնքան տարբեր ձևերով, որ դրանք համարյա անճանաչելի են դարձել: Այս լեզուներից մի քանիսը՝ *վարկան*, *կուրած*, *լեկ* և այլն, Ն. Ադոնցի հավաստմամբ, գործածում են hinče-hinze, xinč-xinj: Ըստ նրա՝ վերջին ձևը նմանություն ունի հայերենի *խնձոր*-ի հետ, որն էլ փաստում է, որ հայերենն ասորերենի hazzura-ից կախում չունի: Նա գրում է. «խնձորն առաջ է գալիս xunjor կամ xinjor-ից, երկրորդային ն-ն շջականից առաջ, կարծում ենք, օտար չէ հայկական հնչյունաբանությանը՝ *ինձ* անձնական դերանունը՝ տրական հոլովով՝ եզակիի (հմմտ. մեզ, քեզ) փոխարեն նույնանման դեպք է ներկայացնում: Նույնպես և «կորիզ»-ը, որ բարբառային ձևով «կորինձ» է արտասանվում, Մ(ու)զուր=Մ(ու)նձուր»²⁵⁸:

Հր. Աճառյանը խնձորը մի դեպքում կապում է *խինձ՝ գոգ, ծոց* բառի հետ՝ պտղի կլորության պատճառով, մյուս կողմից մեջբերում է Պատրուբանիի վկայությունները՝ խնձոր-ի գերման hangen, գոթ. hahan՝ *կախել, կախվել* ձևերի հետ ունեցած առնչությունը, որոնք էլ իրենց հերթին կապված են հնիս. kheng՝ho արմատի հետ²⁵⁹:

Գ. Բ. Ջահուկյանը *խնձոր*-ը փոխառություն է համարում խուռ. hinzuri-ից²⁶⁰:

Կարծում ենք՝ Ն. Ադոնցի մեկնությունը, թե *խնձոր*-ն առաջացել է xinjor-ից, առավել արժանահավատ է, քան *խնձոր*-ը ասորական hazzura-ի կամ հնիս. kheng՝ho-ի հետ կապելու գիտնականների փորձերը:

Ն. Ադոնցի հավաստմամբ՝ Ա. Մեյեն ցույց է տվել հունարեն τύχου կամ συχου, լատիներեն ficus և հայերեն *թուզ* բառերի ազգակցությունը: Նույնն է պնդում նաև Հր. Աճառյանը²⁶¹: Ըստ Գ. Բ. Ջահուկյանի՝ *թուզ*-ը արամեական փոխառություն է՝ իրաներենի միջնորդությամբ՝ tūtū²⁶²: Ա. Մեյեն կարծում է, որ հայերեն *թին*-ը, որ խաղողի կորիզն է, և արաբերեն tiz-ը՝ *թուզ*, պատկանում են այս շարքին: Այս բոլոր

²⁵⁷ Ն. Ադոնց, Երկեր, Գ, Վաղ շրջանի փոխառությունները հայերենում, էջ 387-388:

²⁵⁸ Նույն տեղում, էջ 389:

²⁵⁹ Հմմտ. Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 2, էջ 380:

²⁶⁰ Գ. Բ. Ջահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 336:

²⁶¹ Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հտ. 2, էջ 202:

²⁶² Գ. Բ. Ջահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 273:

բառերը tittu-ի հետ ունեն առաջին բաղադրիչի ընդհանրություն, բայց տարբերվում են երկրորդով: Ն. Ադոնցն ընդգծում է, որ միայն *թուլթ* բառն է, որ հստակ է ներկայացնում tutu-ն. վերջինս *թուլթ* բառն է, որ ողջ Մերձավոր Արևելքում նշանակում է *թուլթ*: Նա, սակայն, նշում է, որ Աստվածաշնչի թարգմանության մեջ հունարեն *συχομορέα*-ն թարգմանվում է իբրև *ժանտաթզենի*: Ըստ գիտնականի՝ այս կազմությունը ցույց է տալիս, որ տեղի-անտեղի որոշ նմանություն են գտել երկու մրգերի՝ թզի և թթի միջև, և այդ ըմբռնումների հետևանքով է, որ հայերենում դրանք նման անուններ ունեն: Մյուս կողմից նա իրավամբ շեշտում է, որ խաղողի կորիզները հիշեցնում են թզի կորիզները²⁶³: Որպես եզրահանգում՝ Ն. Ադոնցը գրում է, որ բոլոր այս բառերը ընդհանուր ծագում ունեն նախախեթական tutti-ի հետ և կազմվել են ti-tu մասնիկից՝ -to, -ko, -gho, -no ածանցների օգնությամբ²⁶⁴: Այսինքն՝ նա ուրվագծում է խեթական ենթաշերտը հայերենում:

Հր. Աճառյանը նշում է, որ *թուլթ*-ը հին Միջերկրյան լեզվից փոխառություն է, ինչպես որ *գինի*-ն և *յուղ*-ը: Այդ լեզվից են փոխառված, ըստ նրա, նաև հուն. բեովտ. Տսխօն-ը, հոմեր. Տսխօն-ը, լատ. Ficus-ը²⁶⁵:

Հաջորդը šalluru՝ «սալոր» բառն է: Ըստ Ն. Ադոնցի՝ šalluru-ն ծառ է, բայց թե ինչպիսի, հայտնի չէ: Նա առաջինն է փորձում բառային զուգաբանություն գտնել՝ այդ անվան մեջ տեսնելով հայերեն *սալոր*-ը, գավառաբարբառով՝ *շոր*:

Հր. Աճառյանը նշում է, որ ըստ Պատրուբանիի՝ *սալոր*-ը կապվում է հին սլավոներեն sliva, լեհերեն śliva և այլ բառերի հետ: Ըստ Թրաուբանիի՝ սալոր-ը կապվում է լատիներեն liveo՝ *կապտել*, livor՝ *կապտագույն* և այլ բառերի հետ: Պատրուբանին, սակայն, մերժելով իր նախկին տեսակետը, *սալոր*-ը բխեցնում է հնիս. kalē, kelē՝ *տաքանալ* արմատից, այսինքն՝ հնիս. kaloris նշանակում է *տաք ժամանակի պտուղ*²⁶⁶:

Ըստ Գ. Բ. Ջահուկյանի՝ *սալոր*-ի ծագումը դեռ անորոշ է²⁶⁷:

²⁶³ Հմմտ Ն. Ադոնց, Երկեր, Գ, Վաղ շրջանի փոխառությունները հայերենում էջ 390:

²⁶⁴ Հմմտ. նույն տեղում, էջ 391:

²⁶⁵ Հմմտ. Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 2, էջ 202:

²⁶⁶ Հմմտ. նույն տեղում, հ. 4, էջ 157:

²⁶⁷ Գ. Բ. Ջահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 663:

Կարծում ենք, անկասկած է *սալոր*-ի հնդեվրոպական ծագումը և նրա կապը վերը թվարկված և հնդեվրոպական այլ լեզուների հետ:

Այնուհետև, ըստ Ն. Ադոնցի, *šas* անունը չի կարող կապ չունենալ արաբերեն կամ պարսկերեն *sās*՝ կաղամախի-ի և հայերեն սոսի՝ սպիտակ կաղամախի-ի անվանումների հետ: Նա հիշատակում է Մ. Խորենացու պատմության այն հատվածը, որտեղ պատմահայրը վկայում է Արայի որդի Անուշավանի՝ *Սոսանվեր* մականվան մասին: Եվ բնութագրական է նաև, որ Արմավիրի միջնաբերդի բլրի ստորոտում գտնվում է մի գյուղ, ըստ Ն. Ադոնցի, որ նշանավոր էր իր սպիտակ սոսիներով²⁶⁸:

Հր. Աճառյանը նշում է, որ ՆՀԲ-ն և Պոլ դը Լագարդը *սոսի*-ն կապում են հին սլավոներեն և լեհերեն *sosna՝ եղևնի* բառի հետ²⁶⁹, իսկ ըստ Գ. Բ. Ջահուկյանի՝ կասկածելի է *սոսի*-ի կապը հին սլավոներեն *sosna*, ռուսերեն *сосна, եղևնի* բառերի հետ²⁷⁰:

Մեր համոզմամբ՝ *սոսի*-ի կապը վերոնշյալ բառերի հետ կասկածի տեղիք չի տալիս:

Hallùru բառը Ն. Ադոնցին անմիջապես հիշեցնում է հունարեն *ὄλυρα*-ն և հայերեն *ոլորն*-ը: Նրա վկայմամբ՝ Աստվածաշնչի *κύαμος* και *φακός*-ը հայերեն թարգմանել են *ոլորն* և *ոսպն*, հետևաբար *ոլորն* նշանակում է *κύαμος՝ բակլա*: Ուշադրության է արժանի նաև այն, որ *ὄλυρα*-ն հայերեն թարգմանել են *հաճար*: Ն. Ադոնցը սրանից եզրակացնում է, որ իմաստային տարբերակում կա *ὄλυρα*-ի և *ոլորն*-ի միջև. մեկը նշանակում է *հաճար*, մյուսը՝ *բակլա*: Հենց սա էլ վկայում է, որ ոչ հայերենն է այդ տերմինը հունարենից փոխառել, ոչ էլ՝ հակառակը: *Ոլորն*-ի հին ձևը, ըստ նրա, *οιρον* է: Ն. Ադոնցը նշում է, որ ինչպես *խնձոր*-ում և *սալոր*-ում, hallùru-ի վերջին վանկը դարձել է *-որ*, իսկ hallùru-ն, ըստ նրա, սեմական չէ, այլ ավելի շուտ՝ ասիանիկ փոխառություն²⁷¹, այսինքն՝ խեթա-լուվական:

²⁶⁸ Ն. Ադոնց, Երկեր, Գ, Վաղ շրջանի փոխառությունները հայերենում, էջ 392:

²⁶⁹ Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 4, էջ 290:

²⁷⁰ Գ. Բ. Ջահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 673:

²⁷¹ Հմմտ. Ն. Ադոնց, Երկեր, Գ, Վաղ շրջանի փոխառությունները հայերենում, էջ 388:

Հր. Աճառյանը նույնպես այն կապում է հունարեն *ὄλυρα*՝ *հաճար*-ի և լատիներեն *olus, oleris*՝ *բանջար* բառերի հետ²⁷², իսկ Գ. Բ. Ջահուկյանի կարծիքով՝ *ոլոռ*-ը, հավանաբար, ակկադական փոխառություն է սեմական աղբյուրից՝ *halluru(m)*²⁷³:

Քսենոսի մասին Ն. Ադոնցը գրում է, որ վարանում է այն համեմատել հայերեն *բողկ*-ի և վրացերեն *boloki*-ի հետ, թեև, ըստ Գ. Բ. Ջահուկյանի, *բողկ*-ը կապված է *ruglu*-ի հետ²⁷⁴: Նմանությունը, թեև գայթակղիչ է, բայց Ն. Ադոնցը հավանական է համարում *բողկ*-ի ընդհանուր ծագումը հունարեն *βόλβος*-ի՝ *սոխի*, լիտ.՝ *bumbuly's*-ի՝ *կարմիր բողկի* հետ:

Ըստ Հր. Աճառյանի՝ *բողկ*-ը կազմված է *բող* բառից, որ նշանակում է *ծիլ*, *բույս*, իսկ *կ*-ն մասնիկ է, որ կցվել է *բող*-ին: Ասորական *pūglā* բառի հետ նմանությունը Հր. Աճառյանը պատահական է համարում²⁷⁵:

Հատկանշական են Ն. Ադոնցի կողմից հունական որոշ բառերի ստուգաբանություններն ու մեկնությունները: Այսպես, նա նշում է, որ հունահռոմեական աշխարհում ամուսնության խնդրում օժիտը շատ կարևոր դեր էր խաղում: Հույների մոտ այն կոչվում էր *φέρνη* կամ *προίξ*, իսկ հռոմեացիների մոտ՝ *dos*: Նրանց մոտ ընդունված էր նաև, որ, իբրև օժիտի փոխհատուցում, փեսան հարսնացուին ընծաներ տար, որ կոչվում էին *προγαμιαία δωρεά*, *ante nuptias donatio*:

Ծագումնաբանական տեսակետից դասական *donatio*-ն ոչ այլ ինչ էր, եթե ոչ հեռավոր անցյալի մի հուշ՝ երբեմնի սովորության, երբ ամուսինը կին էր ձեռք բերում նվերներ տալով, այլ կերպ՝ գնում էր նրան: Ն. Ադոնցը նշում է, որ հնագույն ժամանակներում սա գոյություն ուներ նաև հայերիս մոտ՝ հետևելով «Արտաշես և Սաթենիկ» ավանդազրույցի՝ պատմահոր կողմից այլաբանորեն ընկալման վրա, ըստ որի՝ ոսկետոլ-շիկափոկ պարանը նշանակում է կարմիր մորթի, որ շատ թանկ էր գնահատվում ալանների մոտ, արքայական թոկն էլ ներկայացվում է իբրև կաշվից, այսինքն՝ բարձրորակ կաշվից հյուսած: Մ. Խորենացու այս բացատրությունը կարևորվում է նրանով, որ արտացոլում է իր ժամանակվա պատկերացմամբ գլխագնով կատարվող ամուսնությունը: Այն ամենը, ինչ Արտաշեսը տալիս է թագավորի դստեր

²⁷² Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 3, էջ 551:

²⁷³ Գ. Բ. Ջահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 600:

²⁷⁴ Ն. Ադոնց, Երկեր, Գ, էջ 134:.

²⁷⁵ Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 1, էջ 465:

համար՝ մորթի և ոսկի, Մ. Խորենացին արտահայտում է *vardank՝ վարձապրություն* բառով: Նույնը, ըստ Ն. Ադոնցի, չի կարելի ասել օժիտի մասին նրա վկայությունների վերաբերյալ: Հարսնացուի բաժինքի իմաստով գրաբարում *aužit*, **օժիտ** բառի առկայությունը չափազանց կասկածելի է դարձնում Հուստինիանոսի այն պնդումները, թե հայ կանայք ամուսնանում էին առանց օժիտի: Ն. Ադոնցը գրում է. «Հիշյալ բառը պատկանում է հայոց լեզվի ոչ արիական տարրերի թվին, այդ պատճառով էլ նրա հնությունը կասկածից դուրս է»²⁷⁶: Ն. Ադոնցը ասորական օրենքների ժողովածուից հետևյալ մեջբերումն է անում. «... այն, ինչ ամուսինը տալիս է կնոջը, կոչվում է *ծաբեա՝* պարսկերեն՝ *dastir*, ասորերեն՝ *zabhda* կամ *mahra՝*»²⁷⁷:

Այստեղ հիշատակված *zabhda* բառը ստուգաբանորեն համապատասխանում է հայերեն *aužit*, *աւժիտ*-ին. եռատառ *z-b-d* արմատը, ըստ Ն. Ադոնցի, հավասարազոր է հայերենի *ւ-ժ-տ*-ին՝ հնչյունների սովորական տեղափոխությամբ ու ընդհատումով:

Հռոմեական *προιξ* և *ծաբեա՝* հասկացությունները, Ն. Ադոնցի վկայմամբ, հայկական գրավոր որոշ հիշատակարանների մեջ մտան *պռոյգ* և *տրուայր* ձևով: Բացի դրանից՝ այս հասկացությունները, մինչև կիլիկյան մատենագրությունը, հավանաբար խորթ էին հայոց կյանքին: Ն. Ադոնցը ենթադրում է, որ հայկական օժիտն ու վարձանքը, ըստ էության, համարժեք են հունական *προιξ*-ին և *ծաբեա՝*-ին կամ *dos*-ին և *donation*-ին²⁷⁸:

Ամփոփելով Ն. Ադոնցի վերոնշյալ ստուգաբանական դիտարկումները՝ ընդգծենք.

Ա) Ն. Ադոնցը խոսում է *ւ-ի՝ այս, այդ, այն* դերանունների՝ գործիական հոլովում պահպանված լինելու մասին: Թվում է՝ ժամանակակից հայերենի *սրանով, դրանով, նրանով* ձևերի՝ այսու, այդու, այնու-ին փոխարինելը (և ընդհանրապես, թեք հոլովներում տարահիմքությունը) պայմանավորված է հենց այդ *ւ-ի՝* որպես գործիականի հոլովակազմիչ այլևս չդիտարկվելու իրողությամբ: Գործիական հոլովի համար ստեղծվեց *-ով* ընդհանրական հոլովակերտը, որն էլ մյուս կողմից դարձավ գրաբարյան խառն հոլովումների անհետացման հիմնապատճառներից մեկը:

²⁷⁶ Ն. Ադոնց, Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, էջ 216:

²⁷⁷ Նույն տեղում:

²⁷⁸ Հմմտ. նույն տեղում, էջ 220:

Բ) Կրավորական վ ածանցի ծագման մասին Ն. Ադոնցի հայացքներն ընդունելով հանդերձ՝ պետք է նկատենք, որ ազդու-ի՝ *ազդող*-ին զուգահեռ նաև *ազդվող* իմաստը, *կծու*-ի՝ կծող-ին հարակա *կծվող* իմաստն ունենալը երկրորդային է մեր դիտարկմամբ, քանի որ դրանց մեջ ածականական արժեքն առավել ցայտուն է, քան բայականը, և այդ պատճառով դրանց մեջ կրավորականության երբեմնի հետքեր տեսնելը միանշանակ չէ: Ինչ վերաբերում է երկրորդ փաստարկին, ըստ որի՝ ու-ն իւ-ից է ծագել, ապա դարձյալ որոշ վերապահում կցուցաբերենք, քանի որ ու-ն իւ-ից կարող է առաջացած լինել միայն *ի* հոլովման բառերի դեպքում, քանզի *իւ*-ն այլ բան չէ, քան գործիականի հոլովակերտ՝ *ի* հոլովման բառերի համար: Իսկ ու-ն գործիականի վերջավորության տարածնության դրսևորումն է ու հոլովման բառերի դեպքում, երբ մի դեպքում *ո*-ին ոչինչ չէին հավելում, մյուս դեպքում ավելացնում էին *ւ*: Այս ու-ն այդ *ւ*-ի հավելման արդյունքն է, այսինքն՝ գործիականի ցուցիչ, որի մասին, ի դեպ, վերը խոսում էր նաև Ն. Ադոնցը՝ շեշտելով, որ *ւ*-ի գրությունը պահպանվել է *այս, այդ, այն* դերանունների գործիականում: Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ կրավորականի ու (*վ*) ածանցը կարող է բխեցվել գործիական հոլովից:

Գ) *Ի* նախդրի նկատմամբ գիտնականի դիրքորոշումը համոզիչ է, հատկապես՝ ձայնավորից առաջ *յ*-ի ի հայտ գալու նրա բացատրությունը, որ ավելի հիմնավոր է դառնում ինչպես V դարի, այնպես էլ միջնադարի մատենագրության մեջ կրկնակի նախդրի գործածությամբ, դիցուք, ի յանձն առնուլ (Ուռհ., 322), ի յերկիր կործանել (422): Այս իրողությունը կա՛մ hiatus-ի ակտիվ գործածումն է ապացուցում, կա՛մ կրկնակի նախդրի՝ իմաստի սաստկության դրսևորման միջոց լինելը: Hiatus-ի ակտիվության դեմ է վկայում, սակայն, գրաբարյան անցյալ կատարյալ ժամանակի եզակի III դեմքում աճականի ավելացման պարագայում՝ *էարկ, էանց* ձևերի առկայությունը՝ *էյարկ, էյանց* սպասելի տարբերակների փոխարեն: Ուստի մնում է ենթադրել, որ կրկնակի նախդրի գործածությունը իմաստի սաստկության արտահայտման միջոց է եղել:

Դ) Բառավերջի *յ*-ի՝ համաբանությամբ մեծաթիվ, այդ թվում փոխառյալ բառերի վրա տարածվելը Ն. Ադոնցը տարօրինակ է համարում, բայց չէ՞ որ փոխառու լեզուն փոխառյալ ձևերը ենթարկում է իր լեզվական կանոններին: Յ-ի հավելումը

բառավերջում *ա*-ից և *ո*-ից հետո՝ մեր լեզվական օրինաչափություններից է եղել: Այլ բան, եթե նա մերժեր այդ օրինաչափությունը մեր լեզվի շրջանակներում՝ դուրս չգալով փոխառությունների մակարդակ: Այս օրինաչափությունն անշուշտ գիտեր նաև Ն. Ադոնցը, քանի որ իր իսկ խոսքերով՝ «յ-ի ձայնը երևան էր գալիս և որոշակի լսվում շեղ հոլովներում և բարդության մեջ. ծառա, բայց ծառայ-ի, ծառայ-ական»²⁷⁹:

Ե) *Ամէն (ամեն)* բառի ստուգաբանական փորձերում, որոնք, իրոք շատ հետաքրքիր ու համոզիչ են, Ն. Ադոնցն *ամեն*-ի առաջացումը մի դեպքում կապում է պարսկական *համ*-ի և հայկական *եան* ածանցի հետ, որի պարզեցմամբ առաջացել են՝ *համ+եան>համեն>ամեն* հերթագայությունները, իսկ մյուս դեպքում նա *համ*-ը և արդեն *մեն*-ը ծագած է համարում *միայն*-ից: Այս դեպքում կախյալ է մնում *ա*-ի հարցը: Ն. Ադոնցը *ամ*-ը դիտում է որպես պարսկական *համ*-ի հայեցի ձևը, սակայն այդ *համ*-ը արմատ է, թե՛ ածանց, չի նշում: Բացի այդ՝ հիշենք, որ հայերենում կան *հ* վերջնահնչյունով փոխառյալ բառեր պարսկերենից, որոնք այդ *հ*-ն չեն զգում հայեցի ձև ապահովելու համար, օրինակ՝ *աշխարհ* բառը, ուստի առավել ևս բառասկզբում *հ*-ի անկումը կասկածահարույց է: Հ-ն հազագ լինելու դեպքում կարող է ընկնել: Մյուս կողմից պետք է շեշտենք, որ *էն (են)*-ը ոչ թե *եան*-ի հնչյունափոխությունն է, մեր կարծիքով, այլ *այն*-ի: Այստեղ մնում է միայն *համ*-ի հարցը, որը, թվում է, հունաբան դպրոցից փախառած ածանցն է՝ *համապետեղ, համամիտ*, հենց *համայն* և այլ բառերում: Սակայն մեր այս տեսակետը բացառում ենք միաժամանակ այն հանգամանքով, որ *համ* փոխառյալ նախաձանցը ոչ մի ուրիշ բառում *ամ*- ձևով հանդես չի գալիս:

Զ) Ն. Ադոնցի տաղանդը փայլում է թե՛ բնիկ, թե՛ փոխառյալ բառերի ստուգաբանական քննություններում: Խորամուխ լինելով տարբեր լեզուների ուսումնասիրության մեջ՝ նա կարողանում է դյուրությամբ ի խույզ և ի խնդիր լինել լեզվական տարաբնույթ զուգաբանությունների: Ասվածի հավաստումն են ոչ միայն մեր այս աշխատանքում տեղ գտած նրա ստուգաբանությունները, այլև հայկական տեղանունների վերաբերյալ նրա ուշագրավ մեկնաբանությունները տարբեր աշխատություններում, որոնք արժանի են առանձին ուսումնասիրության:

²⁷⁹ Նույն տեղում, էջ 326:

Է) Ն. Ադոնցը լեզվական փոխառությունների վերաբերյալ ուներ հաստատուն դիրքորոշում, որն արդիական է նաև այսօր. ժամանակակից գրական լեզվի հարստացման աղբյուրը միշտ պետք է դարձնել նրան նախորդող շրջանների լեզվական տարբերակները՝ գրաբարը, միջին հայերենը, որոնք յուրօրինակ գանձարաններ են: Օտար տարրերի ներթափանցումը մեր լեզու պետք է հնարավորինս սահմանափակել. «Շատ լեզվական հարստություններ տեղի են տվել օտարամուտ տարրերի և իրենք բյուրեղացել գրավոր հիշատակարաններում: Նրանք մեռած չեն, այլ սպանված. իսկ սպանվածներն ամեն տեղ արժանի են հիշողության...»²⁸⁰:

²⁸⁰ Նույն տեղում, էջ 311:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1) Հռչակավոր հայագետ, բյուզանդագետ, ուրարտագետ Ն. Ադոնցի պատմագիտական աշխատությունները հանրահայտ են և՛ Հայաստանի, և՛ արտերկրի գիտական շրջանակներում, Ն. Ադոնցն ամենաշատ մեջբերվող գիտնականներից է պատմագիտական, մշակութաբանական և ազգագրական հետազոտություններում, որոնք վերաբերում են Հին Արևելքի, Հռոմի և Բյուզանդիոնի գոյության ժամանակներին, սակայն նույնքան ազդեցիկ են Ն. Ադոնցի լեզվաբանական հետազոտությունները, որոնք ընդգրկում են հայերենագիտության բազմաթիվ բնագավառներ՝ սկսյալ հայ քերականագիտության պատմությունից, հայոց լեզվի ծագման և բնույթի, շրջանաբաժանման վերաբերյալ տեսություններից մինչև հայերենի և հնդեվրոպական ու ոչ հնդեվրոպական լեզուների առնչությունները, հատկանվանագիտական, բառաքննական վերլուծությունները:

2) Ն. Ադոնց լեզվաբանի ամենահայտնի աշխատությունը, որով նա դարձավ հայ քերականագիտության պատմության հիմնադիրներից մեկը, «Дионисий Фракийский и его армянские толкователи» ռուսերեն հետազոտությունն է: Այս աշխատությունը տեսական բանասիրական, լեզվաքերականական վերլուծությունների հետ մեկտեղ եզակի սկզբնաղբյուր է հայ քերականագիտության հին և հնագույն շրջանների համար: Ն. Ադոնցը հավաքել է քերականների ձեռագրերը և զուգադրահամեմատական վերլուծություն կատարել՝ կազմելով «Քերականական արվեստ»-ի մեկնության քննական միակ բնագիրը:

3) Դ. Թրակացու երկը երեք անձերի թարգմանություն է՝ երեք ձեռագրերով վկայվող, երեք նշանավոր հայ քերականների, որոնք թարգմանությունից հետո ձեռնամուխ են եղել ինքնուրույն մեկնությունների ստեղծմանը՝ արդեն հայերենի հիմքի վրա:

4) Դ. Թրակացու երկի հայերեն թարգմանությունն իր պարունակած բազմաթիվ հավելումների պատճառով ոչ թե փոխադրություն է, այլ ազատ թարգմանություն: Գ. Բ. Զահուկյանի և Ն. Ադոնցի ըմբռնումները Դ. Թրակացու երկի հայ թարգմանիչների և ապա մեկնիչների առումով փոխլրացնող են:

5) Ն. Ադոնցի լեզվաբանական հետաքրքրությունների շրջանակում լուրջ տեղ է գրավել հայոց լեզվի բնույթի խնդիրը: Նա փորձել է բացահայտել Ֆ. Մյուլլերի, Պոլ դը Լագարդի, Ֆ. Վինդիշմանի, ապա Հ. Հյուբշմանի հայագիտական տեսությունների բացթողումները՝ հայերենում բնիկ հնդեվրոպական հիմքին զուգահեռ վերականգնելով կովկասյան և սեմական մեծ ենթաշերտեր:

6) Կարևոր են հայոց լեզվի շրջանաբաժանման ադոնցյան սկզբունքները, որոնց վրա հիմնվելով՝ Գ. Բ. Ջահուկյանն ու Հր. Աճառյանը զարգացրին հայոց լեզվի պատմությունը՝ իբրև ինքնուրույն գիտակարգ: Ն. Ադոնցը կատարեց գրաբարի եռափուլ շրջանաբաժանում՝ դասական գրաբարից առանձնացնելով հունաբան հայերենը: Գիտնականի համոզմամբ, հին հայերենով ավանդված սկզբնաղբյուրների քննությունը ցույց է տալիս, որ դասական հայերենի վրա երկու հիմնական ազդեցություն է գործել՝ հին՝ ասորա-պարսկական, և նոր՝ հունական:

7) Ն. Ադոնցն առաջինն էր, որ քննական հայացքով վերանայեց Մ. Մաշտոցի կենսագրությունը և հայոց գրերի գյուտի պատմությունը՝ օտար աղբյուրների ընձեռած նյութերի հիման վրա փորձելով վերականգնել մեր պատմության ամենավճռական փուլերից մեկի ժամանակագրությունը՝ անկախ դավանաբանական իրողություններից: Նա նոր լույսով դիտարկեց գրերի գյուտի պատմությունը՝ այն տեղափոխելով, ի հակադրություն ընդունված տեսության, չորրորդ դարավերջ՝ դրանով իսկ վերանայելով ու շտկելով Վռամշապուհի թագավորության տարիները՝ բացահայտելով Մ. Մաշտոցի իրական կերպարը, նրա առնչությունները նեստորականության ներկայացուցիչ Թեոդորոս Մոպսուեստացու հետ:

8) Իր լեզվագիտական աշխատությունները Ն. Ադոնցը գրել է մեթոդաբանական հստակ մշակված հիմքի վրա: Պատմահամեմատական, վերականգնման և արտահարաբերման մեթոդների օգնությամբ հայագետը կարողացել է այնպիսի ստուգաբանություններ և բառաքննական դատողություններ կատարել, որոնք իրենց արդիականությունը չեն կորցրել ցայսօր:

9) Ն. Ադոնցի սկզբունքներից մեկը, որով նա տարբերվում է մյուս ուսումնասիրողներից, հետազոտության առարկայի արտաքին ձևին զուգահեռ՝ ներքին բովանդակության վերականգնումն էր և դեպքերի, իրադարձությունների հետ մեկտեղ՝

դեմքերի ու անձանց բացահայտումը, որը նրա բառաքննական և հատկանվանագիտական դիտարկումները դարձնում է ամբողջական և առավել հավաստի:

10) Հայաստանի և հայոց լեզվի պատմության վաղնջական ժամանակները Ն. Ադոնցի ուշադրության կենտրոնում են եղել: Նա քննել է Ուրարտու պետական կազմավորումը. Ուրարտուի պատմությունը դիտարկում է որպես հայոց պատմության վաղնջական շրջան, բայց մյուս կողմից պետք է նկատի ունենալ, որ նա նույնական չի համարում հայերին և ուրարտացիներին, առավել ևս՝ հայերենը և ուրարտերենը՝ բնորոշելով դրանք որպես էթնիկական ու լեզվական հատվող, բայց ոչ նույնական երևույթներ: Գիտնականի համոզմամբ՝ ուրարտա-հայկական պատմամշակութային հաջորդականությունը կայացած փաստ է:

11) Հայագետի լեզվաբանական ժառանգության մեջ կարևորագույն տեղ են զբաղեցնում տեղանվանագիտական և տոհմանվանագիտական հետազոտությունները: Յուրաքանչյուր տեղանուն Ն. Ադոնցը քննում է նախ տեղագրական տեսանկյունից, ապա տեղագրությունը լրացվում է հատկանունների լեզվաբանական բնութագրիչներով:

12) Տեղանունների և տոհմանունների քննությունը ցույց տվեց, որ բոլոր տոհմանուններն ուղղակի դառնում էին տեղանուն, ամենից առաջ՝ խոշոր բնականուն, վերջիններից ծնվում էին նույնանուն փոքր բնականուններ՝ բերդերի, շեների, ավանների և այնտեղ գտնվող վանքերի անուններ, զուգահեռաբար՝ ֆիզիկաաշխարհագրական խոշոր միավորների անվանումներ՝ լեռների, լճերի և գետերի, իսկ վերջում արդեն, ուղիղ կամ ածանցների հավելմամբ, ձորերի, դաշտերի, լեռնանցքների անուններ: Նշանակում է՝ տոհմանուն տեղանվանահիմքը խիստ արդյունավետ արմատ է ածանցմամբ և բառաբարդմամբ նոր տեղանունների կազմության համար: Ունենք տոհմանուն→բնականուն→ջրանուն→լեռնանուն անցումների բազմաթիվ օրինակներ:

13) Ն. Ադոնցի հատկանվանագիտական, ստուգաբանական դիտարկումները ոչ միայն պատմական, այլև գիտական մեծ արժեք ունեն անգամ 21-րդ դարում՝ իրենց ինքնատիպության և խորքային բովանդակության շնորհիվ: Ն. Ադոնցը երբեք չի

պաշտպանել կրկնվող տեսությունները և ոչ մի բնագավառում, անգամ առանձին բառերի ստուգաբանության հարցում նա գրեթե երբեք չի կրկնում նախորդներին, և դա ոչ թե տարբերվելու նպատակով, այլ ինքնատիպ մտածողության, հին ու նոր բազմաթիվ լեզուների քաջիմացության շնորհիվ:

14) Հայոց անձնանվանագիտության բնագավառում եզակի գիտնականներ են առանձնացել իրենց նշանավոր աշխատանքներով: Առաջինը Հր. Աճառյանն է, ապա, համարձակ կարող ենք պնդել, Ն. Ադոնցը: Անձնանունների ուսումնասիրության հարցում Ն. Ադոնցը նոր մեթոդ է կիրառում, որը ստուգաբանվող միավորների իմաստների լեզվական, բանահյուսական, մշակութաբանական հիմքերի վրա կառուցվող բառանջատումն է և համակցումը:

15) «Աստվածուրացությունը ոչ միայն բարոյական լքումի նշան», այլև «ինքնակոծության վատթար տեսակ» համարող Ն. Ադոնցը դիցանունների իր քննությամբ միավորում է հայ և օտար դիցարանները, համեմատում տարբեր աստվածություններին, բացահայտում, որ նրանք հաճախ միմյանց առնչակից են կա՛մ գործառույթով, կա՛մ հենց անվամբ: Նա աստվածության լեզվական և դիցաբանական մակարդակները հաճախ չի տարանջատում, որը երբեմն արդարացված չէ. դրանք, կարծում ենք, պետք է նաև առանձին քննել. աստվածության ծագման մասին լեզվաբանական և դիցաբանական մակարդակների համատեղումը ոչ միշտ է տեղին: Սա գրեթե նույնն է, ինչ տոհմի ծագումը պարզելիս հիմնվել բացառապես հատուկ անունների ծագումնաբանության վրա, որը հիմնականում ճիշտ է, բայց կան նաև բացառություններ:

16) 21-րդ դարում էլ գիտական շրջանառության մեջ են ադոնցյան ստուգաբանությունները, որոնցից ակնհայտ են նրա լեզվական խորը գիտելիքները՝ սանսկրիտից, հին հունարենից, պահլավերենից, զենդերենից մինչև ժամանակակից լեզուներ, որի շնորհիվ Ն. Ադոնցի ստուգաբանությունները դառնում են բավական անխոցելի՝ իրենց հիմքում ունենալով պատմահամեմատական լեզվաբանության օրենքները հնչյունական հաստատուն անցումների և իմաստային փոխանցումների վերաբերյալ:

17) Ն. Ադոնցն իր քննած փոխառյալ բառերին հիմնականում նոր մոտեցում է ցուցաբերում: Նկատելի է մի ուշագրավ միտում. հայագետը փորձել է զուգադրել տարբեր լեզուներում արտահայտության և բովանդակության պլանների ընդհանրություններ ունեցող հատուկ և հասարակ անունները՝ վերականգնելով դրանց հնարավոր նախատիպերը և սկզբնաձևերը, առաջարկելով արտասանական և ուղղագրական տարբերակներ, որոնք հաճախ նոր լույս են սփռում քննվող երևույթների և նրանց անվանումների ծագումնաբանության վրա:

18) Ն. Ադոնցը լեզվական փոխառությունների վերաբերյալ ուներ հաստատուն դիրքորոշում, որն արդիական է նաև այսօր. ժամանակակից գրական լեզվի հարստացման աղբյուրը միշտ պետք է դարձնել նրան նախորդող շրջանների լեզվական տարբերակները՝ գրաբարը, միջին հայերենը, որոնք յուրօրինակ գանձարաններ են: Օտար տարրերի ներթափանցումը մեր լեզու պետք է հնարավորինս սահմանափակել:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Աբաջյան Ա., Դիլբարյան Ն., Յուզբաշյան Ա.**, Հայոց լեզվի պատմություն// Ն.Դիլբարյան, Ներածություն, Եր., ԵՊՀ հրատարակչություն, 2017, 442 էջ:
2. **Աբեղյան Մ.**, Հայ ժողովրդական առասպելները Մովսես Խորենացու Հայոց պատմության մեջ, Երկեր,, ՀՍՍՀ ԳԱ, , Եր., 1985, հ. Է, 602 էջ:
3. **Աբեղյան Մ.**, Երկեր, ՀՍՍՀ ԳԱ, Եր., 1966, հ. Ա, 594 էջ:
4. **Ադոնց Ն.**, Քննություն Մովսես Կաղանկատվացու, Մայր աթոռ սր. էջմիածին, 2005, 174 էջ:
5. **Ադոնց Ն.**, Երկեր, ԵՊՀ հրատարակչություն, Եր., 2006, հ. Ա, 327 էջ:
6. **Ադոնց Ն.**, Երկեր, ԵՊՀ հրատարակչություն, Եր., 2006, հ. Բ, 341 էջ:
7. **Ադոնց Ն.**, Երկեր, ԵՊՀ հրատարակչություն, Եր., 2008, հ. Գ, 346 էջ:
8. **Ադոնց Ն.**, Երկեր, ԵՊՀ հրատարակչություն, Եր., 2012, հ. Ե, 335 էջ:
9. **Ադոնց Ն.**, Երկեր, ԵՊՀ հրատարակչություն, Եր., 2006, հ. Զ, 272 էջ:
10. **Ադոնց Ն.**, Երկեր, ԵՊՀ հրատարակչություն, Եր., 2014, հ. Է, 286 էջ:
11. **Ադոնց Ն.**, Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, «Հայաստան» հրատ., Եր., 1987, 639 էջ:
12. **Ադոնց Ն.**, Հայաստանի պատմություն, «Հայաստան» հրատ., Եր., 1972, 428 էջ:
13. **Ալիշան Ղ.**, Հայապատում, Վենետիկ, 1901, 650 էջ:
14. **Ակինեան Ն.**, Կիրիոն կաթողիկոս վրաց, Մխիթարեան տպարան, Վիեննա, 1910, 315 էջ:
15. **Աղայան Էդ.**, Լեզվաբանական հետազոտություններ, Եր. համալս. հրատ., Եր., 2003, 424 էջ:
16. **Աճառյան Հր.**, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. Բ, ՀՍՍՀ ԳԱ, Եր., 1961, 478 էջ:
17. **Աճառյան Հր.**, Հայոց լեզվի պատմություն, I, Պետական համալսարանի հրատ., Եր., 1940, 355 էջ:
18. **Աճառյան Հր.**, Հայոց գրերը, «Հայաստան», Եր., 1968, 400 էջ:

19. **Այվազյան Ս.**, Ուրարտերեն-հայերեն: Բառապաշար և պատմահամեմատական քերականություն, ԵՊՀ հրատարակչություն, Եր., 2008, 398 էջ:
20. **Առաքելյան Բ. Ն., Ջահուկյան Գ. Բ., Սարգսյան Գ. Խ.**, Ուրարտու-Հայաստան, «Լույս», Եր., 1988, 170 էջ:
21. **Ասատրյան Գ.**, Նիկողայոս Ադոնցը և քրդերի՝ Հայաստան ներթափանցման պատմությունը, Իրան-նամէ, ԵՊՀ Արևելագիտության ֆակուլտետ, Երևան, 1995, թիւ 3, էջ 3-7:
22. **Գ. Գյուզալյան**, Նիկողայոս Ադոնցը որպես պատմաբան, «Դպրեանուց», Լիբանան, 1943, 32 էջ:
23. **Իշխան Մ.**, Երեք մեծ հայեր, «Էտվան» հրատ., Պեյրուֆ, 1952, 98 էջ:
24. **Խաչատրյան Լ.**, Բառակազմական և ձևաբանական կաղապարները ժամանակակից հայերենում, «Ձանգակ-97», Եր., 2011, 270 էջ:
25. **Խաչատրյան Վ.**, Հայկական տեղանունները սեպագիր աղբյուրներում, «Նաիրի», Եր., 2012, 179 էջ:
26. **Համբարձումյան Վ.**, Հայերենի բառաքննական և ստուգաբանական ուսումնասիրություններ, ՀՀ ԳԱԱ, Եր., 2012, 223 էջ:
27. **Հովհաննիսյան Լ.**, Բառերի մեկնությունները հինգերորդ դարի հայ մատենագրության մեջ, ՀՀ ԳԱԱ, «Գիտություն», Եր., 2016, 155 էջ:
28. **Հովհաննիսյան Լ.**, Գրաբարի բառապաշարի իմաստային խմբերի քննություն, ՀՀ ԳԱԱ, Եր., 2008, I մաս, 129 էջ:
29. **Հովհաննիսյան Լ.**, Գրաբարի բառապաշարի իմաստային խմբերի քննություն, ՀՀ ԳԱԱ, Եր., 2012, II մաս, 182 էջ:
30. **Հովհաննիսյան Լ.**, Հայերենի իրանական փոխառությունները, Հայկական ԽՍՀ ԳԱ հրատարակչություն, Եր., 1990, 302 էջ:
31. **Հովսեփյան Լ.**, Գրաբարի բառակազմությունը, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Եր., 1987, 375 էջ:
32. **Մանանդյան Հ.**, Երկեր, Բ, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Եր., 1978, 646 էջ:

33. **Մառ Ն.**, Արքաուն. քրիստոնյաների մոնղոլերեն անվանումը հայ քաղկեդոնականների խնդրի առնչությամբ, Երևան, Պատմության ինստիտուտ, Եր., 2016, 217 էջ:
34. **Մուրադյան Ա.**, Հունաբան դպրոցը և նրա դերը հայերենի քերականական տերմինաբանության ստեղծման գործում, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Եր., 1971, 363 էջ:
35. **Պետրոսյան Ա.**, Հայկական դիցարանի հնագույն ակունքները, Պատմաբանասիրական հանդես, ՀՀ ԳԱԱ, Եր., 2004, N 2, էջ 205-233:
36. **Պետրոսյան Վ. Զ.**, Ընդհանուր և հայ լեզվաբանության հարցեր, «Փրինթինֆո», Եր., 2015, 347 էջ:
37. **Զահուկյան Գ. Բ.**, Հայոց լեզվի պատմություն. նախագրային շրջան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Եր., 1987, 748 էջ:
38. **Զահուկյան Գ. Բ.**, Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում, Վ. Մ. Մոլոտովի անվ. Երև. պետ. համալս., Եր., 1954, 396 էջ:
39. **Սվազյան Հ.**, Ճեները և «Ճենաց աշխարհը» ըստ հայկական աղբյուրների, Պատմա-բանասիրական հանդես, ՀՀ ԳԱԱ, Եր., 1976, N 3, էջ 203-212:

ՕՏԱՐԱԼԵԶՈՒ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Hübschmann H.**, Armenische Studien, Breitkopf a. Härtel, Leipzig, 1881, Teil 1, S. 102:
2. **Hübschmann H.**, Die semitischen Lehnwörter im Altarmenischen, Armeniaca. Harrassowitz Verlag, Leipzig, 1847, S. 268:
3. **Hübschmann H.**, Die Umschreibung der Iranischen Sprachen und des Armenischen, Breitkopf a. Härtel, Leipzig, 1882, S. 44:
4. **Müller Fr.**, Beiträge zur Lautlehre der Armenischen Sprache, K. Hof- u. Staatsdruckerei, Wien, 1862, S. 34:

5. **Капанцян Гр.**, Историко-лингвистические работы, АН АрмССР, Ер. 1975, т. II, с. 541:
6. **Grellmann M.**, Die Zigeuner, Susan tebbutt, Dessau-Leipzig, 1783, S. 138:
7. **Podossinov A.V.**, Das Schwarze Meer in der geokartographischen Tradition der Antike und des frühen Mittelalters. II. Die Halbinsel Krim, das Asosche Meer und die Straße von Kertsch, Ancient West and East, Volume 3, N 2, Moskau, 2004, S. 508:
8. **Funke C. Ph.**, Neues Real-Schullexikon: enthaltend die zur Erklärung der alten Klassiker nothwendigen Hülfswissenschaften vornämlich Geographie, Geschichte, Philosophie, Alterthümer und Mythologie, Franz Baas Buchhandlung, Tom 5, Braunschweig, 1805, S. 1041:
9. **Mannert K.**, Geographi der Griechen und Römen aus ihren Schriften, Hahn'fchen Verlags-Buchhandlung, Leipzig, 1820, Tom 4, S. 812:
10. **Mahé J.-P.**, Confession religieuse et identité nationale dans l'église arménienne du VII^e au XI^e siècle, Des parthes au califat quatre lecons sur la formation de l'identité arménienne, Monographies 10, Paris, 1997, S. 58:
11. **Bartikian H.**, Les gaurades à travers les sources arméniennes, L'arménie et Byzance Hostoire et culture, Sorbonne, 1996, S. 242:

ԹԵՐԹԵՐ, ԱՄՍԱԳՐԵՐ

1. «Բանբեր Հայաստանի արխիվների», 1966, N 3:
2. «Էջմիածին», 2012, N 3:
3. «Լրաբեր հասարակական գիտությունների», 1998, N 1:
4. «Պատմա-բանասիրական հանդես», 1962, N 4:
5. «Սիսիանի ծայն», 2011, N 8:
6. «Սյունյաց երկիր», 2011, N 17:
7. «Հանդես ամսօրեայ», 1925, թիւ 7-8:
8. «Պատմա-բանասիրական հանդես», 2004, N 2:
9. «Պատմա-բանասիրական հանդես», Եր., 2006, N 3:
10. «Պատմա-բանասիրական հանդես», Եր., 1976, N 3:

11. «Իրան-նամէ», Եր., 1995, թիւ 3:

ԲԱՌԱՐԱՆՆԵՐ

1. **Աճառյան Հր.**, Հայոց անձնանունների բառարան, Եր., 1962:
2. **Աճառյան Հր.**, Հայերէն արմատական բառարան, Եր., 1926:
3. **Ալգերեան Մ., Ճէլալեան Գ.**, Առձեռն բառարան հայկազնեան լեզուի, Վենետիկ, 1865:
4. **Հակոբյան Թ. Խ., Մելիք-Բախշյան Ստ. Տ., Բարսեղյան Հ. Խ.**, Հայաստանի և հարակից շրջանների բառարան, Եր., 1988:
5. **Մալխասեանց Ստ.**, Հայերէն բացատրական բառարան, Եր., 2010:
6. **Ջահուկյան Գ. Բ.**, Հայերեն ստուգաբանական բառարան, Եր., 2010:

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

http://hay-gehi-haxtanak.blogspot.com/2013/06/blog-post_12.html

[Н. Деметр, Н. Бессонов, В. Кутенков, История цыган- новый взгляд, Воронеж, 2000:](#)

**ՀԱՎԵԼՎԱԾ
ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ**

Տարեթիվ	Վայր	Վերնագիր	Աղբյուր
1925	Վիեննա	Մաշթոց և նրա աշակերտները ըստ օտար աղբյուրների	Ազգային մատենադարան
1927	Paris	Tarkou chez les anciens arméniens	Revue des études arméniennes Tome VII
1970	Louvain	Denys de Thrace et les commentateurs arméniens	-
1915	ПЕТРОГРАДЪ	ДИОНИСИЙ ТРАКІЙСКІЙ И АРМЯНСКІЕ ТОЛКОВАТЕЛИ	-
1970	LISBON	ARMENIA IN THE PERIOD OF JUSTINIAN THE POLITICAL CONDITIONS BASED ON THE NAXARAR SYSTEM	-
1933, N 8	Bruxelles	LA PORTEE HISTORIQUE DE L'ORASON FUNEBRE DE BASILE I PAR SON FILS LEON VI LE SAGE	BYZANTION Revue Internationale des Etudes Byzantines
1933, N 8	Bruxelles	NICE'PHORE AU COL ROIDE	BYZANTION Revue Internationale des Etudes Byzantines

1935, N 10	Bruxelles	La famille de Théodorokan	BYZANTION Revue Internationale des Etudes Byzantines
1934, N 9	Bruxelles	Les sceaux des Makhitar	BYZANTION Revue Internationale des Etudes Byzantines
1939, N 14	Bruxelles	NOTES SUR LE LIVRE DES CE'RE'MONIES La question des lacunes	BYZANTION Revue Internationale des Etudes Byzantines
1929/30, N 29	Bruxelles	LES FONDS HISTORIQUES DE L'E'POPE'E BYZANTINE DIGE'NIS AKRITAS	BYZANTION Revue Internationale des Etudes Byzantines
1936, N 11	Bruxelles	L'ARCHEVÊQUE THE'OPHYLACTE ET LE TARONITE	BYZANTION Revue Internationale des Etudes Byzantines
1936, N 11	Bruxelles	LES TARONITES A BYZANCE	BYZANTION Revue Internationale des Etudes

			Byzantines
1936, N 11	Bruxelles	AN ADDITIONAL NOTE ON THE DATE OF MOSES OF CHORENE	BYZANTION Revue Internationale des Etudes Byzantines
1922	New York	Kurdish intrusion into Armenia	The new Armenia
1928	Vienna	Nochmal über Koriun	Handes amsorya
1934, N 8	Bruxelles	L'âge et l'originede Basile I	BYZANTION Revue Internationale des Etudes Byzantines
1934	-	Les le'gendes de Maurice et da Constantin V empereurs de Byzance	Annuaire Inst. Phil. et Hist. Or. 2
1965	LISBONNE	ETUDES ARMENO-BYZANTINES	-
1938	Brüssel	Samuel l'Armenien, roi des Bulgares	Me'moires Acad. R. De Belgique, Cl. d. Lettr. 39
1937	Bruxelles	L'aspect iranien du servage	-
1972	Երևան	Հայաստանի պատմություն	-
1987	Երևան	Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում	-
-	-	Հայկական հարցի լուծման շուրջ	-
1925, թիւ 7-8	-	Անձանօթ էջեր Մաշթոցի եւ նրա աշակերտների կեանքից ըստ օտար	Հանդէս ամսօրեայ

		աղբիւրների»	
2005	Էջմիածին	Քննություն Մովսես Կաղանկատվացու	-
2006	Երևան	Հին հայոց աշխարհայացքը	Երկեր, Ա
2006	Երևան	Տորք Աստված հին հայոց	Երկեր, Ա
2006	Երևան	Տարկուն հին հայերի մոտ	Երկեր, Ա
2006	Երևան	Հայ հին շինականությունը	Երկեր, Ա
2006	Երևան	Հայաստանի ոսկեհանքը	Երկեր, Ա
2006	Երևան	Միհրդատ Եվպատոր և Տիգրան Մեծ	Երկեր, Ա
2006	Երևան	Գրիգոր Լուսավորիչ և Անակ Պարթև	Երկեր, Ա
2006	Երևան	Մարգարան Վասակը պատմաբանների դատաստանի առաջ	Երկեր, Ա
2006	Երևան	Հայոց առաքելությունը Հոնաց աշխարհում (2 դար)	Երկեր, Ա
2006	Երևան	Արտավան Արշակունի	Երկեր, Ա
2006	Երևան	Քաղաքական հոսանքները հին Հայաստանում	Երկեր, Ա
2006	Երևան	Պատկերների խնդիրը	Երկեր, Ա
2006	Երևան	Մամիկոնյան իշխանուհին բյուզանդական գահի վրա	Երկեր, Ա
2006	Երևան	Վասիլ Հայազն (Մեծագործ իշխան)	Երկեր, Ա
2006	Երևան	Բագրատունյաց փառքը	Երկեր, Ա
2006	Երևան	Հայ-ժաթերի ծագման մասին	Երկեր, Ա
2006	Երևան	Դավիթ Բեկ և Տեր Ավետիքի սերունդը	Երկեր, Ա
2006	Երևան	Գրախոսություն-Գ. Գալեմքեարյան Կենսագրություն Սարգիս արքեպիսկոպոսի Սարաֆյան և ժամանակին հայ կաթողիկեայք	Երկեր, Ա

2006	Երևան	Մաշթոց և նրա աշակերտները ըստ օտար աղբյուրների	Երկեր, Բ
2006	Երևան	Հայ մշակույթի սկզբնավորությունը	Երկեր, Բ
2006	Երևան	Հայացած Աստվածաշունչը և անոր պատմական տարողությունը	Երկեր, Բ
2006	Երևան	Կորյունի մասին	Երկեր, Բ
2006	Երևան	Փավստոս Բուզանդը որպես պատմիչ	Երկեր, Բ
2006	Երևան	Քննական նշմարներ Եզնիկի մասին	Երկեր, Բ
2006	Երևան	Գրիգոր Պարթևի հարցարանը և Եզնիկ	Երկեր, Բ
2006	Երևան	Նշանագիր կարգաց բանից Եզնկան Երիցու	Երկեր, Բ
2006	Երևան	Հայր Ն. Ակինյանի պատասխանին պատասխան	Երկեր, Բ
2006	Երևան	Ամպելիոս՝ Քերսոնի եպիսկոպոս	Երկեր, Բ
2006	Երևան	Հայոց նախնական պատմությունը Սեբեոսի երկում և դրա աղբյուրները Մովսես Խորենացու և Փավստոս Բուզանդի երկասիրությունների հետ	Երկեր, Բ
2006	Երևան	Գր. Խալաթյանց, Հայ Արշակունիները Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ	Երկեր, Բ
2006	Երևան	Մովսես Խորենացվո «Հայոց պատմության» թվականի մասին	Երկեր, Բ
2006	Երևան	Մովսես Խորենացու վերաբերմամբ պարոն Լեվիի նորին մասին	Երկեր, Բ
2006	Երևան	Խորենացիական հարցն ու հայր Վարդան Հացունի	Երկեր, Բ
2006	Երևան	Ղևոնդ և Խորենացի	Երկեր, Բ

2006	Երևան	Փոքր Սոկրատի հեղինակը	Երկեր, Բ
2006	Երևան	Քննություն Մովսես Կաղանկատվացու	Երկեր, Բ
2006	Երևան	Փղոսկրյա Ավետարանի արվեստը	Երկեր, Բ
2006	Երևան	Մլքեի Ավետարանի գրության մասին	Երկեր, Բ
2006	Երևան	Շահնամեի քաղաքական ավանդը	Երկեր, Բ
2006	Երևան	Քննական տեղեկագիր պրոֆ. Ն. Ադոնցի	Երկեր, Բ
2006	Երևան	«Դավիթ Բեկ» վեպի պատմական հիմը և գաղափարախոսական արժեքը	Երկեր, Բ
2006	Երևան	Խաչատուր Աբովյանի վախճանը	Երկեր, Բ
2006	Երևան	Պեշիկթաշյան և կցորդ խնդիրներ	Երկեր, Բ
2006	Երևան	Խոսք Ավետիս Ահարոնյանի մասին	Երկեր, Բ
2006	Երևան	Գրական նշմարներ, դեկադանս և սիմբոլիզմ	Երկեր, Բ
2008	Երևան	Արուեստ Դիոնիսեայ Քերականի և հայ մեկնությունք նորին	Երկեր, Գ
2008	Երևան	Գրական նշմարներ. լեզվական-ուղղագրական	Երկեր, Գ
2008	Երևան	Գրախոսություն-Հ. Տեր-Աբրահամյան, Նոր բառգիրք հայերեն գրաբարե՝ աշխարհաբար լեզվի, ռուսերեն թարգմանությամբ	Երկեր, Գ
2008	Երևան	Գրախոսություն-Նոր հայերեն քերականությունը	Երկեր, Գ
2008	Երևան	Տեղեկագիր Ն. Ադոնցի «Պատմություն հայերեն լեզվի» գործին	Երկեր, Գ
2008	Երևան	Աբգար Պայազատի «Խալդերեն լեզվի բանալին»	Երկեր, Գ
2008	Երևան	Ինչպես պետք է գրել «Ամեն» և «Չեզոք» բառերը	Երկեր, Գ

2008	Երևան	Նորից «Չեզոք» և «Ամեն» գրությանց մասին	Երկեր, Գ
2008	Երևան	«Գերեզման» բառի ստուգաբանության մասին	Երկեր, Գ
2008	Երևան	Վաղ շրջանի փոխառությունները հայերենում	Երկեր, Գ
2008	Երևան	Բյուզանդական Արևելքի ռազմական սահմանեզրերում	Երկեր, Գ
2008	Երևան	Հայերեն մի քանի բառերի ստուգաբանություններ	Երկեր, Գ
2008	Երևան	Ուղղագրական և տառերի բարեփոխության հանձնաժողովի մեծարելի նախագահին	Երկեր, Գ
2009	Երևան	Քննական պատմություն հայոց, հատոր I	Երկեր, Դ
2009	Երևան	Ասորական արշավանքներն Ուրարտուի դեմ	Երկեր, Դ
2009	Երևան	Հայաստանը և ցեղերի պայքարը Արևելքում	Երկեր, Դ
2009	Երևան	Մի հին պաշտամունքի հետքերը Հայաստանում	Երկեր, Դ
2012	Երևան	Ավանդություններ Բյուզանդիայի կայսրեր Մորիկի և Կոստանդին V-ի մասին	Երկեր, Ե
2012	Երևան	Բյուզանդիայի կայսր Լևոն V-ի ծագման մասին	Երկեր, Ե
2012	Երևան	Կասիա Միանձնուհին և հայերը	Երկեր, Ե
2012	Երևան	Հայ գիտական դեմքեր Բյուզանդիայում	Երկեր, Ե
2012	Երևան	«Դիզենիս Ակրիտաս» բյուզանդական դյուցազնավեպի պատմական հիմքը	Երկեր, Ե
2012	Երևան	Վասիլ I կայսեր տարիքն ու ծագումը (867-886)	Երկեր, Ե

2012	Երևան	Վասիլի I-ի մահվան կապակցությամբ նրա որդու՝ Լևոն VI Իմաստասերի արտասանած դամբանական ճառի պատմական նշանակությունը	Երկեր, Ե
2012	Երևան	Աշոտ Երկաթ. թագավոր հայոց (913-929)	Երկեր, Ե
2012	Երևան	Լիկանդոսի բանակաթեմը հայ-բյուզանդական հարաբերություններում	Երկեր, Ե
2012	Երևան	Ակնարկներ (բյուզանդական արքունիքի) արարողությունների գրքի վերաբերյալ	Երկեր, Ե
2012	Երևան	Տարոնացիները Հայաստանում և Բյուզանդիայում	Երկեր, Ե
2012	Երևան	Դիտարկումներ Տարոնացիների տոհմաբանության վերաբերյալ. Պատասխան Գերաշնորհ Հայր Վ. Լորանին	Երկեր, Ե
2012	Երևան	Թեոփիլակտոս արքեպիսկոպոսը և Տարոնացին	Երկեր, Ե
2012	Երևան	Թոռնիկ Վանական	Երկեր, Ե
2012	Երևան	Թոռնիկի ընտանիքը	Երկեր, Ե
2012	Երևան	[Հովհաննես] Չմշկիկի նամակը Աշոտ [III] արքային	Երկեր, Ե
2012	Երևան	Դավիթ Կյուրոպաղատ (31-ը մարտի 1000 թ.)	Երկեր, Ե
2012	Երևան	Բուլղարների արքա Սամուել Հայկազնը	Երկեր, Ե
2012	Երևան	Դալասենոսներ	Երկեր, Ե
2012	Երևան	Թեոդորոկանների ընտանիքը	Երկեր, Ե
2012	Երևան	Փիլարտոսի ընտանիքը	Երկեր, Ե
2012	Երևան	Ռուբինյանների նախահայրը	Երկեր, Ե
2012	Երևան	Նիկեփորոս Ծռավիզ-Ծանրվիզ	Երկեր, Ե
2012	Երևան	Մի էջ կաթողիկոսության մերձավոր	Երկեր, Զ

		անցյալից	
2012	Երևան	Հայոց եկեղեցու հազարվեցհարյուրամյակի նախօրեին	Երկեր, 2
2012	Երևան	Ջեկուցում կարդացված այլազգիների համագումարում (նոյեմբեր, 1905)	Երկեր, 2
2012	Երևան	Կաթողիկոսական ընտրություն և մամուլը	Երկեր, 2
2012	Երևան	Կեղծը բարբերի և մտքերի աշխարհում	Երկեր, 2
2012	Երևան	Հայկական հարցի շուրջ Թուրքիայում	Երկեր, 2
2012	Երևան	Կովկասի ընտրական շրջանների մասին	Երկեր, 2
2012	Երևան	Հայկական հարցը և գերմանական ծրագրերը	Երկեր, 2
2012	Երևան	Հեռագիր գերմանական կառավարությանը	Երկեր, 2
2012	Երևան	Թուրքական հայտագիրը և Թուրքահայաստանը	Երկեր, 2
2012	Երևան	Առաջավոր Ասիայի հիմնահարցի լուծման շուրջ	Երկեր, 2
2012	Երևան	Թուրքիայի անդամահատումը	Երկեր, 2
2012	Երևան	Նամակ Լոնդոնի «Թայմս» թերթի խմբագրին	Երկեր, 2
2012	Երևան	Հայկական հարցը Սևրում	Երկեր, 2
2012	Երևան	Քրդերի ներթափանցումը Հայաստան	Երկեր, 2
2012	Երևան	Հողային զիջումներ Թուրքիային	Երկեր, 2
2012	Երևան	Գերագույն խորհրդին տրվելիք հիշատակագրի նախագիծ	Երկեր, 2
2012	Երևան	Հայաստանի սահմանների խնդիրը	Երկեր, 2
2012	Երևան	Հայկական հարցի ներքին կողմերից մեկը	Երկեր, 2

2012	Երևան	Մեծ եղեռնի տարելիցին	Երկեր, 2
2012	Երևան	Հայկական հարցը ամերիկյան սենատում	Երկեր, 2
2012	Երևան	Հայաստանը և հայկական գաղթօջախները	Երկեր, 2
2012	Երևան	Ամենայն Հայոց կաթողիկոս Խորեն Ա-ի հիշատակին	Երկեր, 2
2012	Երևան	Հայ հայտնի ավոյաններ անցյալում	Երկեր, 2
2012	Երևան	Ցուցմունք «Դաշնակցության գործի» առնչությամբ	Երկեր, 2
2012	Երևան	Հանրագիտարանային հոդվածներ՝ Հայաստան, Հայ գրականություն, Հայոց լեզու	Երկեր, 2
2012	Երևան	Խոսք ապրիլի 11 (24)-ի սգահանդեսին	Երկեր, 2
2012	Երևան	Կարապետ [Հարություն] Եզով (Եզյանց)	Երկեր, 2
2012	Երևան	«Հանդես ամսօրեա»-ի խմբագրության	Երկեր, 2
2012	Երևան	Թորգոմ Սրբազան պատրիարքի հիշատակին	Երկեր, 2